



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1979

235
U-15

2

7 Gray

~~Sept. 9th 1895~~

~~1913.~~

0109

Премиеръ Григорій
Причесъ Капитонъ
Барілъ Гедеонъ
Золото Руцько

Петръ Борисъ
1723

280

1000-04

0-18

ար

ՅԱՀԱԳՍ

235

ԲԱՐԵԼԻՕՍՈՒԹԵԱՆ ՄՐԲՈՑ

5-15

եր

ԶՆՃԱՆՐՍ ՆՈՑԱ ԵՒ ԶՊԱՏԿԵՐՍ

ՄԵԾԱՐԵԼ ՈՅ

ԱՀԽԱՏԵՍՄԻՐԵԱՑ

Հ. ԳԱՐԵԳԻՆ Զ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԵՆ



ՎԵՆԵՑԻԿ

ի սուրբ հազար



085

ԱՍ-ՑԵՐԵ

11629



ՅԻՀԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ
ՏԵԱՌՆ ԱՏԵՓԱՆՈՍԻ
ԵՒԵՂԲՈՐ ՆՈՐԱ
ՊԱՐՈՆ ԲԱԴԱՍԱՎՐԱՅ
ՆԵՓԻՍԵԱՆՑ

2001



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեծի և աստղամուսոյց խմառուրեակ է տառանելոց ՚ի ծուխս աշեասար յոշգմանց աշխարհի , զարդորեակ մերոց հաշտատոցն ձգել զիսարիսն հաստատուն , զի մի մոլորանողմն չարուրեակ վեր ՚ի վայր տագնապեսցէ զաստախայտն տկար , վրեայ ՚ի ցանկալի հանգրուանաց երկնաշոր բաղարին կացոցեալ , որ լատ վրկողին անսուր քարոզուրեակ մարգարիտ է շնորհապոյս և մեծագին , զոր առ ՚ի ստանալ երթեալ վաճառեաց այրե վաճառական զամենայն զոր ինչ ուներ : Եւ բանցի պարտք անհրաժեշտք ՚ի վե-

բայ կան նուիրելոց ՚ի սպասարութ-
քիւն սրբոյ սեղանոյն զամենայն փոյք
՚ի մեջ տեսնող յանարատ պահպանո-
թիւն վարդապետութեանց եկեղեցոյ .
վասն որոյ և. յիրաշի և մեզ ըստ խա-
ղաղութեան առեւտարանչացն Ռիոնի
բարձրացուցանել զօրութեամբ զբար-
բատ . և. զժողովրդեան զգուշացուցա-
նել զլուղիս, զի մի՞ ՚ի պատիրս բան-
արկուին անկեալ կործանեսցին :

Յայսպիսեաց ասկի համարեսցի ոք
և. զարացիկայս դոյզն երկասիրութիւն,
յոր ՚ի բարեսէր խնդրուածոց ածաք
մերոյ Ռիստիս մտերմի, Պ. Յով-
հաննոց Աշուշեանց , որոյ զԼուտերի
հարատոցն զձարակել տեսեալ և. յազգս
մեր , աղաջեաց զձառս զայս ՚ի լոյս
ընծայել որ Յաղացս բարեխօսութեան
սրբոց և. զնշյարս նոցա և. զպատկերս
մեծարելոյ , առ ՚ի զայլազգ խորհե-
նացն ամեններին կարկեալ ըմբերանել
զշրութն : Եւ մեր յօժարութեամբ կա-
յեալ յանձին , զակարասանեայ զայս
տեսութիւն վարդապետաց սրբոց որ

յաղաց խնդրոյս , եղաք ստացի , յառե-
շեալ ինչ ինչ և . ՚ի մերոց վարդապե-
տացն բանից և յառանդից Հայաստա-
նեայց եկեղեցոյ . և ակն ունիմք զի
ոչ անպէտ ինչ զբողնաքնայ երկս վաս-
տակոց մերոց համարեացին հոգեսի-
րացն անձինք , և որք փափաքողքն ի-
ցեն պայծառութեան հառատոց ամե-
նայալըն Եկեղեցոյ :



ՆԱԽԱՇՍԻՒԴ

Անդստին յաւուրց ժամանակաց տռա-
քելոցն սրբոց, յորս հաւատք ուղիղ դա-
ւանութեանս մերոյ ընդ ամենայն երկիր
տարածեալ սփուեցան, որոմն ժանտ և
փաղաղիչ ապականարար հերձուածոց՝ ե-
մուտ սպրդեցաւ 'ի քաջաբեր ցորեանն
հաւատոց, վեր 'ի վայր զեկեղեցւոյ կար-
դացն բարեզարդութիւն տապալել: Ընդ-
դէմնոցա ախոյան նահատակ արձանա-
ցոյց եկեղեցի զվարդապետացն գումարս,
ճշմարտութեանն ջատագով 'ի մէջ ան-
ցեալ՝ զմոլորութեան կարծիսն ըմբերա-
նել: Քանզի և Աստօնծոյ յառաջագետ
խնամոցն այսպէս կամք եղեն, 'ի բովու

վլտաց և հալածանաց զիւր զհաւատաւացեալ ժողովուրդ արկեալ, սուրբս և անարատս պահել զնոսսա աւուրին յեանում։ և զի տեսցեն ամենէքեան եթէ ոչ յանկեան ուրէք կամ 'ի խաւարի՝ փրկութիւնաբեր աւետիքն պատմեցան, այլ 'ի ըստ պայծառութեան միջօրէ տուրնջեան։ և զի ոչ ազգ մարդկան փութապէս եկին 'ի հլուական հնազանդութիւն տէրունեան ձայնին, այլ և ոխերիմ հակառակորդք 'ի վեր երևեցան՝ զանշարժելի հաստատութեան հիմունս եկեղեցւոյ դրդուեցուցանել։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և առաւել իմն օդուտք հերձուածոց էին. զի որպէս աստուածային առաքեալն վկայեաց Պաւղոս, արժան էր և հերձուածոց լինել, զի որք ընտիրքն իցեն երևեսցին. և որպէս կռապարիշտ կայսերացն հակառակամարտ հալածանիք՝ զալինդութիւն հաստատութեան հաւատացեալ ժողովրդեան կայկայեալ ամրացուցին, այսպէս և ազգք ազգք հերձուածոց զընտիրմն յանսպիտանեաց որոշեցին։ Արժան էր գրանց դժոխոց տալ պատերազմը ընդ սրբոյ եկեղեցւոյ, որպէս անսուտ բերանն յառաջածայն ազգեաց. այլ և վերին շնորհացն մերձ առձեռն էր օդնականութե

զանել մերժել զմարտն զայն չարութեան :
 Եւ այսպէս յաւուրցն Ախմօնի մոդի մինչե
 առ մեզ անանջատ յեկեղեցւոյ կացին և
 հերձուածք , և լոյս ընդ խաւարի ոչ կա-
 րացին կալ 'ի խաղաղութեան . քանզի
 զգիւացն ձայն բարբառոյ և զգուալ
 սրտմտութեամբ Քրիստոս լուցոյց , և
 զարբանեկացն նոցա դործս չարութեան
 եկեղեցի ընթագրեաց : Այլ աղիտաքելք
 քան զամնայն հերձուածս ցուցան եկե-
 ղեցւոյ և աշխարհի բողոքարկուացն կամ
 'Նորաղանդից անուանեալ կարծիք մոլո-
 րութեան , որ 'ի վերջ կոյս հնդետասա-
 ներորդի դարուն 'ի վեր երեւցան , ա-
 ռաջնորդ իւրեանց զԼուտեր և զԿալուին
 ունելով , և զօրավիգն զիշխանս երկրի և
 զթուլահաւատ քրիստոնեայս : Առ 'ի
 մէնջ ելին նոքա , այլ ոչ էին առ 'ի մէնջ ,
 որպէս սիրելի աշակերտն վկայեաց Յով
 հաննէս . քանզի զաւարն զոր պատուա-
 կան արեամբ իւրով թափեաց Քրիստոս
 'ի բանսարկուէն , միւսանդամտարտարոս
 գեհենին մատնեցին : Ըսինդն մոլորու-
 թեան նոցա 'ի Փռանդաց և 'ի Գերմանա-
 ցոց աշխարհէն մինչ եւ 'ի ծագս երկրի
 տարածեալ ձգեցաւ , և ազգք և ժողո-
 վուրդք զդիւրատար լուծն քրիստոսա-

խրատ և զբեռնն փոքրոգի թօթափեալ
ընկեցին յանձանց :

Եւ թէպէտ մատէնիւս որ առաջի կայ
յանձն առեալ է մեր զմիոյ եւեթ 'ի նոցա
կարծեացն ցուցանել զստութիւն , բայց
զի աղանդն չարութեան արդ և 'ի մեր-
ազգեայ ժողովուրդն ճարակեալ սփոխ ,
և խովն ապականարար և երէն վայրէնի մի-
ջամուտ յանդաստանսն լինին մերոյ Լու-
սաւորութեան հօր , արժան համարեցաք
տալ աստէն համառօտիւ զնկարագիր կար-
ծեացն նոցա և զվարուց , սկիզբն 'ի Լու-
տերի աղանդոյն արարեալ , որ երիցա-
գոյնն է ժամանակաւ քան զկալուին : Եւ
զայս ոչ վայրապար , այլ զի գիտասցեն
մերքն անձնապահ 'ի չարութեան խրա-
տուցն նոցա լինել , և մի յորոգայթս
ստութեան պարանեալ վրէպ 'ի փրկու-
թենէն զնաւարն արտաքին ժառանդել և
զհուրն անշէջ : Քանզի և երբեմն յառաջ
քան զստա խոշորակեր և խոշորազգեստ
լինելով՝ մուտ դասնէին 'ի մեր աշխարհ
և թոնդրակեցւոց կրօնիցն վարդապետք ,
“որք զմահացու դեղան (չարութեան)
իւրեանց յընտանի կերակուրսն խառ-
նէին , և որք առնուն՝ իբրև զկերակուր
ճաշակեն և 'ի մահացու դեղոցն ըմբռնին .”

որպէս և կարթընկէցք՝ կերով թաքուցա-
նեն զկարթսն, զի 'ի կերոյն խաբեալ ձուկն
'ի կարթի ըմբռնեսցի: «Նոյնալէս և անօրէ-
նութեան մշակքնքանզի զիւրեանց կորըս-
տեան վիհն չհամարձակին յայտնի ցուցա-
նել ումեք . . . վասն այսորիկ մերով բա-
րեպաշտ կրօնիւք կերպարանին առ 'ի
զգարողամիտսն խաբելոյ, և քաղցրական
բանիք նոցա իբրև զքաղցկեղ ճարակին . զի
որպէս ախտն այն դժուարին է առ 'ի
բժշկել, այսպէս և 'ի նոցանէ ըմբռու-
նեալքն հազիւ կարեն կալ յակաստա-
նի , * : Դակ սոքա առաւելիմն համարձա-
կութեամբ պատրուակ իւրեանց մոլորու-
թեան կարծեացն զարբոցն առնուն զաս-
տուածաշունչ մատենից բանս, և զիշխա-
նութիւն մեկնաբանելոյ զայնոսիկ յեկեղե-
ցոյ պետացն բարձեալ, առն իւրաքան-
չիւր տան հրաման թարգման և մեկնիչ
տեառնազդեցիկ բանիցն 'ի մէջ անցանել,
և անձամբ անձին զկորստեանն փորել
խորխորաս :

* Լաստիվերտցի 'ի Պատմութեան գիր-
ուըն :

“Այս մայր հոգեւոր երկնաշոր (եկեղեցի) ծեսնի և աստուածս ումանս և զականս, պատկերս մադրս միոյն Աստուծոյ Քրիստոսի,, : — ԿԱՐԵԿԱՑԻ :



ՅԱԴԱԳԱ

ԲՈՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ



ԳԼՈՒԽ Ա.

Լուսներ և վարդապետութիւնն եռաւ :

ԱՍՏՈՒԾՈՅ անքուն խնա
մոցն՝ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ
հաւաստիք են անհրաժարելի,
զի բազում անգամ օրէնս բարե-
կարգութեան կամելով մուծա-
նել՝ ի հաւատացեալս, դրդուե-
ցուցանէ իմն զնոսա՝ ի կարծե-
ցեալ հանգստենէն, զի զջմա-
րիտն ապա և զհաստատուն շնոր-
հեսցէ խաղաղութիւն : Օ սոյն
ամենայն եկեղեցւոյ պատմու-

տակօրէն աւելաբանութեամբ ,
իբրու այն թէ դժպատեհ իմն վա-
րիցին պաշտամամբն , և զի բազ-
մագոյնք 'ի նոցանեհ վարս անբա-
րիս յանձինս ցուցանեն , յանար-
ժան իմն տուրեառ փոխելով
զհոգեոր շնորհս քահանայապե-
տին . և զի փոխանակ ողջա-
խոհ վարդապետութեանց եկե-
ղեցւոյ , բանս օտարալուրս դան-
դաչեն 'ի լսելիս հաւատացեալ
ժողովրդեան՝ ընչաքաղց ագա-
հութեամբ և մոլեզին նախան-
ձայուզութեամբ :

Ծանամի ոխերիմ ընդդեմ
նոցա արձանացաւ | ուտեր . և
հրաման յառաջնորդէն առեալ
պաշտպան կալիրաւանց իւրումն
ուխտի , քանզի | Վեզոստինեանք
էին զառաջինն մատակարարք
շնորհի ներողութեանցն , զա-
հավեծ խորհրդովք արկ զանձն
յանելանելի բաւիղս մոլորահա-

ւատ բանդագուշանաց : Վանդի
 զ Դամինիկեանսն կամելով ընդ-
 վայր հարկանել անդր ևս զբանան
 ձգեաց . և որ իբրեւ ջատագով
 հաւատոց անցանէր 'ի հանդի-
 սի , ոխորմագոյն քան զամենայն
 ոք այնուհետև երեկը եկեղե-
 ցւոյ : Եւ կարի իսկ քաջ . քանդի
 զ ստուած խոստացեալ փառա-
 ւորել , զակատեցաւ զհետ մարդ-
 կային փառաց . և իշխեաց բո-
 ղոք ունել միանգամայն ընդդէմ
 Դամինիկեանց և ընդդէմ նե-
 րողութեանցն շնորհի : Օ առա-
 ջինն սերմաննեաց սփուեաց 'ի հա-
 ւատացեալս առաջարկս իմն ու-
 ղիղս և աստուածաբանական
 թուեցեալս , որպէս և է իսկ
 այս ամենայն աղանդաւորաց սո-
 վորութիւն . այլ ապա և եւս
 խրախուսեալ սինդեաց զայնոսիկ
 մնորական մոտօք . և այնպէս
 համարձակ յասպարիզի անդ շա-

Հատակեալ կոռուէր՝ զի յամին
 1520 ընդ բանիւ արար զնա
 Հռովմայ հայրապետն : Եւ որ
 յառաջն խոստանայր յամենայ-
 նի զանձն և զմտացն թուիս ընդ
 անսխալ դատաստանօք քահա-
 նայապետին արկանել, իբրեւ
 նշաւակեալ ետես զանձն և
 զկարծիս իւր դատապարտեալ,
 խզեաց ապա զկապն և մոռացաւ
 զխոստումն : Ի՞այց այնչափ իմն
 յամբարհաւած խորհուրդս էր
 յնորեալ, զի ամենեւին ոչ ինչ
 դրդուեցաւ, ոչ 'ի նզովից քահա-
 նայապետին և ոչ 'ի զզուելոց
 հաւատացեալ ժողովրդոց . քան-
 զի և համալսարանք Եւրոպայ և
 առանձինն Փարիզացւոց քաղա-
 քին՝ մերժեցին զի ուտեր և
 զմոլորութեան խրատս նորա ար-
 համարհեցին :

Առ քաջիկ խելամտութիւն
 ընթերցանելեացն եթէ զիարդ

Դուտեր՝ 'ի միոյ մոլորութենէ
յայլ՝ իբրու՝ 'ի վախից՝ 'ի վախս
գահավէժ անկաւ, և թէ քանի
արագ արագ ճարակեցաւ վարդա-
պետութիւնն, և կամ որ պատ-
ճառք ձեռնտու և օժանդակ
եղեն նմա, և աղետս քանիօն
աշխարհի երեւեցոյց՝ զրեսցուք
աստեն համառօտ բանիւք. քանդի
զիուլի պատասխանիս բանդա-
գուշանացն նորա յայլգիրս հա-
տուցեալէ մեր :

Եթեւ զառաջինն յարձակեցաւ
նա մոլեգին ընդդէմ չարաչար կիր-
առութեան ներողութեանց, ոչ
ինչ ամենեւին զմտաւ էած եթէ
'ի քանի վիհս 'ի խրոխտ և 'ի
խիզախ բարոյիցն մարթ էր նմա
հոսել չարաչար : Եթէ զայս
զմտաւ ինչ ածեալ էր նորա,
յետս կայր արդեօք 'ի դժնդակ
կրիցն և անկործան պահէր

զանձն և զաշխարհ . և արդարեւ իսկ քան զօրինակ դնացից նորա չիք ինչ այլ առաւելքա ջագէալ և զօրաւոր՝ ի խրատ և՝ ի զգուշութիւն այնոցիկ՝ որ հետամուտք իցեն նորաձայնս ինչ մուծանել՝ ի խնդիրս հաւատոյ :

Եթէ ստուգութեամբ ինչ համարէր լուտեր զի՞ Նումինիկեանք իբրու ՚ի վաճառ զհոգեորշնորհս ներողութեանց հանէին , զի՞ իմանի մոզին առեալ երկրորդելով զկարծիս , արժան էր նմա ընդդէմ այնորիկ բողոք բառնալ , և ոչ ընդ ստգտանօք զքահանայապետն և զներողութիւնն արկաննել : Յայնժամ զովութեանց էր արժանաւոր եռանդն նորա և աստուածպաշտութիւն : Այլ նորա կուրացեալ էին ՚ի կրից աչք չտեսանել զլոյս վարդապետութեանն

եկեղեցւոյ , և զի 'ի ստերիւրել
 իսկ պաշտօնէից նորա , հաւա-
 տոցն անարատութիւն կայ մնայ
 անսասան : || ասն որոյ ընդդեմ բռ-
 զոք հարեալ չարաչար կիրառու-
 թեան ներողութեանց , ժպըր-
 հեցաւ ուրանալ և զնորհաբաշ-
 խութիւնս հոգեւորս եկեղեցւոյ
 որ յաղագս հատուցման պատ-
 ժոց և իշխանութեան զմեղսն
 արձակելոյ : || յւ խարդաւանեալ
 յայս կարծիս մոլորական՝ մեր-
 ժեաց ապա և զտեառնաբարբառ
 խոստումնն , և զի եկեղեցին չու-
 նի իշխանութիւն թողուլ զմեղս
 'ի ձեռն արձակման քահանային .
 այլ ունի միայն իշխանութիւն
 հրատարակելոյ եթէ թողեալ
 են մեղքն : || ակ եթէ հարցանի-
 ցէ ոք թէ յոյր ձեռն ապա թո-
 ղանին մեղք եթէ անպէտ ինչ
 իցէ արձակումն քահանային ,
 պատասխանի առնէ , || ուտեր .

— Հաւատովք եւեթ, յորժամ
 ոք հաստատութեամք հաւա-
 տասցէ եթէ մեռաւ Քրիստոս
 վասն մեր. քանզի և մեր իսկ են
 արդասիք մահու նորա. և 'ի
 բանիցն հաստատութիւն զառա-
 քելոյն Պաւղոսի զբանս 'ի մէջ
 ածէ եթէ ։ Հաւատովք ար-
 դարանամք . . . և զՄբակումայ
 ասելն եթէ ։ Արդարն իմ 'ի
 հաւատոց կեցցէ . . . : — Ա ան
 որոյ և զլաւութեան գործս
 քրիստոնէից արտաքնայարդար
 իմն համարէր և կեղծաւոր բա-
 րեպաշտութիւն : Եղուկ նմա .
 զի անջան վաստակովք համա-
 րեցաւ և ուսոյց ժառանգել
 զփրկութիւն . ուր տեառն Աս-
 տուծոյ յառաջագոյն ասացեալ
 իսկ էր թէ ոչ ամենեքեան որ
 տէր զնա դաւանիցեն մտցեն
 յարքայութիւն երկնից . և զի
 տարագիր 'ի հարսանեաց կու-

սանքն մերժեցան, որոց չէր բարձեալ ընդ իւրեանս զիւղն գործոց բարեաց :

Օ ի եթէ չեր այսպէս , ապա
և գլխովին ընդունայն իցեն
դործք բարեաց , պահք , ապաշ-
խարութիւն , ժուժկալութիւն ,
Ճնշել զմարմինն , աղօթք և ողոր-
մութիւն : — Զայն տայ և աստին
Ուտեր զամենայն միանգամայն
արհամարհելով . վասն որոյ և
ժպրհեցաւ իսկ զատապարտ առ-
նելառ հասարակ զսուրբս անցե-
լոց դարուց և զառաքեալս զլիս-
վին : Դարձեալ և զկամաւոր
ուխտս միանձնացելոց ումափէտ
ինչ և վայրապար համարէր .
վասն որոյ և անձամբ անձին
տուեալ օրինակ՝ զմենաւորու-
թեան կրօնիցն թօթափեաց
զլուծ , և ամուսնացաւ ընդ միան



Եկեղեցւոյ պաշտօնէից : Օ ի
 յանչնարիցն է , ասէր , անմե-
 զութեան վարել կեանս՝ հրա-
 ժեշտ յօրինաւոր հարսանեացն
 տուեալ . և զի ահադին իմն է
 և երկիւզալի՝ անկին առաջի ա-
 հեղ ատենին Քրիստոսի ելա-
 նել : Քաջ իսկ 'ի մոռացօնս
 արկեալ էր նորա զբանս խրա-
 տուց երկնաւոր վարդապետին ,
 և զի “ | յարութեան ոչ
 արք կանայս առնեն և ոչ կա-
 նայք արանց լինին ” : Այլ
 ոչ յաջողեցաւ պատրուակաւս
 'ի չքմեզս զանձն հանել , և յար-
 դարադատ բամբասանաց զեր-
 ծանել :

Դարձեալ անդէր եւս հաս-
 տատութեամք եթէ ոչ ինչ
 իւիք կարեմք մեք արդիւնս բա-
 րեաց գործոց բերել յանձինս ,
 իբր զի ամենայն վաստակք
 մեր յայնմեւեթ հաստատեալ

Են զի հաւատասցուք եթէ,
Վրիստոս վասն մեր մեռաւ
և զմեղացն ծանրութիւն ե-
բարձ : Եւ այնչափ խօլացաւ
մինչեւ ուսուցանէր եւս եթէ որ-
պէս մարդ մեղանչէ յամենայն
'ի գործս իւր , նոյնպէս և
մարդ արդարացեալ հաւատովք
ոչ կարէ գործել զմեղս , քան-
զի ոչ համարի նմա զայն Աս-
տուած :

Խոկ արդ եթէ յանչնարիցն
է մարդոյ անսմեղութեան վարս
յանձին բերել , զի՞նչ ապա ան-
ձնիշխան աղատութիւնն իցէ :
Տես զիարդ սպատասխանի առնէ
| ուտեր : — Օ ի՞նաւ պէտք
իցեն , աղաղակէ , անձնիշխան
կամաց . քանզի զամենայն ինչ 'ի
մարդումն , ասէ և հայհոյէ ,
գործէ ինքն Աստուած եթէ
մեղք իցեն եթէ առաքինու-
թիւն . զի և անուանեալդ այդ

անձնիշխանութիւն անմարթ է
 թէ կարասցէ երբէք կալ'ի խա-
 ղաղութեան ընդ ապականեալ
 ընութեան մարդոյ և ընդ ան-
 պատիր նախագիտութեան Ա-
 տուծոյ: Եւ արդ զի ըստ ուտերի
 կարծեացն ոչ թողանին մեղք՝ ի
 ձեռն խորհրդոց եկեղեցւոյ, այլ
 հաւատովք եւեթ, ապա և խոր-
 հուրդք ազգեն ՚ի մեզ իբրու
 զնշանակս ինչ ՚ի յորդել զհա-
 ւատս մեր: Եւ զայս այսպէս հա-
 մարեցաւ ուտեր . վասն որոյ և
 մերժեաց և ընկեց զամենայն
 խորհուրդս եկեղեցւոյ, բաց ՚ի
 Ակրտութենէն և ՚ի Հաղոր-
 դութենէ . և զայնոսիկ ըստ մար-
 մաթելոյ լաւելեացն իւրոց յարմա-
 րեաց . և թէպէտ բազումք յա-
 շակերտելոց նորա, ՚ի մեծի ժո-
 ղովին որ ՚ի 1530 գումարեցաւ
 յէկսպուրկ, կամեցան և զխոր-
 հըրդականն ընդունել խոստո-

վանութիւն, այլ ուտեր իբրեւ
զայն լուաւ ամենեւին իսկ ընդ-
դէմ դարձաւ առաջարկութեան
բանիցն, և սպառնացաւ ընդ-
բանիւ առնել զամենեսին որ
միանդամ իշխիցեն փոքու իւլիք
այլայլութիւնս կարգաց մու-
ծանել 'ի վարդապետութիւնս
իւր:

Իստ նմին օրինակի և 'ի խոր-
հուրդ սրբոյ Հաղորդութեան
դեղեւեցաւ յոյժ յոյժ | ուտեր
'ի վարդապետութեան իւրում.
զի եթէ ըստ նորա մտացն խոր-
հորդակատար քահանային բանք
ոչ ինչ ազդիցեն, զիարդ ապա
գոյութիւն հացին փոխեսցի 'ի
մարմին Քրիստոսի : Քանզի
ընդ անձին իւրում ոգորեալ | ու-
տերի հաստատութեամբ պնդէր
եթէ աստուածագործ սրբասա-
ցութեան բանիւքն, զորս 'ի
տեառնէ ուսաւ եկեղեցի, ներ-

կայ է Քրիստոս 'ի հաղորդու-
 թեան, սակայն կայ մնայ անդէն
 և գոյացութիւն հացին և զի-
 նւոյն, վասն որոյ և օտարալուր
 ինչ է, ասէք, Գոյացածութեաննե
 զոր կաթուղիկէ եկեղեցին ու-
 սուցաննէ : Առ համախոհն և ըն-
 կերակից 】 ուտերի Գարլշդատ
 ընդդէմ գարձաւ բանիցն նորա,
 իբրու զի յանհնարիցն է կար-
 ծել զի անանջրապետ իցեն 'ի հա-
 ցին գոյացութիւն նորա ընական,
 և աստուածազան գոյութիւն
 տէրունեան մարմնոյն : Գարլշ-
 դատեայ զհետ չոքան կոչեցեալքն
 Խորհրդականք, որոց և համա-
 միտ են Օ ուխնզլիոս և Կալուխն
 'ի բանս Խորհրդոյ հաղորդու-
 թեան . այլ 】 ուտեր անսասա-
 նելի 'ի վարդապետութեան իւ-
 րում եկաց մինչեւ ցօր մահուան
 իւրոյ, զրդեալ մանաւանդ 'ի հո-
 գւոյ հակառակութեան ընդդէմ

Խորհրդականաց, քան եթէ պատ
 կառ կացեալ տերունական բա-
 նիցն զոր 'ի վերջին ընթրեացն
 պահու խօսեցաւ ընդ սրբագու-
 մար աշակերտելոցն, յորժամ
 զհացն տուեալ և ասէր ցնոսա,
 եթէ ։ Առէք և կերայք, այս է
 մարմին իմ, — Արդ եթէ ի-
 րապէս է Քրիստոս 'ի հաղոր-
 դութեան, պարտ և պատշաճ է
 ուրեմն երկիր պագանել նմա :
 Յերկմիտս եղել լուտեր և
 յաղագս այսորիկ . վան որոյ
 և զառաջինն հրամայեաց բար-
 ձրացուցանել զմարմինն և զա-
 րիւն 'ի պատարագի, հակառա-
 կելով Գարլշդատեայ կարծեացն
 որ դատապարտ առներ զայն .
 բայց ապա յետս կացեալ և
 յայնմանէ՝ խստիւ պատուէր
 հրամանի 'ի վերայ եղ մի
 պահէլ 'ի մասնատփի զհացն
 սրբագործեալ, որպէս սովորու-

թիւն է առ ամենայն բարե-
պարիշտ քրիստոնեայ հաւատա-
ցեալս :

Իսկ եթէ Քրիստոս կայ 'ի
սեղանի խորհրդոյն , և ընդէր
ոչ մատուցի ինքնին 'ի պատա-
րագ և 'ի զոհ Հօր , առատա-
ձեռնել նովաւ 'ի մեզ զարդիւնս
փրկագործ չարչարանացն իւրոց :
— Աչ յանձին կալաւ և զայս
Լուտեր , քանզի կամէր զի հա-
ւատովք եւեթ ժաման լիցուք
փրկութեան , վասն որոյ և հա-
մարձակագոյնս իսկ ուրացաւ ե-
թէ պատարագն սուրբ իցէ արդա-
րեւ փրկական և քաւչարար զոհ
Հօր Լուտուծոյ . և իշխեաց եւս 'ի
Պալրութեանցն գիրս և 'ի Պա-
տարագամատոյցն արեւմտեայ ե-
կեղեցւոյն ձեռներէց լինել
յանդգնութեամբ , և ինքնահաճ
կամօք յերիւրեւ բազում ինչ
զոր միանգամընդդէմ կարծեաց

իւրոց և վարդապետութեան եւ
 զիտ՝ ի նոսա : Աչ ինչ հայեցաւ
 ամենեւին եթէ անդստին յառա-
 ջին ժամանակաց քրիստոնէու-
 թեան սովորութիւն կալաւ եւ
 կեղեցի զսուրբ պատարագս զայս
 պաշտել վասն կենդանեաց և
 ննջեցելոց . այլ զի ըստ լուտերի
 կարծեացն մեղք միանգամ թո-
 ղեալք՝ ի ձեռն հաւատոց չունին
 ամենեւին պէտս նորոյ քաւու-
 թեան ոչ յայսմ աշխարհի և ոչ
 ՝ ի հանդերձելումն , վասն որոյ և
 անպէտ ինչ զմշտամռունչ հայ-
 ցուածս և զսկաղատանս համա-
 րէր զորս վասն՝ ի Քրիստոս
 ննջեցելոց հանապազօր մասու-
 ցանեն հաւատացեալք , և աւելի
 իմն օրինակաւ՝ ի Հայաստա-
 նեայցս եկեղեցւոջ :

Դարձեալ յամենայն պաշտա-
 մանց զիրս ուղղափառ հաւատա-
 ցելոց յիշատակք լինին և սրբոցն

Աստուծոյ որոց անարատութեան
 կենցաղ յերկրի ցուցանելով, և
 երկնից արքայութեանն եղեն
 ժառանգաւորք + այլ ըստ դադ-
 տամեստ նենգութեանն | ուտե-
 րի՝ ի կոչել զսուրբս յօդնականու-
 թիւն՝ նախատինս Քրիստոսի
 մեծվայելցութեանն դնեմք, որ
 զմեզ իւրով արեամբն զերծոյց
 'ի գերութենէ բանսարկուին,
 և նա է փրկութիւն մեր : Օ այ-
 սոսիկ պատրուակ իւր առեալ
 յանդգնագոյն բանիւք մերժեաց
 զսրբոցն պաշտօն, և դատապարտ
 արար զմաղթանս որովք զնոցայն
 բարեխօսութիւն աղերսիւք պա-
 ղատիմք :

Եւ քանզի ըստ յեղյեղուկ
 մտացն | ուտերի՝ խորհուրդք ե-
 կեղեցւոյ և ծխից պաշտամունք
 յոչինչ այլ պիտանացուք են
 բայց 'ի յորդել զհաւատս, վասն
 որոյ և ասաց եթե ձեռնադրու-

թեանն չնորհ ոչ նոր ինչ առաւ-
 ելու 'ի մարդիկ , և զի պաշտօ-
 նէից սեղանոյն չիք իշխանու-
 թիւն գերբնական , և զի չիք
 ձմնարիտ քահանայութիւն և ոչ
 քահանայապետական դասակար-
 գութիւն յեկեղեցւոջ : Ապաքէն
 զայդ այսպէս համարեալ | ու-
 տերի , և ինքնիշխան ազատու-
 թեամբ հրաման ետ համախոհի
 խրում և զօրավիգն ձեռնտուի ,
 իշխանին Հասսիոյ , բազմակին
 լինել . ապա ոչ զլացաւ և անձին
 զկարծեցեալ ազատութիւնդ , որ
 պէս և յայտնի իսկ է տեղեկացն և
 որոց գիտակ իցեն մոլորութեան
 կարծեացն նորա : Օ այսոսիկ ոչ
 շատ համարեալ յաւել 'ի բան-
 դագուշանս , և 'ի կարծիս խոր-
 հըրդոյ ամենասուրբ Երրորդու-
 թեան մոլորեցաւ . վասն որոյ և
 չորս ամօք յառաջ քան զմահ իւր
 եքարձ 'ի լորետեան անուանեալ

մաղթանաց զբանն եթէ ։ Առլր
Երրորդութիւն մի աստուած ,
ողորմեա մեզ . :

Իսկ իբրեւ 'ի ցասումն մեծ
բրդեցաւ Լուտեր զի նզովս 'ի
Հոռվմայ Հայրապետէն ընկա-
լաւ , այնուհետեւ համարձակա-
ձայն սկսաւ հեղուլ 'ի լսելիս
ժողովրդեան եթէ քահանայա-
պետն ինքնին գլխովին է նեռնն
ամբարիշտ՝ զորյ զանհրաժեշտ
գալուստ և զամբարշտութեան
գործս յառաջազոյն պատմեցին
կենարար փրկին և երանելի ա-
ռաքեալք նորա . այնուհետեւ
մերժեաց և զնախազահ իշխա-
նութիւն եկեղեցւոյ , և զի զուր
տարապարտուց նզովի և դատա-
պարտ առնէ , զորս այլազդ ինչ
խորհիցին . քանզի և զաստուա-
ծախօս տառս եւեթ համարէր 'ի
կանոն ուղղութեան հաւատացե-
լոց : Վայլոր 'ի մեծ ապշութիւն

զմիտս կրթէ այն է , զի որ զե-
 կեղեցի անմասն յիշխանութենէ
 աստի համարէր զմօլորութիւնս
 հերքելոյ , անձամբ անձին դա-
 տապարտ արարեալ կշտամբէր
 զէրծեալսն յիւրմէ զլսորհրդա-
 կանսն և զլվրկնակնունքս . և
 որ ամբարտաւանէր ամենեցուն
 զերկնատուրն շնորհել անձնիշ-
 խան ազատութիւն 'ի հաւա-
 տոյս , պատուէր հրամանի 'ի վե-
 րայ գնէր իւրոցն՝ միայն զթարդ-
 մանութիւնն զայն 'ի կիր առնուլ
 զրբախօս տառից զյերիւրեալն
 յիւրմէ , և 'ի կանոնական զրոց
 մերժեալ հալածէր զջեաւնեղ-
 բօր թուղթն ընդհանրական , ի
 բրու զի յայսնապէս ուստոցանէր
 եթէ .. հաւատք առանց գործոց
 մեռեալ են . . . թէպէտ և ոչ ան-
 սացին նմա բազումք 'ի լուտերա-
 կանաց , և զօր աղանդահնար
 վարդապետն մերժէր , ինքեանք

մտադիւր ընկալան, որպէս և
զՏեսլեան գիրս երանելոյ աւե-
տարանագրին Յովհաննու, զոր
խոտեցին կալուինականք :

Եւ քանզի 'ի բաց մերժեր
զամենայն օրէնս և զսահմա-
նադրութիւնս եկեղեցւոյ ի-
բրու գիւտս մարդկայինս, խար-
դաւանեցաւ և յայլվիչ 'ի պլն-
դել անդ իւրում եթէ ազատու-
թեամբն որդւոցն Այսուծոյ՝ զոր
մկրտութեանն շնորհիւ ընդու-
նին հաւատացեալք, այնուհետեւ
քրիստոնեայ այր ոչ ևս մարդկայ-
նոց ինչ օրինաց կացցէ 'ի հար-
կի. վասն որոյ և 'ի թուաքերու-
թեան փրկչին 1520 յորումժա-
մանակի զգիրսն որ յաղագս ան-
ձնիշխան ազատութեան մարդոյ
'ի լոյս ընծայէր, բազումք 'ի
գոեհիկ և յանոպայ մարդկա-
նէն հաճեցան ընդ վարդապե-
տութիւնն զոր նորս այս ու-

սուցանէր առաքեալ . և լծն-
կէցք եղեալ , զէն ամբարձին
ընդդէմ տեարց խրեանց և իշ-
խանաց : Քանզի ոչ միայն 'ի
խռովայոյզ ապստամբութենէ ոչ
զգուշացուցանէր] ուտեր զժո-
ղովուրդն , այլ և յորդորամիտո
զնոսա առնէր պերճախօս քա-
րոզութեան բարբառովն . վասն
որոյ և զաղաղակ բարձեալ զոչէր
եթէ յոյժ 'ի դէպ և կարեւոր
պիտոյ է զէն վերացուցեալ ոսոխ
ընդդէմ յառնել Հռովմայ հայ-
րապետին , և տալ պատերազմ
ընդ այնոսիկ որ թիկունք իցեն
նմա օգնականութեան :

Եւ մի ոք զանխափան ճարա-
կեն տեսեալ զ] ուտերի հաւա-
տոցն և հիացեալ զարմասցի .
քանզի ստութեան լայն և դիւ-
րագնաց է Ճանապարհ , և վատ-
թարելոյ մարդկեղէն ընու-
թեանս առաւել հաճոյական ընդ

Համարձակ արահետն գնալ, քան
 զնեցն ընտրեալ առնուլ զդժուա
 րինն և զտագնապողական, ոչ ինչ
 ամեննեին ուշեղեալ ելիցն կատա
 րածի : Ա ասն որոյ իբրեւ 'ի վեր
 երևեր ուտեր տապալել զհի-
 մունս տեառնապահեստ եկեղե-
 ցւոյ, յորժամ ընդ քահանայա-
 պետին ոգորէր և զկուսութեան
 կեանս բառնայր, զպահո և զվրշ-
 տըմբեր ապաշաւանացն ցաւս ա-
 մեննեին իսկ անհետ 'ի միջոյ
 ձկներ կորուսանել, մոտադիւր
 լուան նմա բազումք և ընկալան
 յանձինս զկնիք խրոխտացելոյն
 ընդդէմ Մստուծոյ : Քանզի
 սփռեցաւ աղանդն այն չարու-
 թեան նախ 'ի Սաքսոնիա, ապա
 'ի բազում վայրս Գերմանացւոց
 աշխարհին և 'ի Ծուետոս և 'ի
 Գանիս և 'ի Բալքնիա և յին-
 գարս և 'ի Դրանսիլուանիա, և
 ապա 'ի Գաղղիա և յինգղիա . և

յաւուրս մեր սպրդի մտանել և
յարևելեայ ժողովուրդս , և ա-
ռաւել իմն օրինակաւ յազգս
մեր :

Ի՞այց խուժան բոցավառ պայ-
քարաց և հակաձառութեանց
զորս վարդապետութիւնն լու-
տերի բորբոքեաց 'ի մարդիկ , և
բազմազեմ մոլորութեանն կար-
ծիք և չարախտավար կեանք ,
փոխանսակ 'ի բարեկարդութիւն
ածելոյ զեկեղեցի , որպէս զառա-
ջինն խոստանայր , վեր 'ի վայր
յուզեալ դղրդեցին զաշխարհ ,
և անմարթ իսկ էր 'ի դաւնու-
թեան արմատոյն՝ բարեհամար-
գասեաց ակն կալեալ սպասել :
Եւ զի ամենայն մարդոյ համար-
ձակ իշխանութիւն ետ , աղիկա-
մի զգիրս սուրբս մեկնաբանե-
լոյ , վասն որոյ և ազգ ազգ ա-
ղանդոց 'ի վեր երևեցան , զի մի
ասացից ցնորից բանդապուշա-

նաց, և զհաւատոցն միութիւն
 'ի բազում մասունս կոտորեցին :
 Ետես զայս ամենայն | ուտեր
 մինչ դեռ ևս յամէր 'ի կենցա-
 զումն, և ոչ ստրջացաւ 'ի չա-
 րեացն և ոչ յուղղութեան ձա-
 նապարհն դարձաւ, և այնպէս
 շարամահ սատակէր յամի 1546 :

Աչ այնպէս ինչ համարիմք եթէ
 ամենեին անմասն էր | ուտեր 'ի
 մարդկեղէն բարեմասնութեանց.
 այլ ասեմք մանաւանդ եթէ նո-
 քին իսկ ձեռնտու և թիկունս
 իւրեանց զամբարտաւան բար-
 ձրութիւն մտաց նորա առեալ,
 զարտուղեալ խոտորեցուցին զնա-
 յուղղութեան ձանապարհէն և
 արկեալ ձգեցին 'ի կորուստն
 յաւիտենից : Աը միանգամ ան-
 ակնառու մտօք ընդ կենցաղ
 վարուցն նորա անցեալ իցէ, տե-
 սանէ քաջ եթէ 'ի զուր հնարե-
 ցան արբանեակք նորա 'ի գովել

առնուլ զվայրենամիտն կատա-
ղութիւն և զփառամոլ հպար-
տութիւն և զբամբասասէր լե-
զու : Քանզի ոչ զայն տարագ
յանձին երևեցոյց Քրիստոս յա-
ւետաքեր գալստեանն, և ոչ աշա-
կերտք նորա և առաքելագործ
մշակք երկնաւոր վարդապետու-
թեանն՝ այնպէս ինչ քաղաքա-
վարեցան յաշխարհի . և որ ընդ
ճանապարհն ընթանայ ընդ որ
Քրիստոս ոչ գնաց, սա չէ նո-
րա :

Ի՞այց զի զկուսակցացն նորա
ամենևին կարկեսցուք զբերանս,
զմեծի առն արժան համարիմ
դնել զբանս զՊոսիւէի գաղղիա-
ցոյ . լ ուտեր, ասէ, զքրիստոսա-
ծանօթ ժողովրդեան զսրտալիր
փափաքումն տեսեալ զեկեղեցւոյ
կարգացն բարեվայելքութեան,
զայն պատրուակ 'ի ձեռս էառ
տագնապել զաշխարհ . “ այլ

խաքեցաւ նա՝ ի խորհուրդս մտաց
իւրոց . զի ոչ ոք՝ ի նոցանեւ և
յերազի անդամ զմտաւ էած կեր-
պարանափոխ առնել զհաւատս
եկեղեցւոյ , զպաշտամունսն ուղ-
ղել և մանաւանդ զվրկագործ
պատարագն քաւութեան . վեր
՚ի վայր տապալել զիշխանու-
թիւնն քահանայից և զՊիետին
նոցա հայրապետին Հոռվիմայ ,
որ միակ ուշ նպատակի էր բա-
րեկարգութեանն որոյ ճարտա-
րապետ էր] ուտեր :

„ Այցնոքազերանելին Շեռ-
նարդոս մեզ՝ ի դէմս ածեն , որոյ
զվիշտս եկեղեցւոյ՝ ի համար ար-
կեալ որք անդստին յառաջին ժա-
մանակաց եկին հասին՝ ի վերայ
նորա՝ ի հակառակամարտ հալա-
ծանաց և՝ ի բազմապատիկ հեր-
ձուածոց , և որք յաւուրս յետինս .
՚ի զեղծագործ ապականութենէ
մարդկան , խիթալ արժան է ,

առէ , 'ի վերջնոցս , զի մի 'ի
սպառ յարհամարհութիւն կը ը-
թեսցի եկեղեցի , և կեանք խառ-
նավար սպրդեսցին մտցեն 'ի նա :
Վանսղի , որպէս յաւելու 'ի բանս
իւր և ասէ այրն մեծ , կարող
է եկեղեցի զասայեայն աղաղա-
կել . “ Ահաւասիկ 'ի խաղաղու-
թիւն դարձաւ դառնութիւն
իմ , ” * . զի առաւելքան զամենայն
վիշտս յերեսաց անհաւատից և
յերեսաց հերձուածոց , տուժա-
քերք եղեն եկեղեցւոյ ապակա-
նագործ վատթարութիւնք որ-
դւոց իւրոց : Վաջայայտ է ապա-
զի ոչ տրտմէր նա , որպէս նո-
րոգչացդ հաճոյ թուեցաւ ասել ,
զի մնլորութիւնք մտին յեկեղե-
ցի , յորոց մանաւանդ անարատ
զնա համարէր , այլ զչարիսն ող-

* Կամըստ լատինականին , “ Զի դառ-
նութիւն իմ 'ի խաղաղութեան է , :

բայր որք յարհամարհութենէ
հրահանգաց եկեալ հասեալ
կային : Ա ան այնորիկ յորժամ
վարդապետութիւնս օտարոտիս
սիռենին ծաւալէին խռովարկուք
ոմանք և կարծամիտք Պետրոս
Պրիւս, Հենրիկոս և Առնոյ
պրեշացի, սա այս հոյակապ այր
ոչ ժուժեաց զի՞ ոք՝ ի մարդկանէ
զհետ մոլորութեան կարծեաց
նոցա ընթասցի . և աննկուն ա-
րութեամք մարտ պատերազմի
ետ ընդ նոսա՝ պաշտպան կացեալ
ուղիղ դաւանութեան եկեղե-
ցւոյ և իշխանութեան քահա-
նայից :

„ Կացին և այլք ոմանք՝ ի
դարս յետինս վարդապետք ուղ-
ղափառաց՝ որոց աղիքն զորովէին
զվատթարել բարուցն տեսեալ,
և նորոգութեան՝ անձկանօք՝ ի
խնդիր լինէին . և անուանի էր՝ ի
նոսա Կերսոն, զի և ոչ ոք մեծա-

ջան էր քան վնաս 'ի բարեկար-
դել զեկեղեցի . . . : Եւ 'ի Պի-
սայեանն ժողովի հրապարակա-
խոս եղեւ նա առաջի Վցեքսան-
դրի Ե Հոռվմայ քահանայապե-
տի , յօրում ազաքաւոր 'ի ներքս
ածէր զեկեղեցի որ 'ի մեծէ
հայրապետէն զհաստատութիւն
թագաւորութեանն Խարայելի ա-
ղերսիւք հայցէր . . . :

“ Խարձեալ և ծիրանաւորն
Պետրոս Տէյլի վարդապետն
Խերսոնի և եպիսկոպոս Քամ-
պրէյի զնոյն օրինակ և յետ բա-
րեկարգութեանն աւաղէր : Բայց
այլ խորհուրդը մտաց նորա էին
քան զորս խորհեցաւ լուտեր ,
որոյ նամակագիր առ ԱԵլանթոն
լինելով “ Վրժան է , ասէր , զիշ-
խանութիւն քահանայապետին
վեր 'ի վայր տապալել եթէ ու-
ղիղ հաւատոցն տևելոյ ցանկա-
ցողք իցեմք , : Խակ ծիրանաւորն

ընդ հակառակս մտացն | ուտերի
 համարէր զի որք հերձեալքն 'ի
 ճշմարիտ եկեղեցւոյն իցեն՝ նոքա
 անառաջնորդք են և անայցելուք,
 և զի անմարթ է մուտ ունել բա
 րեկարգութեան եթէ չիցէ ոք
 յեկեղեցւով հովուապետ : Եւ
 այսպէս ահա մին՝ ի նոցանէ ակն
 ունէր բարեկարգել զեկեղեցի
 կործանմամբ քահանայապետա
 կան տեսչութեան , և միւսն իղձ
 լինէր զի կանդաղեալ ամրացի
 իշխանութիւննորա աստուածա
 հրաշ՝ զոր սահմանեաց Քրիս
 տոս յանդրդուելի պահպանու
 թիւն միութեան հաւատոց և
 վարուց բարեաց :

„ Պատա ուրեմն երկու ազգք
 էին խնդրողաց զբարեկարգու
 թիւն . քանզի ումանք 'ի նոցանէ
 արք խաղաղութեան և եկեղե
 ցւոյ սրբոյ որդիք հարազատք, ան
 ակնառու մտօք աշխարհին զչա-

ըիս նորա , և համեստ ցածու-
 թեամբ զբարեկարգութիւն ա-
 ղերսէին , և զյապաղել նորա
 տեսեալ վշտանային , և ոչ միայն
 ընդ միտ անդամոչ ածէին ուրա-
 ցութեամբ՝ ի ձեռս բերել զայն ,
 այլ ընդ յառաջախնամ տեսչու-
 թիւնն Իստուծոյ հիացեալ զար-
 մանային եթէ զիարդ ձարտա-
 րագիտէ զխոստացեալն կատա-
 րել՝ ի զեղծագործ վատթարու-
 թեան բարուց՝ անարատ զեկե-
 զեցւոյ հաւատմն պահելով . . . :
 Եւ էին սոքա անպարտելի նա-
 հատակը եկեղեցւոյ , և բազմո-
 րոգայթ մենքենայք զնոսա ինչ
 զբդուել ոչ կարէին և կամ խլել
 կորզել՝ ի հաւատոցն միութենէ :
 Իայց էին իսկ և մարդիկ ամբար-
 տաւանք ուռուցեալք սրտմտու-
 թեամբ , որոց զհերձուածն
 տեսանելով զսպրդեալն յեկե-
 զեցւոյ , և մանաւանդ՝ ի պաշ-

տօնեայս նորա , խորհեցան յան-
 ձինս իւրեանց և ասեն զի ոչ կա-
 րասցէ նա տեւել մնալ ըստ խո-
 տացելումն . փոխանակ զի որդին
Աստուծոյ զի Ռովսիսեան աթոռն
 պատուել հրամայեաց , թէպէտ
 և արք չարութեան իցեն որ նըս-
 տին 'ի վերայ նորա դպիրքն և
 փարիսեցիք : **Ա**յս մեծացան նոքա
 ամբարտաւանութեամբ , որով
 խոնարհեալ 'ի տկարութիւն՝ ոչ
 եւս կարացին ժոյժ ունել զի մի
 ատեսցեն և զորս բազմինն յայն
 աթոռ . և հաստատութեամբ
 եղեալ 'ի մտի զի մարթ է նոցա
 զգործն աստուածեղէն ընաջինջ
 անհետ 'ի միջոյ կորուսանել , ա-
 տելութեամբն որովզբանին պաշ-
 տօնեայս արհամարհեցին , ա-
 տեցին և զվարդապետութիւնն ,
 ապա և զուսուցանելոյն իշխանու-
 թիւն զոր ընկալան նոքա 'ի
 Քրիստոսէ : **Ա**յսպիսիք ումանք

Եին Ազրիդեանք և Ա ոտեանք,
այսպիսիք և Յովհաննիսեանքն
Ա իկլեփ և Հուս . . . Եւ զար-
մանալ չէ արժան զի յաւուրս ժա-
մանակացն Ա ուտերի , յորս ան-
պատկառ Համարձակութեամբ
զեկեղեցւոյ պաշտօնեայն խոշ-
տանգէին , և հերձուածոցն ա-
ճեաց յոյժ և բազմացաւ զօրու-
թիւն , զի քան յամենայն ժա-
մանակս՝ առաւել յայնմ դա-
րու կասեցան բազումք՝ ի հաւա-
տոց :

” Եւ Արտինոս Ա ուտեր
յուխտէ Ազգոստինեանց վարդա-
պետ և ուսուցիչ աստուածաբա-
նութեան ՚ի Համալսարանին
Ա իրդենապերկայ , նախասկիզ-
բըն պատճառք յուզմանցս այսո-
ցիկ լինէր . քանզի և կրկին
դասքն որ Կորդէալս զանձինս
կոչեն , զնա Համարին հայր և
հեղինակ բարեկարգութեանն .

և ոչ լուտերեանքն միայն աշա-
կերտեալք աղանդոյ նորա , այլ և
բազումք եւս գովութիւնս բազ-
մապատիկո յաճախեցին նմա :
Քանզի և Կալուին սխրացեալ
հիանայ ընդ առաքինութիւնս
նորա , ընդ անսաղապ անյող-
դողդ միտսն և ընդ գերօրինակն
ձարտարութիւն , որով ընդդեմ
քահանայապետին ոգորեր : Ոող
էր նա , ասէ , աւագափող և շանթ-
ահընկէց , և կայծակն՝ որով զար-
թեաւ աշխարհ յանյարիր թըմ
բրութենէն . . . :

ԳԼՈՒԽ Բ .

Կաղուին և վարդապետութիւնն նորա :

Առաջնորդ կալուինական ա-
ղանդոյն եկաց Յովհաննէս Կա-
լուին ծնեալ 'ի Եղոն Գաղղիոյ
յամի 1509 : Ա պրժեալսորա առ

ուսու աշակերտացն । ուտերի որ
 առաքեցան 'ի Գաղղիա, և ոչ
 հաճեալ ընդ անկերպարան դա-
 ւանութիւն նոցա, արժան հա-
 մարեցաւ զկարծեցեալ բարե-
 կարգութիւնսն մուծանել և յա-
 ղանդ վարդապետութեանն । ու-
 տերի, և ազնուագոյն կարգս ըն-
 ծայեցուցեալ՝ նորոգիչ լինել
 Քրիստոսի եկեղեցւոյն 'ի հա-
 ւատս և 'ի վարս սրբութեան :
 Եւ չեն ինչ զարմանք, զի զա-
 ռաջնորդն թողեալ գՔրիստոս
 և զվարդապետն մերումն դաւա-
 նութեան, այնուհետեւ այր իւ-
 րաքանչիւր շամբուշ մոլեգնու-
 թեամբ խորհեր նախաթոռ յե-
 կեղեցւոջ բազմել : Այսպէս
 խրախուսեալ պնդեցաւ կալուին.
 և յամին 1531 գիրս իմն 'ի
 լոյս ընծայեաց Սահմանս Քրիստո-
 սի հաւատուց յորթորթեալ, յորում
 զմիակ զայս կանոն իւրոց աշա-

կերտելոյն դնէր առաջի , անմու-
լար առաջնորդյուղղութիւն վա-
րուց զգիրս սուրբս ունել . քան-
զի և Հոգին սուրբ , ասէր , շնչ-
'ի ձեզ զոր միանդամ կամի , և
զոր յօգուտ ձեր կարևոր համա-
րի :

Յօժարամիտ լուան բարբառոյ
քարոզութեան նորա Կանեւա-
ցիք . վասն որոյ և Կալուին հաս-
տատեաց անդէն ատեան եկեղե-
ցական ժողովոյ , կարգեաց կա-
նոնս աղօթից , որպէս և զորքոյ
պատարագին խորհուրդ զոր նոր-
աղանդք Տէրունի ընթրիս կոչեն :
Եւ ժողովոյն զոր սահմանեաց
ետ լիուլի լշխանութիւն պա-
տուհասս 'ի վերայ կապելոյ և
ընդ բանիւ զայնոսիկ առնելոյ՝
որք միանդամ այլ կարծիս յան-
ձին բերցեն , օտար յիւրոց խոր-
հըրդոցն և 'ի գնացից : Եւ որ
զՀոռովմայեցւոց եկեղեցին բամ-

բասէր վասն խստիւ զչերձուա-
ծողն պատուհասելոյ , հրով այ-
րեաց զԱՌիքայէլ Աերուետոս զո-
տիս իւր և զնախանձրնդդէմ:

Օ արմանք մի մեծ այս են
արդարեւ զի զսրբախօս տառսն՝ի
ձեռս առեալ նորաղանդ հերձե-
լոց, լուտերականք զվարդապետին
իւրեանց գտանեն զկարծիս , սո
կինեանք՝ զԱՌոկինոսին , անգղիա-
ցիք՝ զանգղիական անուանեալ
եկեղեցւոյն և կալուխականք
զԼալուընոյ : ԱՌէ ասասցեն մեզ
նոքին իսկ նորաղանդք եթէ ո՞ի
սոցանէ արդեօք իմաստից գրոց
սրբոցն ստուգութեամք խելա-
մուտ իցէ . ամենեքեան նոքա ի-
բրեւ առաքեալք յԱՌստուծոյ՝ի
վեր երևեցան . ո՞ր հովիւ զնոսա
առաքեաց , և կամ յո՞ր փարախ
ասաց ժողովեւ զցրուեալ գա-
ռինան . իցէ նոցա համարձակու-
թիւն ցուցանել զառաքելութիւն

իւրեանց որով օրինակաւ եցոյց
Վովսէս, եցոյց Քրիստոս, ցու-
ցին և առաքեալք և սուրբք առ-
հասարակ : Խակ՝ ի գոյանէ այր
իւրաքանչիւր առանձինն ձանա-
պարհ անձին իւրոյ և վարդապե-
տութեան հստեալ, զմիմեանս
թշնամաննէն և անգոսննէն, որ-
պէս զի յիրաւի խակ՝ ի վարանս
լինել մարդոյ եթէ զնյը՝ ի նոցա-
նէ արժան իցէ ընտրեալ առնուլ
զվարդապետութիւն և կամ զորն
մերժել :

Եւ այս են աւասիկ զլիա-
ւոր հանգամանք վարդապետու-
թեանն կալուընոյ :

Ա . Օ ի գոյութիւն հացին
ոչ փոխի ամենեւին՝ ի մարմին
տէրունական և յարիւն կենա-
րար . այլ զի հաւատովք եւեթ
ընդունիմք մեք զայն և ոչ ձըւ-
մարտութեամք :

Բ . Փրկելոցն նախասահմա-

նութիւն և անարգութիւն դա-
տապարտելոց բացարձակք են .
և զի կը կին վճռոցս արգասիք
կամ սկզբնառիթ պատճառք՝
կամք Աստուծոյ են , որ և ոչ
խել խտիր զնէ ընդ բարութեան
և կամ ընդ չար գործս մարդ-
կան :

Գ . Օ ի Աստուած շնորհէ
նախասահմանելոց հաւատս իմն
և արդարութիւն անկապուտ , և
զի ոչ համարի նոցա զմեղս :

Դ . Օ ի 'ի պատճառս սկըզ-
բնական մեղաց յայն աղէտս ան-
կան կամք մարդոյ , զի չկարէ
գործել ինչ բարի արժանի առ 'ի
փրկութիւն . դարձեալ և ոչ ինչ
անբարի կամ մեղանչական :

Ե . Օ ի յանհնարիցն է մար-
դոյ զդէմ ունել ախտաւոր ցան-
կութեանն . և զի յորժամ անձն
իշխան զմարդն ասիցեմք՝ զերծ
'ի բռնադատութենէն զնա ի-

մանամք, այլոչ և յանհրաժեշտ
հարկէն:

Զ. Օ ի մարդիկ հաւատովք
եւեթ արդարանան, և զի գործք
բարիք օգնեն և ոչ ինչ առ ՚ի
փրկութիւն: Եւ զի խորհուրդք
եկեղեցւոյ ոչ յայլ ինչ կարեորդ
են՝ բայց միայն առ ՚ի հաստա-
տուն առնել զհաւատս: Եւ ՚ի
խորհրդոց զերկուս միայն ընկա-
լաւ զի կրտութիւն և զաղոր-
դութիւն: Արհամարհեաց և
զարտաքին պաշտամունս և զա-
րարողութիւնս եկեղեցւոյն ուղ-
ղափառաց:

Այսպէս ահա որ յանստերիւր
շաւիղս փրկութեան զանձն հա-
մարէր, և անմոլար առաջնորդ
իւր և իւրոյն միայն զգիրս սուր-
բըս հրամայէր ունել, յանձնա-
պաստան յամենայն ՚ի պա-
տուէրս իւր և ՚ի խրատս վարդա-
պետութեանն՝ վազէր զաստուա-

ծախօս պատգամօքն . Վրիստո-
 սի տեառն և վարդապետին հե-
 թանոսաց ախոյան ընդդեմ յա-
 րուցեալ յուղիղ հաւատս խոր-
 հըրդոյ հաղորդութեան : Դարձ-
 եալ զհամօրէն մարդարէական
 զրոց և զառաքելոցն սրբոց և նո-
 րոյ աւետեացս օրէնսդիր գլքիս-
 տոսի առ ոտն հարեալ զհրաման
 'ի պահպանութիւն պատուիրա-
 նաց տեառն , ոչ կամեցաւ խո-
 նարհել բառնալ զխաչ իւր , և
 զհետ երթեալ Վրիստոսի՝ իւ-
 րէւ զբոնամարտիկ նահատակ
 յափշտակել զարքայութիւնն .
 այլ զմարդարէին ողբումն առ
 խրոխտն Խորայէլ , Ճշգրտեաց 'ի
 վերայ անձին և հետեւողացն
 եթէ “ Կորուստ քո 'ի քէն է , , .
 և 'ի բանից իւրոց ոչ արդարա-
 ցեալ զտաւ պարտաւոր :

Առդ կալուին խեղաթիւր նո-
 րոյ կրօնիցս վարդապետ՝ առեալ

Երկրորդեաց զողցես զամենայն
 մոլորութեան կարծիս հնոցն ա-
 ղանդաւորաց զլի իգիանտոսի ,
 զԴառնատեանց , զՊատկերամար-
 տից , զԲերենգարիոսի , զԸղբե-
 գեանց , զլի իկլեփեանց և զնախ-
 ընթաց կարապետին իւրում
 ուտերի : Առաջին խանձարութք
 նորա եկաց Գաենեւա , և անտի
 ապա մուտ գտեալ սպրդեցաւ 'ի
 բազում վայրս Եւրոպացւոց աշ-
 խարհին 'ի Օուիցցերի , 'ի Հռ
 լանտա , 'ի Ակովտիա և 'ի Բրու-
 սիա և 'ի սահմանս ինչ Գերմա-
 նիոյ . իսկ 'ի Գաղղիա և աղէտս
 եւս անհնարինս և բազում ա-
 րեանց Ճապաղիս յորդեաց :

Այսոքիկ քաջապտուղ արգա-
 սիք եղեն բարեկարգութեանն ,
 որ փոխանակ զհաւատս պայծա-
 ռացուցանելոյ՝ միւսանգամ'ի վեր
 եհան զբազմապատիկ մոլորու-
 թիւնսն որք յառաջին ժամանա-

կաց «Քրիստոսի հաւատոցն հեր-
քեալ դատապարտեցան՝ի հարց
և՝ի վարդապետաց . և նորաձայն
վարդապետութեամբն՝ի յուսա-
հատութիւն էարկ զանձինս եր-
կիւղածս , իսկ զանզգամս՝ի ձա-
խողակ իմն և յոգեկորոյս անձն-
ապաստանութիւն ,՝ի բաց բար-
ձեալ զամենայն սատարս և ա-
ռիթս՝ի գործել զառաքինու-
թիւն :

Եւ արդ մեր շատ համա-
րեալ զդուզնաքեայ նախաշաւիղ
բանիցս տեսութիւն , մատիցուք
՝ի ձառս քննութեան բԱՐԵ-
ԽՈՍՈՒԹԵԱՆ ՄՐԲՈՑ ԵՒ ՊԱՇ-
ՏԱՄԱՆ ՈՍԿԵՐԱՑՆ ՆՈՑՆ ԵՒ
ՊԱՏԿԵՐԱՑ , զօրավիզն մեզ և
Թիկունս զնոցայն բարեխօսու-
թիւն յերկնից մաղթելով :

ԳԼՈՒԽ Գ.

Երե զիսարդ մեծարոյ ևն Աստուծոյ
անձինք սրբոց իշրոց :

Աստուծած որ յամենայն 'ի
գործս իւր զարմանալին է և
սքանչելարուեստ , առաւել իմն
օրինակաւ սքանչելի է 'ի սուրբս
իւր , որպէս Հոգեքնար երգողն
վկայեաց Դաւիթ : Քանզի և ոչ
վարկապարազի ինչ , այլ յառաջ
քան զամենայն յաւիտեանս ըն-
տրեաց զնոսա , ժամանեցոյց փըր-
կութեան և վառաւորս յիւ-
րում անտրտմական արքայու-
թեանն արար , և 'ի ձեռն նոցա
և նոքօք սովորեցաւ զկամն իւր
և զհրամանս լսելի առնել ամե-
նայն աշխարհի : Ա ասն որոյ և
անդստին 'ի հին ժամանակաց
միսիթարել զնախաստեղծն կա-

մեցեալ ընդ Եղբայրազրաւ մա-
 հացելոյն , չնորհեաց զլիեթ ,
 զսիրեցեան յիւրմէ , և նախա-
 հայր զնա ծննդոցն կարգեաց որ
 որդիքն Իստուծոյ կոչեցան , և ոչ
 գնացին զհետ գարշութեան գոր-
 ծոց անիծապարտ ծննդոցն Այե-
 նի : Հաճոյ եղենմա Ինովս , քան-
 զի յուսացաւ կոչել զանուն Իս-
 տուծոյ , և զի՞նովք կենդանւոյն
 յերկինս փոխադրեաց : Ի՞այց ի-
 բրեւ ընտրեալքն առ ՚ի նմանէ
 խառնավար կենօք քաղաքավա-
 րէին , Իստուած զլոյ տապանա-
 կաւն ՚ի համայնաջինջ հեղեղաց
 ջուրցն փրկէր , որով զաշխարհ և
 զմարդիկ միանդամայն ապակա-
 նեաց , և յետ այնորիկ հոտոտէր
 ՚ի բուրումն զուարթագին անու-
 շեց ողջակիզաց արդարոյն , և
 ստրջացեալ իմն ընդ պատիժ
 պատուհասին զոր ՚ի վերայ մարդ-
 կան ածէր , զաղեղն իւր դնէր

յերկինա հաշտարար նշան աշ-
խարհի :

Դարձեալ և առ Արահա-
մաւ մինչդեռ ամենայն աշխարհ
յանաստուած անգիտութեան
դանդաչէր, առնոյր ընտրէր զնա
'ի ՞ Քաղդէացւոց աշխարհէն, և
'ի տեսիլ արթնութեան հրաման
տայր զսիրելիս և զկարեւոր ծա-
նօթան թողուլ, և երթալյեր-
կիրն զոր ինքն Աստուած ցուցցէ
նմա. քանզի “Արարից զքեզ, ա-
սէ, յազգ մեծ, և օրհնեցից զքեզ
և մեծացուցից զանուն քո և եղի-
ցիս օրհնեալ. և օրհնեցից զօրհ-
նիչս քո և զանիծիչս քո անիծից. և
օրհնեսցին 'ի քեզ ամենայն ազգք
երկրի,, : Առեալ տանի զնա մին-
չև 'ի ներքոյ կաղնեացն Ամ-
բուկի, և մինչև յաշխարհն Ե-
գիպտացւոց. պատուհասս 'ի վե-
րայ կապէ թագաւորաց որք խոր-
հեցան ապականել զկին նորա

զԱռաւ : Եւ Երբէք զի զհաւատո
 նորա փորձէ զիննսնամեան ար-
 գանդն Աառայի արգասաւորե-
 լով, և ապա զմիամօր և զսիրե-
 ցեալ որդին հրամայէ հանել՚ի
 զոհ . և զանթերի զհպատակել
 նորա տեսեալ՝ զհրեշտակն իւր
 առաքէ, զհարուածս ձեռինն ար-
 դելուլ : Ենորհս տասանց արդա-
 րոց խոստանայ ներել ամբարշտե-
 լոց բիւրաւորաց, և ամփոփել
 զհուր վրէժինդրութեան իւրոյ
 'ի հինգ քաղաքացն պղծելոց :
 Օ եղբօրորդեակն Արքահամու-
 զի ովտ թափէ 'ի միջոյ անօրի-
 նեալ Աուդոմացւոցն, քանզի նա
 միայն գտաւ արդար 'ի հինգ քա-
 ղաքսն, և ունկնդիր լեալ աղա-
 չանացն նորա՝ զԱեգովրացւոցքա-
 ղաքն յարժանահաս պատուհա-
 սէն զերծուցանէ . ինայէ յար-
 դարսն, և զհրեշտակն իւր առ
 նոսա յղէ ունել զձեռանէ նորա

և զձեռանէ կնոջ նորա և զձեռա-
 նէ երկուց դստերացն նորա . և
 մեծարանս երեսացն նորա արա-
 րեալ ոչ կործանէ զքաղաքն վասն
 բանիցն զոր խօսեցաւ ՚ Պ ովտ :
 (Յրհնեաց և զճնունդ որովայնի
 նորա զիսահակ և ընդ Յակով-
 բայ էջ՝ ՚ ի Քանան . եթարձ զա-
 մլութիւն ՚ ի կանանց նոցա , և
 խոստացաւ առաւել քան զաս-
 տեղս երկնից բազմութեամբ՝
 բազմացուցանել զսերունդս նոցա
 և զորդիս : Ընդ արդարոյն Յով-
 սեփայ էջ՝ ՚ ի զուք , և ՚ ի բանտի
 անդ վշտացն անմեկին առ՝ ՚ ի նմա-
 նէ կացեալ , փառաւորեաց զնա
 մեկնութեամբք երազոցն Փա-
 րաւոնի , և ամբարձ մինչև յեր-
 կրորդ գահ թագաւորութեանն
 Եղիպտացւոց : Խնայեաց ՚ ի սի-
 րելիս իւր և ՚ ի վշտաչարչար նե-
 ղեալսն , և զի՞ովսէս ՚ ի ջուրց
 փրկեալ , զնա առաջնորդ և փըր-

կիւ առաքեաց հանել զԱսրայէլ
 յերկիրն Աւետեաց . զջուրցն
 բռնութիւն առաջի նոցա խոր-
 տակեաց , և փոխանակ անպըտ-
 ղութեան դաշտացն յերկնից բար-
 ձանց տեղաց հաց , և թռչունս
 բիւրաւորս պանդխտեցոյց յանա-
 պատն , զի մի սովալուկ կորիցէ
 ժողովուրդն զոր սիրեաց . և 'ի
 հեստելնորա և 'ի մեղս ծանունս
 խոնարհել , 'ի պաղատանս ծա-
 ռային իւրոյ բարեգորովեալ ոչ
 թափեաց 'ի վերայ նորա զվրէժ-
 ինդիր ցասումն բարկութեանն
 սպառսպուռ ջնջելոյ զնոսա յեր-
 կրէ : Հրաման տայ Ո՞ովսիսի
 մեռանել , և զորդիս Յակովքայ
 անառաջնորդ ոչ եթող . էառ
 դիաղեք և զԵնու , և անթաց
 ոտիւք հրամայեաց ժողովրդեանն
 անցանել ընդ գարնանազայրն
 Յորդանէս . 'ի ձայն փողոյ և եր-
 գոց օրհնութեան զԵրիքով սա-

սամեցոյց և ահարեկ զթագաւորն արար, զատելիս իւր ջննեաց և զսիրելիս բարձրացոյց : Ասծ զնոսայերկիր անծանօթ և լարաբաժին արար՝ ի նոսա . և իրեւ ամբարշտեալք մոռանային զիստուած որ զիսրայէլյագիւար տացւոցն փրկեաց, ածէր՝ ի վերայ նոցա պատիժս պատուհասից . և զապաշաւել նոցա տեսեալ անբարկանալի ընութեանն, առնոյր ընտրէր զատաւորս՝ ի փրկութիւն առաքելով զնոսա : Աիրեաց զիստուէլ, հածեցաւ և ընդ Դաւիթ, և փոխանակ բարութեան գործոցն նորա ոչ կամեցաւ զիստարեալ պատուհասն ածել՝ ի գլուխ անօրինեալ զաւակին :

Երկարագունից արդարեւպէտք էին բանից եթէ կամեցեալ էր մեր մի ըստ միոջէ յիշատակել զիմնամն երկնաւոր սիրոյն առհնովքն, և առաւել ևս՝ ի նո-

ըումն , որպէս յառաքելագործ
 մատենէն և 'ի վկայաբանիցն
 պատմութենէ ստոյգ տեսու-
 թեամբ խելամտելոք կարասցէ .
 վարշամակին Պաւղոսի սքանչե-
 լիս գործել , ՊԵտրոսի և Հովա-
 նոյն անդամ բժկութիւնս կա-
 տարել , Փիլիպպոսի քաղաքաց 'ի
 քաղաքս հոգւով Աստուծոյ փո-
 խել , նախավկային սրբոյ և 'ի
 մահուան անդ զանմահութիւն
 աչօք բացօք տեսանել և վկայիցն
 սրբոց սքանչելիս անթիւս գոր-
 ծել , 'ի բորբոքեալ բոցոյն զեր-
 ծանել , 'ի սայրասուր նետից ա-
 պրել և զառւսերաց բռնութիւն
 քամահել : Եւ զիարդ այս ամե-
 նայն , բայց զի զիառաւորիչս իւր
 փառաւորեաց Աստուած :

Արժան էր ապաքէն զի որք
 այսպէս 'ի տեառնէ սիրեցան , ա-
 ւելի իմն փառաց և առ 'ի մարդ-
 կանէ լինիցին արժանաւորք : Եւ

զայս անդատին 'ի հին աւանդից
 ուսաւ եկեղեցի առանձինն մե-
 ծարանօք պատուասիրել զայնո-
 սիկ 'ի վերայ երկրի որ լաւու-
 թեան գնացիւքն և առաքինա-
 կրօն վարուք ծաղկիցեն : |
 ոչ ոք իշխեաց երբէք յաղագս
 այսորիկ ընդ ստղտանօք զնա-
 արկանել, բայց 'ի հակառակա-
 սիրացն ոմանց՝ որոց պատրուակ
 չարութեան սրտից իւրեանց զեր-
 կիւղած զգուշութիւն առեալ,
 հրահանգս թիւրս մուծանել
 խնդրեցին յեկեղեցի եթէ զուր
 տարապարտուց մեծարեմք ըզ-
 սուրբս և զսիրելիս լստուծոյ, և
 զի կուապաշտութիւն է այդ, զո-
 ղանալ զպատիւ միոյն և արարա-
 ծոց ձեռաց նորա ընծայել : |
 տես ինձ զորպիսիս ածեն նոքա 'ի
 մէջ պատճառս . զի ասեն նախ
 եթէ ոչ անձնիշխան ինչ կամօք և
 ազատութեամք սիրեցան նոքա

յԱստուծոյ, այլարդեամբքեւեթ
փրկողին զմեզ Վրիստոսի, և զի
նա եւեթ է, ըստ առաքելոյ, միւ
ջնորդ մեր ընդ Կատուած և ընդ
մարդիկ : Կարդ մեր մինչ չե 'ի
քնին զառանձին արդիւնս սրբոց
առեալ, տեսցուք եթէ արդարեւ
զիրկք յանձնիշխան կամաց իւ-
ցեն մարդիկ, և երկրորդ զինչ
խտիրն իցէ ընդ բարեխօսութիւն
Վրիստոսի և ընդ սրբոցն :

ԳԼՈՒԽ Դ .

Յաղագս անձնիշխան ազատութեան
մարդոյ :

Եթէ 'ի դժուարին ինչ և 'ի
գաղտնածածուկ ինդիրս ոք դան-
դացեսցէ բանիւք, չեն ինչ զար-
մանք . այլ 'ի մերկապարանոց
հմարտութիւնսն գթել և կա-
մակրութեամբ կալ մնալ 'ի նոյն

աններելի յանցանք են : Այս
 պիսի ինչ է և խնդիրս որ յա-
 զագս անձնիշխան ազատութեան
 մարդոյ : Քանզի որք լիուլի ա-
 զատութեամբ իւրեանց իսկ կա-
 մացն և անձնիշխան ընտրու-
 թեամբ վարեցան | ուտեր և
 կալուին, նոքին դարձեալ անձ-
 նանախատք՝ ընդդէմ զինեցան
 աստուածատուր ազատութեանն
 չնորհի, և ժխտեցին զնոյն . և
 քարոզ կարդացեալ բարձրաբար-
 բառ զաղաղակ բարձին եթէ չիք
 ազատութիւն 'ի մարդն, չիք ան-
 ձնիշխանութիւն . և զի Հռովմայ
 եկեղեցին և ամենայն հաւատա-
 ցեալք 'ի Քրիստոս՝ մոլորեցան
 և յայս բան դաւանութեանս :
 Եւ արդ տեսցուք եթէ Ճմարիտ
 իցեն բանք նոցա :

Անձնիշխանութիւն կամ ա-
 զատութիւն բնական սովոր եմք
 կոչել զիշխանութիւնն զայն գոր-

ծելոյ ոչ 'ի բռնութենէ ինչ բե-
 րեալ կամ 'ի հարկէ , այլ խոր-
 հըրդազգած ընտրութեամբ : Եւ
 քանզի ազատութիւն այսպիսի 'ի
 մարդն է ծշմարտութիւնն ինք-
 նին խղջի մտաց , ապա ուրեմն
 քաջիկ եւս ճանաչեմք զայն ներ-
 քին գիտակցութեամբ , քան ե-
 թէ այլով ինչ սահմանաւ : Եւ
 այնչափ բուռն է զօրութիւն իշ-
 խանութեանս , զի թէպէտ և
 շարժառիթք բազում բռնադա-
 տիչք գուցեն 'ի միջի , տակաւին
 մեք տեարք եմք մերումն ընտրու-
 թեան : Քանզի յորժամզմարդն
 ասիցեմք ազատ , խելամուտ լի-
 նիմք զի ոչ միայն իշխան է նա
 գործել ինչ և կամ ոչ , այլ և
 ազատ է յընտրել 'ի մէջ բարւոյն
 և չարին . այս է , 'ի գործել
 զգործ բարի կամ 'ի մեղանչել , 'ի
 կատարել զպարտս ինչ իւր և
 կամ 'ի հեղգանալ :

Ինդղէմ այսը ազատութեան
մարդոյ թշնամի և ոսոխ երեե-
ցան զառաջինն Ճակատագրա-
կանք և ապա լուտեր և կա-
լուին . սակայն և ընդղէմ զինե-
ցան ոչ միայն անսուտ գիտակցու-
թեանն , այլ և յայտնապէս ընդ-
ղէմբանից սուրբ գրոց և աւան-
դութեանց առ հասարակ :

Չիք ինչ այլ 'ի վարդապե-
տութիւնս հաւատոյ այնչափ
պարզ և մեկին յայտնեալ 'ի
գիրս սուրբս , իբրու դհաւատս
անձնիշխանութեան մարդոյ :
Քանզի անդէն 'ի սկզբան ա-
րարչագործ լինելութեանց ասեն
գիրք եթէ “ Ատեղծ Աստուած
զմարդն ըստ պատկերի իւրումե-
լստ նմանութեան , ” : Եւ արդ
եթէ մարդ անբաժ յանձնիշխան
ազատութենէն 'ի ներքոյ գրա-
ւեալ իցէ կրից ըղձիցն իբրու
զանասունս , և ընտրութիւն չու-

նիցի զկամակարութեանն, զիարդ
 այնուհետեւ նա պատկեր և նմա-
 նութիւն իցէ Աստուծոյ : Խօսի
 Աստուած ընդ մարդոյ, և պատուի-
 րէ և օրինադիր լինի նմա . իսկ
 պատուիրան և ոչ մի 'ի վերայ
 դնէ անասուն ստեղծուածոյն .
 քանզի Հարկն միայն է նոցա օ-
 րէնք առաջնորդական . օրինակ
 իմն, եթէ քաղցնուն ոչ կարեն
 ոչ ուտել, այլ Հարկ է զի կերի-
 ցեն . իսկ մարդ քաղցեալ, թէ-
 պէտ և սովալլուկ տանջիցի, այլ
 ոչ բռնադատի յուտել . զի կարէ
 ոչ ուտել, կամ թէ կամի՝ յապա-
 ղէ, և 'ի վերջէ ընտրութեամք
 մտացն ուտէ և աղատութեամք .
 ապա ուրեմն աղատ է և անձն
 իշխան, զերծ ոչ միայն 'ի բռ-
 նադատութենէ, այլ և 'ի Հար-
 կէ, զոր ուրացաւ Կալուին : —
 Պատուհասէ Աստուած զմեղու-
 ցեան մարդ իբրու օրինազանց . ա-

պա ուրեմն մարթ էր նմա անձն
 իշխանութեամբն զոր էառ յլ ս-
 տուծոյ , խոտորել 'ի չարէն և
 պահել զօրէնս պատուիրանին .
 այլ որոց անհրաժեշտ հարկ 'ի
 վերայ կայցէ 'ի մեղանչել , նոքա
 չեն իսկ ընդ պատժով պատուհա-
 սից : — Եւ դարձեալ յետ ան-
 կանելոյն Աղամայ , ասէ Աս-
 տուած ցկային , զթախծութիւն
 երեսացն նորա տեսեալ և զտա-
 ռապանս . “ Խնդէր տրտմեցար ,
 և խոնարհեցան անկան երեսք
 քո . ոչ ապաքէն եթէ ուղիղ ոչ
 բաժանես՝ մեղար . . . : Առւտէ ապա
 եթէ 'ի պատճառս սկզբնական
 մեղացն Աղամայ՝ սերեալքն 'ի
 նմանէ մարդիկ կորուսին զազա-
 տութիւն անձնիշխանութեան
 'ի գործելն իւրեանց զբարի կամ
 զչար , որպէս թիւրեցան ասել
 նորաղանդք . քանզի կային ազա-
 տութեամբ ուրեմն գործեաց ,

զի վկայէ ինքնին Աստուած եթէ
մեղաւ . և ուր ազատութիւն
չիք , չիք անդանօր և մեղք :

Ապա եթէ և լուսաւորագոյն
եւս քան զարեգակն կամեսցին
լսել զձառո լիուլի զանձնիշխա-
նութեան մարդոյ , ինքնին Ա-
ստուած յետ տալոյ Երբայեցւոյն
զօրէնս , ասէր առ նոսա 'ի ձեռն
Ո՛ովսեսի . “Պատուիրանքս այս
է զոր ես սպատուիրեմ քեզ այսօր .
ոչ ծանրաբեռն ինչ է և ոչ հե-
ռի 'ի քէն . մերձ է բանն առ քեզ
յոյժ . 'ի բերան քո և 'ի սրտի
քում է , և 'ի ձեռս քո է առնել
զնա : Ահաւասիկ ետու այսօր ա-
ռաջի երեսաց քոց զկեանս և
զմահ , զբարի և զչար : Ունիմ
ձեզ այսօր վկայ զերկինս և
զերկիր . զկեանս և զմահ ետու
առաջի երեսաց քոց . և ըն-
տրեա զկեանս , զի կեցցես դու
և զաւակ քո , : Եւ 'ի ձեռս տայ

մարդոյն ոչ միայն զգործելն, այլ
և զբնտրել։ Օնոյն պատուիրան
կրկնեաց նոցա և Քեսու Ար-
մեայ։ Եւ զիաքը զայսօրինակ
բարբառեր առ նոսա Աստուած,
Եթէ և զանձնիշխան ազատու-
թիւնն չէր տուեալ։

Եւ 'ի ձեռն մարդարէից ամենայն ուրեք պատուհասէ Աստուած զմեղս Խորայելի . և արդարապէս ոչ լինէր պատուհասն եթէ նոքա 'ի հարկէ զմեղս գործէին և ոչ ազատութեամբ : Ապա թէ ոչ, և կարի քաջ 'ի ձեռս էր նոցա արդարացուցանել զանձինս իբրու յակամայս ածեալ 'ի մեղս և ոչ կամաւորութեամբ . և ընդէր ապա աղաղակէր Պատիթ եթէ “Ո՞ի մտաներ ‘ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի , , :

Խակ ամենարուեստն անուա-

նեալ իմաստութիւն Յեսուայ
 Աիրաքայ , կարի յայտ յանդի-
 մանութեամբ զանձնիշխան ա-
 զատութիւնս մեր քարոզէ յա-
 սելն . “ Ո՞է ասեր եթէ վասն
 տեառն ապստամբեցի . մի ասեր
 եթէ նա մոլորեցոյց զիս . զի չէ
 նմա սլիտոյ այր մեղաւոր : Ինքն
 ’ի սկզբանէ արար զմարդ , և ե-
 թող զնա ’ի ձեռս կամաց նորա :
 Եթէ կամիս՝ պահեսցես զպա-
 տուիրանս : Եղդ առաջի քո հուր
 և ջուր , ուր և կամիս՝ ձգես
 զձեռն քո . առաջի մարդոյ կեանք
 և մահ . և զինչ հաճոյ թուեսցի
 իւր , տացի նմա , : Վաջայայտ է
 ապաքէն եթէ ամենիմաստն Աի-
 րաք առաջի աչաց ունելով զբանս
 Ո՞վսեսի զոր վերագոյնդ յիշա-
 տակեցաք , և այնպէս գրեաց զոր
 գրեացն : Ո՞ւր թողից և զայլ եւս
 բազմապատիկ իմաստս ’ի հին
 կտակէն նշաւակիչս մոլորելոցն :

լակ 'ի նորումն՝ թուի իմն ե-
 թէ 'ի ձեռս կամաց մարդոյ թո-
 ղու տէր զփրկութիւննորա. քան-
 զի ասէ . “ Եթէ կամիս մտանել
 'ի կեանս , պահեա զպատուի-
 րանս „ . վասն որոյ և յանիրաւի
 իսկ ժաղչեցան ասել անհա-
 ւանք եթէ ոչ ինչ յայտնապէս
 ուսոյց Քրիստոս յաւետարա-
 նին յաղագս անձնիշխան ազա-
 տութեան մարդոյն . զինչ և
 յաղագս ահաւոր տէրունական
 բանիցն ասասցուք զորս ընդ ե-
 րուսաղեմացւոց քաղաքին խօսե-
 ցաւ , յորժամզիստասրտելնոցա-
 տեսեալ լայր և ասէր . “ Քա-
 նիցս անդամ կամեցայ ժողովել
 զմանսկունս քո , զոր օրինակ ժո-
 ղովէ հաւ զձագս իւր ընդ թե-
 ւօք , և ոչ կամեցարուք . ահա-
 ւասիկ թողեալ լիցի ձեզ տունդ
 ձեր աւերակ „ : Կմանօրինակ
 իմն բանիւք և Պիսականուն նա-

խավկայն զանհաւանսն կշտամ
քեր . “ Խստապարանոցք , ասէ ,
և անթլփատք սրտիւք և ական-
ջօք , դուք հանապազ հոգւոյն
սրբոյ հակառակ կայք . որպէս
հարքն ձեր և դուք , : Հակառա-
կամարտ ուրեմն և շնորհաց հո-
գւոյն սրբոյ կանգնի ազատու-
թիւն մարդոյ :

Եւ յորժամ Առաքեալ ’ի կո-
րընթացւոցն պատճենի ասեր
յառաջնումն , եթէ “ Հաւատա-
րիմ է Առտուած որ ոչ արկցէ
զձեզ ’ի փորձութիւն առաւել
քան զկար ձեր , , ’ի խաթս պատ-
րանաց կամէր անշուշտ զլսելիսն
արկանել , եթէ արդարեւ մարդ
բուռն և անհրաժեշտ հարկիւ
ձգեալ ’ի բնութենէ , ոչ եւս այ-
նուհետեւ իշխան և տէր իցէ ան-
ձին զգէմ ունել փորձութեանց ,
որպէս աղանդաւորքն ուսուցին և
զհիմունսքանդել կամեցան զուգ-

զութեան հաւատոցն։ Վանդի և
այնչափ մեծ է վարդապետու-
թիւնս այս և ապաւէն հաստա-
րանի այլոցն ամենեցուն, զի և
ինքն Պայլի անուանին և քաջա-
գէտ 'ի նորաղանդս, որ զամե-
նայն Ճիզն թափեաց անհետ 'ի
միջոյ զվարդապետութիւնս զայս
կորուսանել, խոստովան եղեւ ա-
պա զի եթէ կարասցէ ոք յերկ-
բայս զայն արկանել, յոր ինքն
չեղեւ գամագիւտ, յերկիր այ-
նուհետեւ ուղղափառաց վարդա-
պետութիւնք կործանեսցին։

Ա ասն որոյ և ամենայն հարք
սրբոյ եկեղեցւոյ յայտնաբար-
բառ քարոզեցին զազատութիւն
անձնիշխանութեան մարդոյ՝ յըն-
տրութիւն առնել 'ի մէջ բարւոյն
և չարի և 'ի գործել. և սուրբն
մեծն այն Եղոստինոս Ճիպպո-
նայ հայրապետ, որ ընդդէմ Պի-
ղագեանց միայն անձնիշխանու-

Ծեամբ մարդոյն անհնար զփըր-
 կութիւնն համարէր առանց օ-
 ժանդակութեան աստուածային
 շնորհացն , զնոյն դաւանեաց և
 արձանագրեաց , ոչ ինչ աղարտե-
 լով ամենեւին զհաւատո անձնիշ-
 խանութեանն : Այո , ասէր աս-
 տուածիմաստ հայրապետն , յետ
 մեղաց նախաստեղծ մարդոյն
 տկարացեալն 'ի ցանկութենէ
 քնութիւն՝ առաւել իմն հակա-
 մէտ է 'ի չարն քան 'ի բարին . այլ
 ոչ եթէ կապտեալ և ունայն յա-
 զատութենէ . վասն որոյ և առա-
 ւելագոյն եւս պէտս ունի այժմ
 օգնականութեան աստուածային
 շնորհաց . իսկ շնորհքն , փոխա-
 նակ քակելոյ , ասէ , և զազա-
 տութիւն եղծանելոյ , առաւել
 եւս զմեղ ամրապնդեն , և դեղք
 ապաքինիչք են սկզբնառիթ վի-
 րացն . Ո՞ ոք , ասէ , 'ի մէնջ
 իշխեսցէ ասել երբէք եթէ ազգ

մարդկան կորոյս զաղատութիւն,
յօրէ յօրմէ մեղաննախաստեղծք
..... նա մանաւանդ լի և ան
թերի եկաց մնաց անձնիշխա-
նութիւնն ՚ի մեղաւորս, և վասն
այնորիկ իսկ մեղաւորք կոչին և
են՝ զի մեղանչելովն գործեն զայն
ինչ զոր ինքեանք կամեցան,,,: Եւ
այլ ուրեք դարձեալ. “ Իսկ
զիարդ ապա, ասէ, ետ մեզ Առ
տուած զօրէնս եթէ ոչ եւս գոյ
՚ի մեզ անձնիշխան աղատու-
թիւն . քանզի առանց այնորիկ
և ոչ մի հնազանդութիւն գոյ
ամենեւին ,,: :

Ապա ուրեմն ըստ Ճզբիտ վար-
դապետութեան մեծին Առգոս-
տինոսի, քաջայայտ է եթէ յոր-
ժամ մարդ բերի առ չարն, ոչ ե-
թէ անյաղթելի իմն օրինակաւ-
ձգի ՚ի ցանկութենէ, որպէս մո-
լորեցաւ ասել Կալուին. և թէ
յորժամ գործէ զբարին՝ ոչ եթէ

անդիմադարձ իմն օրինակաւ
 բռնագատի 'ի շնորհացն , այլ
 ունի նա և զկատարեալ իշխա-
 նութիւն ընտրելոյ , և գործէ
 վիուլի ազատութեամբ՝ որպէս
 զշարն նոյնպէս և զբարին : Եւ
 է այս անարատ վարդապետու-
 թիւն կաթուղիկէ եկեղեցւոյ .
 քանզի և 'ի հաստահիմն վկայու-
 թիւն 'ի զրոց յաղագս գեղե-
 ցիկ միաբանութեան անձնիշխա-
 նութեան մարդոյն ընդ շնոր-
 հացն ազգեցութեան , ասէ Աս-
 տուած առ մարդիկ . " Դարձա-
 րուք առ իս , և ես դարձայց առ
 ձեզ . . . — Ահա կամակար ազա-
 տութիւն մարդոյ : — Խսկ զի
 պէստք են և ազգեցութեան շնոր-
 հացն Աստուծոյ , վասն որոյ և
 ասեն մարդիկ առ Աստուած .
 " Դարձո՞ զմեզ տէր , և դարձ-
 ցուք առ քեզ . . .

Դայց լայնատարր ասպարէզ

վարդապետութեանս հաւատոյ
 յառաջ քան զմեծն Աւգոստի-
 նոս Եբաց մերս Հայաստանեայց
 Հայր և հաւատոյ հեղինակ, և՝ ի
 նոյն քաջապէս կը թեալ զհօտն
 զգուշացաւ յապականիչ գայլոց և
 'ի սկզբան անդ այնչափ իմն
 լուսաւոր վարդապետութեամբ
 վասն անձնիշխան ազատութեան
 մարդոյ, որչափ ոչ ոք 'ի նախնի
 սրբոց հարց : Քանզի աստուա-
 ծայինս այս Գրիգորիոս 'ի Յա-
 ճախապատում գիրս իւր զնոյն
 քարոզէ 'ի վեր և 'ի վայր .
 Կարգեաց, ասէ, Աստուած
 զաշխարհս որպէս դպրոց (վասն
 մարդոյն) զի լաւութեան հան-
 դիսիւք առաքինասցեն... զի նախ
 'ի սկզբան զմտաց խնդրէ զուղ-
 ղութիւնն օրինադիր բանն, և
 ապա 'ի մշակութիւն կացու-
 ցանէ առնել զօդտակարան և 'ի
 բաց կալ 'ի վնասուց ... զոր ետ

Աստուած (մարդոյն) 'ի պատիւ
 անձնիշխան կամացն՝ որպէս որ-
 դոյ 'ի խնամակալութիւն . . . :
 Օ ի մարդ հնարագէտ է 'ի
 խնամակալութենէ արարչին առ
 'ի պէտս իւրոյ փրկութեանն և
 վայելելոյ 'ի բարութիւնսն ան-
 ձնիշխան կամօք . ոչ որպէս ծա-
 ռայ ընդ հարկօք , որպէս և այլ
 արարածք իցեն : Որոց զբարիան
 զործեալ են , փառք և անմահ
 կեանք . և որոց զչար արարեալ,
 տանջանք և անմահ մահն որ յա-
 ւիտենից : Եւ այսր ամենայնի
 աշակերտ արար զմարդն , զի ան-
 ձնիշխանն կամօք խնդրէ զօդ-
 տակարսն և որոշէ 'ի վնասակա-
 րացն . . . : Օ ի կամք անձնիշխա-
 նականք՝ որ ոչ գնայ յիրաւունս
 արդարութեան , պատժին : Եւ
 թէ փոխեն զդմնդակ վարսն 'ի
 լաւութիւն , դառնայ և ժամա-
 նակ կենաց նորա ('ի խաղաղու-

թիւն) . . . : Տես որչափ իշխան
է մարդն , զի և զՄստուած 'ի
կամն իւր ածէ յառնելն զբարին :
Եւ իշխանութիւն է մեզ փոխել
զժամանակ (պատուհասի մե-
ղացն) բարի գործով 'ի բարիս .
և դարձեալ 'ի չար , եթէ մեղ-
սասէրք լիցուք : Զէ Նշ է զիւշ-
տանդանսն 'ի գդուանս դարձուցա-
նել . և դարձեալ զնոյն սէր 'ի բար-
իս-լիւն * . . :

Այլ հնչեսցեն արդեօք երկո-
քին ականջք հակառակամար-
տիցն 'ի լսել անդ և զբանքս որ
առաջի կայ . “ Որպէս և զիարդ
կամիմք , ասէ , կարեմք փոխելզա-
ւետիսն 'ի սպառնալիս և 'ի պա-
տուհաս : Կարող եմք և զկեանս
մեր փոխել 'ի մահ և զմահն 'ի
կեանս , և զկարգեալ սահմանն
Վստուծոյ՝ որպէս կամիմք շըթեմք .

* Յաճախապատում գիրք , Ճառ . ի :

'ի բարի և 'ի չար, որ Աստուծոյ
 միայն է կարողութիւն „ : Եւ
 զմեծ զայս վարդապետութիւն
 իւր հաստատուն առնէ և դրոց
 սրբոց վկայութեամբ . “ Եթէ
 ախորժեսջիք, ասէ մարդարէն,
 և լուիջիք ինձ, զբարութիւնս
 երկրի կերիջիք . և եթէ ոչ կամի
 ցիք լսել, սուր կերիցէ զձեզ „ :
 Եւ այլ ուրեք դարձեալ * քա-
 ջայայտ եւս վարդապետու-
 թեամբ՝ թուի իմն եթէ խորա-
 մուխ հոգւոյն աչօք տեսաներ
 լ ուսաւորին զլ ուտեր և զլա-
 լուին քանդիչս հիման հաւատոց
 'ի քանդել անդ զանձնիշխանու-
 թիւն մարդոյն . “ Արակէս երկիր-
 բարի, ասէ, զսերմն բարի ընկա-
 լեալ բազմապատիկ առնէ զար-
 դիւնս, նոյնպէս զսերմանեալն 'ի
 մեզ խրասս բազմապատիկս ա-

ըասցուք արդիւնս իշխանական կա-
 մաք „ : Խակ անօրէն վարդապետն
 եթէ նմա ընդդէմ դարձցի । ու-
 տեր , եթէ „ Օ ինչ պէտք ի-
 ցեն իշխանական կամացն ’ի պրտ-
 ղաբերել „ , ամօթապարտ յաղ-
 թահարէ զնա աստուածիմաստ
 । ուսաւորիցն և ասէ . “ Ա ասն
 այսորիկ եղեն մեղաւորք ժա-
 ռանգորդք յաւիտենական տան-
 ջանացն , զի յանձնիշխան կա-
 մացն այլ և այլ բարք ծնանին , և
 ’ի բարուցն գործք , և ’ի գործոցն
 սննուանի չար կամ բարի , և
 ըստ անուանն հատուցումն : Եւ
 բարւոյ կամացն ծնունդ բարի ,
 նոյնպէս և յանհնազանդութենէ
 ամենայն դժնդակութիւնք ծնա-
 նին , և պատճառ այսոցիկ ծնըն-
 դոց՝ անձնիշխան կամակարու-
 թիւն մտացն ’ի լաւն կամ ’ի
 վատթարն հակամիտեալ „ : Եւ
 հրաշալի եւս օրինակաւ աս-

տուածաբանելով զաղատութենէ
 նէ մարդոյն ոչ միայն 'ի բըռ-
 նադատութենէ զերծ՝ այլ և 'ի
 հարկէ զբնտրութիւն կամացն
 'ի ներքս ածէ ընդդեմ լալուընոյ
 կարծեաց. զի չասէ թէ որք առ-
 նեն զբարին՝ երանելիք են, այլ
 թէ “ Որք ընտրեն զբարին և
 առնեն, երանելիք են . . . : Դակ
 ուր հարկ է, չիք անդ ընտրու-
 թիւն . . . Քանզի անձնիշխա-
 նական կամքն, ասէ, շարժէ
 (զմարդն) յոր և կամի, եթէ 'ի
 լաւն և եթէ 'ի վատթարն . . . :

Դարձեալ և յերախայացու-
 ցանել անդ իւրում զհայաստան
 ժողովուրդ 'ի վաթմորեայ վար-
 դապետութեանն, 'ի նոյն հա-
 ւատս անձնիշխանութեան ամրա-
 ցուցանէ իբրեւ 'ի հիմն յուսոյ
 հաւատացելոց վասն վարձուցն
 հատուցման . . . Օ իսրայէլ, ասէ,
 իմանալի է զլինելն մարդոյ ըստ

տպատկերի Աստուծոյ և ըստ նմանութեանն ։ Եւ տայ ինքնին զպատասխանին . ։ Ո՞ւ վասն իմաստութեան և բանաւորութեան , և մի վասն այսորիկ ասէ նման , վասն անձնիշխանական կամացն իշխանութեան . զի զմարդն թողեալ է (Աստուած)՝ի կամն անձնիշխան կամաց . վասն զի իւրովք կամօք անձնիշխանութեան գիտացեալ ընդ բարեացն գործոց չնորհս գտանել՝ի բարերար արարչէն . զի գիտասցէ խոյս տալ՝ի չարէն և զբարին ընտրել իւրոյ կամացն լաւութեան է բայց ինչեան ժաշունէնէ . որով անձնիշխան կամօքն յարարչէ անտի զիւրոց զվաստակոցն առեալ զփոխարէնո՝ պատուեսցէ * ։ :

* Ագաթանգեղոս , ՚ի քարողութեամն Լուսաւորչին :

Այսկս և ընդդեմ այնոցիկ որ
 բաշխից և հրամանաց ասեն զտի-
 եղերս կալ՝ ի հարկի և ՚ի ծա-
 ռայութեան, զանքան արարածն
 ընդ անձնիշխան մարդոյն՝ ի բար-
 դատել առեալ „ Ամենայն արա-
 րածք, ասէ, ընդ հնազանդու-
 թեամբ ծառայութեան են հար-
 կեալ, զի մի ինչ այլ աւելի իշ-
 խեսցեն գործելքան զայն՝ որչափ
 ինչ նոցա հրամայեցաւ . . . Ար-
 կինք և երկիր, արեգակն և լու-
 սին և բազմութիւնք աստեղաց,
 և ծովք, գետք, գազան և անա-
 սուն, սողուն և թռչուն, ձկունք
 լուղականք, լեալք լինելոցք, զիւ-
 րաքանչիւր կարգեալսն ըստ իւ-
 րաքանչիւր հրամանացն մատու-
 ցանեն : Այս միայն մարդոյն
 անձնիշխան թողան կամքն, զինչ
 և կամեսցի . և զանձնիշխան կա-
 մաց նմա հրամայէ կամակար իշ-
 խանութիւն . . . :

Եւ զոր մեծն Աւգոստինոս
 յայտնաբանեաց վերագոյնդ ,
 նախ քան զնա | ուսաւորիչն մեր
 ասաց եթէ “ | պատճառաց ան-
 ձնիշխանութեանն լինիմք մե-
 ղաւորք կամ արդարք „ : Այլ
 սակայն և զհարկաւորութիւն
 աստուածային շնորհացն զոյդ
 ընդ աղատութեան մարդոյն ’ի
 գործս՝ ամենայն ուրեք Ճոխա-
 գոյնս ’ի դիրս իւր աւանդէ : |
 նոյն և ամենայն հարք սուրբք
 և վարդապետք Հայաստանեայց
 կրթեցին զհաւատացեալ ժողո-
 վուրդն պնդապէս * , իբրեւ ’ի
 հիմն հաստատուն արդեանց ա-
 ռաքինութեանց նոցա , յորժամ
 որպէս | ուսաւորիչն ասաց , մարդ

* Առանձինն իմն օրինակաւ երանելի
 հայրն մեր և Բագրեւանդայ հայրապետ
 Եղիշիկ կողբացի յԵղծն աղանդոց հե-
 թանոսաց :

Երու յինքեան քաջութենէ՝
 սաստ՚ի վերայ կապէ անձնիշ-
 խանութեամբն ախտաւոր ինչ
 կրիցն, և յաղթէ՝ ՚ի շնորհացն
 բարձրելոյն։ Առ գործէ նա յայն-
 ժամ ոչ զոր ախորժէ, այլ զոր
 պարտի։ զհետ երթեալ ազա-
 տութեամբն գեղեցիկ խղճի
 մտացն իւրոց և ոչ ձախողակ և
 թիւր յօժարութեանց, իրու
 յանհրաժեշտ հարկէ, որպէս մո-
 լորեալքն ուսուցանէին։ Այսպէս
 ահա ՚ի մարդոյ ձեռս ետ Ար-
 տուած զանձնիշխանութիւն,
 տուեալնմին և զշնորհաց օժան-
 դակութիւն։ մտադիւր ընկալան
 առ ՚ի նմանէ զկրկնակի ձրիա-
 տուր պարզեւսն ամենայն մար-
 դիկ, այլ ոմանք հաւատարիմ
 զգուշութեամբ կացին պատկառ
 զանձուցն, և բազմապատիկ շա-
 հեցուցին։ իսկ և այլք ոմանք ի-
 բրեւ զքանքարաթագոյցն անպի-

տան ծառայ՝ խիթացան ընդ
 տեառնն բարութիւն, ծրարեցին
 'ի վարշամակի զշնորհսն զօր ըն-
 կալան, և ինքեանք զունայնու-
 թեան և զչարութեան գնացին
 զհետ : Ել սերմանահանն ար-
 կանել սերմանս յագարակի աշ-
 խարհիս . այլ յոմանց զհարիւ-
 բաւորն ընկալաւ արգասաւորու-
 թիւն, յոմանց զվաթմնաւոր,
 յայլոց զերեսնաւորն, և զբազ-
 մագունից ետես զչորանալ և
 զցամաքել : Խարկ զուռկան հա-
 ւատոցն և զաւետարանին, և
 զպիտանիսն յանսիտանեաց մաք-
 րեալ զբարի բարին առ իւր կա-
 լաւ, և զխոտանն 'ի բաց ընկէց :
 Ե՞լ յերկնից վասն ամենեցուն,
 և վկայեաց աստուածային բար-
 բառովն եթէ “ Շաղումք են կո-
 չեցեալք և սակաւք են ըն-
 տրեալք ” . այլ թէպէտ և սա-
 կաւք ոմանք, առաքինութեան

ընդ դժուարին ասպարեզն քա-
 ջութեամբ անցին . Եղեն նոքա
 “ նահատակը պատերազմողը ,
 զօրաւորը զօրութեամբ , առա-
 քինեալք զինուն արդարութեան ,
 մտեալք ’ի պատերազմ պատենա-
 զէն զինուն կազմութեան . որ
 ժամանեալ պնդակազմ մարտիւն
 առին զառաւել յաղթութիւնն
 յաւիտենական . . . որ ընկալան
 զմիթարութիւն խոստմամբք
 պատրաստեալ յուսոյն , և առ ’ի
 սիովիութիւն ժամանակեայ վրշ-
 տացն : Այս է ժամանակեայ
 տրտմութիւնն զոր մոռացոյց ան-
 վախճան ուրախութիւնն . այս է
 սէր Ճշմարտից . որչափ մտանէ
 ’ի քննութիւն , եւս քան զեւս
 վառի և նորոգի . զի զօրութեամբ
 հեռաւոր խոստմանցն յաղթեցին
 մերձաւոր տաննջանացն . . . ժա-
 մանակեայ նեղութեամբս զյա-
 շիտենական հանգիստն ընկա-

լեալ * „ : Ա ասն որոյ և 'ի զուր
 է նորաղանդիցն ասել եթէ սըր-
 բոցն դասք յակամայս իմն ա-
 ծեալք լինէին 'ի գործ բարու-
 թեան , որ արգասիք եւեթ Ա-
 տուծոյ շնորհացն են և ոչ նոցա
 ինչ առաքինի լաւութեան : Օ ի
 եթէ վասն ամենեցուն մեռաւ
 Վրիստոս , այլ ոչ ամենեքին
 վասն նորա զմահ յանձն առին ,
 կամ ինդութեամք ինչ զաշ-
 խարհական վայելչութիւնս ար-
 համարհեցին : Վանդի և ան-
 սուտ է Ճմարտութեանն բան
 թէ “ Ոք սիրէն զիս՝ սիրեսցի 'ի
 հօրէն իմմէ „ :

* Եփրեմ Խուրին ասորի , 'ի վկայմն
 արևելից :

ԳԼՈՒԽ Ե .

Յաղացս բարեխօսութեան Քրիստոսի :

«Բանզի նորադանդք զպաշտօն
և զբարեխօսութիւն սրբոց հա-
մարձակաձայն մերժեցին 'ի թի-
կունս իւրեանց զերանելի առա-
քելոյն զբանս առեալ զորս առ-
եփեսացիան զըհէր եթէ Այս
է խաղաղութիւն մեր , որ արար
զերկոսեան մի , և զմիջնորմն ցան-
կոյն քակեաց զթշնամութիւնն
'ի մարմնի իւրում . . . սպան
զթշնամին 'ի մարմնի իւրում ,
արժան համարիմ աստեն և յա-
ղացս բարեխօսութեան Քրիս-
տոսի և միջնորդութեան նորա-
խօսել սակաւուք :

«Բաջայայտ է ապաքէն զի
Քրիստոս Աստուած յորժամ»

զմարդկեղինս զգեցեալ ընու
 թիւն եկն և միացաւ ընդ մեղ
 առեցելով մարմնովն , բազում
 անդամ եկաց յաղօթս առ 'ի
 յորդորամիտս և զմեղ առնել 'ի
 մշտամուունչ հայցուածս և 'ի
 պաղատանս : Եւ բազմադիմի
 պատճառք աղօթից մերոյ փըրկ-
 չին էին . և նախ առաջին առ 'ի
 զհայր իւր մեծացուցանել և փա-
 ռաւոր առնել , և կամ զնմանէ զո-
 հանալ . որպէս յորժամ զքաղ-
 ցեալ և զլսասէր ժողովուրդն
 յագեցուցանել կամելով՝ էառ
 զհինդ նկանակն , հայեցաւյեր
 կինս և օրհնեաց , և յորժամ
 զ ազարոս զքարեկամն իւր 'ի
 չորեքօրեայ մեռելութենէն յա-
 րուցանէր , և 'ի խորհրդական-
 վերնատանն զգոյութիւն հացին
 'ի տէրունեան մարմին փոխար-
 կէր : Ազօթեաց և 'ի Ձիթաս-
 տանիմն յորժամ ոլոռն ոլոռն ա

ըիւնն հեղեալ ընթանայր , և
զայրն աղաչեաց մարդասէր
զգառնակսկիծ չարչարանացն ան-
ցուցանել'ի նմանէ զբաժակն . ոչ
զի հրաժեշտ 'ի փրկագործ տնօ-
րինականացն կամէր տալ , այլզի
մեզ յայտ զՃմարիտ և ոչ զառ-
աչօք մարդեղութիւնն արասցէ ,
և խրախուսեսցէ զմեզ կամն
համակամն ընդ Աստուած ունե-
լոյ : Ազաղակէր առ հայր և վասն
անօրէն խաչահանուացն , և բա-
րութեամբ փոխարինէր չարու-
թեան նոցա , զլի և զկատա-
րեալ օրինակ սիրոյն մեզ աւան-
դելով :

Եւ արդ որպէս յերկրի աստ
նոյնպէս և յերկինս ոչ աղօթէ
լոկ , այլ և բարեխօսէ վասն
մեր , և է միջնորդ ընդ Աստուած
հայր իւր և ընդ մարդիկ . քան-
զի յորժամ'ի մեռանելեկեալ և
զտրտմազգեաց աշակերտսն սփո-

փէր, ասէր ցնոսա և քաջալէր
 բանիւք զնոցա արտասումն Ծնջէր
 եթէ “ Ես աղաչեցից զհայր,
 և այլ մխիթարիչ տացէ ձեզ,, .
 վասն որոյ և Հայաստանեայցս
 եկեղեցի ’ի տօնախումք յիշա-
 տակի գալստեան սրբոյ հո-
 գւոյն երգէ եթէ “ Առաքեցար
 ’ի հօրէ հոգիդանեղ և համագոյ,
 աղաչանօք տնօրինաբար քում
 էակցին՝ լինել մխիթարիչ սուրբ
 առաքելոցն,, . և Պաւղոս, “ Օ ի
 ոչ եթէ ’ի ձեռագործ սըրբու-
 թիւնսն եմուտ Վրիստոս յօրի-
 նակս Ճշմարտութեանն , այլ ’ի
 բուն իսկ յերկինս յանդիման
 լինել երեսացն Աստուծոյ վասն
 մեր,, . և դարձեալ . “ Յիսուս
 Վրիստոս որ մեռաւն , մանա-
 ւանդ թէ յարուցեալ իսկ է , և
 է ընդ աջմէ Աստուծոյ , որ և
 բարեխօս իսկ է վասն մեր,, :
 Եւ սիրեցեալ աշակերտն Յով

Հաննէս 'ի կաթուղիկեայց թըլ-
 թին յառաջնումն գրէ եթէ "Ար-
 դեակք իմ, զայս գրեմ ձեզ զի
 մի մեղիցէք, և եթէ մեղիցէ ոք՝
 ունիմք բարեխօս առ Աստուած
 Քիսուս Քրիստոս զարդարն և
 զանարատն, և նա է քաւութիւն
 մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն
 միայն, այլ և ամենայն աշխար-
 հի . . . : Ապա ուրեմն յայտ է եթէ
 Քրիստոս է միջնորդ և հաշտե-
 ցուցիչ առ Աստուած բարեխօ-
 սութեամք իւրով . և ոչ աս-
 տուածութեամքն եւեթ այլ և
 մարդկութեամք . վասն որոյ և
 Գրիգորիոս Ապօղիանզու հայրա-
 պետ յԱռ որս գիրսն ընդդէմ Ա-
 րիանոսաց գրէր, որք ասէին եթէ
 ըստ աստուածութեան եւեթ
 բարեխօսէ որդին, վասն որոյ և
 կրտսեր քան զհայրն զնա համա-
 րէին . " Անսերորդ զայն ասաս-
 ցեն, յամենայն ժամ կենդանի

է հանդիպել յաղագս մեր : Գե-
 ղեցիկ և յոյժ խորհրդաբար և
 մարդասիրաբար . քանզի հան-
 դիպելն ոչ որպէս բազում է սո-
 վորութիւնն՝ խնդրելն զվրէժ-
 խնդրութիւնն ունի ... այլ բա-
 րեխօսել վասն մեր բանիւ միջ-
 նորդութեանն ... վասն զի մի է
 Աստուած , մի և միջնորդ Աս-
 տուծոյ և մարդկան մարդն Յի-
 սուս Քրիստոս . բարեխօսէ տա-
 կաւին և այժմ իբրեւ զմարդ
 յաղագս իմոյ փրկութեանն . քան-
 զի հանդերձ մարմնովն է զոր
 էառն , մինչեւ զիս արասցէ Աս-
 տուած զօրութեամբ մարդանա-
 լոյ : Յահապէտ և ոչ այսուհետեւ
 մարմնական Ճանաչիցի . մարմնա-
 կան ասեմ զախտս մեր և առանց
 մեղաց : Այսպէս և բարեխօս
 ունիմք զՅիսուս , իբրեւ ոչ յա-
 ղագս մեր 'ի ծունը իջեալ առա-
 ջի Հօր , և անկեալ ծառայաբար .

'ի բաց տար արդարեւ ծառայա-
 կան կարծիս և զանարժանս հո-
 գւոյն . զի և ոչ 'ի հօրէ զայն
 հայցել և ոչ որդւոյ կրել, և կամ
 իբրեւ յաղագս Կ ստուծոյ զմտաւ
 ածել յիրաւացի է . այլ որովք
 փորձեցաւ իբրեւ զմարդ , հա-
 ւանեցուցանէ ժուժկալել իբրեւ
 զբան և զյորդորիչ . այս է բա-
 րեխօսութիւնն „ : Ա ասն որոյ
 և Ա արգիս աղաղակէ Հայոց
 վարդապետ 'ի կաթուղիկեայցն
 մեկնութեան 'ի բանն Յովհան-
 նու եթէ Ա ւնիմք բարեխօս զ՞ի-
 սուս Վ րիստոս զարդարն և զա-
 նարատն . „ Ա ւ այս նուաստու-
 թեան ինչ իցէ , որպէս թէ 'ի
 գուշն անկեալ աղաջիցէ . օն անդը
 քաւ լիցի , այլ համակամութեան
 և հաւասարութեան : Ա ւ զիարդ
 զայս ասէ . զի որպէս զայլ ամե-
 նայն կիրս մարդեղութեանն կա-
 մաւ յանձին իւրում կրեաց՝ զեւս

խոնարհագոյնսն , զի զմեզ փըր-
կեսցէ և սրբեսցէ 'ի մեղաց ան-
տի , այսպէս և զբարեխօսն լի-
նել : Օ որ և Պաւղոս գեղեց-
կապէս զպատռոյն խօսի նախ և
ապա զբարեխօսն լինելոյ . Ալս-
տաւ , ասէ , ընդ աջմէ Հօր , որ
և բարեխօս իսկ է վասն մեր :
Տեսանես զի նստիլն համապա-
տուի է և փառակցի , և ոչ խո-
նարհագունի , :

Աազում ըանից պէտք էին ե-
թէ կամեցեալ էր մեր զամենայն
վկայութիւնս հնոցն նախնեաց և
սրբոյ եկեղեցւոյ վարդապէտաց
ածել 'ի մէջ , որովք քաջայայտ
ցուցանի եթէ ոչ մերժեն ուղղա-
փառք զի Բիստոսի բարեխօսու-
թիւն , և ոչ ուրանան զմիջնոր-
դութիւն նորա , որպէս նորաղան-
դիցն հաճոյ թուեցաւ կարծել .
բայց արժան է զմեծի և զերա-
նելոյ առն զսրբոյ Ա ամբըրնե-

ցւոյն դնել աստեն զբանս զոր ա-
 սաց 'ի ներբողենի Համբարձ
 մանն Քրիստոսի . “ Աչա մա-
 տուցանէ քահանայապետս առ
 Աստուած պատարագաւն հաշ-
 տութեան , և առնէ խաղաղու-
 թիւն ընդ ձեզ՝ հոգւոյն սրբոյ
 առաքմամբ : Խստի բարեխօս ընդ
 աջմէ Հօր հանապազորդ մարդ-
 կան քաւութեան , և առնէ խըն-
 դրուածս վասն ձեզ փրկութեան .
 Հայր , կամիմ զի ուր եսն եմ 'ի
 ծայրագոյն գահօյս վերոյ ամե-
 նայն անուան , մտցէ եկեղեցի
 իմ տեսանել զիառս զոր ստացայ
 ընդ մահու չափ քեզ հնազան-
 դութեան : Հայր , կամիմ զի
 անդամբ իմ որ 'ի ստորին վայրս
 ցնդեալ կան , բարձրացեալ յօ-
 դեսցին 'ի հասակ մարմնոյ իմ
 լրման : Հայր , զորս ետուրն ինձ
 գինք արեան ժողովուրդ սեպհա-
 կան , սիրեցի 'ի չափ սիրոյ քոյ

ընդ միաձնիս հաճութեան , և
 բարեխօսեմածել զնոսա 'ի պա-
 տիւ փառացս իմ հաւասարու-
 թեան : Ով մեծի չնորհիս , ով
 անձառ երախտեացն , որումար-
 ժանի գտար եկեղեցի 'ի համ-
 բառնալս 'Քրիստոսի . զի Աս-
 տուած 'ի մեր կոյս է և ոչ ոք է
 մեր հակառակ . . . ՅորժամԱս-
 տուած զքեզ արդարացոյց , և
 ընդ նմին յարուցեալ յերկինս
 նստոյց . Յիսուս 'Քրիստոս մե-
 ռաւ վասն սիրոյ քոյ , և յա-
 րուցեալ ել այսօր յերկինս , և
 նստաւ ընդ աջմէ Հօր բարեխօս
 վասն մեր . զի՞նչ է յերկրային
 հեշտութեանց որ կարէ մեկնել
 զմեզ 'ի սիրոյ նորա . . . Խարիսխ
 քո 'ի յերկինս , դու ընդէր 'ի
 ստորինս կորանաս . . . Եւ հրեշ-
 տակն 'ի մարմնի սուրբն Պարի-
 գոր Կարեկացի թախանձանօք
 ՔՔրիստոս աղաչ . " Օ ի ե-

թէ, ասէ, յանձն առեր մեռանել վասն իմ, Աստուած և տէրդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ, վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ առ համապատիւդ քո հայր , :

Ասցաք եթէ ըստ մարդկութեան աղօթէ առ Հայր Արդին . քանզի ըստ աստուածութեան՝ է ընդունող աղօթից ամենեցուն և իւրոցն իսկ. վասն որոյ նուագէ և Հնորհալի հայրապէտն Աերսէս . Աղօթէիր առ Հայր մարմնով, ընկալեալ ընդ Հօր զքո վասն իմ պաղատանս . . և դարձեալ 'ի թղթին զոր առ կայսրն Իկուզանդացւոց զրեաց . Աղօթէր ընդ մեր և վասն մեր որպէս զմարդ, և ընդունէր ընդ Հօր իւրում զաղօթս ամենեցուն որպէս Աստուած . . և Ապրդիս

'ի բանն Աւնիմք բարեխօս առ
Վտուած , հարցանէ . “Օ՞ն .
— զմարդն Յիսուս Քրիստոս ,
զմիջնորդն Վտուածոյ և մարդ-
կան . զբնութիւնն զոր 'ի մէնջ
ընկալաւ Վտուածոյ բանն , որպէս
զի նմանեաւն զնմանն սրբեսցէ
և արդարացուսցէ „ : Ի սոյն ա-
ղագս և Վկաստինոս ասաց . “Վ-
ղաչի 'ի կերպարանս Հօր , աղա-
չէ 'ի կերպարանս ծառայի „ :

Իսկ թէ զի՞նչ խտիր կայցէ
ընդ բարեխօսութիւն կամ միջ-
նորդութիւն Քրիստոսի 'ի վե-
րայ երկրի և յերկինս , լուր .
քանզի աղօթէր նա յերկրի ի-
բրեւ ուղևոր լոկ , իսկ յերկինս
'ի կիր առնլով զգանձուցն ար-
դիւնս զոր 'ի յերկրի աստ ժո-
ղովեաց . երկրորդ անգամ , զի
յաղաչել անդ յերկրի , և զար-
տաքին նշանակս խոնարհու-
թեան և հայցուածոց առնոյր

նա 'ի կիր . քանզի և ծունը
իսկ դներ , որպէս յաւետարան-
չացն բանից յայտ է , անկաներ
'ի գետին , լայր և հառաչէր .
իսկ յերկինս ոչ ծառայակերպ
բարեխօսէ , այլ իբրեւ գահա-
կից և փառաւորակից հօր իւրոյ
երկնաւորի : Եւ երրորդ , զի 'ի
վերայ երկրի աղօթէր երբեմն
Վրիստոս և վասն իւր . իսկ
այժմ վասն այլոց եւեթ է բա-
րեխօսելնորա :

Իսկ եթէ այսպէս զօրաւոր
իցէ կարող բարեխօսութիւնն
Վրիստոսի , հարցանեն նորա-
զանդք , ընդէ՞ր իցէ ապա ուղղա-
փառացդ զծառայից երեսս պա-
զատել՝ զտէրն անտես առնելով .
միթէ Պաւղոս կամ Մաւղոս 'ի
խաչ ելեալ իցէ վասն մեր , կամ
յանուն Պետրոսի և Յովհան-
նու մկրտեցաք . ո՞ի սրբոց անտի
առ 'ի քաւել զմեղս մեր եթող

զերկինս և զլուսեղինացն սպասա-
 հարկութիւն էջ՝ ՚ի մսուր աղ-
 քատին, զամս երեսուն և երեք
 տառապեալ տագնապեցաւ . ա-
 ծաւ քարշեցաւ ՚ի դատաստան
 անսպարտն և անարատ, և զա-
 նարդական մահ խաչի ձաշա-
 կեաց : Ո՞ւր յոյսն, ասեն, ՚ի
 Վրիստոս եւեթէ և ոչ ՚ի խաչն
 նորա ՚ի փայտ չնչին, յապաւէն
 մեզ և ՚ի թիկունս զլուտուած-
 կարդամք և ոչ զարարած : —
 Պատասխանի առնեմ և ես միա-
 ձայն ընդ ամենայն եկեղեցւոյ
 սրբոյ վարդապետացն : Վաւ ՚ի
 մէնջ խորհուրդդ այդ անհաւատ
 ամբարշտութեան՝ զլուտուծով
 անտես արարեալ, գործոց ձե-
 ռաց նորա պաշտօնատար լինել.
 այլ և գիտեմք քաջ զի եթէ և
 յերկրաւոր թագաւորացն տնանկ
 ոք և աղքատ խնդրիցէ ինչ պա-
 ղատանօք, նախ առ աւագանին

գիմէ , յաղերս անկեալ վնասա
 աղացէ , զի զմտերիմ ընտանու-
 թիւն իւրեանց թիկունս ա-
 ռեալ , հաճեսցին զբան խըն-
 դրուածոց իւրոց հասուցանել
 յունկն արքայի : Եթէ մարթ
 ինչ իցէ , առ արքայորդին դի-
 մեալ երթայ կամ առ թագաւո-
 րահայրն կամ մայր նորա , և յա-
 ղագս խնդրուածոցն նախ զնո-
 սա 'ի գուշն անկեալ աղերսէ :
 Եւ միթէ նուաստութիւն ինչ
 անձին զայն համարիցի թագա-
 ւորն և ոչ մանաւանդ 'ի մեծ
 փառս : Խակ եթէ առ երկրաւոր
 թագաւորս այսպէս , որչափ եւս
 առաւել առ երկնաւորն : — Բա-
 րեխօսէ Քրիստոս , բարեխօսէն
 և սուրբք . այլ Քրիստոսին ան-
 միջական է բարեխօսութիւնն .
 քանզի արդեամբք իւրովք հայ-
 ցէ վասն մեր , և ընդունելի են
 մաղթանք նորա վասն իւրոց ար-

դեանցն եւեթ և ոչ մերումն ինչ
 արժանաւորութեան . իսկ սուրբք
 միջնորդաբար բարեխօս լինին
 վասն մեր , այս է 'ի ձեռն ՚Քրիս-
 տոսի . և այնպէս հաճոյանան
 մաղթանք բերանոյ նոցա : Ո՞իջ-
 նորդ պարզապէս է ՚Քրիստոս ,
 որ զիսովեալսն հաշտեցուցանէ
 ոչ իբրեւ աղաջաւոր լոկ 'ի հան-
 դիսի անցանելով , այլ և որպէս
 երաշխաւոր հատուցման , և վճա-
 րելով յանձնէ զպարտիս միոյն
 առ միւսն . վասն որոյ և առա-
 քեալ ասաց եթէ “Ո՞ի է ՚Ա-
 տուած , և մի միջնորդ ՚Աստուծոյ և
 մարդկան մարդն ՚Քիսուս ՚Քրիս-
 տոս , որ ետ զանձն փրկանս ընդ
 ամենեցուն , : Իսկ սրբոցն դասք
 լայնաբար և կամ ըստ իմիք միջ-
 նորդեն՝ սատար լինելով հաշ-
 տութեանն երկուստեք . և ա-
 ղաջելով անձամբ կամ 'ի ձեռն
 այլոց զայս ոք կամ զայն 'ի հաշ-

տութիւն խաղաղութեան ա-
 ծել։ Ա ասն որոյ և յաղացս
 պաշտօնէից սրբոյ սեղանոյն քա-
 հանայից ասեմք եթէ միջնորդք
 հաշտութեան են ընդ Կ ստուած
 և ընդ մարդիկ։ քանզի և աղա-
 ցաւոր իսկ լինին առ Հայր՝ միջ-
 նորդութեամք տնօրինականացն
 Արդւոյ նորա Ք քիստոսի։ Եւ 'ի
 բանիցս հաստատութիւն զ Հա-
 րովն 'ի մէջ ածեմք, որոյ զիսըն-
 կոցն բուրուառ 'ի ձեռս առեալ
 ընթացաւ արգելու զմահաշուկ
 հարուածն յորդւոցն Խ սրայելի։
 “ Փութացեալ այլն անարատ
 մատեաւ յառաջ 'ի կոիւ, իւրով
 պաշտաման զինուն ուղերձեալ
 զքաւութիւն։ Եկաց ընդդէմ
 բարկութեանն և արար վախ-
 ճան հարուածոցն, յայտ արարեալ
 նէ ո՞յ է ծառայ . . . Օ Երդմունա
 և զգաշինս հարցն յիշատակեալ,
 զշեղաշեղ զիականցն անկելոց

առ միմեանս կացեալ՝ի մէջ դա-
դարեցոյց զբարկութիւն . Եհերձ
ճանապարհ ընդ մէջ կենդանեաց
և մեռելոց : Քանզի ՚ի պաշտա-
ւոր հանդերձին եր ամենայն
զարդն , և փառք հարցն ՚ի չո-
րեքկարգեան ականսն քանդա-
կեալս . . . Յայնց խորշեցաւ սա-
տակին և ՚ի նոցունց զարհուրե-
ցաւ * , , :

ԳԼՈՒԽ Զ .

Յաղագս բարեխօսուրեան Աստուածա-
ծին կորսին :

Հանդերձեալ իւր յաղագս
պաշտաման Աստուածածին կու-
սին խօսել սակաւուք , ընդ մար-
մնաւոր հրեշտակին Կարեկա-
ցւոյն Գրիգորիոսի՝ գոչեմ անձ-

* ՅԱՄԱՍՏՈՒԹԵԱՆ գիրս , ԺԷ . 24 :

Կանօք Եթէ “Օ այսքան փա-
ռազարդ շնորհացն (Վատուծոյ)՝
ընդունակն և ոչ նոքին աստուա-
ծութեանն օրհնառաք հրեշտա-
կացն պարք, որպէս պարտն է
պատուել ժպրհին . թող թէ
մարդ երկրային ’ի կշիռ չափոյ
բերանոյ հողազանգուածս նիւ-
թոյ՝ մնեղիս մարմնոյ . քանզի ան-
ձառռութեամբ անհասականաւ
վեհագոյն ամենեցուն փակեալ
գտանի . և ոչ զօրեն երկնայինք
զարարչին անհաս տնօրինու-
թեանն զանքնին ծնող արժա-
նապէս վերաքարոզել . . . Վայց
սակայն երգեսցէ բանս որքան
զօրեսցէ, ’ի բաղձանաց սրտի
փափաքմանն նմին ընծայ օրհնա-
ռաք փառաց տեսչութեան , :

Վզօթք և հայցուածք մաղթա-
նաց որովք հանապազօր զսուրբ
կոյսն և զտիրամայր Վատուածա-
ծին սուլորեցաք փառաւոր առ-

նել, զայլազգ խորհողսն յար-
 համարհանս մերոց կրօնից և 'ի
 զարմացումն ածեն : Ի՞այց եթէ
 զամ մի իմաստութեամք՝ նոցա
 'ի խորհուրդ մտեալ էր զիրացս
 և 'ի քնին զայնոսիկ առեալ, ոչ
 միայն հակառակամարտ Աստու-
 ծոյ փառացն ոչ իշխէին համա-
 րել, այլ և յոյժ 'ի դէպ և
 վայելչական՝ Արեմաւ զէնի-
 սուս փառաւորել, և մարքն
 զՈրդին մեծացուցանել : Գի-
 տեմք զի բազումք ընդդէմ կըրե-
 ցան բանիցս Ճշմարտութեան, և
 բազմագոյնք եւս որոմն վեասակար
 յեկեղեցիս ուղղափառութեան
 առեալ ածին . այլակն ունիմք, զի
 որ զսիրտս մարդկան 'ի բռին ունի,
 լուսաւոր զմիտս ստերիւրելոցն
 առնիցէ, և զնոսա 'ի Ճշմարիտ
 աստուածածանօթութիւն ած-
 ցէ, զզարտուղեալսն յարահետ
 պողոտայէն : Արդ զի հեշտընկալ

զվարդապետութիւնս արասցուք,
արժան իսկ է մեզ յերկարագոյն
նուագօք բանից՝ զեկեղեցւոյ սըլ-
բոյ զթուիսն և զհաւատս ուղ-
ղափառութեան ածել'ի մէջ :

• Բանզի յորժամ Որդին Աս-
տուծոյ և բանն որ 'ի յաւիտե-
նից՝ զմերոյ տկարութեանս կա-
մեցաւ զանձամբ զկերպարանս
առնուլ, ոչ առ աչօք ինչ զմարդ-
կութիւնս զգեցաւ և ոչ առ ե-
րևոյթ պատիր տեսլեամբ, որ-
պէս անմարմին հրեշտակը սովո-
րեցան երեել մարդկան, այլ ըստ
գեղեցիկ իմաստից աստուածա-
բան աւետարանչին “ Բանն մար-
մին եղեւ և բնակեցաւ 'ի մեզ ” •
եղեալ կատարեալ մարդ, որպէս
և էրն իսկ կատարեալ Աս-
տուած : Աւ յայնմ հետէ և
առ յապայ Աստուած և մարդ է
միանդամայն, 'ի մի անձն զերկո-
սին բնութիւնսն միաւորեալ ան-

արատ ունելով՝ զաստուածութեն
 և զմարդկութեան։ Աստուածա-
 հրաշէ խորհուրդս, և հաւատոց
 միայն զօրութեան հնարաւոր՝
 տպաւորել՝ ի մեզ զայս վարդա-
 պետութիւն։ վասն որոյ և ան-
 դըստին յաւուրց սիրեցելոյ աշա-
 կերտին՝ թիւրեալքն՝ ի հաւատա-
 ցեալ ժողովրդենէն ընդդէմ կը-
 քրեցան վարդապետութեան բա-
 նիցս, և ասացին եթէ ոչ աս-
 տուածութեամբն ծնաւ՝ ի Վա-
 րեմայ և՝ ի Ձիթաստանին զար-
 հուրեալ արտասուեաց և՝ ի Գող-
 զոթա խաչեցաւ։ ՚ի մոռացօնս
 իմն կամելով դարձուցանել զաւ-
 տուածաշունչ զրոյն պատգամն
 բանից եթէ “Ի սկզբանէ էր
 բանն և բանն էր առ Աստուած
 և Աստուած էր բանն . . . և բանն
 մարմին եղեւ և բնակեցաւ՝ ի
 մեզ . . . իւ անդէն մայր իւր և
 ծնող զամենամաքուրն ընտրեաց

և զկուսագեղ զտիրուհին Ա՞-
րիամ, 'ի ձեռն սրբոյ հրեշտակին
աւետաւորելով նմա զառաջինն
և 'ի մայրութիւն և 'ի կուսու-
թիւն միանդամայն հրաւիրելով.
վասն որոյ և եկեղեցի Ասպուտ-
ծածին և Ասպուտածածայր զնա սո-
վորութիւն կալաւ կոչել յառա-
ջին դարուց քրիստոնեութեան :
Այլ մարդք չարք և աստուածա-
մարտք, զորոց առաքեալ կան-
խաճայնեալ գուշակեաց՝ սպրդե-
ցան մտին յեկեղեցի՝ նուազել
զպատիւ փառաց անուանն Ա՞-
րիամու, յաւուրցն՝ Եստորի մին-
չեւ 'ի լուտեր և 'ի կալուխն և
յաշակերտեալս նոցա :

Այլ մեք զմեր Տիրուհին փա-
ռաւորեալ պայծառացուցանեմք
միայն 'ի յաճախութիւն՝ Քրիս-
տոսի փառացն . քանզի շնորհք
նորա և փառք ոչ իւր ինչ են
սեականնք, այլ արարչին բոլ-

ըեցուն , զոր և յիւրում արդան
 դի արժանացաւ ընդունել . քան
 զի և 'ի յաւիտենից սահմանեալ
 էր և Եսայեաւ կանխաձայնեալ
 եթէ "Ահա կոյս յղասցի և ծնցի
 որդի , և կոչեսցեն զանուն նորա
 Խմմանուէլ" : Եւ զի ոչ սպա-
 սաւոր լոկ , այլ և մայր մարդացե-
 լոյն Վստուծոյ եղեւ նա , կա-
 թամբ դիեցոյց և 'ի գիրկս իւր
 ընկալաւ , վասն որոյ և առան-
 ձին մեծարանօք փառաւորէ զնա
 եկեղեցի . և ցորչափ կայ մնայ
 կանգուն եկեղեցի սուրբ դրանց
 դժոխոց անտեղիտալին , յիշեսցի
 փառօք անուն Վարեմու առա-
 ւելքան զամենայն սրբոց որք 'ի
 սկզբանէ պատուեալք եղեն 'ի
 սէր բոլորից հօրն և նմա հա-
 ճոյացան : Վմենայն տաճարքյա-
 նուն նորա վերամբարձեալք , ա-
 մենայն սեղանք 'ի պատիւ փա-
 ռաց նորա կառուցեալք , պատ-

կերք երեսաց և մաղթանք բազ-
մապատիկք՝ ոչ առ այլ ինչ կար-
գեալ սահմանեցան՝ բայց առ ’ի
յուշ եւեթ ածել եթէ ’ի նմա-
նէ զմեր կերպարանս ծոցածինն
էառ Աստուած :

Ու ինչ յերկմիտս եմք , պա-
տասխանի առնեն մեզ նորա-
ղանդք , եթէ ’ի Արեմայ կու-
սէն ծնաւ Քրիստոս , այլ որ
զմեզ զբրդուեալ զայրացուցա-
նէ այն իսկ է , զի անուանեալ
ուղղափառքդ բարձակից և հա-
ւասարապատիւ Աստուծոյ զնա
համարիք , և այնպէս փառաւո-
րէք : — Ու իբրեւ զԱստուած
զԱրիամ փառաւորեմք , քաւ
մի լիցի . այլ անիրաւութիւն մեզ
այն թուի արհամարհել զնա զոր
Աստուած փառաւորեաց , անպա-
տուել զոր Աստուած բարձրա-
ցոյց . զի իբր իցէ մարթ Աստու-
ծոյ մայր զԱրիամ դաւանել , և

զլանալ նմա զիշխանութիւն և
զփառս որ անմեկին անանջըր-
պետք են առ ’ի նմանէ :

Խակ թէ որովք փառաւորեաց
զնա Կոտուած, և գեր ’ի վերոյ
քան զայլս բարձրացոյց, լուր :
Ընորհք կուսակրօն մաքրու-
թեանն նորա ոչ նուազադոյն ինչ
են քան զշնորհս մայրութեանն .
վասն որոյ և ոմն կին բա-
րեպաշտօն զկենարար փրկչին
լուեալ զաստուածաշնորհ քարո-
զութեանն բան աղաղակեաց և
ասէ . “ Արանի որովայնին որ
կրեաց զքեզ և ստեանց որ դիե-
ցուցին զքեզ ,,: Խակ Յիսուս
պատասխանի ետ նմա եթէ առա-
ւելերջանիկք են նոքա որ մտա-
դիւր լսիցեն բանից պատուիրա-
նացն իւրոց . քանզի ասաց . “ Ա-
րանի այնոցիկ է որ զբանն Կո-
տուծոյ լսեն և առնեն ,,: Օ այս
բան փրկչին ’ի թիկունս իւրեանց

առնուն նորաղանդք առ ՚ի ընդ
 վայր հարկանել զպատիւ փառաց
 Աստուածամօրն . այլ եթէ ստոյգ
 տեսութեամք ոք զբանքս քննես
 ցէ , ՚ի սպառ ՚ի գետին անկեալ
 զկարծիս մտացն նոցա տեսանէ :
 Վանզի յիրաւի երանելի համա-
 րեցաւ Վրիստոս որ զբանսն պա-
 հիցէ զտէրունականս , քան որ
 մայր արժանաւորեցաւ Աստու-
 ծոյ կոչիլ . բայց ո՞ ՚ի նորաղան-
 դիցն իշխեսցէ երբէք ասել եթէ
 թերացաւ ինչ Վարիամ յաս-
 տուածային օրինացն պատուիրա-
 նապահութենէ : Եւ արդ եթէ
 օրինապահ ոք իցէ , և վասն այ-
 նորիկ ՚ի մայրութիւն Աստուծոյ
 հրաւիրեալ , ոչ առաւելագունի
 երանութեան համարեսցի նա
 արժանաւոր : Այս հասարակ
 կարծիք են սրբոց վարդապե-
 տաց , վասն որոյ և Վւգոստինոս
 ասաց եթէ առաւել երանու-

թեան արժանացաւ Արքիամ
 հաւատովքն քան մայրութեամք.
 զնոյն վկայեաց և երանելի Շե-
 րանն ոսկի ՚ի Արտթէոսեան
 մեկնութեանն եթէ կրկնակի
 պարզեացն եղեւ արժանաւոր, և
 պարզեին՝ և արժանի պարզեին
 երևելոյ . վասն որոյ և աւետա-
 բեր հրեշտակն լի շնորհօք զնա
 կոչեաց և օրհնեալ՝ի կանայս, և
 ամշածին պառաւն Եղիսաբեթ
 եթէ “ Երանի որ հաւատացէ
 եթէ եղիցի կատարումն ասացե-
 լոցս նմա ’ի տեառնէ , :

Նրեայք քանզի գալստեան
 ԱԵսիային մնային, վասն որոյ և
 կանայք ամենեքին ակն ունեին
 լինել նմա մայր . և ամուսնու-
 թիւնն պարզեւ անզուդական առ
 նոսա էր, իսկ ամուլ անզաւակու-
 թիւնն ’ի պատիժ պատուհասից.
 Արքիամ եւեթ և ոչ ընդ միտ
 անգամ ածէր՝ մեծի շնորհիս լի-

նել արժանաւոր, առ այնչափ խո-
 նարհութեանն. և որ 'ի յաւիտե-
 նիցն էր սահմանեալ 'ի մայրու-
 թիւն Քրիստոսի, հրաժարէր
 ընդունել զնա յիւրումն արդան-
 դի : Աստուած զհրեշտակ իւր
 աւետաբեր առ նա առաքեաց, և
 Վարիամ 'ի մայրութեան շնոր-
 հացն հրաժեշտ տայր մտաղիւ-
 րութեամբ . և ընդէ՞ր : Վանդի
 խորհուրդ սրբութեան եղեալ
 էր 'ի մտի պատարագ հաճոյական
 հանել զանձն Աստուծոյ կուսա-
 կան մաքրութեամբ . վասն որոյ
 և 'ի վարանս տարակուսա-
 նաց ըմբռնեալ աղաղակէր եթէ
 « Օ իարդ լինիցի ինձ այդ .
 քանզի զայր ոչ զիտեմ » : Եւ
 իբրեւ հրեշտակն զհոգւոյն տնօ-
 րէնութիւն նմա աղդ առնէր,
 յայնժամ և տիրուհին ոչ եւս
 կարէր հրաժարել և ոչ ընդդէմ
 դառնալ . և խոնարհութեան

բարբառովն տայր նմա պատառ
խանի եթէ ։ Վհաւասիկ կամ
աղախին տեառն, եղիցի ինձ ըստ
բանի քում,, :

Վարիամ երանաշնորհն և
մաքրակրօն՝ հայելի էր սրբու-
թեան, և գաղափար անարատ
սկզբնամարդոյն և աստուածա-
ստեղծ նորին զուգակցի՝ մինչչեւ
խոնարհեալ էին ’ի մեղս դաւա-
դիր նենգութեամբ հնոյ օձին :
Քանզի որպէս և զիտեմք իսկ
ամենեքեան, ’ի պատկեր Վստու-
ծոյ ստեղծաւ մարդն առաջին, և
տկարութիւն բնութեան նորա
հաստապինդ զօրացաւ Վստուծոյ
նորհացն օժանդակութեամբ .
սերմանք եւեթ բուռն կրից տըն-
կեալ էին ’ի սրտի նորա, և
տգիտութիւն առ ’ի նմանէ տա-
րագիր մերժէր պայծառ լուսով
սրբոյ հոգւոյն . և բանականին
իշխանութիւն կայր մնագիւր

ընդ լծով հարկի աստուածային
կամացն . և բարձրեալն Աս-
տուած խոստացեալ էր նմա զան-
մահութիւն և ոչ զապականու-
թիւն : Այլ աւաղ . զի ոչ կարաց
նա տեսել տոկալ մինչ 'ի սպառ ,
և օձաջամբ պատրանօքն զամե-
նեսին մահացոյց . մեղք և ասլա-
կանութիւնք մտին յաշխարհ , և
Աստուծոյ օրհնութիւնն 'ի մէնջ
հեռացաւ , և արարչագործ տէրն
անսուտ բարեառովն վկայեաց
եթէ Ո՞իտք մարդկան 'ի խնամն
չարին հաստատեալ են 'ի ման-
կութենէ իւրմէ , :

Այլ թէպէտ և մարդ մոռա-
ցաւ զԱստուած , և զչետ ունայ-
նութեան պաշտամանց խոտո-
րեալ 'ի խոհերս անօրէնութեան
կործանեցաւ , զնա Աստուած ան-
տես ոչ արար , և զգործս ձեռաց
իւրոց ոչ մոռացաւ . խոնարհեցաւ
առ մեզ փրկիչն և փրկութիւն

նորա . և “ Ուր առաւել եղեն
 մեղքն , անդէն առաւելան շնորհ .
 Քըն Աստուծոյ , — Յորժամ
 որդի թագաւորի ծնանիցի , հայր
 նորա լիաձեռն պարզես ամենե-
 ցուն բաշխէ , ամբարտակս և
 շէնս ’ի յիշատակ մեծի իննդու-
 թեանն կառուցանէ : Այս օ-
 րէնք են յաշխարհի անդստին յա-
 ռաջին և ’ի վաղնջուց ժամա-
 նակաց : Այն անցք և ’ի ծնըն-
 դեան Ամմանուել փրկչին անցա-
 նէին . քանզի ’ի ժամանակի խա-
 ղաղութեան և շնորհաց ծնաւ-
 նա . ծննդեամբ փրկչին հին և ա-
 պականարար բանսարկու թշնա-
 մին ’ի փախուստ դարձաւ . բա-
 ցան դրունք լուսոյ և տեղի ետ
 խաւարն . քանզի յղացաւ կոյսն և
 ծնաւ որդի : Բա՛թէ , և ոչ զար-
 մասցի ընդ այս : — Այլ և յոյժ
 իսկ ’ի դէպ էին իրքն . զի որով
 հինն Աւա պարտեցաւ , նորոյս

առաջի կայր նովաւ յաղթական
 հանդիսանալ . զի կարասցէ նա
 ջաղխել զգլուխ վիշապ օձին
 Աստուծոյ շնորհացն օգնակա-
 նութեամբ : Ի՞նչոր թէպէտ և
 այս այսպէս , այլ ոչ 'ի սպառ
 զերծ գտաւ Արիամ և անքաժ
 յաշխարհի վշտաց . քանզի որ-
 պէս զսրդեակն իւր և զի՞նուս
 փրկիչ՝ ընդ բիւր աղետից էանց
 ընդ կորզանս . զի տրտմեցաւ նա
 և տառապեցաւ և արտասուեաց
 և մեռաւ , զերծ զանձն 'ի մե-
 ղաց պահելով : Անվեհեր եմուտ
 յասպարէզն առաքինութեան ,
 և ուր այլոցն վախճան առնուն
 անտի զհրահանգս սկսաւ 'ի
 կիր առնուլ Արիամ զսրբու-
 թեանցն : Անդստին 'ի սկզբնա-
 բոյս և 'ի տղայութեան հասակէն
 շնորհք աստուածայինք 'ի նա
 հեղան . և շնորհք ոչ վարկպա-
 րազի , այլ մշտատեւ և անփո-

փոխ . պայծառ և լուսաւոր եղե
նա յաչս Աստուծոյ . որպէս զի
զնմանէ յոյժ 'ի դէպ իցէ զսաղ
մոսերգուին կրկնել եթէ ։ Դ'ա
նապարհք արդարոց իբրեւ զլոյս
անազօտ , զնասցէ նա 'ի զօրու-
թենէ մինչև 'ի զօրութիւն ։ ։
Օ 'ի որպէս նախաստեղծ մարդն
Ագամ մինչ չել խոնարհեալ էր 'ի
մեղս , եկաց յանարատութեան և
'ի սրբութեան , այսպէս և Ար-
քիամ զգուշացաւ անձին , և ամ-
բիծ զմաքրութիւն սրտի իւրոյ
պահեաց :

Այսոքիկ ահա շնորհք են
Արքիամու՝ զորս պարզեւեաց
նմա Աստուած անդէն 'ի յաւի-
տենից , յորում մայր որդւոյ իւ-
րոյ զնա սահմանեաց . վասն որոյ
և հրեշտակն լի շնորհօք զնա
կոչեաց : Եւ է նա բարեխօս
վասն մեր և պաշտպան . քանզի
և մտադիւր լսէ Աստուած որոց

սուրբ են սրտիւք և զպատու
 իրանս նորա պահիցեն : Եւ զի ա-
 ղօթք արդարոց յոյժ զօրաւոլք են
 յօգնականութիւն, և զհաւատա-
 րիմն Աքրահամ Աքիմելէք աղա-
 ցեաց, քանզի զիտացեթէ մարդա-
 րէ էր նա Ախտուծոյ, և նախատիպն
 համբերողաց Յովք զմեղս բա-
 րեկամացն աղօթիւք իւրովք քա-
 ւեաց, քանզի այր արդար էր նա
 առաջի Ախտուծոյ, և եթէ Առվ-
 սէս աստուածատեսն և մարդա-
 րէ՝ զձեռս տարածեալ յերկինս
 ունելով և զԱմաղէկ յաղթահա-
 րեաց, ընաւ և ընդէր իցէ զար-
 մանալ զի և Ապրիամ որ անա-
 րատաքար զՅիսուս յղացաւ և
 զԱխտուած վայելքապէս ծնաւ,
 բարեխօս վասն մեր յերկինս լի-
 նիցի, և մեծ իցէ զօրութիւն
 նորա ՚ի վերայ հաւատացեալ ժո-
 ղովրդոցս : Եւ եթէ հեթանոսք
 որ յարմաւենեացն աւուր ելին

'ի Հրէաստան , և կամելով ընդ
 տեառն խօսել մատեան առ Փի-
 լիպպոս և զնա աղաչեցին . և
 Փիլիպպոս ցինդրէաս ասաց՝ որ
 մտերիմ էր Երկնաւոր վարդա-
 պետին , արժան իցէ յերկմիտու
 լինել զի մայրն փրկչին ոչ բա-
 րեխօս յաղագս մեր լինիցի առ
 միածին որդին : Կա որպէս Երա-
 նելի աւետարանսպիրն պատմէ
 Յովհաննէս , 'ի կոչունս անդ որ
 'ի Լանա Գալիլեացւոց , տիրա-
 մայրն զպակասել գինւոյն տե-
 սեալ՝ զորդին աղաչէր մի յամօթ-
 զկոչնատէրն առնել , այլ հրաշա-
 գործ զօրութեամբն զջրոյն բնու-
 թիւն փոխել 'ի գինի . և ոչ հրա-
 ժարեաց կամ անտես ինչ զաղա-
 չանս նորա արար տէրն . փրկիչն՝
 խոնարհեցաւ . 'ի մօրն պաղա-
 տանս թէպէտ և չեւ էր հա-
 սեալ ժամնորա : Արիաման-
 դէն զիւրոց խնամոցն ձշզրիտ

զհաւաստիան եցոյց , և Վրիս-
տոս զյասէր փութոյն . Երկու-
ցուն միանգամայն յորդորամիտո
զմեղ առնելով՝ յամենայնի առ-
նոսա ապաստան անկեալ դիմել :
Վանդի մայրն եթէ աղաչէ , և
որդին լսէ նմա :

Մարգէն ոչ ոք կարիցէ յուրաստ
զբանիցս Ճշմարտութիւն արկա-
նել . քանզի և յեկեղեցւոյ հաս-
տատեալք են և վկայեալք , որ
սիւն և հաստատութիւն է Ճըշ-
մարտութեան , և աւանդապահ
ուղղութեան հաւատոցն զոր ան-
դրստին յառաքելոց ստացաւ :
Ա ամն որոյ և մեղ արժան է բա-
նիցն նորա հաւատալ , և 'ի նո-
ցանէ երբէք ոչ ստերիւրել :
Եւ արդ յաւետարանազրացն
գիտեմք և յեկեղեցւոյ պատմչաց
զի յորժամ Յիսուս սկսաւ ու-
սուցանել և քարոզել այնուհետեւ
ոչ ուրեք միջամտա լիներ Ա'ա-

ըիամ մայրն նորա, այլ առանձնա-
 կեաց և մենաւոր աղքատութեան
 վարեր կեանս, ոչ ինչ ամենեւին
 փքացեալ փառօքն և մեծա-
 րանօք զորս յամենեցունց ընդու-
 նէր Քրիստոս որդին իւր ըստ
 մարմնոյ: Եւ իբրեւ յաշխարհէ
 յերկինս վերափոխեալ հրաւի-
 րեցաւ, և եղեւ դշխոյ երկնից,
 արդարոց տիրուհի և մեղաւորաց
 ապաստանարան, իսկ և յայնժամ
 ոչ կամեցաւ նա փառաւոր լինել
 'ի վերայ երկրի, այլ զխոնարհու-
 թեանն ընտրեալ Ճանապարհ,
 կամակար սիրեաց տեսող եւեթ
 փառաց որդւոյ իւրոյ լինել և
 միաձնին: Այց իբրեւ աղանդա-
 սար վարդապետք մոլորութեան
 զՃշմարտութեանն ջանացան խո-
 տորել զուղիղ հաւատս, և յանար-
 գութիւն զանուն Յիսուսի ա-
 ծել՝ որում և երկինք և երկիր
 և սանդարակամետք ծունք ածեն,

յայնժամ և Արիամ անց՝ ՚ի
 հանդիսի . և անուն փառաց նո-
 րա այնուհետև մեծարանս ՚ի
 հաւատացեալ ժողովրդոց ընդու-
 նէր . և եղեւ նա իբրեւ զծառ
 պտղինաւէտ տնկեալ ՚ի գնացս
 ջուրց , և բազուկք և ոստք նորա
 ձգեալ տարածեցան մինչեւ ՚ի
 սփիւռս ազգաց և ժողովրդոց .
 բարձրացաւ նա իբրեւ զմայրս
 | իբանանու և իբրեւ զկաղնիս
 Անոնի : Իբրեւ զօճն յանապա-
 տի ՚ի տեսիլ եղաւ ամենայն աշ-
 խարհի հարուածելոցն յախտից
 և ՚ի վշտաց : Յորժամպատերազ
 մունք յարեան և գրգռութիւնք
 թշնամեաց , նա ՚ի խաղաղու-
 թիւն յորդորամիտս զնոսա ա-
 բար . զջերմեռանդսն իւր անտես
 ոչ արար , և զթշնամանիչսն ոչ
 արհամարհեաց . այլ հայեցաւ
 յամենեսին քաղցրութեամք և
 զամենեսեան օրհնեաց :

Այս, յօժարամիտ զքեզ պաշ-
 տէ եկեղեցի, մայր սուրբ, տի-
 րուհիդ Ուարիամ, քանզի վար-
 դապետութեան սրբոյ եկեղե-
 ցոյ դու ես նեցուկ և հաստա-
 րան: Ուեղք մեր դիզեալ բազ-
 մացան և անօրէնութիւնք յա-
 ձախեցին. և զքեզ, Ուարիամ,
 գանձարան իւրոց չնորհաց՝ Ու-
 տուծոյ խնամքն կացուցին, օդ-
 նական և ձեռնտու լինել և յան-
 թիւ վշտացենեղութեանց զմեզ
 ապրեցուցանել: Դէմք երեսաց
 քոց և վայելցութիւն՝ զյաւիտե-
 նականին յուշ մեզ զքաղցրու-
 թիւնն ածեն. զեղեցիկ ես դու
 և սրտացուցեր զմեզ մայր սուրբ,
 չնորհք քո զերկնաւոր խաղաղու-
 թիւնն մեզ նաւթձեն և զարա-
 հետն փրկութեան լուսափայլ
 ցուցանեն: Հրեշտակ ես դու խա-
 ղաղութեան և յոյս պանդիտա-
 ցելոց. առաջնորդեա մեզ, որ-

ալէս և ցայժմ առաջնորդեցելը .
Հեռի արա 'ի մէնջ զիսաւար աղ-
ջամիջին և ցոյց զլոյսն տէրունա-
կան . ածեալ կացո զմեզ 'ի հան-
դիալոյ երեսաց Հիսուսին քոյ և
տեառն մերոյ , և ցոյց մեզ զհայ-
րենին մեր երկիր . ՞ Ռարեխօ-
սեա վասն անձանց մերոց , և ա-
ղաչեա զմիածին որդիդ . փրկել
զմեզ 'ի փորձութենէ և յամե-
նայն վտանգից մերոց . . :

Օ այսոսիկ ընդ գորսվագութ
Տիրուհւոյն բարբառեալ , դարձ-
ցուք այժմ բանս 'ի մէջ առ-
նուլ և յաղագս այնորիկ եթէ
զիարդ պարտ և պատշաճ իցէ
մեզ և յոյժ 'ի դէպ զՄարիամ
մեծարել :

Վանզի անդստին յառաջին
գարուց քրիստոնէութեան՝ նախ
նի հաւատացեալք մեծարանս ե-
րեսացն Մարեմու դնէին , և ոչ
մայր լոկ Վրիստոսի , այլ և բո-

վանդակ մարդկութեան զնա հա-
 մարեին : Օ ի և Աստուածն
 մարդացեալ՝ ի Վարեմայ զկեր-
 պարանս էառ և զմարմին մեր, և
 'ի խանձարրոց ծննդեան մինչե-
 ցօր մահուան իւրոյ մայր իւր
 զնա դաւանեաց . զի և Վա-
 րիամ զնա մնոյց և 'ի գիրկո իւր
 առջնկալեալ զգուեաց : Եւյոր-
 ժամզարդանայր Յիսուս հասա-
 կաւ և իմաստութեամբ՝ էր նմա
 հնազանդ, և մինչեւ յերեսնե-
 րորդ ամ տիոյն եկաց մնաց
 'ի նմին տան : Եւ եղեւ հաւա-
 տարիմ վկայ՝ ցաւոցն մերոյ փրր-
 կչին և խնդութեան և վշտաց և
 աղօթից . ժմիաք երեսաց նորա
 օրհնութիւնք էին աստուածայ-
 ինք տեղացեալք՝ ի գլուխն Վա-
 րեմու : — Արդ ասասցեն մեզ
 նորաղանդք եթէ որ այսպէս մե-
 ծարեալ պատուեցաւ յԱստու-
 ծոյ յարարչապետէ անտի բնու-

թեան , իցէ ինչ անիրաւ յան .
դըգնութիւն կամ աստուածակա-
պուտ պղծութիւն , աւելի իմն
մեծարանօք զլարիամպատուա-
սիրել , յոր և երկինք առաւե-
լապէս զգանձս շնորհացն հե-
ղին :

Եղեւ երբեմն զի այր ոմն հե-
թանոսաց թագաւոր կամեցաւ
փառաւոր առնել զոմն 'ի ծառայից
իւրոց , որ փրկեալ էր զկեանս
նորա և 'ի մահուանէ զնա ապ-
րեցուցեալ , և եհարց զմի ոմն 'ի
մտերիմ պաշտօնէից իւրոց և ա-
սէ . " Օ ինչ արարից առնն զոր
ես կամիմ փառաւորել . . . : Ետ
պատասխանի այրն և ասէ .
" Օ այրն զոր արքայ կամի փա-
ռաւորել , բերցեն զպատմուշանն
զարքունի և զերիվարն յորում
արքայ հեծանէր . և տացեն առնն
այնորիկ սիրելոյն արքայի 'ի
փառաւորաց անտի , և զգեցուս

ցեն զպատմուժանն առնն այն
 միկ զոր արքայն սիրէ, և հեծուս
 ցեն զնա յերիվարն արքունի . և
 քարոզ կարդասցի ընդ հրապա-
 րակս քաղաքիս, և ասասցէ .
 այսպէս եղիցի ամենայն առնն
 զոր արքայ փառաւորէ „ : Ո՞եծի
 փառացս ժամանեալ արժանա-
 ցաւ և տիրամայր սրբուհին .
 քանզինա յղացաւ և ծնաւ զփրր-
 կին, և 'ի խանձարրոցն մինչեւ 'ի
 մահ խաչին անմեկին եկաց մնաց
 'ի նմանէ . վասն որոյ և եկեղեցի
 հայելի արդարոց զնա առձայ-
 նեալ կոչէ և վարդ խորհրդական
 և աշտարակ փղոսկրեայ և տուն
 ուկեղէն և աստղ առաւօտու . զի
 զարքունականն եղաւ նա զթագ,
 և եղեւ տիրուհի հրեշտակաց ,
 մայր կենդանեաց և փրկութիւն
 տկարաց և մեղաւորաց ապաս-
 տանարան և վշտացելոց միիթա-
 րութիւն . որում ծունք կըրկէ-

նեն և հրեշտակը և հրեշտակա-
պետք և մարդարեք և առաքեալք
և վկայք և մարտիրոսք և ամե-
նայն սուրբք : Եւանիկ նա ինքն
և Առղամնն թագաւոր յորժամ
զիւրսարեէ ետես զմայր իւր
զի գայր առ նա , յարեաւ յա-
թուոյ իւրմէ , զնաց ընդ առաջ
նորա և համբուրեաց զնա . և
հրամայեաց սպասաւորաց իւրոց
արկանել նմա աթոռ և բաղմե-
ցոյց առ իւր :

Խոկ եթէ այս այսպէս , ապա
ուրեմն ոչ անպատեհ ինչ իցէ
կարծել եթէ արդարեւ մեծի փա-
ռաց և պատուոյ արժանաւոր
սուրբ կոյն եղեւ : Հրեշտակը
որ պատգամատարքն են Եստու-
ծոյ և սպասահարկուք և ամե-
նեւին սրբութիւն , և սերովբեք
և քերովբեք աստուածութեան
գահոյիցն հպաւորք , որք ան-
դադար սրբասացութեամբ զտէ-

ըլն փառաւորեն, յոյժ՝ ի ստորեւ
 են փառօք քան զտիրամայր Աս-
 տուածածինն : Եղեն և՝ ի վերայ
 երկրի մարդարէք տէրունեան
 բանիցն պատմովք, այլ ոչ հաւա-
 սարապատիւք Մարիամու : Տես
 զի առաջին մարդարէ եկաց Ե-
 նովք, որ հաճոյ եղեալ Աստու-
 ծոյ՝ կենդանւոյն՝ ի միջոյ մեղա-
 ւորաց փոխեցաւ . — Եոյ արդարն
 և անարատ, որ հաւատովք ժա-
 ռանդ եղեւ Աստուծոյ աւե-
 տեացն . — Առվակս օրէնսդիր
 ընտրելոյ ժողովրդեանն, հեղ
 քան զամենայն մարդիկ որ՝ ի վե-
 րայ երկրի . — Ամուսէլ որ՝ ի
 մանկութեան տիոցն սպասաւոր
 եղեւ տեառն՝ ի տաճարին . —
 Դաւիթ որ թէպէտ գթեաց իսկ
 և՝ ի մեղս կործանեցաւ, այլ ա-
 պա յապաշաւ և՝ ի զիղջ եկեալ
 եղեւ այր կատարեալ ըստ սրտին
 Աստուծոյ . և Յովք, և Եղիա

և Ասայի և Երեմիաս և Պա-
 նիկը և կարապետն որդւոյն Իս-
 տուծոյ Յովհաննէս, և զլիսա-
 ւորքն յառաքեալս Պետրոս, Պաւ-
 լոս և Յովհաննէս և այլք, որք
 և վարդապետք եղեն աշխարհի
 և ուղղութեան օրինակք . այլ
 առաւելքան զամենեսին զսոսա
 զարմանալի էր տիրամայր կոյն
 Ուրիշամ, և առաւելքան զսոսա
 յ Իստուծոյ սիրեցեալ: Եւ կա-
 րի իսկ քաջ . զի եթէ առ որս
 բանն Իստուծոյ եղեւ այսքա-
 նեաց արժանի եղեն չնորհաց, իսկ
 զի՞նչ արդեօք նա որոյ որովայնն
 օթարան էր միածնին, և կուսա-
 կան արգանդն մարմնարան ան-
 բովանդակելոյ բնութեանն :
 Ոչ արժան էր նմա աւելի սըր-
 բութեամք ծաղկել որ այսչափ
 փառաց եղեւ ժաման . և մարթ
 ինչ իցէ սահմանել զարբութիւն
 այնորիկ որ Երեքսրբեանն է զօրու-

թեամբ . վասն որոյ և եկեղեցի
անդստին յառաջին ժամանակաց
պատուէր 'ի վերայ եղ որդւոց
իւրոց զանսահման սրբութեամբ
մեծացուցեալն փառաւորել :

Եւ մի այնպէս ինչ թուեսցի
կարծել իբր այն թէ 'ի մայրու-
թեան կուսին եւեթ էր մեծու-
թիւնն աստուածահրաշ և սքան-
չելի քաղաքավարութիւն նորա .
զի մայրութիւնն 'ի վարձ փո-
խարինի էր առաքինի բարե-
մաննութեանցն նորա : Վանզի
եթէ չէր նա լի չնորհօք , և ոչ գե-
րազանց քան զամենայն մարդիկ
անարատութեամբն երեէր , և
յանհնարիցն էր նմա յայն բարձ
տիրահրաւէր մայրութեան 'ի
վեր ելանել . վասն որոյ և ինսամք
երկնաւորք անդուլ հսկեցին 'ի
վերայ նորա 'ի ժամանակէ անտի
յորում զնայ յղացաւ Կննա մինչեւ
յօր փոխման կուսին : Եւ թէ

զիարդ մեծարոյ կարծիք էին
 վարդապետացն եկեղեցւոյ զնմա-
 նէ , արժան համարիմ գնել աս-
 տէն զսրբոյն Դիմնիսեայ արիս-
 պագացւոյ զբանս դովութեանց
 զորս առ երանելի աշակերտն
 Տիտոս գրեաց ըստ այսմ օրինա-
 կի . “ Կանիցէ եղբայրութիւնդ
 քո , ով վսեմականդ Տիտէ , քան-
 զի ըստ ժամանակին յորժամ
 հանդերձեալ էր ելանել յաշ-
 խարհէս և յաշխարհականացս ,
 այս է յերկրաւոր Երուսաղեմէ ,
 և մտանել ’ի կայանս վերինն Ե-
 րուսաղեմէ , անմեկնելի հրաժար-
 մամք յաւերժապէս առ ’ի մէնջ
 տարփողական հոգւով սրբով աս-
 տուածամայրն , յայնժամ և զաք
 առաքելոցն սրբոց իսկ և իսկ ըստ
 ակնարկութեանն ’ի բարձանց
 վսեմական կամացն աստուա-
 ծային հրամանիւն համահաւա-
 քեալ ’ի վայրկենի ժամանակի ,

ուր ենն վիճակեալք առ ՚ի բոլոր
 ազգաց որ ՚ի քարոզութիւն ա-
 ւետարաննին , գտան գումարեալ
 համար միաբանութեան ՚ի միա-
 սին սուրբք , արդարեւ ըստ այնմ
 եթէ ուր լուծումն մարմնոյ անդ
 և արծուիք ժողովեսցին փարե-
 լով զամենալոյս և զկուսական
 մարմնովն , որոյ և յայնժամաս-
 տուածամուխ և առաքելական
 դասուցն յանդիման և բոլոր պա-
 րակից հաւատացելոց սեռից հրա-
 ժարեալ յամենեցունց : Հարա-
 ծեաց սրբամատոյց և սրաթոիչ
 որ առ Աստուած աղօթիւք ՚ի
 բարձունս զամենասուրբ և զան-
 հպելի զձեռս իւր , հայելով
 լուսափափագ տենչանօք առ որ
 ծնեալն ՚ի նմաննէ Աստուած մեր
 և որդի իւր , հատոյց որպէս
 խունգս , և աւանդեաց զամենա-
 սուրբ հոգին ՚ի ձեռն տեառն :
 Եւ այնպէս պարազարդեալ սա

'ի հրեշտակական դասուց , վե-
 րացաւ որպէս փայլակն գերար-
 փի , և խաղաց 'ի փառս վերինն
 Արուսաղեմի . ուստի և յայն-
 ժամ արտօսրաթոր հառաջանօք
 և ողբերգակ ձայնիւք , մանա-
 ւանդ Եթէ յուսապատար խըն-
 դութեամբ հրծուողական հընչ
 մամբ սրբոց առաքելոցն և բոլո-
 րիցն պտուտկեալ հաւատացե-
 լոցն , յօրինեալ բարեպաշտա-
 պէս զմարմինն աստուածընկալ
 ըստ օրինակի ննջեցելոցն , զկե-
 ցեան 'ի վեր քան զօրէնս , հա-
 սարակ հոգեշնորհ երգով և ծաղ-
 կազարդ վարդապետութեամբք ,
 զնոյն ասելն աստուածաբանական
 արտաճառութեամբք ըստ պատ-
 շաճն պիտոյից , և ձայնիւքն սաղ-
 մոսաց բարձեալ առաքելոցն 'ի
 վերայ աստուածարեալ բազկաց
 իւրեանց , զմարմինն ամենասուրբ
 ստուգապէս որպէս զմայր լու-

սոյն, և զգանձ անսապական պատ-
 ճառ կենաց ազգի մարդկան, զոր
 ըստ ակնարկութեան՝ ի վերուստ
 հասարակաց փրկչէն ստորիջու-
 ցեալ վաղվաղակի հրացեալք
 աստուածամուխ հրոյն կայծա-
 կամքք, եղին՝ ի տեղւոցն Գեթ-
 սեմանի կոչեցեալ, լսելով մինչեւ
 յերիս աւուրս՝ ի վերայ ամե-
 նասուրք թաղմանն զսաղմոսեր-
 գութիւնս հրաշալուրս հրեշ-
 տակապետական ձայնից, և այլ
 ոչ եւս. վասն որոյ՝ ի հաւատար-
 մութիւնս այսոցիկ իրակերտու-
 թեանց գտաւ ոմն մի առ՝ ի նո-
 ցունց իսկ յառաքելոցն սրբոց
 նուազեալ առ՝ ի թուոյ նոցա՝ ի
 ժամանակի զուգամասնութեան
 հաւաքմանն. որոյ եկեալ յետոյ
 և բռնազբօսեալ զառաքեալսն
 առ՝ ի ցուցանելնմա ակն յայտնի
 զգանձն անկողոպտելի զմարմին
 սրբոյ կուսին, հարկաւորեալ ա-

պա յայնժամ լնուլ զտարփումն
եղբօրն , բացեալ զգերեզմանն
գտին թափուր և ունայն առ ’ի
սուրբ մարմնոյն . և զգացեալք
անդուստ ’ի միտ առին եթէ յետ
դադարելոյ հրեշտակական օր-
հնութեանցն փոխադրեալ եղեւ
մարմինն սուրբ ’ի ձեռն նոցին
իսկ հրաբուն զօրացն , գերաշ-
խարհապէս ’ի տեղի մեծարգի և
մեծապատիւ փառաց . որպէս գի-
տէ ինքն միայն որ եւս հրաշիցն
է Աստուած ծածկեալ առ ’ի բո-
լը զգայական աշխարհէ . :

Եւ յետ նորա բազումք յեկե-
ղեցւոյ վարդապետացն գովու-
թիւնս բազմապատիկս զօրքոյ
կուսէն զըեցին , և թէ զիանոդ
արժան է հաւատացելոցս զնո-
րայն մաղթել կարող բարեխօ-
սութիւն . և ’ի բազմաց անտի
զսակաւուցն եղից աստէն յըն-
թերցանելեացն խելամտութիւն

Ի հարց թունաց .

Աթանաս սուրբ հայրապետն . “Օք-
չնեալ ես ամենասուրբ կոյս , ’ի կանայս
և յարս . և օքչնեալ պառւղ որովայնի քոյ
որ տէրն է փառաց : Երանեն զքեզ ով
ամենասրբուհի և միշտ կոյս՝ երկնաւորք
և երկրաւորք , դասք հրեշտակաց և մարդ-
կան , որ զուրախութիւն ազդեցեր . վասն
որոյ և մեք ընդ հրեշտակապետին զուրախ
լերն առձայնեցուք . . . Ուրախ լեր
բերկրեալ . որ զտրտմութիւն լուծեր ,
և ուրախ արարեր քերմամբն և փրկական
տնօրէնութեամբն . . . որ զկեանս աւե-
տարանեցեր կենսաբեր անօրէնութեամբ ,
և զտրտմականսն փոխեցեր յուրախու-
թիւն և ’ի խնդութիւն : Ուրախ լեր ամե-
նասուրբ կոյս , բերող լուսոյն նստելոց
’ի խաւարի և ’ի ստուերս մահու . . . ար-
դարութեան նորոգող հրաշափառ տնօ-
րէնութեամբն , և մեղաց քաւիչ . . . որ

զնալսամօրն տրտմութիւնն բարձեր ,
ծնանելով զմիթարիչն ազանց . . . որ քոյին
ամենասուրբ կուսութեամբգ զամենե-
սեան զարթուցանես 'ի զգաստութիւն . . .
սրբութեան ընդունարան և պարգևաբաշխ
շնորհաց . . . որ զբանն Աստուած ծնար
և ազատեցեր նովաւ զծառայս : Արդ որ
այսպիսեաց և այսքանէաց մեծ երանու-
թեանց եղեր ընդունարան , ամենա-
սուրբ կոյս Մարիամ աստուածածին . լեռ
բարեխօս առ որդի քո և Աստուած մեր ,
փրկել զմեզ յաշխարհէ աստի չարէ , և
հասանել յերկնաւոր առագաստն 'ի
Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր , :

Դարձեալ . “ Ուրախ լեռ Մարիամ
սրբաբանեալ , կոյս շնորհաւորեալ , զի
յանսերմն արգանգէ և յանփորձ ամուս-
նութենէ ծնար զշմմանուէլն և զինքնա-
գոյ զօրութիւնն և զարարիչն ժամանա-
կաց . որ սակս մերոյ փրկութեան փա-
կեալ ընդ ժամանակաւ և խանձարրա-
պատեցաւ , կաթնաբուծեցաւ , և մեր-
օրէն զետեղեալ 'ի սուրբ արդանգիգ :
Ուրախ լեռ Մարիամ օթարան ուղիեան
լուսոյն և Ծափանշոյլիւղոյն , աստուած-
իջակ մարմնառիկ տիրացելոյ . զի խակա-

կան Աստուածն 'ի քեզ ելով տնօրինեցաւ, անհաս մարմնազգեցութեամբ և անշփոթ միաւորութեամբ . . . Ուրախ լեր Մարիամ, դուստր մարդարէին Դաւթի, ծնեալ յարդարութեան ծնողաց և մնեալ 'ի սրբոց . զի ստացար զմարդարիան պատուական զգանձն երկնաւոր, զթագաւորն թագաւորութեանց զտէր Յիսուս: Ուրախ լեր Մարիամ, . . . բուրաստան ամենածաղիկ սաղարթեալ, զարդացեալ բուսոյ բանին, ծայրարձակ, շառաւեղուղէշ, գաւազանաբուղլս թագաւորութեան Քրիստոսի, շնեալ պտղալիութեամբ և շաեմարանապարար զեղուածօք . . . Ի ձեռն քո տեսաք զարդարութիւնն յերկնից խոնարհեալ, և լոյս 'ի խաւարի ծագելով յիմ ասկականութիւնս, և վերադիսողութեամբ ծագողութեան . . . աշխարհի պայծառութիւն, և յառաջ քան զյաւիտեանս հաստատեալ 'ի փառս . . . դուիսկ ես փառք մեր և խնդութիւն, և պսակ պարծանաց մերոց ընա Սողոմոնեան տառիցն, թէ կին ժրագլուխ՝ պսակ է առն իւրում . . . օրհնութիւնաբեր կոյս, զի 'ի քեզ օրհնեցան ամե-

նայն ազգք երկրի, և բարեբանեցին զքեղ
 դստերք թագաւորաց . . . Ո՛վ Մարիամ,
 փառաւորեալ Աստուածածին, պատկ
 փառաց ամուսնաւորաց, զուգաց՝ տառ-
 բակաց, որ Քրիստոսիւ զուգեցան. և
 մանեակ ոսկի կուսանաց, որք նմանեցին
 ձագուց աղաւնեաց, զի իցեն սուրբ հո-
 գւով և մարմնով. ո՛վ Մարիամ, երկիր
 խոր և երկին բարձր. զի բարձրացար քան
 զերկինս և գեր՝ ի վերոյ գտար քան զքե-
 րովբէս . . . Մարիամ, երկիր կենաց և
 մայր ամենայն կենդաննեաց . . . Զուար-
 ձացիր Մարիամ և խնդա բերկրեալդ՝ ի
 կանայս, հովանացեալզօրութեամբ, գե-
 րագունին աւետաբեր. և ցող՝ իջիւք հո-
 գւոյն՝ ի վերայ գեղման, նորանշան յզաց-
 ման և ծննդեան . . . խնդրեա բերկրեալդ
 ՝ ի կանայս, զի յԱստուծոյ ծնար և ոչ՝ ի
 մահկանացու մարդոյ, այլ՝ ի հօրէ հաս-
 տատեալ մարմին . . . Զուարձացիր Մա-
 րիամ պարիսպ անսպատերազմելի, աշտա-
 րակ անմերձենալի քաղաք ապաստանի և
 տուն ապաւինի, որ ապաւէնդ խոկ եռ
 մեղաց և հանդիստ աշխատելոց. բարե-
 խօսեա Քրիստոսի, փրկելզմեղ չնորհոք
 ոզորմութեամբ իւրով:

Եւ երանելին Բերանն ոսկի . “ Ի ձեռն
կնոջ հոսեցան ’ի մեզ յուսիքն , ’ի ձեռն
կնոջ աղբիւրանան ’ի մեզ լաւագոյնքն :
Ուրախ լեր բերկրեալդ , մի՛ ամաչեր որ
պէս ’ի պատճառս դատապարտութեանն .
Քանզի մայր լինելոց ես շնորհօք բարձո-
ղին զդատապարտութիւն . ուրախ լեր
բերկրեալդ , այրի եղելոյ աշխարհի , ան-
շաղախ փեսայածին . ուրախ լեր , որ ’ի
քում արգանդի զնախամօրն ընկղմեցեր
զմահ . ուրախ լեր հոգեսոր տաճար Աս-
տուծոյ . . . ծփելոց խարիսխ և անքոյթ
նաւահանդիսատ . . . շաղկապ խաղաղու-
թեան , և սարտուցելոց հզօր սիրոյ ծած-
կոյթ , :

Գրիգորիոս Սքանչելագործ Նէոկե-
սարու հայրապետ . “ Վայելքաբար
զսուրբն Մարիամ յամենայն աղդաց՝
զնա միայն ընտրեաց շնորհն . . . ոչ որ-
պէս առաջին կոյսն Եւա միայն պարելով
’ի դրախտին , թոյլ խորհրդովլք անքննա-
բար զառ սկզբնաշար օձին ընկալաւ
զբանն , ապականեաց զսուրբին խոր-
հուրդն , յորոց ’ի չեռին հեղեալ նեն-
գաւորին՝ զթոյնսն խառնեաց զմահ ա-
ծելով յամենայն աշխարհ . յաղագս այ-

սորիկ աշխատութիւն եհաս սրբոց . որոց
յանցանքն՝ այսու միայն սրբով կուսիւս
ուղղեալ . . . Աւրախ լեր բերկրէ ալ աղ-
բիւր լուսոյ , որ լուսաւորեաց զամենայն
'ի նա հաւատացեալս . . . արեւելք իմա-
նալի արեգական և ծաղիկ անթառամելի
կենացն . բուրաստան լի անուշահոտու-
թեամբ , մշանջենաճիռ այդի , որ ուրախ
առնես զանձինս քոյոց փառաւորչաց ,
անմշակելի անդաստան և գեղեցիա-
պտուղ ողկոյզ . . . : Արդ եկայլք ով սի-
րելք , 'ի Դաւթեան աստուածաշունչ
քնարն յառաջեսցուք երգաբանելով . Ա-
րի տէր 'ի հանգիստ քո , դու և տապա-
նակ սրբութեան քո . քանզի տապանակ
Ճշմարտութեան սուրբ կոյսն է , և ներ-
քոյ և արտաքոյ ոսկիացեալ , և զպա-
տուական զգանձն ընկալաւ . . . :

Դարձեալ . “Օրհնեալ ես դու 'ի կա-
նայս . վասն զի դու ետուր մեզ համար-
ձակութիւն մտանել 'ի դրախան , և զա-
ռաջին զցաւսն հալածել . . . օրհնեալ ես
դու 'ի կանայս , զի 'ի ձեռն քո ժառան-
գորդք Եւայի ոչ երկնչին յօձին յանի-
ծից . վասն զի Քրիստոս ազգի մերոյ
Փրկիչ և կեցուցիչ . . . 'ի քո սուրբ յար-

գանդէդյառաջադայի . . . և բոլորեցունց
տնկագործն՝ քո յերկանց պառւղ ցու-
ցեալ լինի . . . Արդ քո դովութիւնդ
ով սուրբ կոյս, վերագոյն է քան զամե-
նայն բարեհամբաւութիւնս . . . քանզի
դու ճշմարտապէս աթոռ քերովքէա-
կան ցուցար, դու առ ծայրիւք իմանալի
արքայութեանն ճաճանչ լուսոյ փայ-
լատակես. 'ի ձեռն քո ով բերկրեալդ,
էակից սուրբ Երրորդութիւնն յերկրի
ճանաչի. ընդ քեզ և զմեզ արժանաւո-
րեա հաղորդութիւն ունել կատարեալ
չնորհօք քո , :

Եպիփան. “Սա Երկին և աթոռ և
տաճար գտանի. զի Մարիամն գտանի
տիրուհի և յոյս. քանզի ծնաւ զտէրն
յոյս ամենայն աշխարհի . . . Մեծ սքան-
չելիք տեսանեմք. զաղախին տեառն մայր
տեառն. և զերկրաւոր կոյսն, Երկնաւոր
հարսն. քանզի հարսն և առագաստ և
մայր Երևեցաւ յայրին. ուր յայնժամ
զմանուկն ծնաւ զՔրիստոս, ըստ մարդա-
րէութեան Եսայեայ թէ մանուկ ծնաւ
մեզ, որդի տուաւ մեզ. ով Երկնաւոր
հարսն, Երկին և աթոռ տաճար աս-
տուածութեան և անճառելի դրախտին

զարդ։ Հրեշտակը Եւայի մեղադրէին։
 իսկ այժմ զՄարիամ փառաւորեն որ
 զտկարութիւն կանանց շուրջանակի փա-
 ռաւորեաց, որ զկործանեալն Եւա կան-
 գնեաց, և զդրախտն երաց 'ի ձեռն ա-
 ւազակին։ Դարձեալ զԱդամ ելոյծ ան-
 դրէն։ 'ի ձեռն քո միջնորմ ցանկոյն քակ-
 տեցաւ և թշնամութիւն լուծաւ։ Ի ձեռն
 քո Երկնաւոր խաղաղութիւն տուաւ
 աշխարհի։ 'ի ձեռն քո խաղաղութիւն
 Յիսուս Քրիստոս տիեզերաց շնորհե-
 ցաւ։ 'ի ձեռն քո մարդիկն հրեշտակը
 եղեն։ 'ի ձեռն քո ծառայք՝ սիրելիք և
 որդիք Աստուծոյ կոչեցան։ 'ի ձեռն
 քո գիտութիւն Երկնաւոր և մառաբա-
 նութիւն յերկրէ յերկինս առաքեն։ Ի
 ձեռն քո խաչ ծագեաց ընդ ամենայն
 Երկիր յորում որդին քո խաչեցաւ։ 'ի
 ձեռն քո մահ կոխեալ լինի և դժոխք ա-
 ւար հարկանի։ 'ի ձեռն քո կուռք
 կործանեցան և գիտութիւն Երկնաւոր
 գտաւ, 'ի ձեռն քո զմիածին որդին Աս-
 տուծոյ ծանեաք, զոր ծնաւ ամենա-
 սուրբ կոյս զտէր մեր Յիսուս Քրիստոս,,,:
 Գերմանոս։ “Ոչ ոք աստուածդի-
 տութեամբ լցեալ, եթէ ոչ 'ի ձեռն քո

Դարձեալ . “Առանց Մարիամու ոչ
մահու մարթ էր ’ի փախուստ երթալ , և
ոչ կենաց ’ի նորոգութիւն դառնալ , :

Պետքոս Դամիանոս . “Անչափ և ան-
քնին եղեն ’ի Մարիամ շնորհք մեծվայել-
չութեան հոգւոյն սրբոյ , և եղեւ նա-
բարեխօս ամենայն հաւասացեալ ժողո-
վըրդոց , :

Հոգիընկալ վարդապետն Բեռնար-
դոս . “Երանուհի կոյս , լռեսցէ քոյդ
ողորմութիւն , և ոչ ’ի դովել զքեղ առ-
նուցումք , եթէ ոք երբեք ’ի հողածնաց
յուշ ածցէ՝ զի կարդացեալ առ քեզ , և
դու ոչ լուար նմա , : Եւ ապա դարձու-
ցեալ զբանան առ մարդիկ , խրատէ զնոսա
և ասէ . “Եթէ ’ի ծովու աշխարհիս այ-
սորիկ ալեկոծ տանջիցիս , մարդ մահկա-
նացու , յաստղն երկնից դարձո զաջս քո ,
կարդա զանունն Մարիամու . մի ’ի ըր-
թանց քոց և մի ’ի սրտէ քումմէ հեռի
առնիցես զանունն զայն երանաւէտ .
յայնժամ անշուշտ է փրկութիւնն , :

Աւելորդ համարիմք կարգել ինչ ինչ
և ’ի բանից սրբոց վարդապետացն մերոց .
քանզի քաջայայտ է ամենեցուն , եթէ

զիա՞րդ առանձինն գովութեանց բանիւք
մեծարէ զնա Հայաստանեայց Եկեղեցի
՚ի պաշտամունս իւր , և զիա՞րդ անդստին
յաւուրց սրբոյ Լուսաւորչին կարդեալ
սահմանեցան յիշատակք տօնախմբու-
թեանց նորա , բոլորից փրկութեան մայր
և անիծից բարձող զնա դաւանելով , և
զկարող բարեխօսութիւնն անդադար
հայցելով :



ԳԼՈՒԽ Է .

Յաղագս բարեխօռութեան Արդոց :

Արդկայնոյ բնութեանս օ-
րէնք են անհրաժեշտ և զեղե-
ցիկ սովորութիւն , առանձինն
շքով և մեծարանօք զայնոսիկ
պատուել , որ վարուքն իւրեանց
և կամ գործովք արժանի երեւ-
ցան յասլութիւն զմիտս մեր և
'ի նմանութիւն կըթել : Ա ասն
որոյ և աղջաց իւրաքանչիւր
խումբք դիւցազանց են և իմաս-
տնոց , զորս սովորեցան յօրինակ
բարի և 'ի խրախուսիչ գալոցն և
ապառնեաց առաջի առնելորդոց
և ժողովրդեան : Կաեւ աղջ մար-
դկութեանս ինքնին 'ի գլխովին ,
որպէս յաստուածեղէն դրոցն
խելամուտ լեալ ուսանիմք , ուներ

զհսկայս դիւցընկեցս և արս աստուածաննանս , որպէս այնր ժամանակի որերոյ հաճոյ թուեցաւ կարծել , որք իւիք իրօք անուանի եղեն 'ի վերայ երկրի : Ապա ուրեմն համբաւ մարդոյ սեպհական ինչք են նորա . և յիշատակք արութեանցն և քաջութեան՝ իբրու ժառանգութիւն անկապուտ համարեալէ յաշխարհի :

Եւ արդ որ 'ի մարդկայինքս արդարութիւն թուի անհրաժեշտ , ընդէ՞ր ապա 'ի հոգեւորսն անօրէն բռնաբարութիւն և կեղծաւոր նենցութիւն համարել զայն արժան իցէ : Այլզայս ահա հակառակորդք Քրիստոսի ուղղութեան հաւատոցն՝ մեզ 'ի դէմն ածեն , նորաղանդիցն գումարք , և հարցասէր պնդութեամբ պատասխանի առ 'ի մէնջ պահանջեն : Քանզի կամք են նոցա աղարտիչ մարդկայնոյ

բարեկայելչութեանս դիմիս-
 տոսին առեալ մուծանել զհա-
 ւատս բարեպաշտութեան , յա-
 նարգ ցածութիւն զպարծանս նո-
 րա իջուցանելով , և 'ի խոնարհ
 նկնութիւն զմեծարոյսն և զըս-
 քանչելիս որք գերաշխարհիկք 'ի
 կենցաղումն երևեցան . և ընդ
 ամենեւին անարգսն և անփառու-
 նակս զայնոսիկ 'ի համեմատու-
 թիւն ածել , որք ոչ միայն նախ-
 ընթաց կարապետք ուղիղ դա-
 ւանութեանս մերոյ եղեն և հա-
 ւատոց , այլ և վարուք իւրեանց
 և զրովք օրինակ բարեաց թո-
 ղին աստիճն յաշխարհի , քաջու-
 թեամբ զմեզ սրտապնդելով՝ զի
 փոխանակ վաստակոց պսակք ան-
 անցականք մնան մեզ յերկինս ,
 և ընդ վշտաց և նեղութեանց՝
 խնդութիւնք և հրձուանք : Եւ
 զայս ոչ շատ համարեալ , ժպըր-
 հեցան և զկուսամօր Աստուա-

ծածնին աղարտել զպարծանս
փառաց, իբրեւ զի միջնորդ մեղ
ընդ Աստուած և ընդ մարդիկ,
միայն որդւոյն Աստուծոյ անկէ
լինել և ոչ այլում ումեք՝ ի մահ-
կանացուաց. վասն որոյ զԱ-
րիամկոյս ոչ սիրել արժանէ, ա-
սացին, և ոչ մեծարանս երեսացն
նորա աղօթիւք և հայցուածովք
գնել. զի և ինքն իսկ փրկիչն
աշխարհի ոչ կամեցաւ սիրել
զԱրիամ և ոչ մայր իւր զնա
ձանացել, որպէս յաւետարանսն
նշանակեալ պատմի: «Դժնդակ
և օտարալուր ողջախոհ լելեաց
հայհոյութեան բանքս են:

Այլ նոցա առաւել եւս յա-
մառեալ՝ ի կարծիս մոլորութեան
իւրեանց, ոչ միայն զսրբոցն բա-
րեխօսութիւն դատապարտ առ-
նեն, այլ և ընդ ստգտանօք կռա-
պաշտութեան զմեծարողքս հա-
մարին զերանեալ սրբոցն, և հա-

կառակամարտուղիղ հաւատոց
զմեզ բամբասեն : Իսկ ո՞ի մէնց
անհանդուրժելի ստգտանացու
ժուժկալել մարթասցի , գիտե-
լով չափի , զի ոչ զոյզն մեղս զմեօք
արկեալ ձգեն , այլ պարտաւորս
յանցանացն համարին զոր ինքն
Կատուած ատեաց , և զանակոծ
խստիւ զպարտաւորսն սպատու-
հասեաց : Եւ իցէ ինչ նոցա ար-
ժան կռապարիշտու ոմանս կոչել
զմկրտեալն յանուն Քրիստոսի
և զհաղորդեալքս մարմնոյ նորա
և շնորհաց հոգւոյն :

Եւ արդաղէ զայն նախ առցուք
'ի քնին եթէ զինչ կռապաշտու-
թիւնն իցէ : — Կնիրաւել պաշ-
տամննն Կատուծոյ , զպատիւ փա-
ռաց նորա և զերկրպագութեան՝
արարածոց ընծայելով : Եւ զի
հաւաստեաւ կացցուք 'ի վերայ
եթէ արդարութեամբ ստգտա-
նիցիմք յայլազգ խորհելեացն ,

արժան է նախ ցուցանել աստեն
եթէ խորիցեմք ինչ՝ ի պաշտա-
մանէն Աստուծոյ, և ընծայիցեմք
զայն արարածոց :

Խակ զինչ վարդապետութիւն
իցէ ուղղափառ եկեղեցւոյ յա-
ղագս պաշտաման սրբոց, և պա-
տուոյ մեծարանաց զոր պատկե-
րացն նոցա ընծայիցեմք : — Ինդ
հակառակն ամենեւին բամբա-
սասիրացն ամբաստանութեանց
որովք զմեղ ստգտանել ախոր-
ժեն : Ազէ բացեալ տեսցեն աղա-
չեմ, զամենայն զիրս ուղղափառ
վարդապետութեանց հաւատոցն
մերոց, և քաջիկ խելամտու-
թեամբ առնուցուն՝ ի միտ եթէ,
զիարդ եղեռն մեծ համարիմք
մեք՝ սրբոցն Աստուծոյ, և վե-
հագունիցն իսկ՝ ի նոսա հըեշ-
տակապետաց զնմանօրինակն տե-
րունեան պատուոյն ընծայել .
քանզի պատիւ և փառք գերա-

գոյնք նմա միայնոյ 'ի դէպ են և
պատշաճականք , որ միակ աղ-
բիւրն է շնորհաց և վերակացու-
դործոց մերոց . և թէպէտ պա-
տուեմք իսկ զսուրբս , այլ և
վկայութիւն դնել ինչ ոչ խղճեմք
զի խտիր մեծ ընդ նոսա և ընդ
լուսուած ասեմք . քանզի և յոր
ժամ զայր թագաւոր կամ զիշ-
խանս նորա և կամ զծնողս մեր ,
և որ 'ի նոցին սակի , մեծա-
րիցեմք , ոչ եթէ անարգեմք
ինչ զլուսուած զլացեալ զհրա-
շափառագոյն պաշտամունն որ
նմա միայնոյ 'ի դէպ են և պատ-
շաճաւոր :

Լոյս է աւասիկ վարդապե-
տութիւն ուղղափառ եկեղեցւոյ
յաղագս բարեխօսութեան սրբ-
բոց : Լոյս հաւատք դաւանու-
թեան մերոց են , զի սրբոցն լու-
տուծոյ չիք բացարձակ զօրու-
թիւն և ոչ առանձինն իշխանու-

Թիւն 'ի վերայ ազգի մարդկան,
 այլ բարեխօսք են նոքա առ Աս-
 տուած վասն մեր, և հայցուա-
 ծովքն իւրեանց և խնդրուա-
 ծովք զնորհս Աստուծոյ հեղուն
 'ի մարդիկ : Եւ վիհ մեծ է ար-
 դարեւ բարեխօս առ Աստուծոյ
 զսուրբսն ասել և զաստուածա-
 կանն կապտել զօրութիւն . զի
 աղաչաւորք են նոքա խոնար-
 հեալք առաջի աստուածութեն.
 ծառայք երկրպագուք բարձրե-
 լոյն և հրամանացն նորա կամա-
 կատարք : Եւ աղաչաւորս զնոսա
 կոչելով և բարձրելոյն կամակա-
 տարս, խտիր մեծ և յոյժ մեծ
 դնեմք, որպէս մեզ թուի, ընդ
 տէրունեան ստորոգելիս : Եւ զի
 զառաւելն եւս ասացից, ոչ եթէ
 կապտեմք ինչ յԱստուծոյ, այլ
 մանաւանդ յաճախութիւն փա-
 ռաց նորա գործեմք : Վանդի 'ի
 հայցել անդ զբարեխօսութիւն

սրբոց և զաղօթս , սլացեալ վե-
 րանան միտք մեր մինչեւ յեթերն
 վերին և անդ հոգւոյ աջօք իբրեւ
 զսիրեցեալ աշակերտն 'ի Յայտ-
 նութեանն որ 'ի Պիտմոս , զընտ-
 րելոցն նորա դումար տեսա-
 նեմք , զՃակատ և զգլուխս խո-
 նարհեցուցեալ առաջի մեծի
 վայելցութեանն , և ընդ ոտիւք
 նորա զպսակս իւրեանց արկեալ
 և զյաղթական ոստս , հոտս ա-
 նուշից սփուեն առաջի նորա , զա-
 ղօթս ասեմ զեղբարց իւրեանց
 զզինուորեալս եկեղեցւոյ , և
 զՄստուծոյ ամենահօրն գթու-
 թիւն վասն մեր պաղատին յի-
 շատակաւ մահու և չարչարանաց
 որդւոյ նորա : Խակ եթէ այս
 այսպէս , ապա աղօթքն որովք
 զսրբոց բարեխօսութիւն մաղ-
 թեմք , խունկք նուիրականիք են
 Վստուծոյ . վասն որոյ և հաս-
 տատութեամք հաւատալարժան

է մեզ զի չկը ինչ առաւելքան
 զայս հաճոյական բարձրելոյն . և
 չէ իսկ կռապաշտութիւն մեծա-
 ըելզպատկերս սրբոց և զնշխարս
 ուկերաց նոցա . քանզի որպէս
 կանխեցաք ասել , այն ամենայն
 յլ ստուած 'ի վեր ձգին որ զնոսա
 ստեղծ և յերկնաւոր փառս վեր-
 առեալ բարձրացոյց : Եւ հաւաս-
 տի իսկ է զի մեծ է զօրութիւն
 արտաքին պաշտամնցս առ 'ի
 յորդորամիտ զժողովուրդն յաս-
 տուածպաշտութիւն առնել և
 յառաքինաջան վաստակս զնոսա
 խրախուսել : Այսոքիկ են աւա-
 սիկ կարեւոր հանգամանք վար-
 դապետութեան ուղղափառ ե-
 կեղեցւոյ յաղագս բարեխօսու-
 թեան սրբոց :

Այլ մինչ չեւ մեր 'ի խորս Ճա-
 ռիցս մտեալ , թոյլ արասցեն բա-
 րեպարիշտ ընթերցասէրք , կան-
 խաբանել սակաւուք և յաղագս

պաշտամանն յոյր սակս ստղը-
 տեալ զսրովիմք՝ ՚ի նորաղանդից :
 ՚Ի անզի ասեն նոքա եթէ միօրի-
 նակ պաշտօն կոչեմք զսրբոցն և
 զՄստուծոյ, վասն որոյ և հաւա-
 սարապատիւս իսկ միմեանց զնո-
 սա առնեմք : Իսկ այլք ոմանք՝ ՚ի
 նորաղանդիցն թէպէտ ոչ մինչ՝ ՚ի
 սպառ վատթարել զպաշտօն սըր-
 բոցն կամիցին, այլ մեղադիր ուղ-
 ղափառաց լինին իբրեւ զի չարա-
 չար՝ ՚ի կիր զպաշտօն սրբոցն ար-
 կանեն . վասն որոյ և ամենեւին
 իսկ բառնալ պարտ է, ասեն,
 զայս ամենայն, և զի ողջախոչ
 միտք իցեն ժողովրդեան և ամե-
 նեւին զերծեալք՝ ՚ի կռապաշտու-
 թենէ, որպէս առ հնովքն էին
 քրիստոնեայք վարժեալք խրա-
 տու առաքելոցն և օրինակաւ
 նոցա խրախուսեալք : Ոչ ինչ
 յուրաստ արկանել կարեմք զի
 յարեւմտեայ քրիստոնեայս, և

առաւել իմն օրինակաւ յիտա-
լացւոց աշխարհին, անչափ ե-
ռանդն բարեպարիշտ հաւատա-
ցելոց, տարապայման իմն օրինա-
կաւ գողցես յերկրագագութիւն
ածէ, զռամիկն արձանաց և պատ-
կերացն Քրիստոսի և սրբոց. այլ
այն արգասիք տգիտութեան նո-
ցա են, և ոչ սրտիցն թիւրու-
թեան. վասն որոյ և ոյր առողջ
իցեն միտք և ոչ կանխակալոց
չարութեամբ պաշարեալ, մեղա-
դիր տգիտութեան նոցա լինի
և զեռանդն աստուածպաշտու-
թեան գովե. քանզի և դիտէ իսկ
եթէ չէ արժան վասն զեղծանե-
լոյ ուրեք ժողովրդեան բարեաւն՝
ամենեւին իսկ բառնալ զայն 'ի
նմանէ. զի ոյր իցէ անմիտ իմաս-
տութիւնդ բայց թշնամեաց խա-
չին Քրիստոսի :

Օ ի իցէ ոք՝ ինորազանդիցն որ
միանզամ յանձին կալցի զսրբա-

խօս տառմն և զաստուածաշունչ
մատեանս ամենեւին իսկյերկրէ
անհետ կորուսանել, զի չարաչար
սովորութիւն եղե 'ի մարդիկ՝
զԱստուծոյ զհոգեխրատ բաննն
պատրուակիւրեանց չարութեան
առեալ, առաթուր զխրատս պա-
տուիրանց նորա արկանել. և
բանքն աստուածադրումք՝ խաղա-
ղութեան և սիրոյ աւետաւորք՝
վեր 'ի վայր արարին զաշխարհ
'ի պատճառս մոլենախանձ կրից
մարդկան և տղիտութեան : Եւ
ո՞ ժալրհեսցի յաղագս այսորիկ
զաստուածային գրոց կարճել
զընթերցումն . և զի մի սակաւք
ոմանք կայթակղեսցին, զամենե-
սին միանգամայն 'ի գեհեանն
արկեալ ձգեսցէ :

Ուսուցանէ մեզ մայրս մեր ե-
կեղեցի զի բարեխօսեն սուրբք
վասն եղբարց իւրեանց որ 'ի զի-
նուորեալս եկեղեցւոջ . վասն ո-

ըս և 'ի դէպ իսկ է մեզ զնոցայն
 բարեխօսութիւն յաղերս ան-
 կեալ պաղատել : Օ ի և 'ի հան-
 գանակի անդ զհաղորդութիւն
 սրբոցն մեծաձայն խոստովա-
 նիմք . և զոր առաքեալքն դաւա-
 նեցին և աշակերտքն նոցա ,
 զնոյն ապա լսելի արար ընդ տիե-
 զերս և նիկիականն աշխարհա-
 գումար սիւնհոդոս : Եւ զի՞նչ
 հաղորդութիւնս այս իցէ ընդ
 սուրբս Աստուծոյ և ընդ մեզ . և
 իցէ ինչ արժան հաղորդակիցս
 միմեանց զեղբարսն կոչել և զըն-
 տանեացն գումար , եթէ փոխա-
 դարձ հատուցմունք ոչ իցեն առ-
 նոսա բարեաց և ընչից և արա-
 րոց : Ա ասն որոյ եթէ յուղղա-
 փառացն զոք հարցանիցես եթէ
 զի՞նչ հաղորդութիւնդ այդ իցէ
 սրբոցն զոր բարձրագոչ 'ի հան-
 գանակի դաւանես յեկեղեցւոջ
 աներկմիտ հաստատութեամք և

անվեհեր զպատասխանին քեզ
 կշուեսցէ եթէ դարձուած իմն
 փոխարինի է այն ընդ սուրբս որ
 յերկինս են և ընդ արս քարիս
 որ 'ի զինուորեալս եկեղեցւոչ
 առ 'ի զյաղթականն ընդունել
 պսակ զսրբոցն . այս ինքն է , զի
 քարեխօսեն նոքա վասն մերյեր-
 կինս , և կարեկից գթովք 'ի ջանա
 և 'ի վաստակս մեր ակնարկեն և
 'ի վիշտս վտանգաց . և զբարեկա-
 մութեանն շնորհս զոր ունին առ
 Աստուծոյ , զօրավիճն իւրեանց
 առեալ , և զբարձրեալն աղաչեն
 ժամանել 'ի թիկունս որոց 'ի վիշտ
 թափառական սպանդիստիմք փոր-
 ձութեանց և մարդկեղեցն տկա-
 րութեանց : Եշ մարդիկ առ 'ի
 փոխարինել սիրոյ նոցա , մեծարեն
 զսուրբսն Աստուծոյ , զարմանան
 ընդ նոսա և սիրեն . քանզի ոչ
 օտարոտիս ոմանս 'ի մէնջ զնոսա
 համարիմք , այլ եղբայրակիցս՝

որոյ զկենցաղոյս աւարտեալ զի՞ն-
թացս , ժառանդք յաւիտենից
վարձուցն եղեն . վասն որոյ և հա-
մարձակագոյնս զնոսա աղաչեմք
վասն մեր բարեխօս առ տերն
իւրեանց լինել և լուսուած . և
պաղատանօքս մերովք ստիպեմք
իմն զսէրն նոցա և զբարերարու-
թիւն :

Լուսարանին վարդապետու-
թիւն ոչ ուրեք հակառակ ինչ
հնոյ ուխտին և աւետեացն քա-
րոզեաց . այլ , որպէս յայտ է ,
կատարելութեան զգեցոյց նմա-
կերպարանս և լրումն հնոյ օ-
րինացն եղեւ , զի մի ասացից շա-
րայարութիւն : Եւ ահա քա-
ջայայտ անդանօր նկատեմք , զի
որովք բանիւք վարին գիրք
յորժամ զերկրաւոր եկեղեցւոյն
Քրիստոսի խօսիցին , զնոյն 'ի
կիր առնուն և յաղագս երկնաւո-
րին և թաղաւորելոյ սրբոցն ընդ

Աստուծոյ : Եւ արքայութիւն
 Աստուծոյ զթագաւորութիւնն
 կոչեն զհօր և զՔրիստոսին ,
 այս է զերկրաւորս եկեղեցի , զոր
 հաղորդակից ասեն երկնաւորին .
 զայս եւեթ խտիր 'ի մէջ ար-
 կեալ զի նոքա փառաւորք են և
 երջանիկք , և մեք դեռ եւս 'ի
 փորձութեանց շուրջ պար առեալ
 և 'ի վշտաց : Ճեթանոսաց վար-
 դապետ աստուածային առա-
 քեան Պաւղոս յԵրբայեցւոց
 թղթին յորժամ զերկնաւոր և
 զերկրաւոր եկեղեցեացն Ճառ
 արկեալ խօսիցի , անջրապետ 'ի
 մէջ ոչ զվիհն զայն արկանէ որ
 ընդ գոգն Երբահամու էր և
 ընդ դժոխս , ընդ երանեան ՚ ա
 զարոս և ընդ չարաբաստիկն մե-
 ծատուն . այլ այժմէն իսկ հա-
 ղորդակիցս մեզ զնոսա կոչէ խըն-
 դակիցս և երգակիցս 'ի վերինն
 Երուսաղէմ . քանզի ՚ Ո ատու-

ցեալ էք , ասէ , 'ի Ախովն լեառն
և 'ի քաղաք Աստուծոյ կենդա-
նոյ յԵրուսաղէմ յԵրկինս , և 'ի
բիւրաւոր բանակս հրեշտակաց
և յԵկեղեցիս անդրանկաց գրե-
լոց յԵրկինս „ : Դարձեալ և այլ
ուրեք ուսուցանէ եթէ Քրիս-
տոս զմիջնորմն ցանկոյն քակեաց
և արար զԵրկոսին մի , մահուամբ
խաչին զթշնամութիւնն ըար-
ձեալ և զանկէծս :

Քանզի ոչ եւս հաւատոց և
յուսոյ առաքինութեանցն պէտո
ունին երանեալք , այլ սիրոյ եւ-
եթ . և սէր ոչ վարկապարազի ,
այլ որ հաստատուն զբարեբաս-
տութիւնն նոցա գործիցէ : Ապա-
քէն և հնար ինչ իցէ կարծելզի
մանուկ մատաղ 'ի խանդաղա-
կաթ զրկաց ծնողացն քեցեալ
մահուամբ , և յաղցաւոր կենաց
աստի Ճանապարհ յանտրտումն
գործեալ , անդէն զսիրով և զկա-

Ծոգին սիրեցեալսն 'ի մօռացօնս
 արկցէ . և կամ'ի սիրայօդ բա-
 րեկամացն ոք զընթացս կատա-
 րեալ զառաքինասէր վաստակոցն,
 և հրեշտակի բարւոյ յանձն ա-
 րարեալ զհոգին երթիցէ հանգ-
 չել 'ի խաղաղաւէտ կայանս եր-
 ջանկաց , և բարձի Ծողի զբարե-
 կամն լքեալ ոչ ինչ ամենեւին
 զառաջին սէրն յիշեսցէ : Եւ յոր-
 ժամ յերկրի աստ անհրաժեշտ
 պարտս անձանց մերոց համարիմք
 յաղագս սիրելեացն և կարեւոր
 բարեկամաց զտէր աղաչել և զնո-
 րա մաղթել զզօրավիպն չնորհաց ,
 ոչ ինչ ամենեւին ընդ միտ ածեալ
 զի այնու նախատինս Աստուծոյ
 դնեմք և ապախտ զմիջնորդու-
 թեամբն առնեմք Քրիստոսի ,
 ընդէր ապա կալցուք յանձին կար-
 ծել եթէ մերժեալ բացընկեցիկ
 իցէ յերկնից երկնաւորս այս ա-
 ռաքինութիւն սիրոյ : Եա մա-

նաւանդուզ զհակառակն առաւել
 մարթ իցէ կարծել և զհաւանա-
 կանագոյն , եթէ քանզի առա-
 ւել մշտեռանդն է անդանօր սէր
 և առաւել բոցավառ , վասն որոյ
 և զօրաւոր իսկ յերկինս քան 'ի
 վերայ երկրի . և որ կարացն վեր-
 առեալ ամբառնալ զիղձս մեր և
 զսիրտ , զվարակեալսն շղթայիւք
 մարմնոյ , և զխունկս պաղատա-
 նաց վասն բարեկամաց իւրոց ա-
 ռեալ ածել , որչափ եւս առաւել
 յերկնից 'ի պատրաստ ընակու-
 թենէն գորովք սիրոյ նորա և
 խանդաղատանացն յուզիցին ,
 յորժամ զմարմնոյ աշացն բըժ-
 ժանս ամենեւին 'ի բաց ընկե-
 ցեալ յստակատես զբազմազգի
 չարութիւնսն նշմարիցէ և զփոր-
 ձանս ազգի ազգիս , որք զսիրելին
 իւր ըստ հոգւոյ եկեալ շուրջ պա-
 տեալ պաշարեալ իցեն : Եւ հո-
 գեակն այն աստուածանուեր որ

տռաւելքան զլովսէս երես առ
 երես ընդ Աստուծոյ խօսեսցի
 և լրութեամբք շնորհացն նորա
 զուարձացեալքերկրեսցի, զիա՞րդ
 ոչ զմաքուր և զանարատ հայ-
 ցուածս իւրոյ սրտին՝ առաւել-
 քան զբուրումն անուշից ընդ
 ոտիւք ամենակալին սփռեսցէ
 վասն իւրոց սիրելեացն որ դեռ
 եւս 'ի վերայ երկրի դեգերեալ
 տագնապեսցին . և զիա՞րդ ասի-
 ցեմք հաւատալ զի Աստուած ոչ
 լինի նոցա ունկնդիր, և զպաղա-
 տանս խնդրուածոցն նոցա արհա-
 մարհէ : Եթէ աւողջ ոք մնոք
 զայսոսիկ նկատեսցէ, քաջայայտ
 տեսանէ զի չիք ինչ 'ի վարդա-
 պետութեանս որ ուղղութեան
 հաւատոցն վնասաբեր լինիցի .
 այլ մանաւանդ Աստուծոյ գր-
 թալիր խնամոցն առատութիւն
 զայն համարեսցի, որ զերկնա-
 որն իւր եկեղեցի ընդ եր-

կրաւորիս այսպէս շաղկապեալ
զօդեաց :

Ի՞նյոց զի զաւաւելն քան զայ-
սոսիկ հակառակասիրացն ածեալ
կացուցից առաջի , նա ինքն Ի՞ս-
տուած բազում ուրեք յայտնու-
թեան բանիւք եցոյց մեզ եթէ
կամակար ընդունի զաղօթս սըր-
բոցն իւրոց և զհրեշտակաց , ո-
րոց առաջի նորա անկեալ և յա-
ղագս մարդկայնոյ բնութեան
զինամն սիրոյ նորա աղերսեն ե-
թէ ողորմեան մի կորուսաներ :
Ի՞ս դաւանութիւն էր հեքրայ-
եցւոյն աստուածընտիր ժողո-
վըրդեան , և նոյն ՚ի նորումն
հաստատեցաւ : Վանզի և քաջ-
իսկ Նըրէիցն վասն խնդրոյս զորմէ
մեր ըանքս են , տեսանի ձմար-
տութիւն ՚ի սրբախօս տառմն ,
և յայնոսիկ մանաւանդ որ ՚ի
վերջին ժամանակս առ զերու-
թեամբ կամ յետ այնորիկ յե-

ըիւրեալ դրոշմեցան : Աւանիկ 'ի
 պատգամաց գիրսն ցանկալոյ
 առն 'Իանիելի մարդարէի ըն-
 թեռնումք յաղագս հրեշտակաց
 եթէ առաքին նոքայերկնից յու-
 սուցանել զմարդիկ . և զիշխա-
 նաց ուրոյն առանձինն բանք լի-
 նին , որովք ազգաց և գաւառաց
 հրեշտակք նշանակին * : Այլ 'ի
 Տովեիթայ պատմութեանն Ճա-
 նապարհացոյց հրեշտակն Տու-
 բիայ՝ ընդ աստուածասիրացն նո-
 րա ծնողաց և բարեգործից զայս-
 օրինակ բարբառեալ խօսէր ե-
 թէ " Յորժամ կայիր դու
 յաղօթս և նուն քո Այոա ,
 ես մատուցի զյիշատակ աղօթի-
 ցըն ձերոց առաջի սրբոյն . և
 յորժամ թաղէիր դու զմե-
 ռեալսն՝ ես ընդ քեզ էի . և
 յորժամ ոչն դանդաղեցար 'ի

* Դանիել է . 16 . թ . 21 . Ժ . 13 .
ԺԲ . 1 .

յառնեն և 'ի թողուլ զՃաշն քո ,
 զի Երթիցես և ամիսփիցես զմե-
 ռեան . ոչ մոռացայ զքեզ յոր-
 ժամ զբարիսն գործէիր . այլընդ
 քեզ էի . . . Ես եմ Հռափայէլ
 յեօթանց անտի 'ի սրբոց հրեշ-
 տակաց՝ որք հանեն մատուցանեն
 զաղօթս սրբոցն , և մտանեն ա-
 ռաջի փառաց սրբոյն * „ : Օնոյն
 և 'ի Աակաբայեցւոց գիրսն տե-
 սանեմք . յորում պատմի եթէ Ա-
 նիաս քահանայապետ մեծ Հեք-
 րայեցւոցն ժողովրդեան՝ Երեւե-
 ցաւ Յուղայի Աակաբէ զի բազ-
 կատարած զտէր Աստուած վասն
 որդւոցն Խորայելի պաղատէր :
 Յետ նորա Երեւեցաւ և այլ ոմն
 ծերունազարդ աւարտահասակ
 այր լի փառօք և զեղեցկու-
 թեամք , և յաւելեալ Անիայ 'ի
 բանս իւր ասէ ցԱակաբէ .

Եղբայրասէրս այս, սա է որ
 բազում աղօթս անպակաս յա-
 ձախ մատուցանել Աստուծոյ . Ե-
 րեմիա մարգարէ Աստուծոյ , :
 Դարձեալ և ինքն Աակարէոս
 զվատասրտել և զտկարանալ զօ-
 րացն իւրոց տեսեալ զի զհետ ու-
 նայնութեանց զակատեալք յու-
 ռութուլունս և բժժանս 'ի ներ-
 քոյ հանդերձից նոցա գտանէր .
 Բաջութեամբ խորհրդովք
 չըրս հազար սատերս կրկին ժողո-
 վեր, և տայր տանել . յըրուսաղէմ,
 մատուցանել պատարագս վասն
 մեղացն . կարի բարւոք իմաստու-
 թեամբ . զի վասն յարութեան
 մեռելոց խորհէր առնել զոր առ-
 նէր : Ո ի եթէ յարութեան
 ակն ոչ ունէր, անկելոցն 'ի պա-
 տերազմէն զուր տարապարտուց
 լինէր վասն մեռելոցն աղօթս
 մատուցանել : Այլ հայէր նա-
 ուզիու, ննջեցելոցն գեղեցիկ պա-

Հեալ զշնորհս պարգևաց . արու-
թեամբ քաջութեամբ վասն մե-
ռելոցն զմտաւ ածէր այց լինել
մեղացն թողութեան * „ : —
Դառձեալ խօսեցաւ Աստուած
ընդ Երեմիայ մարգարէի և ա-
սէ . ** Եթէ կայցեն Ո՞վլսէս և
Սամուել առաջի երեսաց իմոց ,
ոչ եղիցի անձն իմ ընդ նոսա . . .
Ո՞ ինայեսցէ 'ի քեզ Երուսա-
ղէմ, կամ ո արտմեսցի 'ի վերայ
քոյ , կամ ո դարձցի հարցա-
նել զիսաղաղութենէ քումմէ . զի
դու դարձար յինէն , ասէ տէր ,
և յետս երթիցես *** „ : Ապա ու-
րեմն յայտնի է 'ի բանից աստի Աս-
տուծոյ եթէ մարթ էր Ո՞վլսէսի
և Սամուելի բարեխօսել վասն
Խսրայելի, և զի տեառն չէ մարթ
լսել նոցա , քանզի անօրինեցան

* Բ . Մակաբայեց . ԺԵ . 42 , 44 .
Ժ.Բ . 43 :

** Երեմիա ԺԵ . 1 , 5 :

ընդդէմ Աստուծոյ : Եւ ժողովուրդք Ներբայեցւոց 'ի գերուի
 'ի Խաթելոն երթեալք զտէր ա-
 զաշէին ասելով . “ Օ ի դու ես
 հայր մեր , զի Աքրահամոչ զի-
 տաց զմեզ և Խաթայէլ ոչ ծանեաւ
 զմեզ . արդ դու տէր հայր մեր
 փրկեա զմեզ , զի 'ի սկզբանէ ա-
 նուն քո է 'ի վերայ մեր * ” :

Խակ յաւետարանսն ոչ ինչ ա-
 մենեւին հակառակութիւն է
 վասն բանի խնդրոյս այսորիկ . այլ
 օգտակար մանաւանդ փրկարար
 բանն ուսուցանէ մեզ , յորժամ
 զառակս գիւտի դրամոցն և զոչ
 խարաց պատմեալ , ապա յաւե-
 լու 'ի բանսն և ասէ , 'ի կշիռ ընդ
 երկնայնոյ ուրախութեան զայնա-
 ծելով , եթէ “ Այսպէս է ուրա-
 խութիւն յերկինս վասն միոյ մե-
 զաւորի որ ապաշխարիցէ , քան

վասն իննստուն և իննարդարոց որոց
 չիցէ պիտոյ ապաշխարութիւն*, ։ ։ ։
 Եւ եթէ հաղորդութիւն ինչոք
 իցէ ընդ զինուորեալս և ընդ
 յաղթական եկեղեցի, բնաւ և
 ընդէ՛ր իսկ ուրախութիւնս այս և
 զեղումն հրձուանաց մուտ յեր-
 կինս զտանիցէ ։ Այսէ և այլ ու-
 րեք փրկիչն, յորժամ զանհա-
 ւանսն յարութեան կշտամբէր,
 եթէ սուրբք Այսուծոյ իբրեւ
 զհրեշտակս են յերկինս ։ Վա-
 րողեաց եթէ միոյ միոյ՝ ի մարդ-
 կանէ առանձինն հրեշտակք պա-
 հապանք կարգեալ են, և հրա-
 մայեաց զգոյշ լինել մի արհա-
 մարհելզմի՝ ի փոքրկանցն Վրիս-
 տոսի, և մի զնոսայուղութեան
 ձանապարհէն գայթագղեցուցա-
 նել. քանզի հրեշտակք նոցա հա-
 նապազ տեսանեն զերեսս հօր

իւրոյ որ յերկինս է : Դարձեալ
և 'ի Պուկայ աւետարանին .
“ Արարէք ձեզ բարեկամն ՚ի
Վամոնայէ անիրաւութեան . զի
յորժամպակասիցէ այն , ընկալ-
ցին զձեղ՝ի յարկսն յաւիտենա-
կանս . . . և զիարդ բարեկամն
մեզ կարիցեմք զնոսա ունել . ե-
թէ ոչ բարեխօս վասն մեր յեր-
կինս անցեալ բազմիցին առաջի
հօրն երկնաւորի : Այնպէս և 'ի
մեծատանն առակի պատմեաց
Վրիստոս , եթէ աղաչէր նա 'ի
տանջանս անդ գեհենին զլքրա-
համ առաքել զլ աղարոս , զի
երթեալ պատմեսցէ եղբարց իւ-
րոց զգեհենին տանջանս դառ-
նութեան :

Վրտանոր զնորաղանդիցն վար-
դապետս աղաչեմ զի ընդ Վրիս-
տոսի բանիցն և զմեր հաւատս
'ի կշիռ ածեալ ձգեսցեն . և եթէ
նշմարիցեն ինչ ստգտանաց ար-

ժանաւոր, յայնժամ ապա յի-
րաւի առ 'ի նոցանել բամբասի-
ցիմք : Ի՞նդէր իցէ մեզ զգոյշ լի-
նել 'ի մեղաց զի մի զհրեշտակն
թշնամնիցեմք, և ընդէր զգայ-
թագղութիւնն կարձեալ արգե-
լուցու Քրիստոս, զայս պատ-
ճառու 'ի մէջ ածեալ, զի
զորս սայթաքեցուցանեմքն՝ նոցա
հրեշտակքն հանապազ տեսանեն
զերեսս Աստուծոյ . Եթէ ոչ, զի
հրեշտակաց մեծ է զօրութիւն
յերկինս, և մարթ է նոցա պա-
տուհասս անհնարինս յեղեռնա-
ւորացն ածել թափել 'ի գլուխ .
քանզի և մաղթանաց ձայնից
փառաբանչացն իւրոց՝ յանհնա-
րիցն է եթէ անլուր լինիցի Աս-
տուած, և ոչ զառաքինին մեծա-
րիցէ և կամընդ պատժովք պա-
տուհասից զչարագործն արկցէ :

Այս 'ի Տեսլեան գիրսն Յով-
հաննու աւետարանազրի աւելի

իմն յայտնութեամք այս բանք
 յիշատակին, եթէ աղօթք մեր
 իբրեւ զխունկս անուշից են՝ զորս
 հրեշտակք և սրբոցն գումարք
 Աստուծոյ ընծայեն բարձրելոյ :
 Վանզի պատմէ նա եթէ յերա-
 նելեացն ոք առաջի խորհրդական
 սեղանոյն կայր և Ունէր խըն-
 կանոց ոսկի . և տուաւ նմա
 խունկ բազում՝ զի մատուցէ
 զաղօթս ամենայն սրբոց, 'ի վե-
 րայ ոսկեղէն սեղանոյ առաջի ա-
 թոռոյն : Եւ եւ ծուխ խնկոցն,
 աղօթք սրբոցն, 'ի ձեռաց հրեշ-
 տակացն առաջի Աստուծոյ,,,: Եւ
 ոչ միայն հրեշտակք, այլ և քսան
 և չորս երիցունքն անկանէին ա-
 ռաջի աթոռոյն Աստուծոյ . և ար-
 կանէին զխունկ աղաճանացն իւ-
 րեանց առաջի բարձրելոյն : Եւ
 զի՞նչ այլ բանքս նշանակիցեն,
 բայց զի զաղօթս մեր նոքա մա-
 տուցանեն Աստուծոյ, և բարե-

Խօսք վասն մարդոյ են յեր-
կինս :

Ապա ուրեմն սուրբք Աստուծոյ
և հրեշտակք գիտեն քաջ զինչ
անցք՝ ի վերայ երկրի անցանեն,
և տեսանեն զվիշտս մեր և զհա-
ռաչանս լտեն . քանզի եթէ չէր
այսպէս, ոչընդ գործս բարեացն
մերոց խնդային և ոչընդ վշտա-
չարչար տառապանսն տրտմէին :
Եւ երկրորդ անգամ, նոքա
զխունկս հայցուածոց մերոց մա-
տուցանեն Աստուծոյ, և վասն մեր
բարեխօսեն :

Առ քաջ եւս խելամնելիրացս,
արժան է՝ ի բուն խակ վարդապե-
տութիւն եկեղեցւոյ զակն յա-
ռեալ, զնախնի վարդապետացն
ածել՝ ի մէջ զթուխ . քանզի և
նոքա խակ աւանդապահք ուղղու-
թեան հաւատոցն կացին, և
լելի ընդ ամենայն տիեզերս
զայն արարին, — Ամենայն ոք որ

Առովմայեցւոց զմեծ քաղաքն
 տեսեալ իցէ , 'ի նկուղս անդ
 մթին և խաւարչուտ քանտիցն
 զնախնեացն քրիստոնէից դրոշ
 մեալ զպարծանս նկատէ և զթը-
 շուառութիւն , որ երանութիւնն
 էր վասն ՚Վրիստոսի սիրոյն . 'ի
 գետնադամբանսն ասեմ , յորս
 մարմինք սրբոց վկայիցն ամփո-
 փեալ պահին : Ռազմաց ՚ի նոցա-
 նէ կնքեալ և փակ են գերեզ-
 մանք , և 'ի վերայ քազմաց ար-
 ձանագիրք դրոշմեալ տեսանին ,
 և կամոստ մի արմաւենւոյ՝ որով
 զվկայականն յաղթական մահ
 սովորեցան նախնիք նշանակել :
 'Դեռ եւս տեսանին սրբոց վր-
 կայիցն արիւնք հեղեալք , և գոր-
 ծի տանջանացն նոցա և չարաչար
 մահուն : Եւ որք զնոսա 'ի թա-
 ղումն ածէին հաւատացեալք ,
 յառաջ քան զմինոգերորդ դար
 եկեղեցւոյ կացին , և ոչ իբրեւ

զմերոց ժամանակաց զուղղա-
 փառքս՝ զառածեալք զհետ սնո-
 տեացն պաշտաման , որպէս նոր
 աղանդքն ասեն . և քաջ իսկ ի-
 րազեկ լեալ գիտէին նոքա եթէ
 զիարդ զՔրիստոս արժան է
 փառաւորել , և կամ զնը պատիւ-
 մեծարանաց վկայիցն նորա ըն-
 ծայել . և թուի ինձ եթէ յան-
 չնարիցն է մեզ հաւատարմա-
 զոյն վկայո հաւատոցն նոցա 'ի
 մէջ կացուցանել , քան զորս վասն
 Քրիստոսի զարիւն իւրեանց հե-
 ղին . և կամ այլ վեհազոյն վար-
 ժապետո՞ք քան որք զանձինտ իւ-
 րեանց կամակար նուիրեցին 'ի
 վկայութիւն փառաց անուան նո-
 րա : Տեսցուք ապա եթէ զիարդ
 զեզբայրակիցս իւրեանց պատու-
 էին նոքա , յորժամ 'ի մահու շի-
 րիմ եղեալ՝ և 'ի վերայ գերեզ-
 մանաց նոցա զակնկալիս յուսոյ
 իւրեանց և զցաւոցն զբոշմէին

յարձանի . քանզի աղօթք և պա-
ղատանք՝ 'ի վերայ գերեզմանի
նոցա նշանակեալ կան՝ որովք սո-
վորեցան հաւատացեալք զբարե-
խօսութիւն սրբոցն և զվիայից
թախանձանօք մաղթել յլու-
տուծոյ : Վանզի յամին 1694
զԱբատեայ ուրումն վկայի գը-
տին հաւատացեալք զգերեզման՝
'ի դամբարանսն Գորդիանոսի
և Խաղիմաքեայ . և 'ի վերայ կա-
փարչին դրոշմեալ կայր ոստ ար-
մաւենւոյ և պսակ յաղթական ,
և արձանագիր հռովմայեցւոց
բարբառովն .

ՍԵԲԱՏԵԱՅ ՀՈԴԵԱԿ ՍԻՐԵՑԵԱԼ ,

ՊԱՂԱՏԱՆՍ ՎԱՍՆ ՆԴԲԵՐՑ

ԵՒ ԸՆԿԵՐԱԿՑԵՑ

ՅԱՍՏՈՒՆՈՅ ՄԱՂԹԵԱ

Կպա ուրեմն և առ նախնեօքն
սովորութիւն էր զաղօթս սրբոց

մարտիրոսացն և զբարեխօսու-
թիւն հայցել:

Եւ 'ի կալիստեայ դամբանսն
այլ արձանագիր է տեսանել՝ ոչ
ինչ նուազ երեց ժամանակաւ-
քան զառաջինն .

ԱՏՏԻԿԻ ,

ԴՈՒ Ի ՍՈՒՐԲՍ ՀՅԱԳՈՒՑԵԱԼ ԵՍ ,

ՄԱՂԹԵԱ ԶՑԻՐ

ՎԵՍՆ ՔՈՑՈՑ ԾՆՈՂԱՑԴ

Խակ 'ի կիրակեանսն անուա-
նեալ գետնադամբանս , այլ իմն
արձանագիր գոյ նմանօրինակ ա-
ռաջնոյն , եթե

ՅՈՎԻԵՆԻ ,

Ի ՏԵՐ ԿԵՑՑԵՍ , ԵՒ ՅԱՂԱԳՍ ՄԵՐ

ԶԱՍՏՈՒԱԾ ՄԱՅՉԵԱ

Եւ 'ի Պրիսկիղեայսն զայս գո-
րովաշարժ արձանագիր տեսա-
նեմք , յորում հայրն կաթողին 'ի

սիրեցելոյ որդւոյն զրկեալ, զսփո-
փանս իւր և զսէր ընդ կափարիչ
վիման արկանէր և զակնկալու-
թիւնն 'ի վերայ նորա դրոշմէր .

ԵԿԱՏՈՒԻՈՍ ,

ՍԻՐԵՑԵԼՈՅ ՈՐԴԻՈՑՆ

ԶԱՅՍ ԿԱՌՈՅՑՑ ՇԻՐԻՄ ,

ՈՐ ԶԵՒԹՆ ԱՄ ԵՑԵՍ ԶԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՍ . . .

ՀՈԳԻ ՔՈ Ի ԽԱՂԱՂԱԿՈՒԹԵՑՆ

ՀԱԿԻՑԵԿ ,

ԵՒ ՎԱՅՆ ՔԵՌ ՔՈ ԶՏԷՐ ԱՂԱՅԵՅ

Դարձեալ և 'ի վերայ շիրմի
ուրումն վկայուհւոյ այս բանք
դրոշմեալ տեսանէին եթէ

ԳԵՆԻՑՆԵ ,

ՅԻՇԵՍԶԻՐ ԶՄԵԶ ՅԱՂՈԹՍ ՔՈ ,

ՔԱՆԶԻ ԳԻՑԵՄՔ

ԵԹԷ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՍ ԴՈՒ

Եւ բազումք յարձանագրացս
այսոցիկ 'ի վերայ շիրմաց մար-

տիրոսաց են դրոշմեալ, որք ան-
դէն յառաջնումն դարու քըրիս-
տոսական հաւատոց վկայեցին :
Եւ գըեցին զարձանագիրսն ըն-
կերակիցք նոցա հաւատացեալք,
որք ականնատեսք վկայական մա-
հու նոցա եղեն . և յորոց
բազմագոյնք եւս ապա նմանօրի-
նակ մահուամք ելին յաշխարհէ՝
զանձկալին իւրեանց տեսանել
զԱրիստոս . և ոչ ընդ միտ ան-
գամ ածէին , զի զնոցայն մաղ-
թելով բարեխօսութիւն՝ նախա-
տինս փառաց անուանն Աստու-
ծոյ դնեին և միջնորդութեանն
Արիստոսի :

Դարձեալ Առաքելական կա-
նոնան գրեալ կայ . “ Արգեցին
առաքեալըն և եղին հաստա-
տութեամք՝ թէ ոք ելանիցէ
յաշխարհէ Ճմարիտ վախճանաւ
և կամ խողխողեալ յանօրինաց ,
վկայ հաւատարիմ վասն անուան

փրկչին՝ խոստովանելով զ՞րիստոս 'ի նեղութիւնսն որ վասն անուան նորա լինի, արասցեն զյիշատակս նոցա յաւուր մահուան նոցա. և զնշխարս ուկերաց նոցա 'ի պատիւ առեալ՝ փառաւորեսցեն զ՞րիստոս. որ ետ նոցա զայնպիսի համբերութիւն 'ի յորդորումն և 'ի թողութիւն մեղաց մերոց :

„Աարդեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ՝ թէ օր շաբաթուն եղիցի տօն և պաշտօն ընդ ամենայն տիեզերս, և եղիցի յիշատակ ամենայն մարտիրոսաց. պատարագ մատուսցեն 'ի նմա քահանայքն և ուրախութեամբ սաղմոսեսցեն. վասն զիկարապետ է մեծի արքային գալստեանն. պարտ է ամենայն սրբոցն ուրախ լինել ընդ առաջ զ՞րիստոսի „ :

Խոկեթէ 'ի յիշատակաց աստի

նախնական քրիստոնէութեան 'ի
 բուն իսկ բանս հարցն սըբոց
 զակն յառեսցուք , վնոյն և 'ի
 գիրս նոցա տեսանեմք իմաստու :
 Վանդի յերկրորդումն դարու
 սուրբն Երանոս | ուգդոնացւոց
 քաղաքին հայրապետ 'ի Հեր-
 ձուածոց գիրսն ասէ եթէ "Օ որ
 օրինակ նախամայրն Եւա իսո-
 նարհեցաւ 'ի կեղծաւորութիւն
 բանսարկուին բանից , և վրիպե-
 ցաւ և վրիպեցոյց 'ի դրախտէն
 և յլ ստուծոյ , այսպէս և եր-
 կրորդն Եւա՝ կոյսն Արքիամ ,
 ուսոյց հնազանդել բանից տէ-
 րունի պատուիրանացն , և եղեւ
 բարեխօս և պաշտպան անկելոյ
 մարդկութեանս * :

Դարձեալ 'ի նոյն Հերձուածոց
 գիրսն պատմէ , եթէ քահանայ

* Ընդդէմ Հերձ . Գիրք Ե . ԳԼ.
 Ժ.Թ. :

ոմն քան զնա երիցագոյն , որ և
զուրբ աւետարանին տեսեալ
էր զ՞ովհաննես , ասէր եթէ
“ Աահապետք և մարդարեք
հնոյ ուխտին՝ Քրիստոսիւ զփըր-
կութիւն ժառանգեալք՝ աղաչեն
զիստուած վասն մերոյ փրկու-
թեան* ” :

Ուրբն Կղնատիոս առաքելա-
կան հայրապետ յԱփեսացւոց
թղթին ասէ . “ Եղեց ես ’ի զոհ
յարդարութիւն և ’ի քաւու-
թիւն յԱփեսացւոց եկեղեցւոյն ,
որ հռչակաւորագոյնն է ընդ ա-
մենայն աշխարհ ” : Եւ զիարդ
մարթ էր նմա լինել յարդարու-
թիւն և ’ի քաւութիւն յԱփե-
սացւոց , եթէ ոչ բարեխօսու-
թեամբ :

Հեղեսիւպսոս որ ’ի վերջ

* Անդ . Դիբք Դ . ԳԼ . ԼԱ :

կցս երկրորդի դարուն եկեաց ,
 'ի խօսել անդ զբարեկամաց
 Քրիստոսի և զաղգակցաց ոլք
 վկայեցին մահուամբ , ասէ .
 “Առքա նախագահը և նախա-
 թոռք բազմին 'ի տիեզերական
 եկեղեցւոջ իբրեւ վկայք և ազ-
 գականք փրկչին , :

Որոգինէս ասաց եթէ “Յոյժ
 'ի դէպ և կարիյիրաւունս է մեղ
 կարծել եթէ ամենեքին նոքա ո-
 րոց երկնակրօն քաղաքավարու-
 թեան վարս յանձին բերեալ և
 յաշխարհէ ելին , գթութեամբ
 'ի ստորինքս 'ի մեղ ակնարկեն և
 խնամատարք փրկութեան եղ-
 բարց իւրեանց լինին , և աղօ-
 թիւքն և բարեխօսութեամբ
 օգնական և զօրավիզն լինին մեղ
 առաջի Աստուծոյ : Քանզի 'ի
 Վակաբայեցւոց գիրսն գրեալ
 կայ եթէ սա է Աքրեմիա մարգա-
 րէն Աստուծոյ որ աղաչէ վասն

ժողովրդեանն „ : — Կարձեալ
 և յՈՂԵԱՆ զայսօրինակ բարբա-
 ռեալ խօսի , եթէ “ Ի դուճն
 անկայց ես բազմամեղս , և ոչ
 կարացեալ աղօթիւք զՄԱՍՏՈՒԱԾ
 ողոքել , զբարեխօսութիւնն մաղ-
 թեցից զամենայն սրբոց „ : Եւ
 ապա զբանսն առ նոսա դարձու-
 ցեալ գոչէ . “ Օ ձեզ աղաջեմ ե-
 րանեալք ՄԱՍՏՈՒԾՈՅ , հառաջա-
 նօք և արտասուօք . դուք ընդ իմ
 անկեալ յոտս փրկողին՝ և վասն
 եղկելոյ մեղաւորիս զնա աղաջե-
 ցէք „ : — Եւ ’ի գիրսն որ ընդ-
 դէմ կելսոսի ասէ . “ Ի քաղցրա-
 հայեաց լինելնորա , որ է ’ի վե-
 րայ ամենայնի ՄԱՍՏՈՒԱԾ , քաղ-
 ցրահայեաց և զնորա զամենայն
 բարեկամն ունիմք առ մեզ զհրեշ-
 տակս և զոգիս . վասն զի իրագէտ
 լինին արժանաւորաց ՄԱՍՏՈՒԾՈՅ
 բարեգթութեանն . և ոչ միայն
 և ինքեանք բարեգութ առ ար-

ժանաւորս լինին , այլ և գործա-
 կից որոց կամիցինն պաշտել զ'ի
 վերայ ամենայնի զԱյստուածն ,
 և արդահատեն և աղօթակից
 լինին և պաշտօնակից : —
 Դարձեալ և ՅԱՂՅԻՇ գիրսն .
 “ Ոչ եթէ քահանայապետն եւ-
 եթէ որ մաղթէ , այլ աղօթակից
 են ընդ նմա և հրեշտակք և հո-
 գիք սրբոցն մեռելոց ” : Եւ յայլ
 գիրս իւր որ կոչի ՅԱՐԴՐ ’է
 Տարդիրոսունիւնն , ասէ . “ Հոգիք
 այնոցիկ որք մեռան վասն վկայու-
 թեան անուանն Քրիստոսի ,
 ոչ եթէ վայրապար ինչ առաջի-
 կայ գտանին երկնաւոր սեղա-
 նոյն , այլ ընդունին զքաւութիւն
 մեղաց այնոցիկ որոց վասն պա-
 ղատին . . . Ի թողուլ անդ քո
 մտադիւրութեամբ զկողակիցն
 քո և զօրդիս և զեղբարս , և
 յերթալդ հանգչել ’ի ծոց Յի-
 սուսի որ զքեզ կոչեաց , աւելի

իմն խնամով կարասցես բարերա-
 րել այլոց՝ ընտանի և բարեկամ
 Աստուծոյ լինելով։ Եւ խելա-
 մուտ իցես դու յայնժամ եթէ
 զիարդ առաւել մարթ է սիրել
 զքոյսն և իւ, և վասն այնորիկ
 զտէր աղաչեսցես „ : — Պար-
 ձեալ և այլ ուրեք . “ Արիւն
 վկայիցն , ասէ , իբրեւ զարիւնն
 Աքելի յերկինս ’ի վեր աղաղա-
 կեալ դոչէ . և որպէս մեք ա-
 րեամբն Վրիստոսի փրկեցաք ,
 այսպէս և մարթ է կարծել զի
 և ոմանք արեամբ մարտիրոսաց
 զփրկութիւն ժառանգեսցեն „ :
 Եւ զայս ասելով , ոչ եթէ զար-
 դիւնս Վրիստոսի նուազեցուցա-
 նել կամիցի , այլ մանաւանդ ասէ
 իսկ յայտնապէս եթէ և մարտի-
 րոսացն արիւնք հեղեալք՝ ար-
 դասիք եւեթ են Վրիստոսի ա-
 րեամն . և զի արիւնն փրկչին ա-
 ռաւել դոչէ քան զաքելին . —

Եւ այլուրեք դարձեալ . . . Եթե
Կստուծոյ սիրոյն արժանաւորք
ոմանք երևեսցուք , բարեկամք
և միջնորդք մեզ են և հրեշտակք
սուրբք և երանելեացն հոգիք .
քանզի և զիտեն իսկ նոքա քաջ
եթէ ոյք ոմանք իցեն արժա-
նաւորք Կստուծոյ բարեկամու-
թեանն . վասն որոյ և օգնական
լինին այսոցիկ որք զԿստուծ
փառաւորել կամիցին , և զիւ-
րեանց մաղթանս ընդ մերոցն
խառնեալ բարեխօսեն վասն մեր
և մաղթեն . . . :

Եւ երանելի հայրապետն Աի-
սլիաննոս որ առ ժամանակօքն Ո-
րոգինեայ եկաց՝ զրէ 'ի թուղթ-
սըն եթէ . . . Յաղօթս մեր յի-
շատակ զմիմեանց արասցուք .
միով հոգւով և միաբան սրտիւ
յաշխարհի աստ և 'ի հանդեր-
ձելումն , և փոխանակաւ վասն
միմեանց աղաչեսցուք՝ օգնական

և սատար ընկերացն լինել 'ի
վիշտու և 'ի հեծութիւնս : Եւ
որ այսպէս սիրող իցէ ընկերին ,
և յառաջ քան զնա հանդերձե-
լոց ըարութեանցն ժառանգորդ
լինիցի , ոչ դադարի նա հայցուա-
ծովք զտէր աղաչել . և մաղթանք
նորա վասն եղբարց իւրոց և
քերց՝ ոչ լոեն յերկինս : Այս-
պէս թէպէտ զկեանս մերկա-
ցեալք , այլ անմոռաց զսէրն ու-
նին . և վասն յերկրի պանդըխ-
տելոցն՝ հանապասզօր զերեսս Այս-
տուծոյ պաղատին „ :

Եւ 'ի ըորըորդումն դարու Եւ
սերիոս կեսարացւոց հայրապէտ
այսպէս խօսի . “ Ո՞արթ իսկ է
մեզ արժանի լինել փրկութեան՝
աղօթիւք և բարեխօսութեամբ
ամենայն սրբոց „ : Եւ 'ի նմին
դարու սուրբն Ախւրդոս Երուսա-
ղեմի՝ զպատարագամատոյց գրոցն
առեալ խօսել , յաւելու 'ի բանն

և ասէ . “ Ապա յիշատակ զայ-
 նոցիկ առնեմք՝ որք յառաջ քան
 զմեղ արժանաւորք հանդերձեալ
 կենացն եղեն , զհայրապետացն ,
 զմարդարէից , զառաքելոց և զմար-
 տիրոսաց , խնդրելով զի աղօ-
 թիւք նոցա ընկալցի Աքտուած
 զմաղթանս մեր : Ազօթեմք դար-
 ձեալ և յաղագս հարց և եպիս-
 կոպոսացն մերոց հանդուցելոց և
 ամենայն հաւատացեալ ննջեցե-
 լոց , զիտելով չափ զի ոգիք
 նոցա սփոփանս անչափ և միսի-
 թարութիւն հայցուածովքս մե-
 րովք ընդունին , ’ի ժամն անդ
 սուրբ և ահաւոր զոհիս որ
 ’ի վերայ սեղանոյն մատչի . . .
 Խակ սուրբն Բաախիլիո՞ խմաստ-
 նագոյնն և ճարտարախօս քան
 զամենայն վարդապետս որ ’ի
 շորբորդումն դարու կացին , այս-
 պէս ’ի ներբողենին խօսի ՈԵ-

բաստացւոց քառասուն ման-
կանցն :

“ Կ նսախանձելի բարերարու-
թիւնքն , անծախելի շնորհքն ,
պատրաստական օգնականութիք
քրիստոնէից , ժողով վկայից ,
գունդ յաղթութեան նշանակի ,
դաս փառաբանողաց . Ո՞րչափ ինչ
արդեօք աշխատէիր , զի մի ոք
գտցես որ վասն քո թախանձե-
ցուցանէ զտէր . իսկ այժմ քա-
ռասունք են որ միաբան հանեն
զօրհնութիւնն : Խօհէ ուր երկու
կամ երեք ժողովեալ են ’ի մի
վայր յանուն տեառն , անդ է ’ի
միջի նոցա տէրն . իսկ ուր քա-
ռասունք են , ովլ յերկուասցի
յ Ա ստուծոյ զալստենէն : Ո՞ր
նեղեալն է ’ի քառասունն ա-
պաւինի . որ ուրախանայն՝ առ
նոսա ընթացեալ անկանի . մին
զի զուծումն գտցէ դժնդակու-
թեանցն . իսկ միւսն զի պահեալ

Եղիցին նմա պիտանացուքն : Այս
 կին բարեպաշտ վասն որդւոյ ա-
 զօթելով հասանէ , 'ի յուղի եր-
 թեալ զառն դարձ խնդրէ՝ հի-
 ւանդացելոյ զիրկութիւն : Ինդ
 վկայիցո Եղիցին խնդրուածք
 ձեր . Երիտասարդք՝ պատանեկացն
 նմանողք Եղիցին . Հարք, այնպիսի
 որդւոց հարք լինել ազօթեսցեն .
 մարք , զբարւոյ մօրն պատմու-
 թիւն ուսցին : . . . Ով սուրբ
 դաս , ով ժողով նուիրեալ , ով
 վահանակցութիւն անքակ , ով
 միահաւան պահապանք ազգի
 մարդկան . բարի կցորդք հո-
 գւոց , աղերսականաց գործակիցք,
 հրեշտակք զօրաւորք , աստեղք
 տիեզերաց , ծաղիկք եկեղե-
 ցւոյ : Օձեզ ոչ երկիրս ծած-
 կեաց , այլ երկին ընկալաւ . բա-
 ցան ձեզ դրախտին դրունք . ար-
 ժանի տեսակ հրեշտակացն զըն-
 դին . արժանիք հայրապետաց ,

մարդարեից, արդարոց արք նմին
 ծաղկի երիտասարդութեան կե-
 նացու եղեալք զոր արհամարհե-
 ցեք. քան զծնողս և քան զորդիս
 զտէր սիրեցիք : Ենմին իսկ հա-
 սակի կենաց զերիտասարդու-
 թիւն ունելով, արհամարհելով
 զառժամանակեայ զկեանս, զի
 փառաւորեսցեն զլուտուած ան-
 դամօք իւրեանց . տեսիլ եղեալ
 աշխարհի և հրեշտակաց և
 մարդկան : Օ զլորեալն կանգ-
 նեցին, զբեկեալն հաստատե-
 ցին, զբարեպաշտիցն ցանկու-
 թիւն կրկնեցին 'ի սպասաւորս
 բարեպաշտութեանն . ամենե-
 քին կանգնեցին նշան յաղ-
 թութեան . միովն յուսով և
 փառացն պսակաւ զարդարեցան
 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր
 մեր,, :

Ենմին 'ի չորրորդումն դարու-
 եկաց և Եփրեմ խուրին ասորի,

և անուանի ընդ ամենայն ա-
 րեւելս սրբութեամբ վարուցն և
 ողջախոհ վարդապետութեամբ
 լեալ, ընդ մեծարոյ վարդապետո-
 եկեղեցւոյ համարեցաւ և նա . և
 բանք նորա այնչափ զօրաւորք են
 քան զմեր աղօթից բանս, որպէս
 զի խիթալ մեզ զի մի պարզա-
 մտացն գայթագղեսցին լսելիք :
 “ Երդմնեցուցանեմ զձեզ, վր-
 կայք սուրբք, աղաղակէ նա ,
 որ այնչափ չարչարանաց վասն
 տեառն համբերեցէք, բարեխօս
 վասն մեր առ ՚ Կատուած լինել
 զի զլիութիւն շնորհացն իւրոց
 մեզ պարզեւեցէ . . . ՚ Կատ ոչ ինչ
 աւելի առնէ , բայց աղաչել
 զսուրբս և զնոցա մաղթել բարե-
 խօսութիւն . այլ լուր , զինչ և
 զինի այնորիկ ասիցէ . . . ՚ Ի քո
 բարեխօսութիւնդ ապաստան լի-
 նիմք սրբուհի մայր ՚ Կատուծոյ .
 առ զմեզ ընդ հովանեաւ թեոց

ողորմութեան և գթութեանքու
 բազումողորմ Աստուած , բա-
 րեխօսութեամք Երանուհւոյկու-
 սին Վարիամու , և ամենայն
 հրեշտակաց և սրբոց , գթացեալ
 ողորմեսցիս յարարածս քո :
 Եւ 'ի բանս գրոց սրբոյ վարդա-
 պետիս՝ այլ բազմապատիկ բանք
 են զօրաւորագոյնքյոյժյոյժքան
 զորս 'ի մէջ ածաք , յորոց
 զոմանս եւեթ կամք եղեն ինձ
 նշանակել աստեն՝ յընթերցանե-
 լեացն տեղեկութիւն . քանզի
 զԱստուածածին կուսեն խօսե-
 լով , դարձուցանէ զբանսն առ նա
 ինքն և ասէ . " Եքեղազդ մարդ-
 կան յուսացաւ , սուրբ Աստուա-
 ծին , որ բարեխօսդ ես վասն մեր
 առ որդին քո . և դու յոյս և
 հաստատութիւն ես ապաւինե-
 լոցս 'ի քեզ : Ա ամս որոյ և ես
 ինքն ջերմեռանդն յուսով առ
 քեզ ապաւինիմ , սուրբ Աս-

տուածածին . և ոչ համարձակե .
 լով առ որդին քո մատչել , բա-
 րեխօսութեամբ քով զփրկու-
 թիւն իմ պաղատիմ : Այս արհա-
 մարհեր զծառայ քո , որ ամե-
 նեւին զյոյս իւր եղ 'ի քեզ . մի
 արկաներ զիս 'ի վտանգս կենցա-
 զոյս , որ շուրջ զինեւ պաշարեալ
 կան . այլ ողորմեա 'ի վերայ իմ ,
 քանզի գթած ես և ողորմածին
 Վստուծոյ մայր . . . : Ի մաղթանս
 յայս աղօթից զամենասրբուհի
 Վստուածածինն լրումն կոչէ մար-
 դարեական տառից , Ճարտարա-
 խօս բերան առաքելոց , թագա-
 ւորաց զօրութիւն , պարծանք քա-
 հանայութեան , թողութիւն մե-
 ղաւորաց , դատաւոր արդար , ա-
 պաստան գայթագղելոց և քաւ-
 շարար մեղաւորաց : Իսկ յայլ
 աղօթս նորա այս բանք են առ
 փառաւորեալն Վստուածածին .
 “Յետ երբորդութեան , դու տէր

Ես ամենեցուն, յետ միսիթարչին
 միակ միսիթարիչ, և յետ միջ-
 նորդին միջնորդ ամենայն աշ-
 խարհի .. : Առեւ երանեալս այս
 վարդապետ և ասորնական եկե-
 ղեցւոյ պարծանք և բարեկամմե-
 ծին Քասիլիոսի առ մեւք կայր,
 արհամարհ անշուշտ՝ ի նորազան-
 դից լիներ, և չար քան զամե-
 նայն կռապարիշտս համարեր :
 Քանզի բանք նորա, որպէս
 կանխեցի ասացի, զօրաւորա-
 գոյնք են յոյժ յոյժ քան զամե-
 նայն բանս մաղթանացն ուղղա-
 փառաց. այլնա մեծարոյ և պա-
 տուական եղեւ միշտ՝ ի Ախւրիա
 և ընդ ամենայն արեւելս, ոչ ուղ-
 ղափառաց եւեթ հաճոյական գո-
 լով այլ և նեստորեանցն և միա-
 կամեայց և այլոց ամենեցուն ա-
 րեւելեայ հերձելոց, որք յետ
 աւուրց ժամանակացն նորա կա-
 ցին : Եւ Գրիգորիոս Ախւսեայ

պահնծալի ներբողենիւ զնա փա-
 ռաւորեաց , և Քասիլիոս զխո-
 նարհութենէ նորա և զարբա-
 կենցաղ վարուցն խօսելով պատ-
 մէ եթէ զիարդ ոչ կամեցաւ և
 'ի քահանայական ելանել աշտի-
 ճան : “ Դարձեալ նա ինքն երա-
 նելի ” ի իւսացին արձանական բա-
 նիւք զսուրբն Ափրեմ վերապա-
 տուեալ , այսպէս ընդ նմա խօսի .
 “ Դու որ առ աթոռով կաս , ա-
 սէ , անսմահին Աստուծոյ , և ընդ
 հրեշտակացն պարու նուելըս տն
 կենաց հանես և սրբոյ երրոր-
 դութեան , յիշեա զմեզ , և խըն-
 դըեա զթողոթիւն յանցանաց
 մերոց . . . : “ Քանզի և ” Ար նա
 չնորհալից , ընտրեալ յորովայնէ
 իբրև զմեծն Արեմիաս սրբեալ
 յԱստուծոյ . մանաւանդ թէ ի-
 բրեւ զերանելին Պաւղոս անօթ-
 ընտրութեան տեառն , անդստին
 'ի նմանէ ընտրեցաւ կըել զանուն

նորա առաջի հեթանոսաց և թագաւորաց . քանզի նովաւ յամօթառնելոց էր զամենայն հերետիկոս , և լուսաւորելոց զամենայն ուղղափառ հաւատացեալ՝ ձառագայթարձակ վարդապետութեամբ իւրով * :

Ես ահա վարդապետութիւն էր յայնժամ յամենայն յեկեղեցիս յարեւելս և յարեւմուտս :

Երանելի այլն Եստուծոյ Գրիգորիոս Ենձիանձու , զվախճանել բարեկամին իւրոյ տեսեալ զմեծին Ռասիլիոսի , սըրտակաթ ընդ նմա բարբառէր և ասէր : “ Եւ այժմնա ’ի յերկինս անդ՝ զյաղագս մեր , թուի ինձ , ընծայէ զպատարագմն , և վասն ժողովրդեան աղօթէ . քան-

* Ի Ճառընտիրս , ’ի պատմութեան սըրբոյն Եփրեմի :

զի և ոչ թողլով զմեզ ամենեւին
 ելիք : — Այս քեզ՝ ի մէնջ, ով
 հասիլիէ, ՚ի հեշտալւոյս քեզ
 երբեմն ՚ի լեզուոյ, ՚ի համապա-
 տուե, և ՚ի հասակակցէ . եթէ
 յարժանաւորութիւն մերձ քո
 այս շնորհ . վասն զի վստահանա-
 լով յաղագս քո զբանս հաստա-
 տեցի : Ըպա թէ հեռի և յոյժ
 ՚ի բացեայ յուսոյն, զի՞նչ պարտ
 է ինձ կրել ծերութեամբ, և հի-
 ւանդութեամբ, և քով անձկով
 հաշեցելումն : Այսկայն Կստու-
 ծոյ սիրելի ըստ կարողութեան .
 բայց դու ՚ի մեզ նայեսցիս ՚ի
 վերուստ, ով աստուածային և
 պատուական զլուխ, և տուեալ
 մեզ յԿստուծոյ զխաչ մար-
 մնոյ, զմեր դաստիարակութիւնս
 կամ դադարեցուսցես քո բարե-
 խօսութեամբդ, և կամ հաւանե-
 ցուսցես ժուժկալութեամբ ըե-
 րել, և զամենայն զվարս մերյօ-

ըինեսցես առ 'ի լաւագոյնն : Եւ
 յորժամփոխիսիցիմք , ընկալցիս
 և այդք զմեզ 'ի քո խորանսող
 իբրեւ ընդ իրեարս զ'ի միասին
 կեցեալս : Եւ զտեսողս 'ի միասին
 զսուրբ և զերանելի երրորդու-
 թիւնն , զմաքրագոյնն և զկա-
 տարելագոյն , զորոյ այժմ չափա-
 ւորապէս ընկալաք զհնչումնն , , :
 Եւ սուրբն Գրիգորիոս Ախ-
 սեայ եղբայր մեծին Շասիլիոսի ,
 այսպէս 'ի ներբողենին խօսի
 երանելոյ վկային Ծակողորոսի .
 “Ո՞ւզ զյիշատակ մրցանաց նա-
 հատակութեանն՝ ջանի մրցանաց
 եթող 'ի վարդապետութիւն .
 զժողովուրդս հաւաքելով , զեկե-
 ղեցի խրատելով , զհրեշտակ խա-
 ղաղութեան կոչելով . հայցելով
 յՇատուծոյ վասն մեր զպատ-
 շաճն և զօգուտն . բժշկա-
 րան հիւանդութեանց զանա-
 զան՝ զտեղիս զայսոսիկ բացա-

գործեալ . նաւահանգիստ նաւակոծեալ նեղեալ աղքատաց ,
 փարթամաց շտեմարան , ձանապարհորդաց յանձնառական օթելան . տեղի տօնից տօնելոց
 անզրաւ և անյազապէս . զի թէպէտ և տարեւոր տօնիւք զօրս
 զայսոսիկ կատարեմք , այլ ոչ
 երբեք աղաւաղեալ յանկեալ
 լինի փութով եկելոցն բազմութիւն . զմբջեանց բերելով զնամանութիւն աստանոր ամբոխաբերին . իսկ ոմանց ելանելով , և ոմանց տեղի տալով եկելոցն : Արդ մեք այսուհետեւ ով երանելի , 'ի
 կատարումն բոլորեալ շրջադայութեան ամիս հասանելով մարդասիրութեամբ արարչին՝ հաւաքեցաք քեզ զտօնս , զսրբազան վկայասիրացս զգունդ , հասարակաց տեառն երկրպագելով և զյաղթանակն նմով քոյոց մրցանացն զյիշատակ : Այլ դու առ

մեզ հասեալ եկեսջիր ուր և ի-
 ցես արդեւք տօնի վերատեսուչ
 լինելով . քանզի կոչելով զքեզ և
 կըկին կոչիցեմք , եթէ 'ի բար-
 ձրադոյն եթերն իցես կառավա-
 րեալ և եթէ առ երկնային կա-
 մարն Ճեմիցիս , կամ ընդ հրեշ-
 տակացն պարուն դասեալ տեառն
 առաջի կալով , կամ ընդ զօրու-
 թեանցն և իշխանութեանցն որ-
 պէս ծառայ հաւատարիմ երկըր-
 պագես . փոքր ինչ զանդանօրդ
 հրաժարելով , հասիր առ պա-
 տուողս քոյոյս յիշատակի , անե-
 րևելի բարեկամ . . . քանզի որ-
 չափ յայնժամ ժողովուրդ պա-
 տուհասիցն տեսողս ունէիր , այն-
 չափ այժմիկ պատուոյս պաշտօ-
 նեայք : Պէտք ունիմք բազում
 երախտեաց , մաղթեա վասն
 հայրենական ժառանգութեանս
 քո առ համայնիցն հասարակաց
 թագաւոր . քանզի հայրենիք է

վկայիցն՝ չարչարանացն գաւառ .
 և քաղաքացիք և եղբարք և
 ազգակիցք անփոփողք և պա-
 տուողք և ունողք . ակն ունիմք
 նեղութեանց , կասկածեմք վլշ-
 տաց . զի ոչ են հեռի սպանող
 Ակիւթացի քարբարոսքն 'ի վե-
 րայ մեր զմարտն երկնելով . ի-
 բրու զինուոր Քրիստոսի մար-
 տիր վասն մեր . որպէս վկայ՝
 վասն ծառայակցացս 'ի կիր արկ
 զհամարձակութիւն . թէպէտ և
 վերափոխեալ ես 'ի կենցաղոյս ,
 այլ գիտես զպէտս և զկիրս
 մարդկութեանս . հայցեա խա-
 ղաղութիւն , զի տօն քո այս մի
 զկայ առեալ յանդեսցի . . . զի
 մի կոխեսցեն զարբութիւնս քո
 պիղձքն և անօրէնքն . քանզի
 մեք և վասն որոյ անչարչարս
 մնացաք , քեզ համարիմք զե-
 րախտիսն . այլ հայցեմք և վասն
 հանդերձելոցն զգուշութիւն :

թռէ պէտք լինիցի յոլովագոյն
 մաղթանաց , ժողովեալ զումա-
 րեա զպարն քոյոց եղբարց և
 վկայակցաց , և հանդերձ ամե-
 նեքումքք աղացեա . . . ծանո՛ մե-
 ծին Պետրոսի և գլխաւորին
 գնդի առաքելոցն և վիմին հա-
 ւատոյ . յարո՛ զանօթն ընտրու-
 թեան զՊաւղոս , նոյնպէս և
 զՀովհաննսէս զաստուածաբա-
 նողն և զսիրելի աշակերտն , զի
 վասն եկեղեցեացս որ հաստա-
 տեցին մի անփոյթ արասցեն .
 Վասն որոյ զերկաթեղէնն զգե-
 ցեալ եղեն զկապարան , վասն
 որոյ զվիշտս և զմահ կրեալ համ-
 բերեցին . զի մի կռապաշտու-
 թիւն զգլուխն ամբարձցէ 'ի վե-
 րայ մեր , և մի փուշք հերձուա-
 ծոց 'ի յայգւոջս բուսեալ լիցի .
 մի որոմն գտեալ հեղձուսցէ զցո-
 րեանն . մի վէմ ապառաժացեալ
 գտցի առ մեզ պակասեալ 'ի ցո-

զոյն ճշմարտութեան , և անար-
մատացուսցէ զբարեպաշտ բանին
զօրութիւն . այլ զօրութեամբ
քոյոց մաղթանաց և որոց ընդ
քեզ , սքանչելիդ և գերափայ-
լեալդ 'ի վկայս , արօրաղբեալ
լիցի հաւատացելոց 'ի Վրիստոս
քաղաքավարութիւն , կալով մնա-
լով 'ի պարարտագոյն և 'ի քաջա-
պտուղ հաւատոցս հովտի , միշտ
պտղաբերելով զկեանսն յաւի-
տենականս . . . :

Երանելի հայրապետն Կոս-
տանդնուպոլսի սուրբն Յովհան
Ոսկեբերան 'ի Կոկիսոն փոքուն
հայոց տարագիր մերժեալ զհա-
ւատոցն մեր հայր զՎրիգորիոս
լուսաւորիչ եպիսկոպոսապետ 'ի
գովել առեալ , խօսեր ընդ նմա-
և ասէր . " Ո՛վ հայր սուրբ , և
առաջնորդ փրկութեան ամե-
նայն հաւատացելոց . որպէս ոչ
պակասեցար 'ի քոյոց սիրելեաց "

փոխադրելով յաշխարհէ . այլ
զի թէպէտ և զչասարակաց ըզ-
պարտն հատուցեր դու զբնու-
թեանս օրինաց , սակայն յիշա-
տակ քաջութեան քո մնայ առ
մեզ յաւիտեան : Այնպէս և
յայսմ հետէ , աղաչեմ , ոչ եւս
մեկուսանալ հոգեւորական այց-
ելութեամբ առ ’ի մէնջ , այլ յի-
շել զմեզ անսմոռաց , խնդրելով ’ի
հասարակաց յուսոյ փրկութեան
մերոյ , զի զպատահումն սա-
կաւագոյն վշտացս համբերու-
թեամբ կատարեսցուք . քանզի
ըստ առաքելոյ , որ զփորձ առեալ
է , կարող է փորձանաւորաց օգ-
նական լինելու :

Խոկ Ա'իդութեցոց հայրա-
պետն Ամբրոսիոս ’ի գիրան որ
զԱյրեաց զըէ . “Պետրոս և
Անդրէաս բարեխօսք եղեն վասն
կնոջն այրույ : Երանին է մեզ
եթէ զայսալիսիս ումանս միջնորդս

մեզ ունիցիսք . սակայն ձշմարտութեամբ է ասելս , զի որք վասն ազգականին իւրեանց բարեխօս առ տէրն եղեն , զնոյն և վասն մեր առնեն : Արժան և յոյժ'ի դէպ է ՚ի թիկունս մեզը ըդհրեշտական կոչել զպահապանս և զվկայս , և զնոցայն մաղթել սպաշտպանութիւն : Արոց արիւն զմեղսն մաքրեաց , կարող է մաղթել և զթողութիւն յանցանաց . քանզի առաջնորդք մեր են նոքա և հանդիսադէտք զործոց մերոց . վասն որոյ և ոչ ամաչել արժան է մեզ , այլ փութալ և ապաստան ՚ի նոցա անկանել օդնականութիւն , :

Այսպէս ահա ամենայն վարդապետք եկեղեցւոյ միաբան ընդունէին զսրբոցն բարեխօսութիւն և յորդորամիտ զժողո-

վուրդն բանիւք քարոզութեան
խրեանց առնելին :

Եւ զի քաջայայտ ցուցից աս-
տեն եթէ զօր խտիր նախնիքն
դնելին եկեղեցւոյ վարդապետը
ընդ պաշտամունս սրբոց և ընդ
բարեխօսութիւն , և ընդ պաշ-
տօն միոյն Աստուծոյ , օրինակս
ինչ յեկեղեցւոյ պատմութեանցն
դնեմ աստեն : Առուբն Ապիփան
եկեղեցւոյ վարդապետ զհերե-
սիովտայցն գումարս ըմբերանե-
լով , որը նուերս և պատարագս
տիրամօր կուսին հանելին և զնա-
պաշտելին , այսպէս ասէ . Յժեւ
պէտ անօթ ընտիր էր նա սրբու-
թեան , այլ կին մարդ՝ մերոյ
ընութեանս հաղորդակից . և
արժանաւոր ամենայն պատուոյ
զոր սրբոցն Աստուծոյ ընծայէ եկե-
ղեցի . քանզի 'ի վեր է նա քան
զամենայն սուրբս , և 'ի նմա-
լրումն երկնաւոր մարդեղու-

Եւան խորհրդոցն եղեւ : Բայց
 սրբոցն Կստուծոյ մեք պաշտօն
 ոչ հարկանեմք . վասն որոյ պա-
 տուել արժան է զի՞արիամ,
 այլ երիբարդանել Հօր և Ուրբայ
 և Հռդառյա սրբոյ . զի և ոչ ոչ 'ի
 հաւատացելոյ ծռւնը դնէ անուանն
 Մարիամու : Օնոյն և Հիպ-
 պոնայ հայրապետն Աւգոստինոս
 վկայէ 'ի գիրսն զոր ընդդէմ
 Փաւստինեայ գրեաց . " Վրիա-
 տոնեայք տօնախումք հաշակեն ,
 ասէ , զյիշատակ մարտիրոսացն .
 զի յորդորամիտք լինիցին նմանող
 նոցա լինել և վարձուցն հազոր-
 դակիցք . և աղօթից հայցուա-
 ծովք զնոցա օգնութիւն ընկալ-
 ցին . բայց ոչ մարտիրոսաց , այլ
 Կստուծոյն եւեթ մարտիրոսաց
 սեղանս կառուցանեմք 'ի յիշա-
 տակ նոցա : Վանզի ո՞ լուաւ
 երբեք զի եալիսկոսոս յորժամ
 զտաձարաց հիմնարկեսն առնի-

յէ , զայս եղանակ բանից 'ի
 կիր առնուցու եթէ քեզ Պե-
 տրէ , կամ , քեզ Պաւղէ , և կամ ,
 քեզ Ախալքիանէ զայս ձօնեմք
 նուհէր : Օ ի 'ի տեղւոջ անդ
 թէպէտ և մարմինք վկայից
 հանգուցեալ իցեն , այլ Իստու-
 ծոյ եւեթ հանեմք ձօնիս պա-
 տարագաց . զսրբոց մարտիրո-
 սացն զպատուական ուկերմն տե-
 սեալ և քաջալերիմք յանձինս
 նմանել նոցա , և թիկունս
 մեզ օդնականութէան յամենա-
 տեառնէն ինդրեմք որով վկայքն
 զօրացան : Եւ զոր օրինակ մե-
 ծարեմք յերկրի զայնոսիկ որք
 վասն աւետարանին Շմարտու-
 թէան ընդ վիշտու անցին և ընդ
 տանջանս , առաւել եւս զայնոսիկ
 պատուել արժան է որք յաղ-
 թանակեալ մտին յարքայական
 փառս . վասն որոյ և առաւել մե-
 ծարեմք դնոսա զի յաղթեցին

վշտօք, և լնդ բանսարկուին մար-
 տուցեալք զերանութիւն ժա-
 ռանգեցին : Օ այս պաշտօն հել-
 լենացիքն լանդիտ իւրեանց բար-
 բառովն կոչեն : ... Ա Յ Լ Վ ստուծոյ
 եւեթ նուեկը ողջակիզաց 'ի դէս
 են . և որք կռապաշտիցենն , նոցա
 մեծ մեղք են , վասն որոյ և մեք
 ոչ զոհս նուիրեմք վկայիցն և
 սրբոց և կամ հըեշտակաց . և
 եթէ ոք յայնսպիսի եղեռն ան-
 հնարին կործանեսցի , ողջամը-
 տացն ամենեցուն զաղաղակ բար-
 ձեալ և դատապարտ զյանցա-
 ւորն առնեն „ : Ո ի ն չ չ ե ւ 'ի
 քնին զբանս սրբոյ վարդապետիս
 առեալ , ածից 'ի մէջ և այլ ինչ
 'ի բանից նորա , յորում և յա-
 ղագս Ո աքրաբանի կամ Ք աւա-
 րանի լինին բանք . “ Ոչ անօ-
 պուտ ինչ յաղագս մեռելացն ,
 ասէ , համարիմք՝ առ սրբոցն
 շիրմօք թաղել զնոսա . այլ մեռե-

լոցն զի՞նչ օգուտ իցէ եթէ զհո-
գիս վախճանելոցն ոչ յանձն առ-
նիցեմք սրբոցն աղօթիւք։ Ա ասն
որոյ և զսիրելոյն մերոյ և
զմտերմի տուեալ հողոյ զմարմին՝
առ շիրմաւ պատուական և մեծ-
արդոյ վկայի, զհոդի նորա յանձն
առնեմք աղօթից երանելոյն։
Ի այց քաջայայտ է և այս զի ոչ
ինչ օգնեսցեն պաղատանք՝ եթէ
ոք վարս արժանաւորս յերկըի
ոչ իցէ ցուցեալ յանձին,, :

Եւ արդ՝ ի բանից աստի սրբոց
վարդապետացն քաջ իսկ տեսա-
նեմք եթէ զիարդ խտիր ընդ
պաշտօնն սրբոց դնէին հաւատա-
ցեալք և ընդ մեծարանս լուսու-
ծոյ։ Ինձ այսպէս թուի եթէ
ոչ ոք՝ ի նորաղանդից ժպլր-
հեսցի ասել եթէ և հարքդ այ-
դոքիկ և եկեղեցւոյ մեծարեալ
վարդապետք՝ ոքք սիւն և հաս-
տատութիւն ուղղափառ դաւա-

նութեանս մերոյ եղեն, ընկըզ-
 մեալք իցեն իբրեւ զմեզ, որ-
 պէս յանդուզն ամբաստանեն,
 'ի կռապարիշտ պաշտամունս .
 քանզի և անմտութիւն մեծ է
 կարծել զի անդստին յառաջին
 և յերկրորդ և 'ի չորրորդ դա-
 րուց՝ զհետ սնուտեացն պաշտա-
 ման կործանեցաւ եկեղեցի յի-
 տալիա, 'ի Հոյնս, 'ի Ախւրիա և
 'ի Ա'կացագետս . զի ոչ զսակաւուց
 ոմանց բանքս են և ոչ վասն փո-
 քու հօտի և ժողովրդեան, այլ
 ամենայն աշխարհի ուր միան-
 գամ՝ լուր քարոզութեան աւե-
 տարանին Քրիստոսի հասեալ
 ժամանեաց : Բա՛թէ, նորալուր
 և նորահրաշ սքանչելեացս . ա-
 պականեալ վատթարացաւ ամե-
 նայն երկիր, և զունայնութեան
 գնացին զհետ . 'ի զուր կենարար
 փրկչին արիւնն հեղաւ, ընդու-
 նայն քարոզութիւնքն նորա և

աշակերտացն եղեն . 'ի զուր և
 սրբոց վկայիցն ապաժոյժ արիւնք
 գետահետեալ ոռոգեցին զերկիթ .
 առն ուրումն աննշանի պահեալ
 էին երկինք զբաղդն մեծ . քան
 զամենայն վարդապետն զար-
 մանալի | ուտեր երևեցաւ , և
 խառնավար կենօքն և ամբարը-
 տութեամբ զայն ինչ հաստա-
 տեաց յոր չեղեն բաւական քարո-
 զութիւնք առաքելոց և կենցաղ
 անարատութեան նոցա : | ա և
 զառաւելն եւս ասացից 'ի յան-
 դիմանսութիւն մեծի ճշմարտու-
 թեանս . ոչ միայն չեղեն բաւա-
 կան 'ի բարեկարգութիւն 'ի վեր
 ածել զեկեղեցի , այլ և ին-
 քեանք իսկ կռապարիշտք ոմանք
 էին , թէպէտ և շատք 'ի նոցանէ
 զարիւն անգամ ետուն մտաղիւր
 վասն . | ըրխատոսի հաւատոցն :
 | կեսցէ կացցէ առաջի որ միան-
 գամ խղճէ և ոչ ունի յանձին

իբրև զսուրբս ոմանս և զհա-
 ճոյականս Աստուծոյ վերապա-
 տուել զարմն հանգունատիպս
 Բասիլիոսի, Ագոստինոսի, Նե-
 րոնիմեայ, Ամբրոսիոսի և Երա-
 նոսի: Անցցէ նա աղաջեմ ընդ
 բանս գրոցն նոցա, և կարկեսցի
 ժպիրչ բերանն որ զԱստուծոյ սի-
 րեցեալսն յանդգնի ընդ բամբա-
 սանօք կռապաշտութեան արկա-
 նել: Ոչ նոցա բանք 'ի հաստա-
 տութիւն Քրիստոսի հաւատոցն
 իցեն . ոչ նոքա գեղեցիկս զե-
 ռանձնեայ տէրութենէն ձառ
 արկեալ խօսեցան և զաստուա-
 ծութենէն Քրիստոսի. և զիարդ
 կարացին անարատ զհաւատսն
 պահել և ինքեանք կործանե-
 ցան անկան 'ի կռապաշտութիւն:
 Ո՞ի աղաջեմ, այդպիսի բանդա-
 գուշանաց բանիւք զարդարադատ
 սրտմտութեանն Աստուծոյ զշան-
 թիս 'ի գլուխ ձեր թօթափիցէք:

Օ այսոսիկ՝ 'ի բաց թողեալ,
 և այլ ինչ կարեւորագոյն յաւել
 ցուք ասել։ Այս ապաքէն էջ յեր-
 կնից Քրիստոս, 'ի վերայ աւե-
 րակաց կռապարիշտ պաշտամնցն
 կայկայեալ ամրացուցանել զհի-
 մունս եկեղեցւոյ սրբոյ. և զինչ
 օգուտ ՚ի քրիստոսածագ լուսոյն
 լինէր, եթէ յետ երկերիւր ա-
 մաց, որպէս համարեցան և ու-
 սուցին նորաղանդք, միւսանգամ
 դառնայր ՚ի խաւար։ Ա արդա-
 պետն մերում դաւանութեանս
 Քրիստոս սրտալիր յիւրում քա-
 րոզութեանն աղաղակէր. Հուր
 եկի արկանել յերկիր, և զինչ,
 կամիս թէ արդէն իսկ բորբոքէր,
 և մկրտութիւն մի ունիմ մկրտ-
 իլ, և զիարդ փութամ մինչեւ
 կատարեսցի. ապա ուրեմն ըն-
 դունայն վաստակք փրկողին էին.
 Քանզի այն ինչ հուրն աստուա-
 ծեղէն սիրոյն և սրբութեան

Հաւատոց ընդ Երկիր ծաւալէր ,
 և ահա շիջաներ մինչ 'ի սպառ ,
 և բանսարկու գաղանն ահեպա-
 րանոց , զոր Ճշմարտութեամք
 նկուն արար Քրիստոս , միւսան-
 գամ 'ի վեր զշարաբար գլուխն
 առնոյր՝ դղրդեալ յաւեր և յա-
 պականութիւն դնել զաշխարհ .
 և մինչ չեւ էին ատոքացեալք
 սերմունք վարդապետութեանն
 Քրիստոսի , խորշակն խամրա-
 գործ ծախեր սպառէր դնոսա :
 Եւ ոչ արհամարհիցեմք այսու
 զբանն և զորդին Աստուծոյ , և
 նախատինս մեծվայել չութեան և
 զօրութեան նորա դնեմք , փոխա-
 նակ զի ոչ կարաց մինչ 'ի սպառ
 կանգուն յոտին զվարդապետու-
 թիւն հաւատոցն իւրոց ունել :
 Գիտեմ զի չառնուն յանձն նոր-
 աղանդք ստգիւտ դՔրիստոսիւ
 արկանել . այլեթէ դնախնի վար-
 դապետս ստերիւրեալս 'ի Ճշմար-

տութենէ, հաւատոց ասիցեն, անիրաւին միանգամայն և առվարդապետն նոցա :

Իայց մի 'ի զէմս մեզ ածցեն եթէ ողջախոչ մտօք խօսեցան հարքն զոր խօսեցան . քանզի և ընդ միտ անգամ ոչ ածէին եթէ նախատինս այնու Քրիստոսի միջնորդութեանն դնիցեն, որ մեռաւ և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ : — Օ 'ի քաջ իսկ զիտէին նոքազի մարդ եթէ ազօթս 'ի մարդոյ խնդրիցէ, ոչ ինչ մեղանչէ առ Կստուած . նա մանաւանդ խելամուտ իսկ էին զի չիք ինչ առաւել աստուածավայելուչ՝ քան զսրբոցն և զերանելոց նկատել զումար՝ որք փառս և օրհնութիւնս արարչին հանիցեն, և վասն մեր բարեխօսք առ աստուածութիւնն լինիցին : Եզ զի առ նոցա ժամանակօք ոչ 'ի

վեր երևեալ էին հակառակորդք
 բարեխօսութեան սրբոց, վասն
 որոյ և նովին իսկ բանիւք զԱ-
 տուած և զսուրբս մեծարէին:
 Ի բազմախուռն օրինակաց ան-
 տի զմին եւեթ առեալ ածից ես
 'ի մէջ, զարձանագիրն ասեմ որ
 առ մեւք 'ի Հռովմայեցոց քա-
 ղաքին զտաւ, յորում այսպէս
 դրոշմեալ կայ լատին տառիւք և
 բարբառով... ։ Ենիկիոս Ե-
 քենիոս Շասոս հիւպատ և կին
 նորա Հոնորատա և որդիք նոցա,
 Եստուծոյ և սրբոցն նորա պաշ-
 տօնասէրք ։ Եւ ոչ ոք 'ի հա-
 կառակողացն կարծեմ և ընդ միտ
 անդամ ածցէ բնաւ՝ եթէ որք
 զայս այսպէս դրոշմեալ գրեցին,
 ոչ ինչ խտիր ընդ Եստուած դնէին
 և ընդ սուրբս նորա:

Իսկ թէ զիարդ մեծարէին
 հաւատացեալք զյիշատակ սըր-
 բոց, արժան համարիմ զմեծի

առն զԳԵԼօրեայ ածել 'ի մէջ
 զբանս . “Պատուեին , ասէ ,
 և զտօնս սրբոց մարտիրոսաց ,
 և բազմաժողով կատարեին զայ-
 նոսիկ : Օ ի թէպէտ զկիւրա-
 կէս և զայլ տէրունական տօնս
 ամենայն ոք յեկեղեցւոց իւ-
 րում կատարեր 'ի միասին ընդ
 եպիսկոպոսի իւրում , բայց առ 'ի
 տօնախմբել զյիշատակս սրբոց
 վկայից 'ի գերեզմանս նոցին ըն-
 թանային յամենայն կողմանց ,
 մինչեւ բազում անգամ յորովից
 եպիսկոպոսաց 'ի միասին հան-
 դիպել : Ո՞ի միայն օրինակ շատ
 է առ այս՝ խմաստասիրել անտի
 և զայլ : Ոուրբն Պաւլինոս յի-
 շէ յանուանէ քսան և աւելի
 քաղաքս և գաւառս Խտալիոյ ,
 ուստի զային ամի ամի խումբ
 խումբ բազմութեան հաւատա-
 ցելոց կանամբք իւրեանց և որ-
 դւովք 'ի քաղաքն՝ լողա 'ի տօնի

սրբոյն Փելիքսի 'ի չորեքտասահն
 յունուարի , 'ի ցրտադին աւուրս
 ձմերայնոյ , յայցելութիւն միոյ
 ուրուք եւեթ 'ի խոստովանողաց :
 Իսկ զի՞նչ եւս ասացից զհանուրց
 քրիստոնէից . զի՞նչ զտօնից սըր-
 բոյն Խպագողիտեայ և աւրեն-
 տեայ , և առաքելոցն Պիետրոսի
 և Պաւլոսի 'ի Հռովմ : Ի՞նդը
 'ի հեռաստանէ գային խոնէին
 յամենայն ժամանակի . ուստի
 սկսան պանդխտութիւնք ուխ-
 տաւորաց : Առուրեն Վլեքսանդր
 յորժամ եպիսկոպոս յԵրուսա-
 ղէմկացուցաւ ընդ սրբոյն Կար-
 կիսեայ՝ անդ ուրեմն 'ի սկիզբն
 երրորդի դարուն , 'ի Կապադով-
 կիոյ անդը եկեալ էր յայցելու-
 թիւն սուրբ վայրացն : ... Օ ի
 տեսանել 'ի մօտոյ զնշխարս ու-
 րուք 'ի սրբոց , զգերեզմանն ո-
 րա , զբանտն , զշղթայս , և զտան-
 ջանարանս մարտիրոսութեանն՝

այլ ազգ յոյժ զմիտան հարկան էր
քան զհամբաւն 'ի հեռաստա-
նէ

„Ենչ չեւ սկիզբն եղեալ սո-
վորութեան բաժանելոյ զնը շ-
խարս , 'ի դէպ իսկ էր պատուել
զառւրբս 'ի տեղւոջ անդ խոստո-
վանութեան նոցա : | Յունաց
սկսաւ սովորութիւնս այս . զի 'ի
Հռովմ մինչեւ 'ի ժամանակս
սրբոյն Պրիգորի , որպէս ինքնին
վկայէ , փոխանակ նշխարաց սըր-
բոց առաքելոցն յդէին կտաւս
կամ թաշկինակս հպեալս 'ի
գերեզմանս նոցին . և կամառա-
քէին բանալիս օսկեղէնս՝ ամիրո-
փեալ 'ի նոսա խարտուածս 'ի
շղթայից սրբոյն Պետրոսի : | Առ
զովուրդ իւրաքանչիւր նախան-
ձաւոր էր 'ի պահպանութիւն
նշխարաց սըրբոց իւրոց իթր առ-
հաւատչէից հովանաւորութեան
նոցին , և աստուածային օրհնու-

թեանն առատանալց 'ի վերայ
քաղաքին և գաւառին, յորմէ և
մարմնաւոր իսկ օդուտք սկսան
յաճախել նոցա . . . :

„Աչ ինչ զանգիտեալ երկըն-
չին մերձեալ առ վկայսն 'ի տան-
ջանս անդ, և ժողովել կտաւովք
և սպնդօք զարիւնն որ հոսէր 'ի
վիրաց նոցա, և արկանել 'ի շիշ
զորս դնէին ապա 'ի տապանս
նոցա : . . . Ո՞եծապէս ջանային
ժողովել և զմարմինս նոցա, կամ
զմնացուածս մարմնոց նոցա, զի
բազում անգամ ոսկը և աճիւն
նոցա եւեթ մնայր . որպէս յոր-
ժամ 'ի հուր ընկեցեալ լինէին,
կամ առաջի գազանաց, յորմէ և
սովորութիւն եղեւ նշխարս կո-
չել զմարմինս նոցա : Աչ ազա-
հէին յարձաթ առ 'ի թափել
զմարմինս նոցա 'ի ձեռաց դահ-
ճաց, և ամփոփել զնոսա պա-
տուով 'ի գերեզմանի, թէպէտ

և բազումք մահ այնու 'ի վերայ
 անձանց ածեխն . այլ և ոչ սակաւք
 նահատակեցան վասն համբու-
 րելոյ զմարմինս վկայից , վասն
 խնամելոյ զի մի անարգեսցին
 դիակունք նոցա , վասն խոյզ և
 խնդիր առնելոյ ոսկերաց նոցին ,
 և վասն թաղելոյ զնոսա : Եւ
 կէսք 'ի լուալիս ընկեցան՝ փոխա-
 նակ զի արտաքս հանեալ էր
 նոցա անտի զմարմինս սրբոց :
 Առուրբն Խճէոգիտոն պանդոկա-
 պետ սպանաւ վասն հանելոյ 'ի
 ըշէն զմարմինս եօթն կուսանաց
 ջրահեղձոյց կատարելոց անդ :
 Եւ զնշխարս սրբոյն Խգնատիոսի
 'ի Հռովմայ մինչ յլնտիոք ա-
 ծին աշակերտք նորա : . . . Շազ-
 մադոյնք 'ի նշխարաց սրբոց պա-
 հեցան անկորուստ ջերմ եռան-
 դեամբ հաւատացելոց , կամ
 սքանչելեօք իսկ զոր առնէր Աս-
 տուած յայնպիսում ժամանակի :

Պատուելին զշիրիմն յորս դնելին
մարմինք նոցա : Բազումք ՚ի
սրբոց կալեալ նահատակեցան ՚ի
հսկելն կամ յաղօթել առ տա-
պանօք վկայից , կամ ՚ի կատա-
րել զտօնս նոցա . քանզի որպէս
վկայէ Տերտուղիանոս և ոռւրբն
Խիպրիանոս՝ յամենայն ամս տօ-
նախմբելին զյիշատակ նոցա .
Վասն որոյ և խնամով նշանակելին
զօր կատարման նոցա „* :

* Ֆլէօրի , Կենցաղ Քրիստոնելից :



ԳԼՈՒԽ Ը .

Վարդապետութիւն Հայաստանայց
հկեղեցոյ յաղագս բարեխօսութեան
սրբոց :

Ուրք միանգամ տեղեակ ի-
ցեն Հայաստանեայցն եկեղեցւոյ
պաշտաման կարգաց , զիտեն
քաջ զի որպէս առ Յօնս , և
առ արեւմտեայ ազինս՝ նոյնպէս
և առ մեզ մեծարոյ և պատուա-
կան համարեալ է միշտ վարդա-
պետութիւն սրբոցն բարեխօ-
սութեան : Ի՞այց զի ամբողջ
զկարգ բանիցն մերոց ածցուք ,
՚ի դէպ համարեցաք և յաղագս
այսորիկ ասել ինչ դոյզն բա-
նիւք :

՚Ի՞աջայայտ է ապաքէն ե-
թէ զիարդ երանելի առաքեալն
ինադէսոս քարոզութեամբ եհաս

յաշխարհն մեր, և զԱբգարիոս
 [թագաւոր քժշկեալ զնաց ապա
 և առ Ամնատրուկ քեռորդի նո-
 րա, և զփրկութեանն պատմեալ
 նմա Ճանապարհ զամենեսին յան-
 աստուած անգիտութենէ դար-
 ձոյց 'ի լոյս Ճմարիտ աստուա-
 ծածանօթութեան : Ի՞այց յետ
 մահուան Աբգարու քանզի Աա-
 նատրուկ ոչ էր 'ի սերտ սրտէ
 հաւատացեալ սրբոյ աւետարա-
 նին վարդապետութեան, հրա-
 ման ետ բանալ վերստին զմե-
 հեանս կոոց, և միւսանգամ
 պաշտօնատար նոցա լեալ՝ ան-
 հետ 'ի միջոյ զԱբիստոսի հա-
 ւատոցն բառնալ զուղղութիւն :
 Եւ քանզի գիտէր եթէ պատ-
 մող աւետարանին էր նա ինքն
 թագէոս, որ և զդուստրն նո-
 րա զԱմնզուխտ 'ի մնոտեացն
 պաշտամանէ ուծացոյց, հրաման
 ետ թագաւորն զերանելի առա-

քեալն և զսուրբ կուտաննն զԱն-
 դուխտ միանդամայն մահու չա-
 րաւ բառնալյաշխարհէ : Երցա
 'ի հաստատութեան հաւատոն
 անդրդուելի կացեալ զմահ քան
 զկեանս ընտրեցին . վասն որոյ
 յորժամ յաշխարհէ աստի յեր-
 կնաւորն փոխէր նախավկայու-
 հին Սանդուխտ , Սանատրուկ
 հայրն նորա մոլեալ զհէտ ունայ-
 նութեան՝ հրամայէր և զվար-
 դապետն նորա զիթագէոս սպա-
 նանել : Եւ մինչ ածէին զնա առ-
 թագաւորն , սուրբ առաքեալն
 աւետարանին խրախուսէր զհա-
 ւատացեալս . Ես ահա , ասէր ,
 փոխիմառ տէրն իմ Քրիստոս .
 և աղաչնից չնա զի առաքեսցէ
 զհրեշտակ զօրութեան իւրոյ , և
 պահեսցէ զձեզ 'ի չար լծոյ
 ծառայութեան հեթանոսական
 մոլորութեանն՝ ուստի էառն
 զձեզ , : Եսկ հաւատացեալքն

յարտասուս լինեին և զոտս նորա
 համբուրեալ աղաղակեին . “ Տէր
 և իւղուցէ հռդորյ թըռյ , աղօնեա
 վասն նէր , և խնդրեա ’ի Վրիտ-
 ոսուէ զի ոչ թողցէ զմեզ ’ի ձե-
 ռանե , ” : Դպա առ Աանատրուկ
 ածեալ , իբրեւ յանդիմանեաց
 զմոլորութիւն նորա , ’ի սրտմո-
 տութիւն բարկութեան բրդե-
 ցաւ թագաւորն , և հրամայեաց
 ածել զնա ’ի դղեակ պարսպին
 ուր մարդակեր դագանքն եին :
 Իսկ և անդէն ամենայաղթ նշա-
 նաւ խաչին և աղօթիւք սրբոյն՝
 շղթայք յոտից և ’ի ձեռաց նորա
 թօթափէին . և առիւծունք ե-
 կեալ առ նա և զհողաթափս ո-
 տիցն լիզուին և ոռնային քծնե-
 լով . և աստուածային հողմով՝
 հրախառն հնոցին խորտակեալ
 կորնչէր զօրութիւն . ապա աղօ-
 թիւք և զմեռեալն յարուցանէր
 զ Օ Եմենտոս : Եւ յորժամզվկայ

ականն ընկալաւ նա զմահ , շար-
ժումն մեծ լինէր , և վէմք պա-
տառեալք ամփոփէին զնշխարս
մարմնոյ սրբոյ առաքելոյն , զի մի
լիցի ՚ի պղծութիւն անհաւա-
տից :

Եւ եկաց մնաց այնպէս ծած-
կեալ յԱրտազ գաւառի , ուր և
պարթեւն ընակեցաւ Յնակ ,
յորժամ ՚ի հրապուրելոյ Յմ-
տաշրի գայր հասանէր ՚ի հայ-
աստան աշխարհ , սպանանել
զիսորով . “ Եւ անդ , ասեն ,
զյղութիւն մօր՝ սրբոյ և մեծի
Ուստառողին . վասն որոյ և զնո-
րին առաքելոյ չնորհն ընկալեալ ,
որ առ հանգստարանաւ նորին
զինելութիւնն էառ , զնորին ե-
լից զհոգեոր մշակութեանն պա-
կասութիւն * ” : « Քանզի և ե-

* Խորենացի ՚ի Պատմութեան գիրսն ,
Գելք Բ :

զեւ նա ։ Ժառանգորդ Հայրենի
սեպհական հօտին , պարզեա-
կան զաւակ նշխարաց Խաղեռ-
սի սուրբ առաքելոյն , շառաւիղ
նորհաց՝ աղօթիք Հայցեալ* ։
Եպա յաւուրս Խարզմանչաց
յայսնեին նշխարք ոսկերացն նո-
րա 'ի ձեռն Աիրակոսի ուրումն
Ճնազգեաց կրօնաւորի , որպէս
'ի Յայսմաւուրմն մեր և 'ի Ճառ-
նտիրս նշանակեալ պատմի ։
Դացեն խնդրողք և 'ի լիա-
կատար պատմութեան վարուց
սրբոց :

Դարձեալ և յետ մահու-
սըբոյն Բարթուղիմեայ , որ և
նա Հայր Հոգեոր եղեւ Հայ-
աստան աշխարհի , զԵստուծոյ
զբանսն պատմելով , արհաւիրք
անհնարինք 'ի վերայ պահա-

* Ցերպս շարականաց սրբոյ Լուսա-
ուրջին :

պանայ և դահճացն հասա-
 նեին որք զսուրք առաքեալն
 մորթազերծ սպանին, զի պարապ
 գտցեն քրիստոնեայք ամփոփել
 զնշխարս նորա : Եւ լիներ որո-
 տումն սաստիկ, և յայնամ պահու-
 բազում ախտաժէտք առ բժիշկն
 Ճարտար անկեալ դիմէին, և
 “ լուան խուլքն և բժշկեցան,
 որպէս Ճառընտիրքն ասեն, տե-
 սին կոյրք զիայլատակունան և
 լուսաւորեցան, համերքն խօսե-
 ցան և ամենեքեան յիւրա-
 քանչիւր ախտից բժշկեցան, և
 հաւատացին նոքա ’ի տեր ։ ։ ։
 սուս, ’ի ձեռն սրբոյ առա-
 քելոյն Շարթուղիմեայ, որ ’ի
 կենդանութեան իւրում և ’ի
 մահուան եղեւ պատճառք լուսա-
 ւորութեան հոգւոց բազմաց :
 Օ սորա եւս զպատուական նըշ-
 խարմն յետ ժամանակաց եզիտ
 սքանչելեօք վկայասէր հայրա-

սկետն Արքութա , որ զԱրտի-
բոսաց քաղաքն շինեաց գԱվը-
կերտ , և զբազմութիւն նշխա-
րաց սրբոցն ամփոփեաց անդա-
նօր :

Աշխարացն սրբոց մեծարող
երեւեցաւ և սուրբ Հայրն մեր
Գրիգորիոս և բանիոք և զոր-
ծով . քանզի ասաց 'ի Յաճախա-
պատում գիրսն . “ Ամենայն ժո-
ղովուրդք որ ժողովին 'ի յիշա-
տակս սրբոցն , 'ի միտ առցեն հա-
ւատով և սուրբ սիրով զհանդէս
նահատակութեան նոցա . և նո-
ցա բարեխօսութեամբ աղաչել
զԱստուած ջերմեռանդ արտա-
սուօք հսկելով զտիւ և զգիշեր
'ի պաղատանս սուրբ սրտիւ՝ զի
զերծուսցէ յաշխարհէ աստի չա-
րէ առաքինասէր վարուք՝ որպէս
զսուրբսն զայնոսիկ , որոց յիշա-
տակքն կատարին 'ի փառս Աս-
տուծոյ . . . Օ ի այս իսկ են

սրբոցն կամք, զի և ժողովուրդք
 նոցա բարեխօսութեամբն՝ յլու-
 տուծոյ պաշտօնն յորդորեսցին .
 և այնպէս առնուն զաշխատու-
 թեան փոխարէնս յամենասուրք
 երրորդութենէն : Օ ի և Պաւ-
 լոս և Բառնաբաս արարեալ
 նշանս յանուն տեառն Յիսուսի
 Քրիստոսի, զառ ’ի մօրէ զկաղն
 բժշկելով և զարմացուցեալ զա-
 մենեսին . . . Եւ ամենայն սուրբք
 իւրեանց առաջնորդութեամբ
 Ճմարտեալ խոնարհութեամբ
 առ տէրն ’ի բարձունս ընթա-
 ցուցանեն զամենայն հաւատա-
 ցեալս յլուտուած . զի արժանի
 լիցին յամենեցունց տեառնէն
 փրկութեան և քաւութեան
 սիսալանացն բարեխօսութեամբ
 սրբոցն . և այլ մի եւս դառնալ ’ի
 դմնդակ վարս սատանայի . այլ
 լսել զիւրաքանչիւրոցն նահատա-
 կութիւնս և զկատարեալ սուրբ

սէրն , որ առ Ապտուած էր յոյսն
 նոցա համբերութեանն . նա-
 խանձ ունել Քրիստոսիւ , որ
 հրով և ցրտով , ջրով և սառա-
 մանեօք , քերանովք և հարուա-
 ծովք , բանդիւք և կապանօք ,
 սովով և ծարաւով , սրով և մա-
 հու , սպառնալեօք և ողոքանօք ...
 Արդ զհետ երթիցուք կոչողին
 զհետ սրբոցն սուրբ սիրով . . .
 զի Ճշմարտեալ սիրովն որ առ
 Ապտուած՝ կարասցուք մասին
 սրբոցն աւետեացն արժանի լի-
 նել յետ զկեանս աշխարհիս
 լուծանելոյ : Օ ի այսպէս 'ի ժո-
 ղովս սրբոց հաղորդեսցուք , և
 տօնեսցուք 'ի փառս ամենակա-
 լին Ապտուծոյ , որ ետ նոցա
 զյաղթութիւն առ չար բռնա-
 ւորս , և փառաւորեցան յերկինս
 և յերկրի որ կան և մնան . . .
 Այսպէս է իմանալ զարբոցն բա-
 րեխօսութիւն առ հաւատա-

ցեալ ժողովուրդն . զի իւրեանց
մտերիս վաստակովքն , որք զմար-
մինս իւրեանց պատարագեցին
յերկրի վասն անուանն Աստու-
ծոյ 'ի հօտ անուշից , և սուրբ
հոգիս նոցա հոգեառը բարեխօսու-
թեամբն՝ զԱստուած յողորմութիւն-
աշխարհի ածեն . և նշխարհ ոսէերաց
նոցա Քրիստութեան շնորհչ ընծայեն 'ի
ծողովս հաւատացելոց : Օ ի այս-
պիսի շնորհք տուան յԱստու-
ծոյ . . . ընտրելոց սրբոց յերկրի
աստ և 'ի յերկինս . զի նոցա ա-
ռաջնորդական հանդիսիւքն և
առաքինասէր վարուք հաճոյաս-
ցուք Աստուծոյ . և նոքա պատ-
ճառք լինին մեզ փրկութեան և
կենաց միշտ բարեխօսութեամբ
իւրեանց , , * :

Աւոյց դարձեալ և դորձով .

* Ճառ ԺԶ , վասն մարտիրոսաց վար-
դապետութիւն ուսման :

զի յորժամ յետ հնդետասանա.
 մեայ վշտացն յօծակուլ վիրա.
 պին, Աստուծոյ հրամանահն ար.
 տաքս ելանէր սրբել զմարդիկ
 'ի մեղացն չարութենէ, այն ինչ
 դվշտագինն տեսանէր ժողովուրդ
 զի գային դիմէին խուռներամ
 զբժշկութիւն խնդրելով, զո՞ո՞
 փոխմեանցն անդէն և անդ զնոսա
 հարցանէր, որք վասն տեառն
 վկայական մահուամբ յաշխար.
 հէ ելին . “Ուր եղիք, ասէ,
 զմարմինս վկայիցն Աստուծոյ՝
 որք վասն տեառն մեռան ՚ի
 ձէնջ , : Եւ իբրեւ ցուցանէին
 նմա զվայրն, դիմեալընթանայր
 ժողովել և ամփոփել զմարմինս
 նոցա, և զԱստուծոյ զմեծ զօ.
 րութիւնն ժողովրդեան ցուցա.
 նէր եթէ զիարդ գիտէ պահել
 զիւրսն, և ոչ թողուլ զի և յետ
 մահուան՝ ապականութիւն մեր.
 ձեսցի առ նոսա : Եւ զժագաւո-

ըին և զիշխանաց զհեկեկալիր
 արտասուելն տեսեալ առաջի
 պատուական նշխարաց վկայիցն
 Աստուծոյ, մխիթարէր զնոսա, և
 զմիտսն լքեալ քաջալերեալ սըր-
 տապնդէր. “Դարձարուք, ասէ,
 և ծաներուք զտէր, զի ողորմեսցի
 և կեցուսցէ զճեղ. և զսպանեալ
 իւնդանիսն բարեխօս արարէն. զի
 կենդանիք են և չեն մեռեալք.
 և ծաներուք զԱստուած, զի նա
 ինքն է տէր ամենայնի . . . : Տես
 եթէ զիարդ զՃառս բարեխօսու-
 թեան սրբոց յայտ յանդիմանու-
 թեամբ եցոյց . ոչ ինչ յԱստու-
 ծոյ փառացն յափշտակեաց, զի
 զնա տէր կոչեաց ամենայնի, և
 ոչ ումալէտ ինչ զսրբոց կուսա-
 նացն համարեցաւ զբարեխօսու-
 թիւն : Ուագաւորն և նախա-
 րարք ’ի գետին ընդ մոխիր թա-
 ւալեալք, որպէս Ագաթանդեղ
 ասէ ականատես վիսպագիրն ,

ձեռն զօծիւք արկեալ զպատմու-
 խնան պատառէին . և արտա-
 սուօք զՄարիզորիս աղաջէին զի
 աղօթս արարեալ և ջնջեսցէ
 զմեղացն չարութիւն զոր անգի-
 տութեամբ մեղան . “ Ա ասն
 մահուան երանելեացն այնոցիկ ,
 ասէր Ո ուսաւորին սուրբ , որոց
 արիւն նոցա հեղեալ ’ի յերկրի
 ձերում՝ որք արժանի եղեն , աս-
 տուածութեան շնորհաց պատա-
 րագեցան : Ա ասն որոյ և ձեզ
 այց և խնդիր արարեալ հայաս-
 տան աշխարհիս՝ վասն նոցա ար-
 դար արեանն հեղլոյ . և ձեզ
 քաւութիւն շնորհի աւաղիկ
 ձերով ապաշխարութեամբ յա-
 մենապարգեւէն Աստուծոյ . . .
 Օ ի թէպէտ սպանէք դուք
 զնոսա , սակայն կենդանի են նո-
 քա Աստուծոյ , և յաւիտեան
 կենդանի են լինելոց : Արդ նո-
 ցին բարեխօսութեամբ հաճե-

յարուք ընդ Աստուծոյ ըստ խրա-
 տուն Պաւղոսի որ ասէն թէ մեւք
 հաճեցարուք ընդ Աստուծոյ 'ի
 ձեռն մահու որդւոյ նորա . զի
 որդին Աստուծոյ մեռաւ և ե-
 կեաց : Այնպէս և վկայք նորա
 սիրելիքն կենդանի են և ձեզ
 բարեխօս . . . Ահա թագաւո-
 րեալք որք պարծեցան 'ի խաչե-
 լեալ փրկիչն . որք և վկայք են
 նորա աստուածութեանն : Որք
 մեռան ընդ Քրիստոսի , ընդ
 նմին և թագաւորեն . զի մատ-
 նեցան 'ի մահ վասն անուանն
 Աստուծոյ , զի և կեանքն Քի-
 սուսի յայտնի լիցին ահաւասիկ
 'ի մահկանացու մարմինս սիրե-
 լեացն Քրիստոսի : Որք և յայտ-
 նի մեռեալք և 'ի ծածուկ կեն-
 դանիք . որք քարոզենն յայտնի
 զկենդանութիւն իւրեանց , և
 տան զկենդանութիւնը մակել ձեզ
 որ մեռեալ էք 'ի մեղս ձեր . .

Եւ վկայքս այս լինիցին ձեզ ու
զորմութեամբ նորա բերդ ամուր,
և աշտարակ հզօր ամրութեամբ,
վերակացուք բարեխօսութեամբ,
հեղմամբ արեամբն քաջացեալք,
նահատակութեամբն իւրեանց
զձեզ առ Աստուած մատուցանի-
ցեն . որ պահեալք զձեզ , զիւ-
րեանց նահատակութեան մար-
տին ցուցին ձեզ յաղթող զօրու-
թիւնն „ :

Ապա տեսիլ ետես երանելի
խոստովանողն Գրիգորիոս շինել
զվկայարանս սրբոց կուսանացն .
և յորդորամիտս աստուածախօս
քարողութեամբն զթագաւորն
և զժողովուրդն առնէր շինել
զտաճարսն , և “ փոխել , ասէ ,
զվկայսն ’ի հանգիստ , զի և սո-
քա զձեզ փոխեսցեն ’ի նորոգու-
թիւն „ : Օ տրմաննալի տեսիլն
էր արդարեւ , յորում նա ինքն
Գրիգորիոս զլար ’ի ձեռն ա-

ուեալ զվկայարանացն երանե
 լեաց զհիմունսն ձգէր , և Տըր-
 դատէս 'ի լերանց բարձանց զքա-
 րինս մեծամեծս բարձեալ բերէր,
 յորում տիկնանց տիկինն Աշխէն
 և զարմանուհին Խոսրովիդուխտ
 արտասուօք խնդրէին իշխել հա-
 ւասարել գործոյն . և զտապա-
 նացն առեալ չափ՝ փոսեին փորէին
 զտեղին 'ի հանգիստ սրբոցն . և
 ըստ բրել բրոդին 'ի հանգերձա-
 խւրեանց ընկալեալ զհողն և ար-
 տաքս պեղէին : Աւ ահա նոյն
 տաճարք կան մնան մինչեւ ցայսօր
 ժամանակի 'ի միածնակչ վայրան .
 և հաւատացելոցն բազմութիւնք՝
 խուռներամ անդր դիմեալ եր-
 թան զսրբոց վկայիցն տեսանել
 զհանգիստ զՎայիանեանցն և
 զՀովիսիմեանց , զի նոյա ար-
 ժանահայց մաղթանօքն զփըր-
 կութիւն ժառանգեսցեն : Յայտ-
 նի է սպաքէն եթէ զիարդ

զսրբոց կուսանացն զմարմինս
ամիտոփեալ յարկեղ երանելոյ
առնն Գրիգորի , և երդեաց 'ի
պատիւ նոցա զմաղթողականն
զայն բան , եթէ ։ Աստուած
մեծ , հզօր և փառաւորեալ .
լուսաւորիչ սրբոց և 'ի սուրբու
հանգուցեալ , զՃզնութիւն սրբ-
բոց Հռոմիսխմեանցն բարեխոս
ունիմք առ քեզ , աղաչեմք . . . և
որ յետ այնորիկ կարդին բանք ,
զորս և ցայսօր Հայաստանեայց
եկեղեցի 'ի կիր արկեալ եղա-
նակէ :

Դարձեալ և զսրբոյ կարապե-
տին և զՄթանազինեայ սահ-
մանեաց երանելիս զտօն յիշա-
տակի , զորոյ զզիարդն նշանակել
արժան է համառօտիւ :

Քանզի յորժամ'ի հրամանէն
Աստուծոյ կալսու յանձին Գրի-
գորիոս զեսլիսկոպոսութեան առ-
նուլ զաստիճան , Տըդատէս թա-

գաւոր և ամենայն նախարարք
 առաքեցին զնա առ կեսարացւոց
 հայրապետն ՚ի եւոնդիոս, զի նա
 գիցէ ձեռն ՚ի վերայ սրբոյ լու-
 սաւորչին : Եւ իբրեւ եհաս
 Գրիգորիոս ՚ի կեսարիա, մեծա-
 պատիւ մեծարեաց զնա ՚ի եւոն-
 դիոս՝ իբրեւ զիսոստովանող լու-
 տուծոյ : Այց յորժամ զհայ-
 րապետութեանն ընկալեալ զաս-
 տիձան, և կամէր դարձ առնել
 Գրիգորիոս ՚ի Հայաստան աշ-
 խարհ, աղերս արկեալ ինդրեաց
 վասն իւր և ազգին ՚ի ՚ի եւոն-
 դեայ հայրապետէն զմասն ինչ ՚ի
 նշխարաց սրբոյ կարապետին զոր
 առ իւր ունէր, և զերանելոյ
 եալիսկոպոսին լուանագինեայ :
 Հաճոյ թուեցան բանքն սուածի
 սրբոյ հայրապետին, և տայր
 նմա զոր ինդրէր . քանդի և ՚ի
 տեսլեան գիշերի հրեշտակ լու-
 տուծոյ ստիպէր զնա մի իւիր

ընդդեմ դառնալ բանից խըն-
դրուածոց | ուսաւորչին :

Եւ խնդացեալ Դրիգորի խըն-
դրութիւն մեծ , ետ նմա և ինքն
պարզեւս մեծամեծս , և ընդ իւր
զնախարարսն առեալ՝ դարձ 'ի
հայրենի աշխարհն առներ .
Դայր հասանէր մինչեւ յինն
ակնեան տեղիս ուր բազինքն
էին 'Դեմետրի և Դիսանեայ .
և դեռ եւս համարձակութիւն
էր զիւացն , զի մշակին Աստու-
ծոյ և խաղաղութեանն աւետա-
րանչի չեւ էին անդանօր հա-
սեալ . ոտք : Դրբեւ զգարշու-
թեանն զայն վայր տեսանէր
Դրիգորիոս՝ հրաման տայր իւ-
րոցն վաղվաղակի հարկանել
տապալել զտուն կորցն , և փո-
խանակ զիւացն բնակութեան
տուն և տաճար Աստուծոյ շի-
նել զվայրն : — Բայց իրեւ
պաշտօնեայքն ամբարշտութեան

զգասաք խորհրդոց մտացն Գրի
գորի լինելին , յահի յերկիւղի
լեալք պատրաստէլին տալ պա-
տերազմ ընդ նմա , 'ի թիկունս
իւրեանց կոչելով և զքուրմն Ա.ա.
հեվահեան մեհենիցն և Ասկիա-
հատ Ասկիամօր և Աստղկան դից:
Անձ էր պատերազմն անդէն 'ի
տեղւոջն , և բազումք յանօրի-
նաց անտի մահու չարաւ զրա-
ւեալք անկանէլին մեռեալք :

Իբրեւ զայն լուաւ Գրիգո-
րիս , յոյժ 'ի խոր խոցեցաւ ,
զի նոցա հոգիքն զյաւիտենից
հրոյն ընկալան զալատուհաս-
էառ . 'ի ձեռս զսրբոյ Կարապե-
տին զնշխարս , և տեառնա-
գրեալ զկողմամբք դաւառին ,
բարեխօսութեամբ նորա զփըր-
կութիւն աշխարհին յԱստուծոյ
մաղթեաց . " Եղիցի , ասէ ,
աջ տեառն 'ի վերայ երկրիս
աւսորիկ սլահել 'ի թշնամեաց .

և [թէ վասն մեղաց տանջեցան 'ի
 տեառնէ , սակայն թշնամիք սո-
 րա մի յերկարեսցեն , այլ չարեօք
 տատակեսցին :] Եւ մի հերձուա-
 ծողք բնակեսցեն յայսմ աշ-
 խարհիս . աջ սրբոյ Կարապետին
 եղիցի կնիք և պահապան , և
 միանսգամայն եղիցի տանս այս
 շինուած յաւիտենական յազգաց
 յազգս . . . :] Եւ արդարե 'ի գլուխ
 ելանէին այս օրհնութիւնք հայ-
 րական սրտի Գրիգորի մեծի մե-
 րոյ հօր , եթէ նովին հոգւով
 բարեպաշտէին յաստուածակոյս
 կողմն հայաստան ժողովուրդք ,
 և ոչ 'ի հեստել աստուածազդե-
 ցիկ դիտացն բարբառոյ զվճիռ զա-
 ւակին Յակոբայ ձգէին յանձինս :

Օ այն տեսեալդիւացն չարու-
 թեան ահաբեկ լեալ երկիւղիւ
 սասանէին . աղաղակէին 'ի ձայն
 մեծ եթէ վայ մեղ զի ոսկերք
 մեռելոց մերժեն հալածեն զմեղ

'ի տեղւո՞ջէ աստի յայսմանէ և
 իբրեւ զալիծակս անհուն բազ-
 մութեամք, որպէս հայր վանիցն
 Պալակայ ականատեսն Օ ենոք
 վկայէ, կամ որպէս թանձրամած
 տաղտարափս փախստեայ տարա-
 գէմերթային: Հայնժամ Պարի-
 գորիոս հրաման ետ շինել զտա-
 ձարն, որ և եղեւ առաջին վկայ-
 արան կառուցեալ 'ի սրբոյ | ու-
 սաւորչէն . " Եւ զյիշատակս
 վկայիցն բերելոց ժամադրեաց
 տօն մեծ հռչակել յառաջա-
 գոյն կարծեալ մնոտեայն պաշ-
 տաման՝ 'ի ժամանակի դիցն ա-
 մանորայ ամենաբեր նորոց պըտ-
 ղոց տօնից հիւրընկալ դիցն վա-
 նատրի, զոր յառաջագոյն իսկ 'ի
 նմին տեղւո՞ջ պաշտէին յուրա-
 խութեան նաւասարդ աւուր:
 Օ ի ժողովեալ 'ի յիշատակ մեծի
 երանելոյն Հովհաննու, և սուրբ
 վկային Աստուծոյ Աթանազինի,

յայնմ աւուր խմբեսցեն 'ի նմին
 յաւանի * „ : Հաւանութեան
 թուի եթէ 'ի սոյն աղագս սահ-
 մանեցաւ և Աշխարհամատրանն
 կոչեցեալ հանդէս տօնի , յո-
 րում ամ ըստ ամէ գային ժո-
 ղովին յամենայն սահմանաց
 Հայաստանեայց թագաւորն և
 Եշխանք՝ մեծահանդէս հռչա-
 կել զյիշատակ սրբոյ Լարապե-
 տին : Ապա երանելին Գրիգո-
 րիոս զրեաց թուղթ և առ ՚ ի ե-
 ւոնդիոս հայրապետ , յորում
 շնորհս զինամոց նորա կալեալ
 յաւելու 'ի բանսն և ասէ ե-
 թէ „ Արկին զոհութիւն ձեւք
 Աստուծոյ մատուցանեմք , զի
 զգանձն կենաց շնորհեցէք եր-
 կրիս Հայոց , զմիջնորդն Աս-
 տուծոյ և մարդկան՝ զնշխար
 սրբոյն Յովհաննու մկրտչին . ո-

* Ագաթանգեղոս :

ըով և ցնծայ յոյժ երկիրս հայոց
 սորա դալստեամբս , որպէս և
 անդ Քրիստոսի դալստեամբն
 'ի Յորդանան . . . զի որպէս
 Քրիստոսի իջմամբն 'ի ջուրն
 մահ կորեաւ , նոյնալէս և աստ
 'ի սուրբ դալստեանն՝ դժոխոց
 դրունքն Խորտակեցան * : Ե-
 կաց յաղօթս և առաջի պա-
 տուական նշխարաց սրբոյն և ա-
 զաղակեաց . “ Առաւել քան
 զորս յայսմ աշխարհի արարեր
 զկամս ողորմութեան քո 'ի ձեւն
 սուրբ Կարապետին , որ բաժա-
 նեաց իւր մարմնովն զամենայն
 աշխարհս : Ո՞անաւանդ զի ա-
 ռաւելապէս գթութիւնդ քո հա-
 ճեցաւ ընակիլ 'ի տաճարս յայս-
 միկ , որ առաջին հիմնարկու-
 թիւնն շնորհեցաւ ինձ յակնար-
 կութենել քումմէ՝ առնել 'ի տե-

դւոջս յայսմիկ, յոր հիմն հաւա-
տոյս մերոյ խարսխեալ մնասցէ
անդրդուելի մինչեւ 'ի վերջին
օրն՝ յորժամ գաս և նորոգես
զնա անապական դու տէր * „ :

Դարձեալ յորժամ զնաց 'ի
Հռովմ սուրբ | ուսաւորին մեր
ընդ Տրդատայ թագաւորի՝ յող-
ջոյն և 'ի մեծարանս Աեղքես-
տրոսի և Կոստանդիանոսի, և
ինքեցին զդաշն երդման և խա-
ղաղութեան, սուրբ հայրապետն
Հռովմայ ետ նմա 'ի պարզեւի
մասին զնշխարս ինչ ոսկերաց մե-
ծի առաքելապետին և զհարա-
զատին նորա Անդրէի զահեակ
թեւն . և աստուածարեալ | ու-
սաւորին մեր՝ շինեաց վկայարան
'ի սահմանս Տարօնոյ, կարգեաց
պաշտօնեայս եկեղեցւոյն, և Ա-
ղիաղարու վանս զվայրն զայն կո-

* Զենոբ Գլակայ :

շեաց յանուն նախկինս առաջնորդին : Այլ յետ ժամանակաց յանուն սրբոց առաքելոց վայրն այն կոչեցաւ, որպէս մինչեւ յառուրս մեր :

Դրեալ իսկ է 'ի յայսմառուրս եթէ Աթենադորաս ոմն մանուկ որդի Առքենայ նախարարի և Աալահունեաց իշխանի յերիզա, տեսեալ զչարչարանս սրբոյ Լուսաւորչին և զանդութիւն հաստատութեան նորա 'ի հաւատս Քրիստոսի, հաւատաց 'ի Քրիստոս և ընկալաւ զմկրտութիւն 'ի ձեռն Դասիոսի ուրումն պաշտօնէի Աստուծոյ : Եւ լի եղեւ սրտմտութեամբ հայր մանկանն, յորդորէր, ողոքէր և ստիպէր զնա մի արհամարհեալ ընկենուլ զկուռսն հայրենականս : Եւ իբրեւ ոչ իւկիք գամագիւտ լինէր փոխել զնա 'ի խորհրդոց մտացն, սպան զնա սրով և արկ

՚ի ձորակն կոչեցեալ ԱԵղեմնուտ :
 Խսկ քահանայն ՚Ճասիոս ՚ի ծա-
 ծուկ թաղեաց զերանելի նահա-
 տակն : Այւ իբրեւ սուրբն ՚Վրի-
 գոր ելեալ ՚ի վիրապէն բժշկեաց
 զամենեսին և քարոզեաց զուղ-
 զութիւն հաւատոց , տեսին լոյս
 ՚ի վերայ զերեզմանի սրբոյ նա-
 հատակին . և երանելի Ուսաւո-
 րիչն շինեաց վկայարան վայելուչ ,
 և հրամայեաց պատուելզնա :

Յետ սրբոյ հօրն մերոյ Ու-
 սաւորչի , նոյն հաւատք անարատ
 վարդապետութեան կացին մնա-
 ցին ՚ի Հայաստանեայց եկեղե-
 ցւոջ . քանզի անդէն զկնի մա-
 հու նորա իբրեւ վկայական մա-
 հուամք յաշխարհէ ելաներ ե-
 րանելի մանուկն ՚Վրիգորիս ,
 սարկաւագունք նորա զմարմինն
 պատուական ՚ի փոքրն Աիւնիս
 ածեալ բերէին , և դնէին պա-
 տուով յեկեղեցւոջ յաւանն Ա-

մարաս . և յետ ժամանակաց
 յաւուրս բարեպաշտ արքային
 Շղուանից Ա աչագանայ՝ յայտ-
 նեին նշխարք մարմնոյ նորա , և
 բաղում ախտաժէտք զբժշկու-
 թիւն ընդունեին : Երանպէս և
 զիշրտակեայ և զլլ ըթանայ և
 զհուսկան և զհանիելի մեծա-
 րանօք ամփոփեցին զմարմինս ,
 որպէս տեղեկացն յայտնի է մե-
 րոյ տոհմիս պատմութեան : Ա
 ւելորդ համարիմ ասել առ տե-
 ղեաւս և յաղագս սրբոյ և մեծի
 առն Երսիսի, եթէ զիարդ իբրեւ
 զնոր ոմն Ո ովսէս տարածեալ
 զթեւս առ Շատուած ունելով ,
 յաղթահարեալ նկուն առներ
 զհաւատոցն և զհայրենի աշ-
 խարհին ոխերիմ թշնամիս , և
 որ յօտարութեանն ՚ի թառլիս
 հրաման տայր ձկանց ծովու ,
 և աղբերս բարեհամս յանջրդի
 վայրացն զնացուցաներ : Իսկ և

Երանելին Աահակ և Անեսրավպ
 և երանաշնորհ աշակերտքն նո-
 ցա՝ զկարգս ուղղութեան հայաս-
 տան եկեղեցւոյ սահմանեալ, 'ի
 սրբոյն տաճարի զտէր աղաչէին՝
 'ի նոյն քաջապէս զմեզ կրթելով,
 եթէ ։ Առաքեա 'ի մեզ զբա-
 զում գթութեան քո զողորմու-
 թիւն՝ բարեխօսութեամբ սրբոյ
 նախավկային քո և ողորմեա ։ .
 և զի ։ Առւրբ երրորդութիւն
 անմահ, աղօթիւք սրբոց քոց
 կարդամք առ քեզ, լուր ձայնից
 մերոց ։ . և եթէ ։ Օ արժա-
 նահաս մահտարաժամ՝ ի ցաս-
 մանէ քում հրամանի՝ բարձ 'ի
 մէնջ, բարեխօսութեամբ և ա-
 ղօթիւք սրբոյն Յակովբայ ։ .
 Օ Ճկնութիւնս սորա առ քեզ
 ունիմք բարեխօս, և աղաչեմք՝
 սովաւ հրաշագործեա յերկըի
 զբժշկութիւն հիւանդաց ։ .
 Դարձեալ ։ Աաղթանօք, մե-

զուցեալքս , հայցեմք 'ի քէն ա-
 մենասուրբ երրորդութիւն , զի
 ներեսցես մեղաց մերոց աղաչա-
 նօք 'Ակողայոսի : — Փափաքա-
 նօք մերձենամք առ սուրբս քո ,
 հաշտեաց ընդ մեզ սոցին բարե-
 խօսութեամք : — Օ աղաչանս
 մեր մի անտես առներ բարեխօ-
 սութեամք սրբոց քոց , և ողոր-
 մեա : — Յարեխօսութեամք
 սրբոց մարտիրոսացն մի կորուսա-
 ներ զմեզ երրորդութիւն սուրբք :
 — Օ Ճգնութիւն սրբոց մարտի-
 րոսացն բարեխօս ունիմք առ բա-
 րերար որդիդ Կ ստուծոյ , զի չնոր-
 հեսցես աշխարհի զանշարժ զիսա-
 զաղութիւն , և պահեսցես հաս-
 տատուն սուրբ զեկեղեցի . . . զի
 խաղաղասցին խոռվութիւնք դա-
 դարեսցին յարձակմունք թշնա-
 մեաց , տնկեսցի սէր և արդա-
 րութիւն 'ի յերկըի . . . աղաչա-
 նօք սրբոց մարտիրոսացն նայեա

յերկրապագութիւն ժողովելոց
 և շնորհեա մեղաց թողութիւն,
 պարզեւեա երկրի մերում զքաղ-
 ցրախառն օդ և զուարձալի
 զբոյս, առ ՚ի լցումն լինել ամե-
 նայն հարկաւոր պիտոյից մե-
 րոց . . . ՚ Կարծեալ և զսուրբսն
 աղաչելով. ՚ Պարծանք եկեղե-
 ցւոյ և ուրախութիւն հրեշտա-
 կաց ով սուրբ հայր ՚ նտոն, զա-
 ղաչանս մեր հանապաղ մատո
 սուրբ երրորդութեանն : — Ո՛վ
 երջանիկ ճառագայթ, . . . սուրբ
 Ատեփանոս, հաստատութիւն ՚ի
 Վրիստոսէ հայցեա սուրբ եկե-
 ղեցւոյ : — Ռոպեալք Ռստու-
 ծոյ, սիւնք հաւատոյ . . . բարե-
 խօսեցէք շնորհել զիսաղաղու-
 թիւն ամենայն աշխարհի : —
 Խիւծելոցս մեղօք տառապեալ
 որդեացս աստուածագութ ծնող
 հայր ՚ Վրիգորիոս, հայցմամք ա-
 զօթիւք առ հայրն երկնաւոր,

ինդրեա կատարել զբնթացս
 մեր ուղղափառութեամք : —
 Արդ եկայք հաւատացեալք ,
 կատարեսցուք զյիշատակ սրբոց
 վկայիցն , զի 'ի ձեռն սոցա
 բացցի մեզ դուռն ողորմու-
 թեան , ունելով միշտ բարեխօս
 առ տէր վասն անձանց մերոց :
 — Առւրբ զԱստուածածինն և
 զամենայն սուրբս բարեխօս ա-
 րասցուք առ հայր 'ի յերկինս ,
 զի կամեցեալ ողորմեսցի և գթա-
 ցեալ կեցուսցէ զարարածս իւր :
 Ինկալ տէր զաղացանս մեր , բա-
 րեխօսութեամք սուրբ Աստուա-
 ծածնին անարատ ծնողի միածնի
 որդւոյ քոյ , և աղացանօք ամե-
 նայն սրբոց :

Անթիւ են օրինակք ըն-
 ծայութեան 'ի զիրս մեր յա-
 ղաղս բանի ինդրոյս . այլ մեք
 զսակաւս 'ի բազմացն նշանա-
 կեալ կնքեմք զբանս : Օ այս

միայն յաւելցուք ասել աստանօր ,
 զի որպէս առ Յոյնս՝ նոյնպէս
 և առ մեզ տօնք յիշատակի սըր-
 բոց կարգեցան , յաւուրց սրբոյ
 ուսաւորչին մինչեւ 'ի սուրբն
 Աշհակ և Անսրովալ , և անտի
 'ի Ակայասէրն Գրիգորիոս , և
 ապա 'ի Արքիսէանս՝ 'ի կլայե-
 ցին և 'ի լամբրոնացի . որք բազ-
 մապատիկ կանոնս կարգաց մու-
 ծին յեկեղեցի , և կան մնան
 մինչեւ ցայսօր :

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս պաշտաման նշխարացն
 սրբոց :

Օսրբոցն բարեխօսութեան
 ձառս՝ 'ի լրումն ածեալ , արժան
 է մեզ յերկարել՝ 'ի բանս և
 յաղագս պաշտաման նշխարացն

նոցա և ոսկերաց , դորս դարձեալ արհամարհեն նորաղանդք ,
զգըոցն սրբոց կամակորեալ եղծանելով զիմաստս , իթրեւ զի ծածկեաց Աստուած զգերեզման
Ովխեսի , զի մի ոսկերք նորա ՚ի սնոտիասէր ժողովրդենէն զեր կըրպագութիւն ընկալցին . և զի ինքն Քրիստոս վայիւք արհամարհեաց զՃրէայսն , փոխանակ զի զշիրիսն մարգարէից պատուեալ մեծարէին , անունկըն դիր լեալ խրատուց պատուիրանացն նոցա : Օ այսոսիկ նոքա :
Ա ասն որոյ և մեզ արժան է բանիւք գրոց սրբոց և վարդապետաց յաղթահարեալ ամաչեցուցանել զնոսա :

Ա ըդ նշխարս սրբոց կոչեմք զմասն մարմնոյ նոցա կամ զոսկերացն և զհանդերձից , և զայլամենայն՝ յոր հուպ եղեւ մարմին նոցա , և կամ առին զայն ՚ի

կիր . և հաւատամք աներկբայ
 եթէ արժան է պատուել զնոսա
 օրինաւոր յարգութեամք : Պա-
 տուել արժան համարիմք եր-
 կըրագագութեամք և զիսաչն տէ-
 րունական՝ յորում որդին ծոցա-
 ծին բեւեռեցաւ առ 'ի բառնալ
 զմեղս մեր , և խտիր դնեմք ընդ
 ոսկերս սրբոցն և ընդ փայտ
 խաչին , փոխանակ զի մին անմի-
 ջաբար միջնորդ եղեւ փրկու-
 թեան մերոյ , իսկ սրբոցն ոս-
 կերք երկրորդաբար : Եւ զայ-
 սոսիկ ոչ վարկագաղի ինչ խոր-
 հըրդովք . այլ զի հաստատու-
 թեամք եղեալ են 'ի մտի ուղ-
 ղափառք եթէ առանձինն մե-
 ծարանաց արժանաւորք են այն
 ամենայն զոր 'ի կիր արկին արքն
 վառեալք սիրովն Աստուծոյ , և
 'ի փառս անուան նորա ծանունց
 տարան վշտաց : Եւ ոչ առ ուղ-
 ղափառս միայն , այլ և ընդ ամե-

նայն աշխարհ օրէնք են այսոքիկ
 անհրաժեշտք . զի և յաղագս
 անդղիացւոց պատմեն նորաղան-
 դից եթէ յեկեղեցւոջ | ութ-
 թերուորթի մեծարանօք պա-
 հեն մինչև ցայսօր ժամանակի
 զաթոռն | իկլեփայ և զբեմք
 քարոզութեան նորա և զմասն մի
 'ի վերարկուէն : | յւ առ ինչ
 արդեւք . բայց զի նշխարք են
 նշանաւորի առն և վարդապետի
 հաւատոցն իւրեանց | իկլեփայ :
 | սկ զնշխարս մարմնոյ վկայիցն
 և սրբոց մեծարեն ուղղափառք ,
 ոչ միայն յաղագս այնորիկ եւեթ
 զի արս արժանաւորս ամենայն
 պատուոյ զնոսա համարին , այլ
 զի և հաւատան եւս եթէ հա-
 ճոյական ինչ գործեն նովաւ | ս-
 տուծոյ , և 'ի մեծարել անդ զոս-
 կերս նոցա՝ քաջալերեալ խրա-
 խուսին 'ի նոյն վարս սրբու-
 թեան թւակոխել :

Աստանօր զազաղակ ընդդեմ
 բառնան նորաղանդք եթէ վայ-
 րապար կրօնիւք լի է բանդ : Այլ
 ժուժկալել աղաչեմ առ վայր մի .
 ասացեն նոքա եթէ զի՞նչ վայրա-
 պար կրօնքդ և աւելորդապաշ-
 տութիւնդ այդ իցէ , որովք
 այդպէս յաճախագոյնս զուղղա-
 փառն թշնամանեն : Ապաքէն
 սնապաշտութիւն զայն համա-
 րիմք , ընդ որ բազմաց 'ի խա-
 ժամուժ ամբոխէն հաճեալ են
 միտք , իբրու եթէ գուցէ ինչ
 զօրութիւն կամ իշխանութիւն
 գերմարդկային 'ի վեր քան զլ'ս-
 տուծոյ զօրութիւնն : Ապա ու-
 րեմն ոչ ոք 'ի մարդկանէ իբրեւ
 զնապաշտս արհամարհիցի եթէ
 ուղղութեամբ սրտիւ զլ'ստուած
 աղաչէ , զյոյս իւր և զակնկալու-
 թիւն հաստատութեամբ եղեալ
 'ի նա : Եւ զի օրինակաւ զբա-
 նիցս ձշմարտութիւն ածեալ կա-

յուցից առաջի , սնապաշտ է նա՝
 որոյ յուռութուլունս և բժժանս
 'ի պարանոց իւր արկեալ , օդնու-
 թեան և պահպանութեան առ
 'ի նոցանէ ակն կալցի ընդդէմ
 խօթութեանց և ազգի ազգի
 վսասուց չարեաց , կարծելով ե-
 թէ զօրութիւն իմն է աստուա-
 ծեղէն 'ի բժժանսն : Ի՞այց դե-
 ղըս ապաքինից 'ի կիր առնուլ՝
 զօրս Աստուծոյ յառաջախնամ
 տեսչութիւնն յօգուտ մեր սահ-
 մանեալ կարգեաց , ոչ մնապաշտու-
 թիւն ինչ է : Աւ զի զառաւելն
 ասացից , ընդ ստգտանօք ունայ-
 նատուր մնապաշտութեան մարթ
 էր զՆըէից ազգ արկանել , եթէ
 դնէին 'ի մտի զի 'ի խածուածոց
 օձից հնար էր նոցա բժշկել՝
 հայելով միայն յօձն պղնձի . բայց
 զի ՈՌովսէս՝ Աստուծոյ հրամա-
 նաւն զփրկութեանն զայն բարձ-
 րացոյց զփայտ , այնուհետեւ բառ-

նայր ամենայն մնապաշտութիւն.
 և որ 'ի հարուածելոց անտիյօճն
 նայէր, ոչ 'ի պղինձն՝ այլ յԱս-
 տուած զակն իւր և զյոյս ե-
 գեալ, և 'ի նմանէ ըղձանայր
 զբժշկութիւնն ընդունել: Ե-
 թէ իսրայելեանք էին որ զեր-
 կուս քերոքիմն 'ի վերայ տա-
 պանակին հաշտութեան եգեալ,
 և առաջի նոցա անկեալ եր-
 կիր պագանէին, միջնորդս ընդ
 Աստուած և ընդ մարդիկ զայ-
 նոսիկ համարելով, անհնարին
 մնապաշտութեան իրքն էին,
 և մարթ էր նոցա անկանել 'ի
 կուապարիշտ պաշտամունս, որ-
 պէս առ Յերովաբամաւն եղեւ
 Իսրայելի արքայիւ որ կանգնեաց
 զերկուս երինջմն ուկիս 'ի Ռա-
 թել և 'ի Դան: Ռայց զի Աս-
 տուած հրամայեաց զարձանսն
 զայնոսիկ շինել, և աթոռս զը-
 թութեան իւրոյ և ողորմու-

Ծեան զնոսա կոչեաց , և ասաց
 անտի լսել զպաղատանս ծառայից
 իւրոց , և անդ զնուէրս ողջակի-
 զացն քահանայապետն առեալ
 ածէր , ապա այնուհետեւ ոչ
 կռապաշտութիւն իրքն էին և
 ոչ մնապաշտութիւն : Դարձեալ
 անօրէն մնապաշտութեան խոր-
 հուրդք են՝ քարինս պատուա-
 կանս՝ ի վերայ կրծոցն զբոշմեալ
 և բանս խորհրդականս՝ ի վե-
 րայ նոցա քանդակել . բայց զի
 Կստուած հրաման ետ զուրիմն
 կազմել և զթումիմ , և Դաւիթ
 զեփուտն խնդրեաց՝ յորժամ
 զտէր հարցանել խորհետ , ոչ
 ինչ մնապաշտութիւն նկատեմք
 'ի բանսդ : Օ այս ամենեցուն
 ընդ ուշի կապել արժան է , զի
 մի յունայնութեան բանդագու-
 շանս խոնարհեալ անկանիցին :
 Եթէ բարեպարիշտ ոք այր և
 մաքուր սրտիւ աղօթս յառան-

ձին տեղւոց մատուցանիցէ՝ զոր
 առաւել՝ ի դէպ և պատշաճական
 աղօթից համարեսցի, ոչինչ սնա-
 պաշտութիւն գործէ . զի թէ-
 պէտ ամենուրեք է, Աստուած, և
 տիեզերք համօրէն հրաշափա-
 ռագոյն քան զսողոմնեանն տա-
 ճար, այլ և նա ինքն երկնաւոր
 Ճմարտութիւնն ի հրաշաճառ
 խրատուցն պատուէր ՚ի վերայ
 եղ հաւատացելոցն, զի աղօթել
 կամեցեալք՝ երթեալ մեկնեսցին
 յառանձնութիւն սենեկին, և
 կայցեն յազօթս ՚ի ծածուկ, զի
 յերկնաւոր հօրէն զյայտնի հա-
 տուցումն վարձուց ընկալցին :
 Ա ան որոյ յորժամ աստուած-
 պաշտութիւն բարձր ՚ի գլուխ
 պարձէր, և սուսերք բռնաւորաց
 տեղի ետուն կենարար փայտին,
 սովորութիւն եղեւ տաճարս և
 տունս աղօթից ընդ ամենայն
 քաղաքս կառուցանել, և անգէն

Երկիր պազանել տեառն հոգւով
և ճշմարտութեամբ , և 'ի վար-
դապետաց բանին զկենարար հա-
ւատոցն առնուլ զՃաշակ քաղ-
ցրութեան : Այս եթէ զորմանս
տաճարին շինածս համարեցան
սքանչելագործս , որք զօրհնու-
թիւնս երկնից ածեալ կուտես-
ցեն 'ի գլուխս մեր , այլ զի առա-
ւել 'ի գէպ զվայրն զայն տեսին
աղօթից՝ յորմէ իբրեւ զխունկս
անուշից ելանեն բարձրանան
ուխտք սրտից և պաղատանք հա-
ւատացելոց :

Օսոյն զայս և յաղագս նշխա-
բաց սրբոցն Այստուծոյ ասել ար-
ժան է , զորս առանձինն մեծարեն
հաւատացեալք 'ի տունս և 'ի
տաճարս և յեկեղեցիս իւրեանց .
և զմասն ինչ 'ի նշխարաց նոցա-
պահեն 'ի վերայ անձանց իւ-
րեանց . զի եռանդն աստուած-
պաշտութեան վառեալ բորբո-

քեսցի , և յուշ զվաստակս և
 զառաքինութիւնս ածեալ զծա-
 ռայիցն Աստուծոյ , աղօթիւք և
 մաղթանօք զնոցա բարեխօսու-
 թիւն հայցեսցեն : Եւ զի ոչ
 ինչ աւելի կամ'ի վեր քան զաս-
 տուածային զօրութիւն յոսկերսն
 յայնոսիկ համարիսք , վասն որոյ
 և ազատք եմք 'ի մնապաշտու-
 թեանն ստգտանաց : Վանդի
 ողջամտաց արանց այս հաւատք
 են զաւանութեան , զի սուրբք
 Աստուծոյ գործի են մեծու-
 թեան նորա և զթոյն առ ժողո-
 վուրդ իւր . վասն որոյ որսէս 'ի
 կենդանութեան նոցա մեծա-
 րեմք զնոսա , այսակէս և զկնի
 մեռանելոյն չէ արժան կասիլ 'ի
 պատուոյն , գիտելով չափ զի
 մարթ է Աստուծոյ զպատուա-
 կանան մեծարգի հանդիսացու-
 ցանել նա և յետ մահուան նո-
 ցա : Վանդի 'ի ծննդոց գիրսն

պատմի Եթէ նահապետն Յով
 սէփ Երդմնի արար զորդիս ժո-
 ղալրդեան իւրոյ մի թողուլ
 յԵրկրին Խզիապտացւոց զոսկերս
 մարմնոյն . “ Յայցելութեանն ,
 ասէ , յորում այց արասցէ ձեզ
 Կստուած , հանջիք և զիմոսկերս
 աստի ընդ ձեզ . : Խւ ունկըն-
 դիր եղեւ նմա Առովսէս , քանզի
 էառ ընդ իւր զոսկերս նորա և
 ամփոփեաց պատուով : Դար-
 ձեալ որպէս ’ի թագաւորագիր
 մատեանսն զրոշմեալ կայ , յա-
 րոյց Կստուած զմեռեան , զի
 կցեցան ոսկերք նորա ընդ ոսկե-
 րաց սրբոյ մարդարէին Խղիաէի .
 և այն ինչ գնէին զմարմինն ’ի
 վերայ զերեզմանին , և ոսկերք
 նորա կցէին ընդ ոսկերաց մար-
 դարէին և յառնէր մեռեան :
 Դարձեալ և յԿռաքելոց Պրակ-
 ուն պատմի զի ’ի քրտանէն
 Պաւղոսի թաշկինսակս կամ վար-

շամակս առ հիւանդս տանելին ,
 և մերժելին 'ի նոցանէ ախտքն
 և այսքն չարք ելանէլին : Ապա
 մեծարելին և նախնիք զնշխարս
 սրբոց կամաստուածամերձից ա-
 րանց : «Քաջայայտ իսկ և անցք
 տեռատես կնոջն են , զորմէ
 յաւետարանսն պատմի , որոյ
 մերձեցեալ 'ի դրօշակ հանգեր-
 ձից փրկչին մերոյ և 'ի նմա-
 նէ զառողջութիւն գտանէր , և
 ցաւքն մերժեալ հալածելին : Ու
 եթէ վարշամակն Պաւղոսի կամ
 դրօշակը հանգերձից փրկչին ու-
 նէին ինչ զօրութիւն առ 'ի զգեւս
 հալածել և քժշկութիւնս կա-
 տարել . այլ Աստուծոյ կամացն
 սքանչելիք էին յիրսն , որ և 'ի
 փոքունսն և յանարգս մեծապէս
 փայլեն : Ա ասն որոյ և տէրն
 զմեծահաւատ կինն տեռատես
 'ի զովել առեալ աղաղակէր .
 «Քաջալերեաց զուստր , հա-

ւատք քո կեցուցին զքեզ,, . և
ոչ ոք՝ ՚ի նախնի հաւատացելոցն
և ընդ միտ անդամէած պարսա
ւադէտ լեալ ստգտանել զայնո
սիկ որք թաշկինակս ՚ի քրտանէն
Պաւղոսի առեալ տանէին առ
հիւանդս, և նոքօք զբժշկու
թիւն ախտաժետացն գործէին :
Եւ եթէ առաջնոցն այս խոր
հուրդք էին, իսկ ընդէրյետինքն՝
նոր վարդապետք անցեալ բազ
միցին դատապարտ զնախնիսն
առնել զի և զհետեւողքս զնա
ցից նոցա թշնամանեսցեն :

Ըատ իսկ ցուցեալ ցարդ ե
թէ նշխարացն սրբոց պաշտա
մունք ոչ միայն աստուածային
պատուիրանացն ոչ հակառակին,
այլ և աւանդք են անհրաժեշտք,
մնայ արդ ցուցանել համառօտիւ
եթէ այս վարդապետութիւն
անդստին ՚ի վաղնջուց ժամանա
կաց և յառաջին դարուց եկաց

մաց յեկեղեցւոջ : «Քանզի ՚ի
 վկայագիրսն ընթեռնումք, որպէս
 և կանխեցաք ասել յառաջա-
 զոյն, եթէ զիարդ փոյթեռանդն
 խնամով ժողովեին զնշխարս մար-
 մաց սրբոց վկայիցն : «Քանզի
 այն ինչ վկայքն սուրբք զմահու
 դատակնիք ՚ի բռնաւորացն ըն-
 դունէին, ամենայն քրիստոնեայ
 հաւատացելոց խուռն ՚ի տեղի
 նահատակութեան նոցա ըն-
 թացեալ և անքուն պահակե-
 րութեամք և բազմագանձ ար-
 ծաթով զմարմինս նոցա գնոց
 առնուին . և բազում այն էր
 զի զարիւն անդամ նոցա ժո-
 ղովեալ և ամիսովեին յանօթս
 պատուականս : Երանելի այն
 Քրուգենտիոս պատմէ զի ՚ի գե-
 տնադամքանսն երթեալ երբեմն
 և ետես անդէն զնկարագիր հան-
 դիսի նահատակութեան սրբոյն
 Նիւպպողիտեայնկարեալ՝ի պաս-

տառի, յորում զսուրբն Աստու-
 ծոյ ընդ քարշ ածել հրամայեր
 անողոքելի բռնաւորն : Արբոյ
 վկային մարմինն պատուական
 յօշ յօշ պատառեր, և բազումք
 'ի քրիստոնեից զհետ նորա դի-
 մեալարշաւեին, ոչ միայն զի զնըշ
 խարս մարմնոյ նորա ամփոփի-
 ցեն, այլ և թաշկինակաւ և
 վարշամակօք զշիթս արեանն նո-
 րա ժողովեին . դարձեալ և այլք
 ոմանք զգործի տանջանացն նորա
 և զնահատակադիր մրցանացն
 խնամով առեալ պահէին, յորոց
 բազումք տեսանին ցարդ եւս
 'ի վատիկանեանն անուանեալ
 թանգարանի 'ի Հռովմայեցւոց
 քաղաքին, քանզի, որպէս հա-
 ւանկութեան թուի, և զայնոսիկ
 եւս ընդ մարմնոց սրբոց վկայիցն
 հողոյ տային հաւատացեալք :
 Այլ ոչ այսոքիկ եւեթ էին
 մեծարանք քրիստոնեից, որովք

փառաւորէին նոքա զախոյեանսն
 ուղղութեան հաւատոց . այլ և
 'ի պատիւ անուան նոցա տաճարս
 և եկեղեցիս կառուցանէին ան-
 դէն 'ի տեղլոջն ուր զբարւոք
 վկայութիւնն վկայեցին : Օ այս
 և Արթագինեայ սիւնչողոսն
 հաստատեաց , գումարեալ յամի
 տեառն 398 , զի 'ի կառուցանել
 անդ զսեղանս՝ դիցին 'ի նոսա
 և մասն մի 'ի նշխարաց սրբոց
 վկայիցն : Եւ Արդուլեցւոց հայ-
 րապետն Ամբրոսիոս նամակա-
 զիր առ Արկելինա քոյր իւր
 լինելով՝ պատմէ եթէ զիարդ
 կամեցեալ նորա տաճար մի 'ի
 քաղաքի անդ կառուցանել , ա-
 մենայն ժողովրդեանն զաղաղակ
 բարձեալ և խնդրէին 'ի նմանէ
 ըստ օրինակի Հռովմայ եկեղե-
 ցեացն սրբազանել զայն . և նա
 պատասխանի ետ ժողովրդեանն
 մտադիւր զիմնդրեալն կատարել ,

միայն զի գտցէ ինչ 'ի նշխարաց
սրբոց : Եւ այնուհետեւ աս-
տուածայնովն վառեալ նախան-
ձու՝ հրամայեաց պեղել դհող
երկրին , և գտան պատուական
մարմինք սրբոց վկայիցն Դերուա-
սիոսի և Պրոտասիոսի , վկայու-
թեամբք ստուգահաւատ մարդ-
կան . վաճն որոյ տօն մեծ հան-
դիսի կարդեաց երանելի հայրա-
պետն , և փոխեաց զմարմիննն
յամբրոսեանն կոչեցեալ տա-
ճար , և բաղում սքանչելիք ան-
դէն յեկեղեցւո՞ն գործեցան :

Եւ զի ամենեւին արժանա-
հաւատ զընծայութիւն բանիցս
արարից , արժան է և վկայու-
թիւնս ինչ 'ի հարցն սրբոց՝ ա-
ծել 'ի մէջ : Եւ նախ յաղագս
եկեղեցւոյն Օ միւռնացւոց քա-
ղաքի սկիզբն արասցուք խօսել ,
որ մի է յեօթանցն զորոց աս-
տուածայինն խօսեցաւ ։ Յովհանն

նես 'ի Տեսլեան գիրսն : Առւըբն
 Պողիկարպոս այնը քաղաքի գի-
 տապետ՝ աշակերտեալ էր առ
 ոտս սիրելոյ աշակերտին . վասն
 որոյ և յանհնարիցն թուի կար-
 ծել եթէ զվարդապետութիւնն
 Քրիստոսի զոր աշակերտք նորա
 ընդհանուր ծաւալեցին , և յորոց
 նա ինքն ուսաւ Պողիկարպոս ,
 փութով'ի մոռացօնս արկանէր :
 Եւ եղեւ յետ մահուանն նո-
 րա՝ հաւատացեալք եկեղեցւոյն
 ։ Օ միւռնայ զրեցին թուղթ՝ զո-
 րոյ զօրինակն կարգեալ եղից
 աստէն , յԵւսեբեայ յԵկեղե-
 ցւոյ պատմութեան զրոցն ա-
 ռեալ . . . ։ Իսկ թշնամին չար .
 քինաւորն և նախանձաւորն , որ
 կայր հակառակ ընդդէմ ամե-
 նայն տոհմին արդարոց , իբրեւ
 ետես զմեծութիւն վկայութեան
 նորա (Պողիկարպոսի) այն որ յա-
 ռաջագոյն անարատ էր , որպէս

պսակեցաւ անեղծ պսակաւն , և
 զյաղթութիւն զոր էառ նա
 առանց երկմտութեան : Խօրա-
 մանկեցաւ , որպէս զի և ոչ մար-
 մին նորա չնորհեսցի մեզ . իբրու
 բազումք ցանկային առնել զայս ,
 և հաղորդել ընդ մարմին սըր-
 բոցն : Կրգուեցին այնուհետեւ
 ոմանք զիշնիկիտայ զհայր Հե-
 ռովդի և զեղբայր Կեղկոսի՝
 զգացուցանել դատաւորին , զի
 մի տացեն մեզ զմարմինն նորա .
 զի մի թողցեն , ասէ , նոքա զայն
 որ 'ի խացն ել , և ամա երկիր-
 պացցեն : Եւ իբրեւ գրգուեցին
 նոքա , օգնէին ընդ նոսա և
 Հքեայքն եւս , այնոքիկ որ և
 պահելով եւս պահէին զմեզ , զի
 մեք պատրաստեալ էաք առնուլ
 զնա 'ի հրոյ անտի : Օ ի ոչ զի-
 տէին նոքա թէ մեք գրիստոս
 երբէք ոչ կարեմք թողուլ , զայն
 որ չարչարեցաւն վասն կենաց

աշխարհի, այս ինքն՝ վասն այնու-
 ցիկ որք կամին կեալ. զի՞ Վըիս-
 տոսի Երկիրպագանեմք մեք և ոչ
 այլոց, նմա՝ որ էր որդի Աստու-
 ծոյ. իսկ զվկայսն սիրեմք մեք
 ըստ օրինի իւրեանց, զի՞ նմա-
 նողք եղեն վկայութեան տեառն
 մերոյ, վասն դեղեցիկ և առա-
 ւել խորհրդոյն՝ զոր ունեին նո-
 քա առ թագաւորն մեր և ու-
 սուցիչ, զի արժանի լիցուք և
 մեք լինել նոցա աշակերտք և
 հաղորդք : Իսկ իբրեւ ետես
 հարիւրապետն զմարտ Հրեիցն,
 որպէս սովոր էին նոքա, եղ զնա
 'ի միջի և այրեաց : Եւ ապա
 յետոյ ժողովեցաք մեք զոսկերս
 նորա, որ պատուական են ա-
 ռաւելքան զականս պատուա-
 կանս ծանրագինս . և զարձեալ
 են առաւելքան զոսկի ըն-
 տիր : Եւ եղաք զնոսա ուր ար-
 ժան էր, զոր տէր ետ մեզ .

զի լիցուք ժողովեալ ուրախու-
 թեամք և ցնծութեամք . և
 առնեմք մեք զօրն յիշատակի
 վկայութեան նորա , իբրեւ զյի-
 շատակ այնոցիկ որք յառաջա-
 գոյն առաքինացան , և պատրաս-
 տութիւն այնոցիկ որ հանդեր-
 ձեալ են նմանող լինել նոցա :
 Օ ի իբրեւ այս եղեւ որ գոր-
 ծեցաւ յերանելին Պողիկարպոս՝
 հանդերձ երկոտասանիւք որ վր-
 կայեցին 'ի Օ միւռնիա , և առա-
 ւելքան զամենեցուն նորա միայն
 ըազում է յիշատակս : Եղբարք
 իսկ եկեղեցւոյն Օ միւռնացւոց
 զրեցին զայս պատմութիւն նորա
 յայսմ թղթի զոր գրոշմեցաք
 մեք , : Տես եթէ զիարդ զամե-
 նայն գուն գործէին հաւատա-
 ցեալք յափշտակեալ առնուլ
 զիարմինն . և զի ոսկելք նորա
 պատուական առաւել քան զա-
 կանս ծանրագինս համարէին ,

և ընտիր քան զոսկի . և զի
 շուրջ պար առեալ զգերեզմա-
 նաւ նորա , և տօնախումբ՝ զօր
 հանդիսի նահատակութեանն
 հոչակեին : Ի՞սոյց որ առա-
 ւել քան զամենայն ինչ յապ-
 շութիւն զմեր միտս կրթէ ,
 բանք ամբաստանութեանցն են՝
 որովք Նրեայք առաջի դատաւո-
 րին զքրիստոնեայսն անդոսնէին ,
 եթէ սոցա թողեալ զԱրիս-
 տոս զխաչելեան իւրեանց Աս-
 տուած , և Պողիկարպոսի պաշ-
 տօն հարկանեն : Եւ զիարդ
 համարձակէր ժայռհէր Նրեիցն
 ժողովուրդ՝ զայսպիսիս զհաւա-
 տացելոցն խօսել , եթէ չէր նո-
 ցա տեսեալ երբէք զմեծարել
 չքոյլ զոսկերս և զնշխարս վր-
 կայիցն : Ապա ուրեմն անզստին
 յառաջին ժամանակաց՝ յաճա-
 խեալ էր այս սովորութիւն առ
 քրիստոնեայս , և 'ի զուր բար

բասել զուղղափառքս Ճգնիցին
նորաղանդք :

Առը Եկամատիոս որ 'ի
Հռովմ վկայեաց յետ հարիւր
ամաց Քրիստոսի ծննդեանն,
Եպիսկոպոս էր Ենտիոքացւոց .
Վասն որոյ և զմարմին նորա , ի-
բրեւ զգանձ անզուգական , որ-
պէս և էրն իսկ հաւաստեաւ ,
'ի Հռովմայ յաթոռ իշխանու-
թեան նորա ածեալ փոխեցին .
Քանզի իբրեւ մեռաւ " սուրբ և
առաքինի նահատակին Քրիստո-
սի , որ կոխեաց զխայթոց սատա-
նայի , և կատարեաց զքրիստո-
սասէր և ցանկալի ընթացս իւր ,
և ընոյր ցանկութիւն նորա ըստ
աստուածեղէն զրոց թէ ցան-
կութիւն արդարոց ընդունելի
է . քանզի կամէր եթէ ծախես-
ցի 'ի դաղանաց , և մի ծանր
լիցի ամփոփումն մարմնոյ նորա
եղբարցն . և ըստ փափաքա-

նայ յօժարութեան նորա նոյն-
 պէս և կատարեաց Աստուած .
 քանդի ծախեալ դազանացն զա-
 մենայն մարմին սրբոյն , սակաւ
 ինչ՝ի մեծամեծ ոսկերացն թո-
 ղին . զոր յետ այնորիկ տարան
 յԱնտիռքացւոց քաղաքն , գանձ
 անհամեմատ ՚ի վկայութիւն
 նորհաց սրբոյ եկեղեցւոյն մնա-
 ցեալ . : Եւ ՚ի վերայ սրբոյ շիրմի
 նորա , աստուածախոս Շներանն
 ոսկի զմեծ նահատակն վերա-
 պատուեալ , դարձուցանէր ապա
 զբանսն առ ժողովուրդն Անտիռ-
 քացւոց , և այսպէս ընդ նոսա-
 խօսէր . “ (Հոռվմայեցւոց քա-
 ղաքն) զշիթս պատուական ա-
 րեանն նորա ընկալաւ , իսկ դուք
 նշխարօքն փառաւորեցայք . դուք
 եպիսկոպոսութեամբն հրձուե-
 ցայք , նոքա վկայութեամբն . նո-
 քա տեսին զնա ՚ի մրցանս նա-
 հատակութեան , և տեսին զօ-

բացեալ և պսակեալ. բայց դուք
 հանապազ ընդ ձեզ ունիք զե-
 րանելին : Ի՞ւ վայր մի հեռի
 արար զնա 'ի ձէնջ Իստուած, և
 ապա մեծ եւս փառօք չնոր-
 հեաց . . . Եւ արդ մի այսօր
 միայն, այլ զօրհանապազ առ նա
 դիմեսցուք. կթեսցուք 'ի նմանէ
 զատուղս հոգեւորս. քանզի և է
 իսկ՝ մատուցելոյն այսր հաւա-
 տով մեծամեծս պտղաբերել բա-
 րիս, զի ոչ մարմինքն միայն, այլ
 և նոքին իսկ դիրք սրբոց լի են
 հոգեւորական չնորհօք . . . վասն
 որոյ յորդորեմ զամենեսին զձեզ,
 եթէ տկարացեալ հոգւով ոք ի-
 ցէ, եթէ խօթացեալ, եթէ 'ի
 թշուառութիւնս և եթէ յայլ
 ինչ կենցաղական ծանրութիւնս,
 և եթէ մեղօք տկարացեալ և
 բեռնաւոր, հաւատով այսր մա-
 տիցէ, և բազում դարձցի ուրա-
 խութեամբ . . . Պահէ և Եւա-

գրիոս պատմաբան վասն երկ-
րորդ փոխադրութեան նշխա-
րաց սրբոյն՝ յաւուրս ժամա-
նակաց կրտսելին անուանեալ
Ծակողոսի ըիւզանդացւոց թա-
գաւորի . “Յայնժամեւ աստու-
ածարեալն Խճնատիոս, այն որ...
կամեցաւ գերեզման ունել զո-
րովայնս գազանաց ’ի տեսա-
րանն Հռովմայ, և ’ի ձեռն մնա-
ցելոց խոշոր ոսկերաց փոխաքե-
րեալ եղեւ յինտիոք ’ի Վճա-
րանն կոչեցեալ վայր . . . զսուրբ
նշխարս նորա փառօք մեծաւ ’ի
քաղաքամեջ անդր ածեալ և
դնեին ’ի տաճարի : Ուստի և
բազմաժողով տօնիւ մեծահան-
դէս ուրախութիւն կատարի մին-
չեւ ցաւուրս ժամանակաց մե-
լոց . . .”

Երախափ ահա մեծարէին
նախնիք և առաքելականքն կո-
չեցեալ վարդապետք զպատուա-

կան նշխարս սրբոց վկայից , և
 'ի նոյն զաշակերտեալսն յոր-
 դորամիտ առնելին . զորոց եթէ
 զամենայն բանս կամեցեալ էր
 մեր ածել 'ի մէջ , ձգելին եր-
 կայնելին բանք մեր յոյժ յոյժ :

Ի գիրս երանելոյն Շասի-
 լիոսի գոյ և թուղթ գրեալ առ
 Անդուլեցւոց հայրապետն Աք
 ըրոսիոս , որ խնդրեալն էր 'ի
 նմանէ զմասն մի 'ի նշխարաց
 սրբոյն Դիոնեսիոսի արիստա-
 գացւոյ . և գրէ առ նա այսպէս .
 « Աէրն՝ որով զեղբարսն մեր
 զհանգուցեալսն մեծարեմք , առ
 նոյն ինքն տէրն 'ի վեր բերի՝
 որում նոքա ծառայեցին . և որ
 պատուէն զայնոսիկ որ մեռան
 վասն հաւատոց , հաղորդ զանձն
 ցուցանէ նախանձու և առաքի-
 նութեան նոցա „ : — Առցուք 'ի
 մէջ և զբանս սրբոյն Արիրեմայ
 զԱսորին ասորւոյ . « Տես , ասէ ,

զիարդ դեռ եւս գոչեն նշխարք
 վկայիցն . և ո իշխեսցէ երբէք
 յերկբայս արկանել թէ չիցեն
 մարտիրոսք , և կամզի ընաւ իսկ
 կորեան յիշատակք նոցա յեր-
 կրէ „ : Ապա զմեծ զօրութիւնն
 ցուցանելով զնշխարաց սրբոցն ,
 և զհաւատացեալսն խրախուսէ
 դիմել առ նոսա անձկանօք .
 „ Քանզի անդէն ընակէ , ասէ ,
 աստուածութիւնն , և հանդի-
 սարան են վկայքն մեծի զօրու-
 թեան նորա և սքանչելեաց „ :
 — Ասէ և սուրբն Աստերիս .
 „ Խնամով արժան է հողոյ տալ
 զմարմինս վկայիցն , զի յազգաց
 ազգս կենդանի յիշատակ ա-
 նուան նոցա արձանացի . քանզի
 նոքօք զօրաւոր լինին անձինք
 մեր , և ամուր պատուարք են
 եկեղեցւոյ սրբոյ և զէնք ամրաւ-
 թեան „ : — Եւ սուրբն Յովհան-
 նէս Ասկերերան . „ Յոր չեն

գամագիւտ ուկիւ և մեծութիւնք՝
 զայն կարող են առնել մարտիրու-
 սացն ուկելք : Քանզի ուկիւ ոչ
 հալածէ զհիւանգութիւնս և ոչ
 զմահ 'ի բաց վանե . այլ մարտիր-
 ուսացն ուկելք զերկուսին միան
 գամայն կարասցեն առնել,, : —
 Դարձեալ և Ներոնիմոս . “Ե
 թէ նշխարաց վկայիցն չիցէ ար-
 ժան երկիրապագանել, և զի՞նչ
 իցէ զրեալն եթէ պատուական
 է առաջի տեառն մահ սրբոց իւ-
 րոց : Եթէ մեռելոյն ուկելք
 պղծեն զմերձեցեալսն՝ և զիարդ
 մեռեալն Եղիսէոս զշունչ կեն-
 դանութեան անշնչացելոյն սպար-
 գեւէր „ :

Արսէս կանխեցի ասացի , ան-
 թիւ օրինակը են առ նախնիս
 յլնծայութիւն խնդրոյն զօրմէ
 մեր բանքս են . այլ ես 'ի հա-
 մառօտն փութացայց : Ա իգի-
 լանտոս ոմն յաւուրս ժամանա-

կաց սրբոյ վարդապետին Հերո-
 նիմեայ , ասաց եթէ չէ արժան
 մեծարել զոսկերս սրբոց . իսկ
 Հերոնիմոս պատասխանի ետ
 նմա և ասէ եթէ “ Ոչ ծունք
 ածեմք մեք նշխարաց մարտիրո-
 սացն և ոչ երկիր պագանեմք
 նոցա . այլ ’ի մեծարել անդ
 զնոսա՝ զակը ունին յիշատակեմք
 զբան եթէ “ Որ զձեղընդունի ,
 զիս ընդունի . : — Դարձեալ և
 յաւուրս սրբոյն Եւգոստինեայ
 ’ի ըորըորդումն դարու եղեւ փո-
 խագրութիւն նշխարաց սրբոյ
 Ախիավկային . և հաւաստի բա-
 նիւք զպատմութիւնն զայն ’ի
 զրի հարեալ դրոշմեաց սուրբ
 հայրապետն :

Իսկ ’ի պաշտամունս Հայաս-
 տանեայց եկեղեցւոյ ռեղ ախորից
 ճահրութեան կոչին ոսկերք սրբոց
 և գանձ ասպառածային և պարծանա
 աշխարհի և բարեխօս վասն մեր .

քանզի և նուագեմք իսկ եթէ
 “ Արկրպագեմք առաջի տեւողա-
 կան նշխարաց Ճգնաւորին Վրիս-
 տոսի և պատուական վկային ,
 որ է պարծանք աշխարհի և
 բարեխօս վասն մեր . . . և զի
 “ Տաճար են սուրբ Հոգւոյն ,
 կենդանի ոսկելք (մարտիրոսաց) ,
 Հիւանդաց բժիշկք . . . և եթէ
 “ Աջ տեառն ’ի վերայ սրբոց
 իւրոց , և փառք իւր Հանգու-
 ցեալ է յոսկերս սոցա , և Հոգիք
 սոցա դասաւորեալ ընդ հրեշ-
 տակս . . . դարձեալ ,

“ Օծեալ մերոյ հայրապետին
 Վրիգորիոս Լուսաւորչին . . .
 Մեզ մարդարիտ բերեալ անդին
 Զնշխար սրբոյ Կարապետին . . .
 ‘Նոյն և նշխարքին հոգելի
 Ամանագինեայ սուրբ վրկայի .
 Որով մարմնոյս վէլք ողջասցի .
 Յանցանք հոգւոյս մեր քաւեսցի . . .

Եւ 'ի հնագիր եկեղեցական
 կարգաւորութիւնս ազգիս գտա-
 նի և կանոն զնշխարս սրբոցն
 'ի հանգիստ փոխարկելոյ , յո-
 րում յետ սաղմոսաց և ընթեր-
 ցուածոց և աւետարանաց ե-
 ղեալ կան և այս մաղթանք .
 “Տեր Աստուած մեր , որ փառա-
 ւորեցեր զսուրբ վկայսն քո որք
 վասն անուան քո Ճգնեցան , և
 պարզեւեցեր սերմանել ընդ ա-
 մենայն երկիր զնշխարս սոցա 'ի
 սրբարանս քո , և զպտուղ բժը-
 կութեան ծաղկեցո վասն սոցա ,
 ամենայն բարեաց վաստակակից
 գոլովազօթիւք սոցա . որոց խոս-
 տացար հանգիստ նշխարաց 'ի
 սուրբ տանս յայսմ լինել , պար-
 գեւելով հատուցումն մեղ և
 յայսմիկ որ Ճգնեցան վասն ա-
 նուան քո . սքանչելագործեա 'ի
 ձեռս սոցա առ 'ի մեղ զբժշկու-
 թիւն և զփրկութիւն հոգւոց .

վասն զի քո և զօրութիւն և
քեզվայելէ փառք,,,: Եւյաղաղո
այսորիկ այսչափ :

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղաց մեծարևոյ զպատկերու
սրբոց :

Ի Ճշմարիտ հաւատու ուղղա-
փառութեան մերոյ դարձեալ և
ինչ մի դժուարատար՝ նորազան-
դիցն ազգ յեկեղեցւոյ պաշտա-
մունս համարին զպատիւ պատ-
կերացն սրբոց, զամենայն Ճիզն
եղեալ՝ ամենեւին խակ յերկրէ
անհետ առնել զայն : Պահտեն
ընթերցասէրք և հմուտք ե-
կեղեցւոյ պատմութեանց եթէ
զիանդ ընդդէմ դարձան պատ-
կերացն և կիրառութեան նոցա
Ա իգիլանտոս և հետեւողք նորա

'ի չորրորդումն դարու, և սպա
 յութերորդումն հզօրագոյն եւս
 օրինակաւ լ եւոն կոչեցեալն ի-
 սաւրացի թաղաւոր Շիւզան
 դացւոց : Անդէն 'ի դիմի հարան
 մոլորութեան կարծեացն սուրբն
 Գերմանոս Առստանդնուալօլի
 հայրապետ, և հարքն դումա-
 րեալք 'ի Աթիկա բիւթանա-
 ցւոց, և ընդ բանիւ արարին
 զթագաւորն և զհամախոհս նո-
 րա : Այլ չեղեւ մարթ 'ի
 սպառ արմատախիլ զմոլորու-
 թիւնն զայն բառնալ յաշխար-
 հէ .քանզի և բազումք եւս յիշ-
 խանաց և ոմանիք յեպիսկոպոսաց
 առ շնորհուկս արքայի՝ հաճեցան
 ընդ կարծեցեալ եռանդն աս-
 տուածպաշտութեան նորա, և
 օգնական եղեն 'ի գործ սպասա-
 ւորութեանն բառնալոյ զպատ-
 կերս սրբոց, և այնպէս աղէտք
 անհնարինք 'ի վեր երեւեցան և

անթիւ զրգութիւնք, զորոց չէ
տեղւոյս յերկարել։ Օ այս միայն
յաւելցուք ասել զի զաղանդ մո-
լորութեան նոցա նորոգեցին բո-
ղոքարկուք, և ընդ ստգտանօք
կռապաշտութեան զուղղափառս
արկին և յաղագս բանի խըն-
դրոյս։ Եւ արդ տեսցուք եթէ
զի՞նչ յաղագս մեծարելոյ զպատ-
կերս հրամայէ եկեղեցի։

Հրաման պատուիրանի 'ի վե-
րայ դնէ նա զպատկերս տեառն
մերոյ և վրկիչին և զկուսամօր
աստուածածնին և զայլոցն սրբոց
պահեալ պատուով 'ի տերունեան
տաճարս և կամ' 'ի տունս բնակու-
թեան մերոյ, և զարժանին հարկ
մեծարանաց ընծայել նոցա։ ոչ
աստուածական տալ պատիւ և
ոչ գեր 'ի վերոյ քան զմարդկե-
զէն միտս համարել։ ոչ կորա-
քամնակ առաջի պատկերացն ան-
կեալ և 'ի նոսա խարսխեալ հաս-

տատել զյոյս մեր և զակնկա-
 լութիւն , որպէս երբեմն հե-
 թանոսքն առնելին՝ ամենեւին զա-
 կատեալք զհետ ունայնատուր
 պաշտամանց : Քանզի պատ-
 կերք սրբոցն թէպէտ և գոր-
 ծածք մարդկեղէն հնարից և ձար-
 տարութեան , այլ զի զնախա-
 տիպս նոցա մեզ 'ի յուշ ածեն ,
 վերանան միտք մեր յաղցաւոր
 կենացս մինչեւ յանտրտումկայ-
 անս երջանկաց , և զկենդանա-
 զիր երեսաց նոցա երկրպագու-
 թեամք և աղօթիւք պատուա-
 սիրեմք , որպէս որ զսիրելոյ
 բարեկամին անմոռաց զյիշա-
 տակն պահելցանկացեալ , դի-
 մաց կերպարանաց նորա և հան-
 գերձիցն իսկ շուք դնէ : Այս
 պատուիրանք են սրբոյ եկեղե-
 ցոյ , զոր և աշխարհագումար
 նիկիականն երկրորդ սիւնչողոս
 սահմանեալ կարգեաց : Ասացաք

Եթէ պատկերացն պատիւ 'ի
 նախատիպ անդը նոցա 'ի վեր
 ելանեն . զի ոչ զպատկերս՝ այլ
 զուրբս փառաւորեմք . զարսա-
 սուս վասն նոցա հեղումք , պա-
 զատանս առ 'ի նոցանէ պաղա-
 տիմք , և զբարեխօսութիւն խընդ-
 րեմք ոչ զերանգ երանգ դունոցն ,
 այլ զերանեալ և զփառաւորեալ
 սրբոց : Օ այս ոչ կռապարիշտ
 պաշտամունս համարեսցին նոր-
 աղանդք , մի լիցի . այլ պաշտօն
 Ճշմարտին Վստուծոյ որ մեծ և
 սքանչելի է 'ի սուրբս իւր . զնո-
 սա խոզովակս Վստուծոյ շնոր-
 հացն եցոյց մեզ եկեղեցի , և
 յորդոր մատոյց՝ զնոյն կերպա-
 րանքաղաքավարութեան բերել
 յանձին , զի նոցա յարկակիցք և
 ընակակիցք արժանասցուք լի-
 նել , միաձայն զամենատերն փա-
 ռաւորելով :

Բայց տես ինձ եթէ զիարդ

նորաձայն ուսմանցն վարդապետք
աղաղակեն , զի՞ Հոգի է Աս-
տուած , և Երկրապագուաց նորա-
պարտ է հոգւով և Զմարտու-
թեամբ Երկիրապագանել . . . և
զի աւետարանագիր խրատք են
այսոքիկ , քան զորս եթէ առա-
ւել ինչոք քարոզեսցէ , նզովեալ
լիցի , թէպէտ և առաքեալ իցէ
և կամ հրեշտակ՝ ի յերկնից իւ-
ջեալ : — Ի՞այց մեք զի զհակա-
ռակելեացն ամենեւին կարկես-
ցուք զբերան , առաջի արատ-
ցուք համառօտիւ զվարդապետ-
տութիւն ընդհանուր եկեղե-
ցոյ :

Պատկեր յորժամ կոչիցեմք ,
զնմանութիւն ուրուք ասեմք լի-
նել՝ ի նկարու և կամ յարձանի .
արդ եթէ նախատիպք պատկե-
րացն այնոցիկ և արձանաց , այս
է՝ յարոց անուն զբոշմեալ յօ-
րինեցան , արժանաւորք պատուոյ

իցեն , 'ի դէպ է մեծարել զայնու
 սիկ . օրինակ իմն , զառն թա-
 գաւորի զնմանութիւն երեսաց
 տեսեալ մեծարեմք . և թա-
 գաւոր եթէ խելամուտ լիցի զի
 անարգէ ոք զալատկեր դիմաց
 իւրոց , ընդ սաստիկ պատժովք
 պատուհասից զնա արկանէ :
 Վաջայայտ են անցք մեծին
 թմէողոսի բարեպարիշտ ար-
 քայի , որ զբազումն 'ի թեսա-
 ղոնիկեցւոց մահու չարաւ սպան ,
 փոխանակ զի զարձանս իւր և
 զթագուհւոյն 'ի հրապարակս
 քարշեալ անարգեցին : Եւ արդ
 պատուել արժան է զալատկերս
 սրբոց , քանզի և ինքն Աստուած
 հրաման ետ Առավիախ նմանու-
 թիւնս քերովքէից առնել . և
 Ներոնիմոս ասէ , զի տապանա-
 կին պաշտօն տանէին Նրեայք
 վասն քերովքէիցն եւեթ որ էին
 'ի վերայ նորա : Դարձեալ յոր

ժամօճք մաղկատիչք հասանէին
 'ի վերայ Խորայելի , 'ի ժամանա-
 կին յորում անօրինեալ և զի՞ել
 փեդովք առնոյր 'ի պաշտօն , ա-
 սաց Աստուած ցՈՒովսէս բարձ-
 րացուցանել զօձն պղնձի . զի
 եթէ 'ի հարուածելոցն ոք հայես-
 ցի 'ի նա , գտցէ զբժշկութիւն
 ցաւոց իւրոց : Առաքեաց Քրիս-
 տոս զնմանութիւն երեսաց իւ-
 րոց տպաւորեալ 'ի դաստառակի-
 առ Աբգարիոս , զորմէ յետկոյս
 մատենկանս արասցուք յիշատակ .
 Պան և պատկերք երեսաց սրբոյ
 կուսին , նկարեալ որպէս աւան-
 դութիւն է 'ի հաւատացեալս 'ի
 սրբոյն Պուկայ : Ասէ և Խւե-
 բի վարդապետ 'ի դպրութիւնս
 եկեղեցւոյ պատմութեանց՝ զի 'ի
 Պանէադ կամ 'ի Խեսարիա Փի-
 լիպպեայ՝ կինն տեռատես որ
 զբժշկութիւն ցաւոց 'ի Քրիս-
 տոսէ ընկալաւ մերձեցեալ 'ի

դրօշակ հանդերձից նորա , կանգ
 նեաց ։ Առաջի դրաց տան իւ-
 րոյ՝ ի վերայ քարձր վիմի պատ-
 կեր արդնձի՝ կնոջ , զի իջեալ է՝ ի
 ծունկս իւր , և առեալ ունի
 զձեռս իւր առաջի իւր , և ա-
 ղաջե ըստ նմանութեան նորա :
 Եւ ընդդիմ նորուն կնոջ՝ կայ
 դարձեալ պատկեր արդնձի առն
 մարդոյ՝ որ կանգնեալ և կայ՝
 արկեալ զիւրեւ մեկնոց . և կար-
 կառեալ ունի զձեռն իւր կնոջն :
 Եւ՝ ի կողմանէ օտից նորա՝ ի
 վերոյ քան զհանդերձն ըու-
 սեալ արմատ ինչ որ օտար է,
 տեսլեամբ իւրով յամնայն ար-
 մատոց . և ելանէ նա մինչեւ՝ ի
 դրօշակ հանդերձի նորա . և է
 նա դեղ ամենայն ցաւոց : Այս
 անդրի նմանութիւն փրկչին մե-
 րոյ է , որպէս ասեն . և եկաց
 մնաց նա մինչեւ յաւուրս մեր ,
 և աջօք մերովք տեսաք զնա՞ի

ժամանակի յորժամ չոքաք 'ի
 քաղաք անդր : Ծայց ոչ մեծ
 ինչ է այս , յաւելու գրել իւսե-
 րի , զոր արարին այնոքիկ որ 'ի
 հեթանոսացն էին որ օգտեցան 'ի
 Փրկչ անտի մերմէ . ուր զի և
 զեթագարանս նմանութեան զա-
 ռաքելոցն զՊետրոսի և զՊաւ-
 ղոսի և զնորուն ՀՅրիստոսի ,
 նկարեալ նոցա դեղովլք , և կան
 մինչեւ ցայսօր ժամանակի ։ ։ ։
 Պարձեալ և եօթներորդ ընդ-
 հանուր ժողովն Աիկիոյ յիշա-
 տակառնէ և զպատկերին ՀՅրիս-
 տոսի զոր 'ի Աիկոդիմեայ ասեն
 նկարեալ և պարգեւեալ Պամա-
 զիելի , զորոյ զտանեմք զյիշա-
 տակ և 'ի Ճառընախրս մեր յա-
 նուն Աթանասի , և պատմի 'ի
 նմա եթէ ուշրանչականս այս պատ-
 կեր կայր 'ի Ծիւրիտոն 'ի տան
 առն ուրումն Նըշի . և քանզի
 քրիստոսատեաց էր այրն , միա-

բանեաց ընդ իւր զբագումն ՚ի
 Նրէից, և ասլտակեցին և եղե-
 գամբ զգլուխ նորա հարկանէին
 և թքանէին ընդ երեսս նորա և
 այսն առնէին զնա : Հայնժամ
 ըղիսեաց ՚ի կողիցն արիւն . և
 Նրէիցն որ զչարութեան գործն
 զայն գործեցին ահիւ ընդարմա-
 ցեալք, երթեալ ծանուցին ե-
 պիսկոպոսի քաղաքին . և նա մե-
 ծահանդէս շքով էառ զպատ-
 կերն, և հրամայեաց պատուել
 զայն երկրպագութեան պաշտա-
 մամբք : Հիշատակեն և Տեր-
 տուղիանոս և | ակտանտիոս զի
 յաւուրս ժամանակաց իւրեանց
 ՚ի վերայ սպասուց եկեղեցւոյ
 նկարէին հաւատացեալք զպատ-
 կերս սրբոց և զՃՐիստոսի, և զի
 գոյր և յայնժամ սովորութիւն
 զնելոյ յեկեղեցիս զնմանութիւն
 խաչին Քրիստոսի :

Զմեծ հաւաստիս Ճշմարտու-

թեան բանիցս ետուն հարք
սուրբք որ կացին յառաջ քան
զելս աղանդոյն պատկերամար-
տից , այլ 'ի բազմաց անտի
մեք զսակաւուցն յիշատակես-
ցուք զբանս :

Երանելի հայրն մեր Պարիզոր
լուսաւորիչ . “ Փոխանակ զրօ-
շելոց փայտից՝ զիսան կանգնեաց
’ի մէջ տիեզերաց . զի որ սովորն
էին երկիր պագանել փայտից , սո-
վորականան հաւատասցեն եր-
կիր պագանել փայտի խաչին , և
որ ’ի վերայ նորա մարդադէմն
իցէ պատկեր . . . :

Բարսեղ . “ **Օ սրբոց պատ-**
կերս մեծարեմ և պաշտեմ յայտ-
նապէս . քանզի առաքելական է
աւանդութիւնս՝ և արհամարհէլ
զայն չէ ’ի դէպ . . . :

Աստուածաբան . “ **Տեսի բա-**
զում անգամ գրեալ պատկերս
զախտիցն (զ) բրահամնւ ցաւոցն .

բանքն ակնարկեն) և ոչ առանց
արտասուաց անցի զտեսութեն,
հաւասարի արուեստին ՚ի դէմն
ածեալ զպատմութիւնն ,,: Այէ
իսկ և այլուր . “ Դիտէ և նկար
ըիկ յորմանդր խօսել և մեծա-
մեծս օգտել ,,: :

Յովհաննէս հայրապետ իմաս-
տասէր օձնեցի ՚ի գերապանձ ձա-
ռին զոր ընդդէմ Պաւղիկեանց
դրեաց . “ Ահա զտաւ որոգայթ
իբրեւ զվարմ հաւորսաց ձգեալ
՚ի մէջ ժողովրդեան ազգի իւրոյ
ըմբռնել զախմարս և զպարզա-
միտս ՚ի մարդկանէ , որք չարեաց
՚ի չարիս վերացեալ ելին . ՚ի
պատկերամարտութենէ ՚ի խա-
չամարտութիւն և ՚ի քրիստոսա-
տեցութիւն , և անդուստ յա-
նաստուածութիւն և ՚ի դիւա-
պաշտութիւն . . . Եւ ուղիղ և
աստուածաւանդ կրօնիցն մե-
րոց լուսաւորութեամբ նախա-

տել զմեղ յանդգնին պղծալիցն
 իւրեանց շրթամբք , կռապաշտս
 անուաննելով՝ տերունեան աղա-
 զաւ նշանապաշտութեամբ . զոր
 անխոտրապէս յանդեղեւուն մտաց
 առեալ մեք՝ կապեցաք զհոչակե-
 լին զայն նշան ընդ ամենայն
 նիւթս , որ և քերովքէիցն է
 սարսափելի և պատկառելի ,
 զբուժին հոգեկանաց մերոց և
 մարմնականաց ախտից , զպակու-
 ցանող և զզարհուրեցուցիչ դի-
 ւաց : Այլ և կենդանազրեալ
 պատկերաւ մարդացելոյ քանին
 Կստուծոյ , պախարակել զմեղ
 անամօթին , յիմարեալք և խե-
 լագարեալքն յայսոցն անհաւա-
 տութենէ , զսրբոց մարգարէիցն
 զբանս ընդդէմ մեր քերելով ,
 զոր առ ՚ի յանդիմանութիւն
 հեթանոսական կռամնութեանն
 է ասացեալ Արգարեւ խկ
 կումք և կոփեմք և քանդակեմք

և քերեմք՝ որովք միանգամ աս-
տուածպաշտութեան մերոյ կա-
տարին կարդք • զեկեղեցիս, զսե-
ղանս, զխաչս, զպատկերս : Այլ
ոչ եթէ ընդ ձեռն այնոցիկ և
համապաշտօն հեթանոսացն . զի
նոցա մեհեանքն՝ կռոց ընդունա-
րանք շինեալ լինէին . իսկ եկե-
ղեցիք՝ բարեպաշտացն տաճարք
աղօթից և խնդրուածոց, և ժո-
ղովարանք որոց առ Աստուած
մերձենալ կամիցին : Որ պատուէ
զխաչն Արիստոսի և զպատկեր
նորին, զնոյն ինքն պատուեալ
լինի զԱրիստոս . նոյնպէս և
թշնամանելովն զնոսա՝ ի Արիս-
տոս լինի մեղուցեալ թշնամա-
նիչն „ :

Առւրբն Գրիգոր Կարեկացի .
“ Օտոնը կրկնեցի արժանա-
պատիւ քումպատկերի * „ : Այէ

* Ի բանս գովեստից սուրբ Աստուա-
ծածնին :

և այլ ուրեք յաղագս Ատեփա-
 նոսի վանահօր եթէ ՞՞ Օ որ-
 մոցն վերադրութիւն՝ վիմախա-
 րիսխ արձանակառոյց կերպիւ-
 առկայեաց, և իբր յականց վա-
 նեաց յեռելոց՝ Ճարտարագործ
 արուեստայարմար բազմատեսակ
 երփնիւ նորոգեաց, և զեզեկիէ-
 լեանն տեսլեան երեւյթ անյօդ
 էութեամբ՝ նոր նմանութեամբ՝
 իբր զգոյութիւն իրի արծար-
 ծեաց... | ակ զգեղանկար ծաղ-
 կայօրինուորակ պատկերացն կեն-
 դանագիր տեսակի դեղոցն՝ զըս-
 տուերացեալ հին ամանակացն՝
 զաներեւոյթն աչաց ներկայիցս՝
 իբր զառերեւոյթ յայտնի տեսա-
 կի՝ ունողաց շնչոյ և զգայութեան
 արգասասաւորեաց * ՞ ՞ :

Առ պատմութեան խաչին Ապարա-
 նից :

Ա ՚ի զիրս ասացեալ և վասն
 սրբոց պատկերաց, եթէ ոչ ըն-
 դունին Հայք ամենեւին. և որ
 յայսոսիկ է Ճշմարտութիւնն՝
 յայտնի ցուցանեմք : Ի հակա-
 ռակութենէ անտի որ ՚ի մէջ
 Երկուց ազգացս է, բազում չա-
 րիս սերմանեաց սատանայ . որ-
 պէս առ ոմանս ՚ի տղէտ ժողո-
 վրդոց մերոց՝ զպատկերաց սրբոց
 զանընգունելութիւն . որ և ՚ի
 մէնջ դսրովին այնպիսիքն . նա և
 նզովս եւս ՚ի վերայ գնեմք որք
 յանդպնին Հայհոյել : Քանզի
 մեք որ զառաջնորդականն ու-
 նիմք աստիճան, ընդունիմք և
 Երկրագեմք պատկերի սնօրէ-
 նութեան փրկչին մերոյ . այլ և
 զամենայն սրբոց պատկերս ըստ
 իւրաքանչիւր կարգի սպատուեմք,
 զորս յեկեղեցիս մեր նկարա-
 գրեմք և ՚ի պատարագամա-
 տուցի հանդերձս . և պատու-

Հասեալ ըմբերանեմք զու ըն-
 դունողսն ՚ի մերոց՝ զտգէտսն
 և զախմարս * „ : Դարձեալ
 “ Բատ այսմիսկ յաղագս փրկա-
 կան պատկերին և սրբոց նորին՝
 ’ի մերոց ոմանց տգիտաց հակա-
 ռակութիւն ցուցանի . և ձեր առ
 այնոսիկ գայթակղեալ՝ իբրու օ-
 րինադրութիւն ՚ի մէնջ կարծե-
 լով համօրէն ազգիս : Այլ մեք
 և որ ըստ մեզ՝ այսպէս ունիմք
 և քարոզեմք , եթէ որպէս զաս-
 տուածընկալն խաչ տեսանելով՝
 ոչ երեւելի նիւթոյն՝ այլ անե-
 րեւութին Աստուծոյ որ ’ի նմա ,
 զերկրպագութի մատուցանեմք ,
 այսպէս և փրկական պատկե-
 րին . ոչ նիւթոյն և դեղոյն , այլ
 Վրիստոսի՝ որ է պատկեր անե-
 րեւութին Աստուծոյ հօր , երկիր-
 պագանեմք նովաւ : Խակ զսրբոյն

* Ի թղթին առ Ալեքս կայսր :

պատկերս պատուեմք և փառա-
ւորեմք՝ միջնորդ և բարեխօս առ
Աստուած ունելով* „ :

¶ Յ արականէ . “ Օ կենդա-
նազիր անարատ ծնողի քո արկա-
նեմք առաջի անոխակալ տէրու-
թեանդ քո , յորժամ գաս փա-
ռօք հօր դատել զթշնամին խա-
չի քո , ներեա յանցանաց մերոց
բարեխօսութեամք մօր քո և
կուսի . աղաչեմք զքեզ տէր , պահ
պանեա զմեզ ընդ հովանեաւ
խաչի քո սուրբ . . . :

* Առ կայսրն Մանուկը :



ՅԱԿԵԼՈՒՄ

Ա.

Վրբանիսի քերրողի, յաղաց
պատկերամարտաց .

Ի կենսաբեր լուսոյ զարդարին ամենայն արարածք, և 'ի ճառագայթ նորապայծառացեալ բերկրին երկինք և երկիր • քանզի լոյսն ճշմարտութեան ելլց լուսով զամենայն տիեզերս : Փարտաց զմէդ խաւարային 'ի ստուերամած և 'ի թանձրացեալ սրտից, և լցաւ տչխարհ աստուածածանոթ վարդապետութեամբ : Խակ մժաւորական ուսմանց խոհալք որը շրջինն յաղջամուղջ խաւարընդվայրածք շաղեալք սասանին, զանհեթեթս պատրեն զսիրսս անմեղացն, և մուծանեն հերձուածս յեկեղեցի : Աչ է արժան, ասեն, նկարս և պատկերս յեկեղեցիս առնել . և բերեն վկայ-

ութիւնս 'ի հին կտակարանաց, զոր
վասն կռապաշտութեան հեթանոսացն
էր ասացեալ. վասն որոյ և ամբաստան
լինէին մարդարէքն : Բայց մերս ոչ
նմանի նոցա որ յաղագս Քրիստոսի և
ընտրելոց իւրոց . և ոչ եթէ 'ի բանից
Ճշմարտութենէ , այլ գրոց վկայու-
թեամբ . և ասացուք, որպէս և պատ-
միչք պատուիրանացն ասացին մեղ :

Քանզի պատկերաց օրինակ նախ Մով
աէս արար 'ի խորանին հրամանաւն Աս-
տուծոյ, Երկուս քերոբս ուկիս Ճախա-
րակեայս թևաւորս մարդակերպս 'ի վե-
րայ քաւութեանն , յորոց միջոյ խօսէր
աէրն տէրանց . զոր և առաքեալ'ի վկայու-
թիւնն հաստատէ . " Քերովքէքն փա-
ռաց , տսէ , որ հովանի ունէին 'ի վերայ
քաւութեանն „ . որ է մեծի խորհրդոյ
օրինակ : Այնպէս և զվարագոյրն զոր
տէրն առաց առնել նարօտվ և նկարուէք,
և պէսպէս յօրինուածովք զարդարեալ.
որ է բեհեղ և ծիրանի , կարմիր և կա-
պուտակ . ո՞չ ապաքէն դեղք էին ե-
րանգք նարօտոց վարագուրին . և էին
նկարք վարագուրին քերովքք : Այն օ-
րինակ Սողոմովիս արար 'ի տաճարին . քե-

ըովլքք՝ ի կիստարիս փայտէ , և պատեհաց
 սսկով . և ոչ միայն որ ՚ի դաբիթն էին
 քերովլքն , այլ և յորման և ՚ի դրունան
 և ՚ի սեաման շուրջանակի գրեաց գրչաւ
 քերովլքս և արմաւենիս և թռուցեալ
 թիթղունս : Եւ ոչ խոտեաց Աստուած ,
 այլ կոչեաց զնա տաճար անուան իւրոյ :
 Եւ հոգեկիր մտրգտրէն Եղեկիել , տե-
 սին զոր ետես ոչ իբրեւ զայլ ոք ՚ի մար-
 դարէիցն կամ պատգամախօսք , այլ աս-
 տուածատես գուշակմամբն բարբառէր .
 ասէ , “ Եղ զիս տէր ՚ի վերայ լերին
 միոյ բարձու քաղաքի , և տարաւ զիս ՚ի
 ներքս . և տեսի ՚ի նմա տաճար , և այր
 մի ՚ի նմա ահեղ և զարմանալի , և փայ-
 լատակունք հատանէին իբրեւ ՚ի պղնձոյ ,
 և կայր ՚ի վերայ գրանն , և ՚ի ձեռին իւ-
 րումունէր լար շինողաց , և ձող չափոյ ,
 և ասէ ցիս . Որդի մարդոյ , տես և ՚ի միտ
 առ զամանայն ինչ որ ՚ի սմա է , զի վասն
 ցուցանելոյ քեզ եկի այսր . և տեսի զատ-
 ճարն նկարեալ շուրջանակի ներքոյ և ար-
 տաքոյ քերովլքս և արմաւենիք՝ յատակէն
 մինչեւ ցվերնայարկան . և ոչ միայն տա-
 ճարն էր նկարեալ , այլ և պատշգամքն և
 գրունքն և սեղանն . և էին քերովլքն

մարդակերպ երկուս երկուս ամենե-
քին, և արմառենիք ՚ի մէջ երկոցունց,
որ է մէծի սքանչեաց տարացոյց , :

Արդ զինչ ասիցես յաղագս սորա,
ով մարդ որ հիւանդ ես մտօք, զի վասն
Մովսեսի և Սոլոմոնի յօրինուածով
քերովբէից ասացի թէ ձեռագործք
էին . իսկ զայ շնորհ համարիցիս՝ զոր
Աստուծոյ իւր է ցուցեալ: Ահա յայտ
եղեւ զի և առաջնոցն պատկերք էին 'ի
պատիւ երկրագագութեան փառաց աս-
տուծութեան . այս 'ի հնոց գրոց ա-
սացեալ: Եւ 'ի նորոց կտակարանաց ա-
սէ Պաւղոս յԱթենացիսն. ¹¹ Ըքջեալ և տե-
սէալ զպաշտամունս ձեր՝ գտի բագին
մի յորում գրեալ էր, անծանօթի Աս-
տուծոյ . զոր դուք յանծանօթս սկաշ-
տէք, ես զնոյն պատմեմ ձեղ: ¹² Միթէ
Աստուած էր բագինն . բայց զի յանուն
Աստուծոյ պատուէին, զնոյն և Պաւղոս
վկայեաց . և մէք ոչ եթէ աստուած
Ճմարիս ասեմք զպատկերն և զնկարս,
այլ յանուն Աստուծոյ նկարեմք, որպէս
և երևեցաւ՝ զոր Եսայի ասէ զծնեա-
նելն, և Երեմիա զընդ մարդկան շըր-
ջելն, և Դաւիթ զըարչարանացն և զժադ-

մանն , և Եղեկիէլ և Ովեէշ զյարութենէն , և Դանիէլ և Զաքարիա զերկրորդ գալստեննէն , և Կաւում և Մաղաքիաս զդատառաննէն : Քանզի նոքանշանակաւ պատմեցին մեզ , և Է որ եղեւ , և Է որ լինելոց է . և մեք զնոյն նկարեմք զոր 'ի գիրս գրեալ է . և գիրն գեղ է և նիւթք պատկերաց :

Կաեւ վարդապետք Եկեղեցւոյ յիշաւ տակեն վասն պատկերաց , որպէս և Յոհան Կոստանդինուպօլսի Եպիսկոպոսն յայն ճառի որ ասէ առ լուսաւորեալսն ասացելով . և փոքր մի յառաջ մասուցեալ ասէ . Զոր օրինակ պատկերք պղընձիք թագաւորականք անշունչք են և անզդայք , ոչ զի պղինձ է , այլ վասն զի թագաւորի պատկեր է , և դու ըստ այդմ օրինակի իմացիր ովհ հերետիկոսդ : Եւ գարձեալ 'ի յայն ճառի որ ասէ , ոչ է պարտ անցանել զաստուածային գրով . և ապա ասէ . Ո՞չ տեսանէք 'ի թագաւորական պատկերսն . զի 'ի վերանդ կայ պատկերն և զթագաւորին ունի գրեալն , և 'ի խոնարհ 'ի խարսխին գրեալ են թագաւորին նահատակութիւնք , սոյնապէս և 'ի մաշկսն է տեսա-

սանել • գրեալ է թագաւորական պատ
կերն 'ի վերայ, և 'ի ստորեւն առաքինու.
թիւնքն, յաղթութիւնք ամենայն : Կամ
զինչ արդեւք ասիցես զպատկեր տեառն՝
զոր աստուածային հաւատարիմ թագա-
ւորի Արգարու նկարեալ յանդիման
Քրիստոսի տեսութեամբ իսկ . զոր և
այժմ ասեն գոլ 'ի մեծ եկեղեցւոջն
Ուռհայու :

Եւ Սվերանոս եպիսկոպոս ասէ .
“ Զոր օրինակ թագաւորի 'ի բացէ եղե-
լոյ, և պատկեր նորա լնու զտեղի թա-
գաւորին և երկիր պագաննեն իշխանք և
զտօնս ամսոց կատարեն, պետք հանդի-
պին և ռամիկք երկիրապագաննեն, ոչ 'ի
տախատակն հայելով այլ 'ի պատկեր թա-
գաւորին, ոչ 'ի բնութիւնն հային, այլ
որ գրով տպաւորեալ է . և թէ մահ-
կանացու թագաւորի պատկեր այնքան
զօրանայ, ո՞չչափ եւս առաւել անմահի
թագաւորին կերպարան և պատկերն,, :
Այդպէս իմա զոր ասեմն . զի և սոքա
վարդապետք են եկեղեցւոյ . և եթէ
զսոցա զիրս կամիս ուսանել, զնոյն պատ-
մեն : Այսպէս և որբոյն Գրիգորի հայոց
Լուսաւորչ՝ որ ասէ յաղթման իւրում .

“Գոխանակ դրօշելոցն փայտից վխաչն իւր
կանգնեաց ’ի մէջ տիեզերաց . և զի սովոր
են մարդիկ երկիրապատանել անշունչ
պատկերացն մեռելոց , եղեւ ինքն մե-
ռեալ պատկեր : Ի վերայ խաչին մեռաւ
և անշնչացաւ՝ զի հաւատացեն երկըր-
պատկել խաչին փայտի , և որ ’ի վերայ
նորա պատկերն և մարդագէմն իցէ . զի
զպատկերագործն և զպատկերասէրն և
զպատկերապաշտոն յիւր պատկեր աս-
տուածութեան հնազանդեցուսցէ , :

Արդ եթէ մերոցս բանից ոչ հաւա-
տայք , զգիրս պարտ է քննել և ’ի վերայ
հասանել . բայց դուք ’ի գրոց այնչափ
հեռի էք որպէս երկինք յերկրէ : Բա-
զում և այլ վկայութիւնք են՝ ’ի գրոց
սրբոց . քանզի ամենսյն ինչ տեսանելի է
որ միտսն ունին . զի ականջք լսեն և
միտք իմանան . և առանց մտաց աչաց՝
մարմնոյ աչք կուրացեալ գտանին : Բայց
զարմանք մի այս են՝ որ զպատգամնն ըն-
դունիք և զիշխանն հալածէք . նշանին
երկիր պագանէք , և ’ի թագաւորն քա-
րածիգ լինիք . զխաչն պատուէք և զխա-
չեալն թշնամանէք : Այսպէս և Մանի-
քեցիքն և Մարկիանացիքն առ աչօք հա-

մարելին զջմարտութեամբ մարմնանալ
 վրկչն . և յորժամ տեսանեն և պատ-
 կերս դժգմնին զայրագնեալք մատու-
 ցեալ թշնամանեն . միթէ ոչ իցէ տե-
 սեալ զմարդարէսն հերկեալ և քննեալ,
 զի նոքա վասն կռապաշտութեան աղա-
 ղակէին , ըստ այնմ թէ կռւռք հեթանո-
 սաց դեւք են . բայց ոչ ուրեք գտանեմք
 գրեալ եթէ պատկերք եկեղեցւոյ կամ
 քրիստոնէից ասին դեւք . այլ զկռոցն ամ-
 բաստան լինէին : Կաեւ յեկեղեցական
 պատմութեանն ասէ՝ զոր Եւսեբի Ժա-
 մանակագրի հաստատեալ է յեւթնե-
 րորդ դպրութեանն , յեւթն և 'ի տաս-
 ներորդ Ճառին վասն սքանչելի նշանացն
 որ եղեն ասէ 'ի Պեննադա քաղաքի մե-
 ծագործոցն վասն վրկչի մերոյ . “Քանզի
 զայս քաղաք յիշեցաք մեք , ասէ , ոչ
 է արժան անցանել զսորա պատմու-
 թեամբ , զի արժանի է սա յիշատակաց
 այնոցիկ որ գայցեն զինի մեր : Վասն
 կնոջն տեռատեսի որոյ բխումն արեան
 խաղացեալ ելանէր . զոր ուսաք և մեք
 'ի սուրբ աւետարանէն , որ բժշկեցաւ 'ի
 ցաւոցն 'ի վրկչն մերմէ նշան սքանչե-
 լեաց սոցա մինչեւ ցայսօր Ժամանակի ,

զե առաջի դրանց տան որ կայ 'ի վերնաւ
 բարձր վկամի սրատկեր սրբնամի կնոջ մարդոյ
 իջեալ 'ի ծունդու իւր , և սփուեալ զձեռու
 իւր առաջի իւր , և աղաջէ ըստ նորա
 նմանութեանն : Եւ ընդդէմ նորուն
 դարձեալ կայ պատկեր պղնձի առն
 մարդոյ , որ կանգնեալ և կայ , և արկեալ
 զիւրեաւ կրկնոց , և կարկառեալ ունի
 զձեռն իւր առ կինն : Եւ 'ի կողմանէ
 ոտից նորա 'ի վերոյ քան զհանդերձն
 բուսեալ է արմատ ինչ որ օտար է տես-
 լեամբ իւրով յամենայն արմատոց , և ե-
 լանէ մինչև 'ի դրօշակ հանդերձի նորա ,
 և է նա գեղ ամենայն ցաւոց : Այս ան-
 դրի նմանութիւն փրկչին մերոյ է , որ-
 պէս և ասեն , և կայ մնայ մինչեւ յաւուրո
 մեր . և տեսաք մեք զնա աչօք մերովք 'ի
 ժամանակի իրուեւ չոդաք մեք 'ի քաղաքն
 յայն : Բայց ոչ ինչ է մեծ քան զայն՝ որ
 հաւատացին 'ի քրիստոս յարանց հեթա-
 նոսաց , և նկարեցին զտատկերսն դեղով
 զՊաւղոսի և զՊետրոսի , և զիորուն իսկ
 զՔրիստոսի . և կայ մինչեւ ցայսօր ժա-
 մանակի , :

Եւ արդ չիցէ տեսեալ ձեր զգիրս
 զայս ով ընդեր՝ որ հակառակ կաս

պատուիրանացն Աստուծոյ : Ընդէր ու
 սեմ, ոչ վասն ուղղափառութեան հա-
 ւատոյ ասեմ ընդէր, այլ ըստ այնմ որ
 լուաւն 'ի տեառնէ մերմէ, ընդէր՝ վասն ո-
 րոյ եկիրդ . զի թէ ընթերցեալ է և ոչ
 գիտէք, առ ձեզ կատարի բանն առաքե-
 լոյն որ ասէ . որոց Աստուծած աշխարհիս
 այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւա-
 տիցն՝ զի մի ծագեսցի առ նոսա լուսա-
 ւորութիւն աւետարանի փառացն Քրիս-
 տոսի , այլովք հանդերձ : Ապա թէ
 ձեր ընթերցեալ, խնդրել արժան է և
 քննել, և գիտել զբարին և զբարն, և ըն-
 տրել զատուածայինսն և զդիւականսն :
 Եւ զիանը ոչ գիտէք, զի 'ի մեհեանս
 կոոց է գրօշեալ Որմիզդ որ է Արա-
 մազդ, և պոռնկութիւնք իւր և կախար-
 դութիւնք . իսկ յեկեղեցիս Աստուծոյ
 տեսանեմք նկարեալս զուրբ կոյսն Աս-
 տուածածին 'ի գիրկս իւր ունելով
 զՔրիստոս՝ իբրեւ յայնժամ զարարիչն
 իւր և զորդի և զտեղծիչն ամենայնի : Իսկ
 'ի մեհեանս կոոցն Անահիտ և պղծու-
 թիւնք իւր և սպատիբք . իսկ յեկեղեցիս
 քրիստոնէից, և յարկս վկայից Աստու-
 ծոյ տեսանեմք նկարեալ զուրբ Գրի-

դոր , և աստուածահաճոյ չարչարանք
 իւր և սուրբ առաքինութիւնք , և զԱտէ
 փանոս նախավկայ 'ի մէջ քարկոծչացն ,
 զերանելի և զփառաւոր կոյսն սուրբ
 զԳայիանէ զՀռոփսիմէ հանդերձ ամե
 նայն ընկերօնն և յաղթողնահատակօնն .
 նոյնպէս և զայլ առաքինիս և զպատուա
 կանս և զՀըեշտակակրօնս՝ զորս ոչբաւեմք
 ընդ համար անցուցանել : Խակ 'ի մեհեանս
 Ասաղիկ և Ափրոդիտէս զոր մայր ցան
 կութեանց կունեն ամենայն հեթանոսք ,
 և բազում արբեցութիւնք նոցա և անա
 ռակութիւնք . խակ յեկեղեցւոջ Աստու
 ծոյ խաչն տէրունական , և խաչակիր
 գունդք առաքելոց և մարդարէից որք
 բարձին 'ի միջոյ զամբարշտութիւն ամե
 նեցուն , և ածին զտիեզերս յաստուած
 պաշտութիւնն , և յամօթ արարին զսա
 տանայ և զզօրմն նորա : Քանզի յեկեղե
 ցւոջ Աստուծոյ նկարեալ զամենայն զըս
 քանչելագործութիւնն Քրիստոսի զոր
 արար , որպէս և 'ի գիրսն գրեալ է ,
 որպէս և յառաջն ասացաք , զոր գու
 շակեցին մեզ մարդարէքն՝ զծնանելն ա
 սեմ և զմկրաելն զչարչարանսն և զխաչե
 լութիւնն , զթաղումն և զյարութիւնն ,

զ՞ամբարձումն յերկինս . զայդ ամենայն
 նկարեն յեկեղեցիս՝ զոր գիրք սուրբք
 սլատմեն , ո՞չ ապաքէն գեղով գրեալ են
 զգիրսն , և զնոյն բանս դեղովք նկարեալ
 է . յեկեղեցիս 'ի գրոցն ականջք միայն
 լսեն , իսկ զնկարան աջօք տեսանեն և
 ականջօք լսեն , և որ սրտիւքն իմանան
 և հաւատան : Ահա յայտ է զի չէ ար-
 տաքոյ գրոց պաշտել զպատկերս . և ե-
 թէ խորհրդիւ ոք քննէ , Տշմարիտ գայ ,
 և վրիպեալ գտանին հերետիկոսք՝ որ հա-
 կառակարանեն և ասեն . վասն այսորիկ
 խոտան համարիմ զի անխօսք են և ան-
 բանք : Արդ միթէ տապանակն Աստու-
 ծոյ խօսէր , յորժամ զԴադոն քերան-
 սեալ կործանեաց , և զԱզովսոս և զԳէթ
 և զԼակազմնայ զքաղաք այլազգեացն
 հարուածովք , մինչեւ բողոք բարձեալ
 Ասկազոնացիքն ասեին . “ Ընդէր դարձաւ
 տապանակն Աստուծոյ Խորայելի առ
 մեզ՝ տապականել զմեզ և զժողովուրդո
 մեր ” . միթէ խաչն Քրիստոսի խօսեցան
 որ 'ի քաղաքին զմեռեալն կենգանացոյց ,
 և հրաշտգործութիւնս բաղումն է ա-
 րարեալ մինչեւ յօրս մեր . որ է պար-
 ծանք հրեշտակաց և փրկութիւն մարդ-

կան և արհաւիլք դիւաց : Եւ արդ զու-
գաւորեալ շարսմանին նոր պատուիրանիք
ընդ հնոյն , և մեղ վկայեն շնորհօքն
Քրիստոսի . քանզի և զտիալս աւետա-
րանին տեսանեմք նկարեալս , ոչ միայն
յոսկւոյ և յարծաթոյ՝ այլ և յոսկերաց
վիզաց և կարմիր մորթով կաղմաւլ . և մեք
յորժամ երկիրապատանեմք սրբոյ տւե-
տարանի կամ համբուրեմք , ոչ եթէ
փղին ոսկերաց մատուցանեմք զերկրապա-
տութիւն կամ լայքային , որ յերկրէ
բարբարոսացն եկեալ է 'ի վաճառ , այլ
բանի փրկչին որ 'ի մագաղաթին դրեալ
է : Այսպէս և տէրն փառաց նստեալ 'ի
յաւանակին , և 'ի մերձենալ 'ի քաղաքն՝
ելին ընդ առաջ ծերք և տղայք ոստովք
ձիթենեաց և ոստովք արմաւենեաց ,
օրհնեին , գովէին և երկիրապատանեին .
ոչ եթէ իշոյն երկիրապատանեին , այլ
Քրիստոսի որդւոյն Աստուծոյ որ 'ի
վերայ նորա նստեալ էր :

Այսպէս և պատկերացն երկիր սկագա-
նելն ոչ վասն գեղոցն է , այլ վասն Քրիս-
տոսի՝ յորսյանուննիկարեցաւն : Արդ զինչ
նմանութիւն է աստուած ային պատուի-
րանացն հեթանոսաց պղծութեանն , վասն

որոյ հեթանոսք բիծս կարկատեն և հեր-
 ձուածս մուծանեն 'ի կորուստ անձանց
 և բնաւ լսողաց, զոր տալոց հատուցա-
 նելոց են զանանցական վլէժ տանջանաց
 գեհենին՝ հանդերձ ամենայն կամակցօք.
 որում յիրաւի և 'ի դէպ ասաց երջանիկ
 մարդարէն Ովսէէ, որոց գայթակղու-
 թիւն 'ի Ճանապարհս նոցա, վասն զի
 մոլորութիւն 'ի տան Աստուծոյ տնկե-
 ցին. մեւս եւս, թէ վայ որ արբուցանէ
 ընկերի իւրում հրապոյրս պղտորս. և
 արդարեւ իսկ հրապուրանօք և խարից
 մեղաց շաղապատեն, որք ստերիւրեալ
 են 'ի յուղիղ հաւատոց, և հեղեալ տա-
 պալեցան 'ի յուղիղ խորհրդոց. բայց ա-
 սեմե ոչ լուեմ. զոր օրինակ եթէ 'ի գիրս
 խնդրեալ յարկեղաց և ասասցէ զառա-
 քեալսդ տուր կամ զԵսայիդ կամ զԵ-
 րեմիա. միթէ Եսայի ինքն իցէ կամ ա-
 ռաքեալ ինքնին. ոչ ապաքէն պատգամք
 աստուածայինք, ընդ նմին և բանք նոցա.
 և մեք սպատկերաց նկարուք զնոսա յի-
 շեմք և զառաքողս նոցա. և ոչ ասեմք թէ
 իսկ է Աստուածն, այլ յիշողութիւնն
 Աստուծոյ և ծառայից նորա :

Եւ գրեալն էր թէ զպատկերս յեկե-

զԵցիս Պապ տարաւ : Այդ ամենեցուն
 յայտնի է թէ սուտ խօսիք : Քանզի ՚ի
 հայք պատկերս ոք չդիտէր առնել մին-
 չեւ ցայժմ՝ բայց ՚ի Հոռովմոց բերէին ,
 և մեր ուսմունք անտի էին . և եթէ նոքա
 չէին կորուսեալ , և քան զՊապ յառաջ
 այլ թագաւորք էին , և պատկերս և
 նկարս առնեին յեկեղեցիս յանուն Քրիս-
 տոսի . և դարձեալ զկնի Պապայ և այլ
 թագաւորք եղեն ՚ի Հայս , և հայրա-
 պետք՝ որպէս երանելին սուրբն Սահակ
 և Մեսրոպ և Եղիշիկ և Երձան և Կորիւն
 և ընկերք նոցա , որ և ՚ի ձեռն իսկ նոցա
 Հայոց դպրութիւն շնորհեցաւ ՚ի տեառ-
 նէ Աստուծոյ . և ոչ ոք ՚ի նոցանէ վասն
 պատկերաց և նկարուց եկեղեցւոյ բանս
 ինչ ոք արար . բայց միայն պիղծն մոլին
 թագէոս և Եսայի և ընքերք նոցուն ,
 որ և զոլովս ընդ իւրեանս ՚ի յետս
 կացուցին , որպէս և զձեղդ . զի թէպէտ
 և առ Ժամանակ մի փայլածէ կողմ հեր-
 ձուածողաց , այլ ստէպ խամրի , վասն
 զի ստութիւն խօսին . վասն զի և մեղք
 իսկ առաջին ՚ի ստութենէն ծնան , որ-
 պէս առ Աղամաւն . քանզի ոչ եթէ իմեն
 բանքս , այլ գրոց սրբոց հնոց և նորոց

կտակարանոց . Եթէ կամիք քրիստոսի
Աստուծոյ ծառայել և սիրել զգատուի-
րանս նորա՝ զնոյն՝ գիրս զորոց զանուանս
՚ի սմա գըեալ է յուզեցէք , և յորժամ
դտանէք՝ նոքա ցուցանեն զՃշմարիտ Ճա-
նապարհն Աստուծոյ : Եւ վասն պատկե-
րացն այսչափ եւեթ բաւական լիցին որ
միտ ունին :

Իսկ զդեղոցն որ ասեն թէ պիղծ են ,
որք յանդիմանին յինքեանց բերանոց .
Քանիզի գեղ գրոց է արջասակ և գըղ-
տոր և կռիզ զոր և ոչ ճաշակել մար-
թի . և նիւթ պատկերաց կաթն և ձու ,
զառեկ , լաժուրդ , ժանդառ , բուռկիր ,
և այլ որ նման է սոցին . Է զոր ՚ի պէտս
կերակրոցն մարթի ճաշակել և ՚ի պէտս
բժշկութեան . բայց ոչ ասեմք պիղծ զոր
ետ Աստուած ՚ի վայելսութիւն երկրի ,
և ոչ անգոսնեմք իբրեւ զզազիր ինչ . որ
ասէքդ եթէ հոտ գայ ՚ի գեղոյն . ապա
իբրեւ այսպէս անապաք էք և հոգեորք ,
պարտ է ՚ի ժամաւ աղօթիցն հերձուլ
զորովայնս ձեր և եռանդմամք ջրով
լուանալ զազիսգ ձեր և ապա մտանել
յեկեղեցին : Ո՞վ չորք և անհնարին
չարք , որք մերթ գեղոց ահոկ դնեշք և

մերթ սկատկերացն և նկարուց , և ասէք
թէ ձեռագործք են և մեզ չեն արժանի .
նա և Եկեղեցիք ձեռագործք են և կոչն
տաճար Աստուծոյ . զոր և Պաւլոս ասէր
առ Տիմոթէոս՝ ^{Հ. Մ. Յ.} զի գիտացես , ասէ ,
թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աս-
տուծոյ շրջել , որ է Եկեղեցի Աստուծոյ
կենդանւոյ . սիւն և հաստատութիւն
^{Գ. 15}
Ճշմարտութեան : Արդ առ այս զի՞նչ
ասիցէք , զի սա ձեռագործ է : Քանզի
յայտնեօք զաներեւոյթան ճանաչեմք . և
գեղք և նկարք յիշովութիւն է Աստուծոյ
և ծառայից նորա :

Բայց վասն զի գուք վիստացեալք սա-
տանեայիւ և սուրբ կոչէք զանձինս և
նմանող էք գերեզմանաց բռելոց , ապա
ուրեմն Ճշմարիտ ասաց առակողն . ասէ .
մի կարի արդար լինիր և մի Ճարտարեր ,
զի մի թիւրեսցիս . և գարձեալ ասէ .
ծնունդ չար առ արդարա ունիցի զանձն
իւր , որպէս և գուքդ բարձրացեալ
պահճայք , և անդուռն բերանով խօսիք
զոր ինչ ոչ է պիտոյ : Այլ մեք փութաս-
ցուք մաանել յեկեղեցի քրիստոսի 'ի
տուել և 'ի գիշերի , հանապազօք կան-
իսէլ յաղօթս . որպէս զի կատարեսցուք

զալարնդիստութեան ժամանակս , և ար-
ժանի լիցուք տեսանել զԱստուած զուար-
թագին երեսօք յաւուըն գատաստանի ,
զի յաւիտենից բարութիւնսն հասանել
կարիցեմք . զի նմա են փառք յաւի-
տեանս , ամէն :



Բ

Յովհաննոց Ասրկացագ քահանայի,
վասն մասանց պատռող , յորում և
վասն պատկերաց ընդունելուրեան
ցուցեալ զորպիտորիշնե .

Յանտեղիսն Ճարտարագոյն և հան-
ճարեղք յանբանութիւն , ոմանք խառ-
նակել զպարզագոյնս յիրաց և 'ի բանից ,
ոչ վեհերեն . և զզանազանութիւն ըն-
տրելեացն այնքան շփոթեն անկարգա-
բար , մինչ զի ոչ դիպատես գոլ և Ճաշա-
կելոց յիմաստութենէ . բազում անգամ
և զլաստուծոյնն խսկ , կամ խառնակեն և
կամ ընծայեն արարածոց . որոց ոչ
դժուարին ինչ է զեղանելի ոմն , յանեղ
բնութիւնն Երրորդութեանն յօդել և 'ի
կատարեալն զանկատարն . քանզի ոչ այլ
ինչ , քան եթէ զայս օրինագրեն որ 'ի
մարդ բնակել բանին , այլ ոչ մարդ լի-
նել աւանդեն . և որք զմիոյ տեառն Յի-
սուսի Քրիստոսի , յերկուս զանօրինա-
կանսն զատուցանեն գործք և բան . զո-

մանս անախառնալի բանին , և ընութեան որդւոյ Աստուծոյ , և զոմանս ախտակրի մարդոյ , և չնորհօք որդւոյ սահմանեն . զբանն մարմին եղեալ ոչ խոստովանողք , այլ 'ի մարդ բնակեալ . որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց :

Արդ թէպէտ և հոմանունաբար , գոյացութիւն ասի ամենայն . սակայն իսկ և տիրապէս էութիւն , արարչականն , ըստ որումն էն , ասասցի : Իսկ այլքն Երկրորդք , և Երրորդք , և որքան հեռաւորք խոստովանեսցին , ընդ նոսին և պատիւն և պատօնն հարկաւորապէս մասնաւորեսցի . որպէս զի արարչական , միայն զծայրագոյնն տարցի պաշտօն և Երկրպագութիւն , և զամենայն բարեպաշտիկ պատուոյ՝ գեղեցկակարգ սպասաւորութիւն , որքան կարողութիւն է զանազանապէս լինելոյ բնութեան . վասն զի արժանաւորութեանն յոյժ գժուարին Է հանգիպէլ , զի մի ասացից անհնարին : Իսկ արարեալքն զատցին 'ի կենդանի և յանշունչ : Անշունչքն զպէտս իւրեանց պաշտեսցեն , հանգերձ զգայական և անբան կենդաննօք . քանիզի ոչ վասն նոցա

է ինդիրս : Բայց կենդանին զի բաժանի
 յանքան և 'ի բանաւոր , ստորաբաժա-
 նեսցուք դարձեալ զբանականն յանմար .
 մին արարեալ և 'ի մարմնաւոր . և 'ի սո-
 ցանէ նախ առաջին , զի ըստ կարգի է .
 վասն հրեշտակաց տեսցուք , թողեալ
 զանսուրբան : Արդ նոքա թէպէտ և վե-
 հագունի քան զմարդիկ վիճակեցան և
 բնութեան և պատուոյ , սակայն պաշ-
 տօն և երկրագութիւն առնուլ յումե-
 քէ գրեցան : Զի Աբրահամ թէ և վասն
 հիւրասիրութեանն , ընդ առաջ ընթա-
 ցեալ երկրագութեաց . այլ միումն , որում
 արժան էր . առ որ և զբանս առնէր :
 Խակ Դովտ նոյնողէս և զօտարսիրութեանն
 նոյր կանոն , երկրագութովն . և ոչ
 զպաշտելոյ ուրուք հատուցաննէր արդա-
 րակս : Կաեւ յորժամ մատուցաննէլ ոմն ,
 ումեմն հրեշտակի կամեցաւ զոհ . ոչ
 հաւանեալ յանձն առ , որում մատու-
 ցաննէր , այլ ասէ . Տեառն մատուսջիր . և
 Դաւիթ թէպէտ և զհրեշտակին ետես ,
 այլ Աստուծոյ զերկրագութիւնն , ո-
 րում և զողջակէզմն մատուցաննէր : Խակ
 Զաքարիաև Եզեկիէլ բնաւ և ոչ գրեալ
 թէ երևեցելոց սրբոցն զուարթնոց կը ը-

կնեցին ծունք : Եւ Գանիել խոստովան
միայն զկարիս բնութեանն 'ի տագնա-
պելն լինէր Գաբրիելի , և զառյապայսն
ուսանել դիմէր . և ոչ վասն Հեղիու
կամ Խրայելի , կամ միոյ ուրուք 'ի տե-
սանողացն գրեալէ այսպիսի ինչ :

Այլ և յետ այսորիկ 'ի յայտնել ճշմար-
տութեանն , միթէ Պետրոս սքանչելին ,
կամ Փիլիպպոս կամ քրիստոսանէր կա-
նայքն մատուցին ինչ պաշտօն և երկըր-
պագութիւն երեւցելոցն հրեշտակաց :
Եւ եթէ կենդանի և սուրբ զօրութեանցն
ոչ տուեալ է պաշտօն և երկրպագու-
թիւն , զի՞նչ ասասցեն որք պատկեր իմն
նոցա և որակութիւնս ստեղծանեն ,
անձեւ և անորակ բնութեանցն , և պաշ-
տօնատարք լինին . ոչ ընկալաւ զայս 'ի
հարցն եկեղեցի : Բայց վասն մարդկան
գրեալէ , զի երկրպագեցին միմեանց և
սուրբքն իսկ . այլ ոչ իբրեւ Աստուծոյ .
զորոյ զպատճառն եթէ ասասցուք հա-
ւաստեաւ , ոչ սխալեսցուք : Աբրահամ
երբեմն որդւոցն Քետայ , վասն ըստ
արժանի պատուելոցն զնա և ասելոյ
թէ թագաւոր յԱստուծոյ ես 'ի միջի
մերում , յընտիրս շիրմաց մերոց թաղեա-

զմեռեալդ քո , 'ի վերայ երեսաց իւրոց
 երկիրագաներ , զանչափ սէրն առ
 մարդիկն և զխոնարհութիւն բարուց
 ցուցանելով . միանդամայն և շնորհահա-
 տոյց լինէր : Իսկ Յակոբ եւթն անդամ
 երկիր եպագ Եսաւայ , զի գէթ այնու
 զխստութիւն և զգաւնութիւն եղբօրն
 սրտի կակղացուցեալ քաղցրացուացէ .
 և մոռասցի զըսկումն օրհնութեանն , և
 անդրանկութեանն 'ի մտաց նորա . և
 ինքն կանամբք և մանկտւով 'ի սատակ-
 մանէ ապրեացի . նաև Մովսէս , ընդ ո-
 րում բերան 'ի բերան խօսեցաւ Աս-
 տուած , և ոչ տեսլեամբ քնոյ և հիաց-
 մամբ որպէս այլոց մարդարէիցն , որոյ և
 երեպն պայծառացան փառօք տեառն ,
 որ և հաւատարիմն էր յամենայն տան
 նորա , աներոյն իւրում Մադիանտցւոյ
 երկիր եպագ 'ի վերայ երեսաց իւրոց .
 զի գիտէր զայն իբրեւ մատուցեալ , և ոչ
 որպէս թէ առաւել ումեք . և զամբար-
 տաւանութեանն այտումն նախատէր այ-
 նու . և եթէ բարձրագունիցն և պատուե-
 ցելոց յԱստուծոյ առաւել ընդանի է
 խոնարհութիւն , ուսուցանէր . և 'Նա-
 թան մարդարէ , մարդարէին Դաւթայ

էրկրպագէր , զիշխանութեան պատիս
հատուցանելով . և զսրբոցն միմեանց
ոլատուադիր լինել , բարեոք գոլ և գովլ .
լի յոյժ քարոզելով . ըստ որում և ինքն
խել տէրն եղ օրէնս , մեծին՝ լինել ամե-
նեցուն ծառայ և պաշտօնեայ , և առաջ-
նոյն վերջին . զինքն յարացոյց 'ի միջի
եղեալ և ուսումն կենդանի . Երբեմն ,
եթէ եկն որդի մարդոյ , ոչ պաշտօն տո-
նուլ այլ պաշտել . և երբեմն , ես տէրս
և վարդապետ , եմ , ասէ , 'ի միջի ձե-
րումիբրեւ զպաշտօնեայ , որ մատդիւրն
ծառայեաց բազմաց ըստ մարդարէու-
թեանն :

Արդ սոքա և այսպիսի ինչ առ . 'ի
սրբոցն կատարեալ և ասացեալ , զախա-
հովարտութեան առողջացուցանել ա-
խորժելով գրեցան : Բայց զգերեզմանս
կամ զպատկերս ոմանց , թէ և սուրբք
իցեն , պաշտել ոչ հրամայեցաք և ոք
ցուցանել ոչ կարէ . պատուել զսուրբ
նշխարք ոսկերաց երանելեացն , բարիոք
սովորութեամբ և գեղեցիկ աւանդու-
թեամբ ուսեալ է եկեղեցի . և աղաչել
զնոսա 'ի բարեխօսութիւն առ տէրն իւ-
րեանց : Այլ փոխանակել զնոսա ընդ

փրկչին և տեառն , անսորբութիւն է .
 և ոչ ինքեանքն վկայքն ճշմարտութեան
 յանձն տռնուն , և ներեն զանալատուու-
 թիւնն և զթշնամանս . զի այսպէս արդա-
 րեւ վարկանին զաստուածացուցանելն .
 որպէս ընթեռնումք յերկրորդ գիրսն -
 զուկայ , վասն Պաւղոսի և Բառնաբայ
 'ի Ահւատրացւոց քաղաքին , զպատուե-
 լեացն և զլաւաց . արժան է իմանալ և
 որոշել զզանազանութիւնն , աննենդ և
 աջողակ մաօք՝ և ըստ իրաւանց դպա-
 տիւն տալ , զի մի 'ի տգիտութենէ մխա-
 մեալք , անզուգութիւնն և աննմանու-
 թիւնն և այլայլութիւնն , 'ի զուգութեան
 և 'ի նմանութեան և 'ի նոյնութեան ե-
 րեւեցուցանել աղճատիցիմք . այս ինքն
 առանց ընտրութեանն և իմաստութեան
 զմեծ գործ բարեկալաշտութեանն վճա-
 րել կարծելով , զանբաղդատականն պա-
 տիւ աստուածութեաննն ծառայից նորա ,
 կամումեք յարարածոցս տայցեմք . և ոչ
 զարարիչն եւեթ , այլ և զծառայս նորա
 պատուել կարծելով՝ տրամեցուցանիւ-
 ցեմք : Զայս ասելով , ոչ զսրբոցն պատիւ
 կամիմ փոքրկացուցանել . քաւ լիցի . զի
 լուայ 'ի տեառնէ զասելն առ սիրելիսն

իւր, թէ որ զձեզ անարդէ, զիս անարդէ .
 և որ զիս անարդէ, զառաքիչն իմ անար-
 դէ . այլ զոմանց պատկերապաշտաց չար
 վնասամտութիւն, և սխալանս կամիմ
 զգասացուցանել :

Արդ՝ ի պատուելեացն է ինչ որ վասն
 ինքեան է պատուելի, որպէս նոյն ինքն
 Աստուած . զի ըստ բնութեան ունի
 զանձառելի և զանիմանալի պատիւն .
 զորոյ պաշտօն և զպատիւ ոչ վայել է
 տալ ումեք . և է ինչ վասն այլոյ, որպէս
 տէրունական և սուրբ նշան խաչին . քան-
 զի ինքն ըստ ինքեան, 'ի սկզբանն՝ տան-
 ջանարան և մահու գործի, և ոչ անօթ
 երկրապատէլի է : Եւ վասն զի բանն ա-
 րարիչ, մարմնով չարչարեցաւ 'ի նմա,
 որով ազատեցաք 'ի կրկնատեսակ մա-
 հուցն . երկրապատէմք նմա յաղագս պատ-
 ճառին, զանապատմելի չնորհացն երախ-
 տիս փրկչին մերոյ նովաւ յիշատա-
 կեալ 'ի խորհուրդս և 'ի դէմս . երկրապա-
 տէմք առաջի նորա, և թագաւորականի
 սրբոյ երրորդութեանն . գոհանալով զհօ-
 րէն փառաց զի այնքան սիրեաց զմեզ .
 մինչեւ զորդին իւր միածին ետ նովաւ .
 խոկ նա մատոյց զինքն պատարագ անու-

շեց հօր իւրում 'ի ձեռն յաւիտենականի
հոգւոյն , ըստ Պաւղոսի ձայնին , փոխա-
նակ մեր և վասն մեր մեռանելով :

Իսկ զի յաղագս չարչարանաց տեառն
իւրեանց չարչարեցան ընտրեալքն Աս-
տուծոյ , վկայարանոք և յիշատակօք պայ-
ծառապէս մեծարեմք դնուա 'ի փառս
տեառն և 'ի փրկութիւն եկեղեցւոյ . և
այս յայանի ունի զստատձառն , սպարծիմք
ազգակցօքն . նոցայովքն բերկրիմք ա-
րեամբ . զզօրացուցիչն փառաւորեմք ,
տանջանացն սպատմութեամբք հեշտա-
նամք . առ տէր մեր զմտերմութիւնն
ցուցանեմք , զծառայս նորա սպառուե-
լով . մասնաւորիմք նահատակութեանցն
'ի ձեռն սիրոյն և աշխատութեան . ըդ-
հրահանգս առ 'ի նոցանէ վարդապետիմք
բարեալաշտութեանն . Քրիստոսի՝ յոս-
կերս նոցա երկիրսպագանեմք , բնու-
թեանս օգնել աղաչեմք , զստաղատանսն
փոխ տալ , մտղթանօք զարարիչն հաշտե-
ցուցանել , դլորելոցս ձեռն տալ և կանգ-
նել . համարձակութիւնն հայցել ամաչե-
լոցս և տկարութեան զօրութիւնն , դան-
դաղանաց և լքման , ջլլս և կազդուրու-
թիւնն . բժշկութիւնն իշխանականին 'ի

վիշտապին խածմանէ . չարեաց և չարին
ընդդիմակացութիւն . է երբէք զի և հար-
կաւորաց սկիտոյից անկարօսութիւն . և
եթէ այլ ինչ շուրջ անգելոց , դժնդա-
կութեանց , զհանդարառութիւն և զփրր-
կութիւն . և բիւրս գտանել առ ՚ի տեառ-
նէ բարութիւնս . վասն նոցա և խնդրոց
նոցա ժողովիմք : Նոյնպէս և յորժամ
զկենդանագրութիւն սկատկերի նոցա
տեսանեմք յեկեղեցիս և ՚ի վկայարանս
երկրագելով Աստուծոյ , զՃգնութիւն
նոցա միջնորդ և օժանդակ մեզ , առ նոյն
ինքն մատչել առնումք . աղաչել նոքօք ,
որոց գծագրութիւնն և ոչ եթէ գու-
նովք երանդոցն , կամ զինչ նիւթովք և
լոցէ , զաէր մեր և զԱստուած ՚ի հաշտու-
թիւն ածել . . .

Լոեմ զոմանց առ Եւքսինոս ծովու-
եղերն Պօնտացոց , թէ աստառածա-
ցուցին զնշան խաչն , զնոյն ինքն զիսա-
չեալն մեծատէս անդիտանալով . և աղ-
ձատանաց իմն համբաւ է զնոցանէ , խըն-
ճոյս և խաղս և արքեցութիւնս , լիս ա-
նառակութեամք և զեղսութեամք , այլ
և զինուք որմզդապէս խաղս հանդերձ
արեամք և սպանութեամք յամսատօնս

կատարեն . և զարմացայ ընդ խորա-
մանդութիւն բելիարայ թէ զիարդ
հարեցաւ ընդ բարձին և կորուսչ
հեթանոսութեան ուսման և աւանդու-
թեան , խառնել զհեթանոսութիւն . և
զատւրացոցն կամ զլակոնացւոցն մարդա-
խանձութիւն , 'ի հեզութեան վարդապե-
տութիւնն մեր յամենապարկեշտ՝ սպըր-
դեալ 'ի ներքս եմոյծ , և յանուն Քրիս-
տոսի զատելին նմա գործեն . ըստ Դե-
մետրի և Ափրոդիտեայ , ամաչեմ' ասել ,
խորհրդատօնս կատարեն . և զԱտակինի ,
այսինքն Դիւռովիսեայ կիրան և գոր-
ծըս , իբր օրինօք հաստատեալ ունին ,
այնը կողման ընակիչք . արձակեցաւ
ստուգապէս վիշապն , և քարշէ ստորեւ
զաստեղս . ժամանակ յայտնութեան որ-
դւոյն կորստեան և անօրէնութեան մար-
դոյն , որպէս թուի , մերձեցաւ , որում
յոլովս ըստ վկայելոյ գրոց , տեսանեմք
նշանս :

Բայց զի արտաքս այժմու բանիս և
գործոյ մեծի է , լուեսցուք . և 'ի կարգ
բանիս երթիցուք : Երկնչիմ , զառաւե-
լութիւն սիրոյ պատկերագործութեանն ,
գուցէ 'ի բանսարկուին խաբութենէ ,

տրտաքոյ իրաւացւոյն , որպէս ահա Ճա-
 ռեցաւ , վասն ոմանց հիւսիսականաց
 մարդոց անգանիցին . քանզի սովորու-
 թիւն , յամումն 'ի բարս գտեալ , 'ի բնու-
 թեան անգանի կարգ , և տայ խորհիլ օ-
 տարոտիս իմն և այլանդակ . որպէս բա-
 րիոքն զսու ինքն անգագոյնան . վասն զի
 և կոռոցն սլաշտօն , ոչ մերկ ընդ մերկ վաղ-
 վաղակի 'ի ներքս եմուտ յաշխարհ , այլ
 ըստ որում գրեալն է , տարաժամ սդով
 թաղծեալ հայր , վաղամեռիկ որդւոյն
 արար պատկեր . և ոմանիք 'ի թագաւո-
 րաց նախնեաց փառամոլութեանն ախ-
 տիւ գերեալք , ըստ քաղաքաց առնա-
 պատկերս զիւրեանց , 'ի վերայ սեանց
 բարձրագունից և 'ի նշանաւոր տեղիս
 բարձանց տային կանգնել հրամայելով
 պատուելներբողենիք . երեմն և նուի-
 րօք խնկոց , և տերևովք ոստախիտ ծա-
 ռոց . և յայնմանէ և յայսպիսի անպա-
 տեհ և անկարգ սովորութենէ եկին մար-
 դիկ 'ի պաշտօն դից և դիւցազանցն ա-
 նուանելոց . յոր հայեցեալ անճառելի
 և անհաս Աստուծոյ խմաստութեանն .
 պատուեր տայր Մովսեսիւ տանն խ-
 րայելի , մի ամեննեին պատկեր ինչ զուրուք

գնել 'ի քաղաքս իւրեանց կամ նկարել
 յորմնա տանցն . թէպէտ և զերկուս քե-
 րորէսն ուկիս վասն այլը խորհրդոյ ծայ-
 րագունի հրամայեաց առնել և կանգնել
 առ տապանակաւն . զի թէ զալատկեր օ-
 ձին պաշտեաց Խորայել , զոր և Նեեսթա
 անուանեցին , յիրաւի զգուշացուցաներ
 զնոսա տէր 'ի ձեռագործ պատկերաց :
 Բայց մեզ զսրբոցն պատկերս , ըստ ո-
 րում ասացաւդ վերագոյն , չափով սըր-
 բութեանն և յաղագս պատճառին պա-
 տուել 'ի գովեստ Աստուծոյ , և 'ի յի-
 շատակ քաջութեան նոցա , այլ ոչ
 արտաքոյ սահմանին հեղուլ մտօք : Խոկ
 զառւեալսն 'ի տեառնէ զիւրն անպարա-
 գրութեան ամենասուրբ և աստուածային
 պատկեր բարեպաշտին Աբգարու երկըր-
 պագել որպէս նմին ինքեան մարմնացե-
 լոյ բանին . և զնոյն նկարեալս յեկեղե-
 ցիս և 'ի մարդկանէ տեսանելով և երկըր-
 պագելով , Քրիստոսի անգանելառաջի և
 աղաչել վասն փրկութեան , զայն որ 'ի
 չափ և 'ի նմանութիւն ծառայի , վասն
 ծառայից գալ , անչափ խոնարհութեամբ
 արժանի արար . այլ զսրբոյ և զԱստուա-
 ծածնի կուսին ամենաշնորհ պատկեր .

զտուեալն որպէս ասի հաստատութեամբ, խնդրողացն զայն երանելի առաքելոցն, առաւել ամենեցուն որբոցն համարել, և երկրպագութեամբ որպէս զմօր տեառն զախտ պատկերի, աղաչելով լինել բարեխօս վասն մեր, առ որ մարմնացաւն 'ի նմանէ, վասն թշուառութեան մերոյս բնութեան, և առ ծնող բանին և միածնին որդւոյ, որ առաքեացն զնա, 'ի խնդիր մոլորելոյ բնութեան մարդկութեանս, և առ հոգին սուրբ, որ աւետարանեցաւ նմա 'ի գաբրիելէ 'ի սպաս և 'ի յարդարումն անձառելի մարմնաւորութեանն բանին Աստուծոյ:

Արդ ցուցաւ ասացելովքդ, թէ այլ պատիւ այնը որ ըստ բնութեան ունի զանգուգական փառմն, և զՃմարիտ թագաւորութիւն, որ է երանելին և միայն հզօր, և այլ պատիւ առ 'ի նմանէն եղելոց. և 'ի նոսա դարձեալ զանազանութիւն, որպէս բնութեանց և պատուոյ է արժան. և թէ զիանը զսուրբ ոսկերս նոցա պատուեացուք. և կամ թէ զորս արժան է ընդունել կենդանագրսութիւնս և զորս ոչ. և եթէ որտիսի զանազանութիւն ընթալելոցն է. և վասն տէրունա-

կան պատկերին մտածութեան և սրբոյ
Աստուածածնին . և վասն այդոցիկ շատ
լիցի այգքան :

Բայց կարևոր համարիմ յիշել և վասն
որոյ բազում անդամ կըեն 'ի միմեանց
մարդիկ երկրպագութիւն . զի միոք բա-
զում անդամ 'ի քնին մտեալ , խնդրեն
վասն այսր . և եթէ արժան իցէ կամոչ ,
համարձակապէս առնել վճիռ , կալան .
բայց ինձ այսպէս բարիոք դոլ թուի . զի
թէ էր արդեւք հնար , ոչ այլ ումեք եր-
կրպագել , բայց Աստուծոյ միայն , հա-
ճեալ եմ յոյժ : Այլ վասն զի տեսա-
նեմ հին զիրացդ պատմութիւն , որպէս
ցուցաւ , և անհնարագոյն զնափանումն ,
յաւելցուք զայս . եթէ իմաստութեամբ
պարտիմք և զգործն , և զիրացն քննու-
թիւն առնել . և է իսկ այնպէս , զի Աստու-
ծոյ որպէս միայնւոյ և արարչի և թագաւո-
րի մեծի , ամենայնի պատճառի և պատ-
ճառաց արարչագործի , նախախնամողի
և կրողի զամենայն , զպաշտօնն և զեր-
կրպագութիւնն առանձնակ մատու-
ցանել , որպէս արարած արարչի . զի
զայլ ամենայն բարութիւնն որ առ մեզ
և վասն մեր թողից . յորս ոչ կար է ումեք

ըստ արժանւոյն, հուակ երթալ և ոչ
 ճառել. իսկ իշխանաց ազգակցաց ո-
 մանց, իրը բռնաւորաց առ երկիւղի,
 զոր ոչ ընդունիմ հաւանել, և այլոց որ-
 պէս երախտաւորաց կամ պատիւ ինչ ու-
 նողաց, կիսոց վասն սիրոյ և մտերմու-
 թեան. և գարձեալ ոմանց, վասն զԱս-
 տուած յինքեանս ունելոյ, զոր մանա-
 ւանդ գովեմ, ըստ որում և Նաբուգո-
 դոնոսորն երկրպագէր Դանիելի. 'ի սոյն
 յարի, և որ առ խօնարհութեան գովե-
 լոյ, յաղագս Գրիստոսի երկրպագէ եղ-
 բօրն. արդ 'ի փառս Աստուծոյ եղեալ
 ամենայնդ, և առանց վնաս ինչ ունել
 յամենայն աստուածայինսն, և յիրս ա-
 ռաքինութեան, հաճելի է: Իսկ եթէ
 առ երկիւղի տանջանաց, կամ սպանման
 յաղագս կրօնից մերոյ, կամ պաշտաման
 բարեպաշտութեան, նախապատիւ զնու-
 տիսն արարեալ և զայն տոնիցէ. ընդ՝ առ
 Աստուած մահուչափ մեղուցելոցն գա-
 տաստանաւ է: Տեսանեմ և այլ ինչ, ոչ
 հեռի յայսմանէ ողբոց արժանի իրս,
 զի թղթոց բռնաւորաց և անշունչ պատ-
 կերաց նոցա, սուտակասպասութեան
 աղագաւ, իսկ երբեմն և առ ահի ան-

դեալ երկիր պատանեն . բայց մեր ամենայն ինչ պարկեշտութեամբ , և ըստ կարգի լնիցի , որպէս զի ամաչեսցէ աշխարհ 'ի գնացից մերոց . և հայելով 'ի գործս մեր բարիս , փառաւորեսցեն զհայր մեր որ յերկինս ընդ որդւոյ իւրում միաձնի և ընդ հոգւոյ իւրում սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւետենից , ամէն :

Գ.

Դաստիարակեալ Քրիստոն առաքեալ
առ Արգարիոս .

Որովէս յամենայն Եկեղեցեացն հնոց
սպատմութիւնս , առաւելագոյն իմն օրիւ
նակաւ 'ի մերումն բազում ընծայութիւնք
են 'ի հաւաստիս բարեխօսութեան սրբոց
և զնշնարս նոցա մեծարելոյ և զպատ-
կերան յարգելոյ : Բայց որ պանծալին է
և փառս մերոյ Եկեղեցւոյ սպատմու-
թեանցն յաճախէ , այն խոկ է զի առաջին
տերունական պատկեր նախ առաջին 'ի
մերում աշխարհիս երևէր , անձեռագործ
հրաշանկար դաստառակն Քրիստոսի ,
զոր փրկագործ տէրն առ նախկին հաւա-
տացեալ իշխառն Աբգարիսս սիրալիր Թըլ-
թով յղարկէր . զորոյ զզիարդն կարգես-
ցուք աստէն համառօտիւ , յԵկեղեցւոյ
պատմութեանցն Ճշգրտելով և 'ի մերոց
պատմչացն և 'ի յայսմաւուրացն և 'ի
Ճառընարաց բանից :

Աբգար Արշամայ յԱրշակունեացն

առհմէ Հայոց թագաւոր՝ առ ՚ի ըբմեղս
 յամբաստանութեանցն լինել որովք զիա
 պարասաւոր յաշ Աւգոստեայ Կեսարու
 խորհէրառնել Հերովդէս, արս հաւատա-
 րիմս յիւրոց անտի առ Մարինոս Հռով-
 մայեցւոց կուսակալն ՚ի Պաղեստին առտ-
 քեաց : Եւ իւրեւ նոցա զդործ սպասու-
 իւրեանց կատարետ դարձառ Արդարիոս
 առնեին, լուսնի զլուր սքանչելեաց կենա-
 րար փրկցին և գնացին տեսանել զբժիշկն
 ախտացելոց և զտէրն փառաց խոնարհեալ
 ՚ի մարդկային նուսաստութիւն, և թագա-
 ւորին իւրեանց սպամեին զամենայն մի
 ըստ միոջէ, որչափ ինչ լուան և տեսին յե-
 րուսաղեմացւոց աշխարհին : Եւ Արդա-
 րիոս թագաւոր թէպէտ և զհետ մնու-
 աեացն պաշտաման ցնորեալ դանդաչէր,
 այլ յԱստուծոյ շնորհացն լուսաւորեալ
 աղաղակեաց եթէ արդարեւնա ինքն է որ-
 դի Աստուծոյ բարձրելոյ . և քանիզի ախ-
 աիւ հիւանդութեան ՚ի բազում ամաց
 հետէ տափնապէր, և ՚ի բժշկացն սասա-
 րելոյ ոչ ինչ էր օգտեալ, զբժշկապէտն
 խորհեցաւ աղերսիւք պաղատել՝ և յաս-
 տուածագործ ձեռացն զապաքինութիւն
 ցաւոցն մաղթել : Եւ զի ՚ի բանից սուր-

Հանդակացն իւրոց խելամուտ եղեւ եթէ
Հրէիցն ժողովուրդ ոխութեամբ էր ընդ
փրկչին, և զի 'ի մահ խսկ ածել զնա խոր-
հէին, գրեաց առ նա և աղաչէր զհաւա-
տադրուժ և զտիրանենդ ժողովուրդն
թողեալ՝ յիւր քաղաքն յԵդեսիա գալ, և
զարժանին ընդունել պատիւ մեծարա-
նաց. “ գրեցի, ասէ, աղաչել զքեզ,
զի աշխատ լիցիս և եկեսցես առ իս, և
բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ
ես , : Եւ իւրեւ զողջոյն մեծարանացն
նորա և զթուղթ հաւատոցն՝ Անանէ և
ընկերք նորա յարմաւենեացն աւուր առ
Տէրն մատուցանէին, որ յաղթանակաւ
դայր մտանէր յԵրուսաղէմ՝ զփրկագործ
անօրէնութեանցն ճառս անթերի 'ի կա-
տարումն ածել, զուարթանայր իմն յան-
տրամական իւրում էութեան աստուա-
ծեղէն բնութիւնն, զհեթանոսացն դար-
ձի և զհաւատոց նախընծայ երախայ-
րեացն արդիւնս տեսեալ, վասն որոյ և
աղաղակէր եթէ “ Եհաս ժամ” զի փա-
ռաւորեսցի որդի մարդոյ , :

Հաւատոց էր արդարեւ մերոյ թա-
գաւորին հրաւերն . այլ Յիսուսի չէր
մարթ՝ որ ոչ ուրեք առաքեցաւ բայց առ-

ոչխարս կորուսեալս տանն խրայելի ,
 'ի հեթանոսաց աշխարհն տարադէմ եր-
 թալ . վասն որոյ և թովմայի առաքելոյ
 հրամայեաց գրել պատամխանի առ Աբ-
 դարիոս , յորում զհաւատս նորա 'ի գո-
 վել առեալ՝ զի ոչ տեսեալ և հաւատաց ,
 և զի արժան էր նմա մի ինչ պակաս թո-
 ղուլ որոց վասն առաքեցաւ , խոստանայր
 զի 'ի համբառնալն յերկրէ առաքեսցէ
 զմի ոմն յիւրոց աշակերտելոցն , զի զցաւս
 նորա բարձցէ և ամենեցուն կեանս շնոր-
 հեսցէ :

Բայց քանզի յառաջադոյն կասկածք
 'ի միտս անկանէին Աբգարու զի ոչ կա-
 մեսցի նա գալ առ ինքն , վասն որոյ և
 զպատկերագործ զոմն ճարտար ընդ Ա-
 նանէի առաքէր , գէթ զկենդանագրու-
 թիւն փրկչական երեսացն ընդունել :
 Եւ իբրեւ պատկերագործն զանփառա-
 մէր վարս Գրիստոսի տեսեալ , գաղտուկ
 առ 'ի նմանէ 'ի հնարս հայթայթանաց
 մոտանէր ստուերագրել զնմանութիւն ե-
 րեսաց կերպարանացն նորա , և ոչ լինէր
 գամադիւտ , ամենատես ակն փրկողին
 զՃիգն նորա տեսեալ , առնոյր 'ի ձեռացն
 զպատառն , և 'ի վերայ երեսացն եղեալ՝

տապաւորէր 'ի նմա զկերպարանս իւրոց
երեսացն , և առ լցեալն հաւասավլք Ալբ-
դարիոս թագաւոր առաքէր :

Յոյժ բերկրեցաւ ընդ այն պարտեւ
հայոց թագաւորն , և վիրաւոր անձամբ
զիրկչին անուն յեղյեղելով , անկաւ ա-
ռաջի պատկերի նորա , և որպէս 'ի Յայս
աւուրսն գրի , թէթեւացաւ յուրկու-
թեանն խօթութենէ , թէպէտ և հետք
ինչ ախտին դեռ եւս մնային 'ի վերայ
մարմնոյն : Բայց ապա յետ համբաւնա-
լոյ փրկչին , թովմաս առաքեալ զթա-
դէոս 'ի Հայոց աշխարհն առաքեաց՝ դե-
րել 'ի հնապանդութիւն աւետարանին
պատգամաց զմերոյ ազգին զժողովուրդ ,
և զիշխողն Արգարիոս յիւրոց ցաւոցն
բժշկել . զոր և արար իսկ նա և կատա-
րեաց , որպէս պատմէ Խորօնեցի 'ի Ղե-
րուբինայ յեղեսացւոյ դպրէն ուսեալ , և
Եւսեբի յԵկեղեցւոյ պատմութեանն , և
այլք բազումք 'ի հնոցն և 'ի նորոց :

Եւ իբրեւ թագէոս առաքեալ յԵղե-
սացւոց քաղաքն եհաս , շինեաց եկեղեցի
հոյակապ նախ քան զամենայն առա-
քեալս , և եդ անդէն զանձեռագործ
պատկեր փրկչական երեսացն , յորմէ և

բժշկութիւնք բազմապատիկք լինելին ՚ի
 հաւասա պանչելեաց հայաստան ժողով
 վրդեան : Եւ քանզի ՚ի վերայ դրանն
 Եղեսիոյ՝ անդստին ՚ի վաղնջուց ժամա-
 նակաց եղեալ կայր առնապատկեր նմա-
 նութիւն ունայնատուր օրինացն , հրա-
 մայեաց բարեպարիշտ թագաւորն Ար-
 դարիոս կործանել զպատկերն , և զանձե-
 ռագործն փոխանակ այնորիկ դնել դաս-
 տառակ , զի որք ՚ի քաղաքն մտանիցեն ,
 Երկրագութեան պաշտամամբք մեծա-
 րեսցեն զնա : Այլ իբրեւ զինի մահուանն
 Արդարու , Անանուն որդի նորա արհա-
 մարհեալ զՔրիստոսի հաւատոցն ուղ-
 ղութիւն , և միւսանգամ պաշտօնատար
 լինել կռոց հրամայէր և զփրկականն
 պատկեր անհետ ՚ի միջոյ բառնալ , սուրբ
 հայրապետն Ագդէ՝ առեալընդիւր զբա-
 զումն ՚ի հաւատացելոց , ՚ի մթան գիշե-
 րի երթայր ՚ի տեղին , և ծածկեր ՚ի
 պարսպի անդ զպատկերն , զի մի լիցիյան-
 արգութիւն և յարհամարհանս հեթա-
 նոսաց : Եւ եկաց մնաց թաքուն առ ՚ի
 մարդկանէ զամն բազումն , մինչեւ վերը-
 ալին պայծառացան հաւատք քրիստո-
 նէութեան Եղեսիա . և քանզի եղեալ

էին նոքա 'ի մաի եթէ յանհարիցն է
թշնամեաց ոտնկուիւ 'ի քաղաքն իւրեանց
լմնել, ցորչափ առ իւրեանս զտեսիլ կեր-
պարանացն Յիսուսի ունիցին, 'ի վեցե-
րորդ դարու Խոսրով Պարսից թագաւոր
կամեցաւ նկուն առնել զնոսա, և 'ի սնո-
տի պարծանացն լռեցուցանել զբերանս
նոցա : Խաղաց գնաց զօրու ծանու 'ի
վերայ քաղաքին, և 'ի նեղ արկեալ՝ ըդ-
բնակիչան զամենեսին 'ի տագնասի կա-
ցուցանէր : Եւ տեսանէր տեսիլ Եւլալիոս
եպիսկոպոս քաղաքին, զի սիկին ոմն մե-
ծարոյ և լի փառօք երեւէր նմա 'ի քուն,
և հրաման տայր հանել 'ի պարսպէ ան-
աի զպատկեր երեսաց փրկչին . « Յայն-
ժամ, ասէ, ամօթահար նկուն լիցին
թշնամիք առաջի աստուածեղէն զօրու-
թեանն , :

Հիացաւ զարմացաւ եպիսկոպոսն, և
լի եղեալ խնդութեամբ, երթայր տե-
սանել զվայրն որպէս երեւեցաւ նմա 'ի
տեսլեան . 'ի բաց առնոյր զքարինսն, և
դաեալ զգանձն պատուական, անկանէր
'ի վերայ երեսաց իւրոց արտասուօք, և
միաձայն ընդ ամենայն ժողովրդեան փա-
ռաւոր առնէին զԱստուած : Ապա 'ի

ձեռս իւր զայն առեալ, ելաներ եպիս-
կոպոսն 'ի վերայ պարսպին, ուստի ճամ-
բարք թշնամեացն երեւեին, և որոց խա-
րոյկս պատրաստեալբորբեալ էր՝ հրոյ
ճարակ տալ զքաղաքն ամենայն. և ահա
հողմն սաստիկ զհրոյն բռնութիւն ա-
ծեալ կուտէր 'ի բանակն թշնամեաց, և
փախստեայ խուճապեցուցանէր զնոսա-
մինչեւ յաշխարհն իւրեանց :

Լու եղեն իրք սքանչելեաց անձեռա-
գործ սկատկերին, և յամենայն աշխարհաց
խուռն գիմէին հաւատացեալք մեծարել
զնա. վասն որոյ և Ռոմանոս Բիւզան-
դացւոց թագաւորն՝ 'ի մայր քաղաքացն
իւրոց կամէր ածել. և թէպէտ ընդդէմ'
դարձան նմա Եղեսացիք, և խնդրէին
իսկ բռնութեամբ խափանեալ արդելուլ
զգործն, այլոչ կարացեալընդդէմ' դառ-
նալ մեծասաստ իշխանութեան նորա,
յարտասուս հարեալ լային անմիսիթար :
Անդ 'ի Բիւզանդիոն յԱստուածայինն
կոչեցեալ իմաստութեան տաճար տա-
րեալ հանգուցին զցանկալին աւանդ .
զոր ասկա յերկոտասան դարուն կայսրն
Բալէոլոդ Կանակուզենոս իբրեւ 'ի
սպարգեւի մասին չնորհեաց Վէոնարտոսի

գենուացւոյ, վրիսանակ զի արտւթեամբք
քաջութեան զերծոյց զհիւղանդացւոցն
թագաւորութիւն 'ի Սարակինոսաց մար-
տէն • և կայ անդէն 'ի Գենուա մինչեւ
ցայսօր ժամանակի * :

* Զանձեռատգործ դաստաւակին Քրիս-
տոսի զհանդամանս՝ գտցեն խնդրողք լի-
ուլի 'ի գիրան Առ-ը Դաստանակ կոչե-
ցեալ, դրոշմեալ 'ի տպարանի մեծարդոյ
Միսիթարեանց 'ի վենիա :



Դ

Պատկեր Տիրամօրն ՚ի Հոգեաց
վաևս .

Երկրորդ յետ անձեռագործ գաստա-
ռակին Քրիստոսի և առաջին պատկեր
երեսաց կուսամօր Աստուածածնին բե-
րաւ առ մեզ ՚ի Բարթուղիմեայ առա-
քելոյ , և եղաւ ՚ի պաշտօն հասարակաց
՚ի Հոգւոց վանս , որպէս պատմագիրք
մեր ամենեքին միաձայն վկայեն , և ա-
ռանձինն Երանելի հայրն մեր սուրբն
Մովսէս Խորենացի ՚ի Ծղթին զոր գրեաց
առ Արծրունեաց բարեալաշտօն իշխանն
Սահակ :

Քանիզ այս Սահակ կամեցեալ ուսա-
նել զաքանչելագործութիւնն պատկերի
Տիրամօրն որ կայր ՚ի Հոգեաց վանս , մե-
ծարանաց Ծղթով աղաչեաց զհայրն մեր
Խորենացի աշխատութիւնն յանձն ա-
ռեալ գրել զղատմութիւնն ըստ իւ-
րում աստուածեղէն գիտութեան . քան-

զի ասէ , “ Բազում ինչ այլք այլապէս
 պատմեն իրս ոչ նման միմեանց , և ոչ հա-
 ւատացաք ումեք զստոյգն գիտել , : Եւ
 հաճոյ թուեցան բանք նորա յաչս սրբոյ
 հայրապէտին , և կատարեաց զհայցուած-
 սըն դրելով զթուղթն և զպատմութիւն ,
 Քանզի յետ փրկչին համբառնալոյ յոր-
 ժամ երկնահրաւէր կոչումն և սրբոյ
 կուսին ժամանէր յաղցաւոր կենաց աստի
 յանտրտմական վերանալ կայս , առա-
 քեալք և աշակերտք որք ըստ բանի առա-
 քելագործ դրոյն էին հանապաղորդեալք
 ընդ նմա 'ի միասին յաղօթս և 'ի հայ-
 ցուածս , տրտմէին յոյժ ընդ անջատել
 իւրեանց 'ի նմանէ , զի “ Այնպէս տեսա-
 նէին առաքեալքն զտիրամայրն , որպէս
 զորդին իւր . և միտթարէին նովաւ : Բայց
 զի գէթ յուշարար ինչ յիշատակի առ
 նոսա մնացէ , երանելի աւետարանա-
 գիրն Յովհաննէս 'ի վերայ կիտարիս փայ-
 տի կերպաձեւէր զպատկեր տիրամօրն
 “ առ 'ի մնալ նշխար կենաց մերոց , :
 Եւ քանզի յաւուրս ժամանակացն այ-
 նոցիկ ախտ սաստիկ բորոտութեան ձարա-
 կէր ընդ ամենայն Հրէաստան , և առաւել
 յԵրուսաղեմացւոց աշխարհին , աղաչեցին

առաքեալքն զիառաւորեալն տիրամայր ,
և ասեն . “ Անարատ առագաստ Աստու-
ծոյ բանին , աղաչեմք զքեզ՝ ընկալ զփայ .
տեղէն պատկերս զայս զնկարեալս ’ի
Յովհաննէ ’ի սուրբ ձեռս քո և օրհնեա-
զսա , և տուր զսա նշան կենաց աշխարհի .
և աղաչեա զորդին քո և զԱստուածն
մեր , բառնալ ’ի ձեռն պատկերիս զբո-
րոտութիւն յորդւոց ’ի մարդկանէ , որք
ապաւինին ’ի քո բարեխօսութիւնդ , :
իսկ ամենօրհնեալ աստուածամայրն հրա-
ժեշտ մեծաւ խոնարհութեամբ ’ի պա-
տուոյ փառացն տայր . դարձաւ և ասէ
ցնոսա . “ Զի՞ հարկէք զիս զաղախին
տեառն զայդ իրս յանուն իմ . դուք ա-
շակերտք Քրիստոսի , և ձեզ չնորհեալէ
իշխանութիւն հալածել զդեւս . զձեզ
բարեկամս իւր կոչեաց տէրն , և նշանք
հրաշալք վասն ձեր լինին . և ուր ոտք
ձեր հասանեն , ոչ ինչ անհնար լինիցի
ձեզ : Այլ զիս աղօթիւք ձերովք յզար-
կեցէք , և միաբանեալընդ իս սիրով խա-
ղաղութեամբ՝ հասուցէք յանխուով նա-
ւահանդիսան , :

Այլ իբրեւ ետես եթէ նոքա ’ի թա-
խանձաննան յաւելուին , ոչ եւս այնուհե-

աեւ ընդդեմ դարձաւ նոցա ամենասուրբ
տիրամայրն . էաւ ՚ի նոցանէ զալատկերն ,
և զատուածքընկալ ձեռան յերկինս տա-
րածեալ , աղաչեաց զտէր և տսէ . “Ա
զաչեմ զքեզ , բարձ զախտ բորսատթեան
՚ի մարդկանէ՝ ՚ի ձեռն այսր նկարեալ փայ-
տեղէն պատկերիս , զզօրութիւն երրոր-
դութեանգ տպաւորելով՝ ՚ի նմա ՚ի ձեռն
իմոց աղաչանացս և խնդրոյս , որ բարձեր
զյանցանս առաջին մարդոյն ՚ի ձեռն
միածնի որդւոյ քոյ տեառնդ մերոյ և
փրկչիդ Յիսուսի Քրիստոսի , որ կատա-
րեաց ՚ի մարմնի իւրում զկամն առաքովիդ
հօր , կատարեա և այժմ զլսնդիր արանց
ընարելոցս այսոցիկ , որ բանիւ քո առա-
քեցան՝ ՚ի փրկութիւն աշխարհի ,,: Զմադ-
թանաց բանիքս իբրեւ տիրուհին բարբա-
ռէր , լոյս ամակեղէն շողեաց ՚ի սուրբ
պատկերն , և աստուածամայրն Մարիամ
յորդառատ արտասուս հեղեալ , և ես
աշակերտացն՝ որ մեծարանօք երկիրապա-
գին նմա :

Խակ յորժամ զմահ ճաշակեալ սրբու-
հւոյ կուսին և թաղեցաւ ՚ի Գեթսեմանի ,
աշակերտք փրկչին բազում նշանս սքան-
չելեաց պատկերաւն դործէին , զախտա-

ժէտս բժշկելով և զբորոտս սրբելով և
զցաւս հիւանդութեանց :

Իսկ թէ զիարդ՝ ՚ի մեր աշխարհն ածու
պատկերս, այս է ստուգապատումտւան
դութիւն : Սուրբ կոյսն Մարիամ՝ ՚ի մեր
ձենալերջանիկ օրհասին, աղաչեաց զտէր
զի միւսանգամ տեսոցէ զաշակերաեալս
որդւոյ իւրոյ միածնի, որք ցրուեալք
էին ընդամենայն աշխարհ սլատմելզբանն
փրկութեան և աւետարանին : Եւ լուաւ
Աստուած բանից աղաչանացն նորա, և
յափշտակեաց հոգին զնոսա և ածեալ
հասուցաներ մինչեւ ՚ի գեթմեմանի, որք
և օրհնեցան իսկ ՚ի նմանե և արտասուօք
և միաձայն օրհնութեամբ զնա ՚ի թա-
զումն ածին : Միայն Բարթուղիմէ ա-
ռաքեալ քանզի օտարութեամբ ՚ի Հընդ-
կաց աշխարհն էր հասեալ, ոչ դատաւ ընդ-
նոսա . և ապա առ առաքեալսն եկեալ
աղաչէր զնոսա և երդմնի առներ արտա-
սուօք գէթ զցանկալին ցուցանել նմա
մարմին տիրուհւոյն, զոր չեղեւ արժանի
տեսանել : Եւ բացեալ առաքելոցն զտա-
պանն իբրեւ յերկինս զնա տեսանեին փո-
խագրեալ, միմիթարել զիարթուղիմէոս
կամեցեալ ետուն նմա զպատկերն զնկա-

ըետևն 'ի Յովհաննէ : Եւ խնդութեամբ
էառ զայն Երանելի առաքեալն , և եկեալ
ժամանեաց մինչեւ յաշխարհն Հայոց Ան-
ձեւացեացն դաւառ “ ‘ի Համբաւ քարի
միոջ , որպէս Խորենացին ասէ , ուր դեւք
բազումք բնակեալ էին անդ , և պատրէին
զմարդիկ տեղւոյն , տուեալ յայնմ տեղ-
զւոջէ գեղս ախտականս առ ‘ի կատարել
զողծութիւնս ախտից , կուանաձայնս
դարբնաց ահաւոր հրաշխեք արհաւիրս
դործէին . . . և անուանէին զանուն տե-
ղւոյն այնորիկ Դարբնաց քար , : Հա-
սեալ անդը Երանելոյ առաքելոյն Բար-
թուղիմեայ , հալածէր զդիւացն պաշ-
տօնեայս և զայսան չարութեան , և շի-
նեալ Եկեղեցի վայելուչ դնէր անդէն
զպատկեր Երեսաց տիրամօրն . և Հաս-
տատեալ կուսանաց վանս և քահա-
նայս , և հրամայէր կոչել զվայրն յա-
նուն Հոգւոց վանաց , յորում բազումք
բժշկութիւնք լինէին . զոր ապա Գրիգո-
րիոս Լուսաւորիչ առաւել եւս փառօք
պայծառացոյց , զի անուն սրբոյ կուսին
Հռչակեսցի յապահ յագգո :



ՅԱՐԵԿ

ՅԱՐԵԿԱԲԱՆ

ՆԱԽԱՀԱՏԻԴ	1
ԳԼ. Ա. Լուտեր և վարդապետութիւն նորա	7
ԳԼ. Բ. Կալուբին և վարդապետութիւն նորա	44
ԳԼ. Գ. Եթէ զիաքրդ մեծարոյ են Աստուծոյ անձինք սրբոց . . .	54
ԳԼ. Դ. Յաղագս անձնիշխան ազատութեան մարդոյ	63
ԳԼ. Ե. Յաղագս բարեխօսութեան Քրիստոսի	91
ԳԼ. Զ. Յաղագս բարեխօսութեան Աստուծածին կուսին	108
Վկայութիւնք 'ի հարցն Յունաց . .	144
Ի հարցն Լատինացւոց	153
ԳԼ. Է. Յաղագս բարեխօսութեան Սրբոց	156
ԳԼ. Ը. Վարդապետութիւն Հայ. աստանեայց եկեղեցւոյ յաղագս բարեխօսութեան սրբոց .	240
ԳԼ. Թ. Յաղագս պաշտաման նշխարացն սրբոց	273

ԳԼ. Ժ. Յաղագս մեծարելոյ զալատ
կերս սրբոց 306

ՅԱՒՆ ՀՈՒՑՆ

Ա. Վըդանիսի Քերթողի , յաղագս
պատկերամարտաց 325
Բ. Յովհաննու Սարկաւագ քահա-
նայի , վասն մասանց պատուոյ ,
յորում և վասն պատկերաց
ընդունելութեան ցուցեալ
զորպիսութիւնն 343
Գ. Դաստառակին Քըլիստոսի առա-
քեալ առ Աբգարիս 360
Դ. Պատկեր աիրամօրն ՚ի Հոգեաց
վանս 369



Рукопись № 333

Установлено, что в регистрационном (333);
зарегистрировано в записи (343);
201, 101, 101, бывшему

Презр. Прар

Презр. Прар. 1923
Презр. Прар. 1923
Презр. Прар. 1923

1923

1879

